

**ԱՊՀ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԻՋԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎ**

*Ժողովրդավարության զարգացման, պառլամենտարիզմի և քաղաքացիների
ընտրական իրավունքների պաշտպանության մոնիտորինգի միջազգային
ինստիտուտի երևանյան մասնաճյուղ*

**ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԴԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ
ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**



ԵՐԵՎԱՆ – 2013

ՀՏԴ 342.8(479.25)
ԳՄԴ 67.99(2Հ)05
Շ 131

Հեղինակային խումբ՝

Է. Շաթիրյան 1.2, 4, 5, 6

*ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
սահմանադրական իրավունքի ամբիոնի դոցենտ*

Ա. Մանասյան 1.1, 2, 7

*ՀՀ սահմանադրական դատարանի նախագահի
խորհրդական, ի. գ. թ.*

Ա. Հովհաննիսյան 3

ՀՀ Ազգային ժողովի պարզամավոր, ի. գ. թ.

Շ 131 ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ/ Է. Շաթիրյան, Ա. Մանասյան, Ա. Հովհաննիսյան, ԱՊՀ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎ.— ԵՐ.: ԶԱՆԳԱԿ, 2013.— 208 էջ:

Սույն հետազոտության շրջանակներում վեր են հանված Հայաստանի Հանրապետությունում ընտրական հարաբերությունների իրավակարգավորման ոլորտում առկա իրավական լուծումներ կամ առավել հստակ իրավական կանոնակարգումներ պահանջող մի շարք հիմնախնդիրներ, և ներկայացված են դրանց լուծմանն ուղղված իրավական կառուցակարգերի հնարավոր ամրագրման կամ կատարելագործման, դրանք կանոնակարգող իրավական չափորոշիչների հնարավոր ներդրման կամ հստակեցման վերաբերյալ մի շարք առաջարկություններ:

Հետազոտության շրջանակներում քննարկվում են գլխավորապես վերլուծությունները և դրանց հիման վրա ներկայացված առաջարկությունները կարող են գործնականում նպաստել մեր հանրապետությունում ընտրական հարաբերությունների իրավական կարգավորման ոլորտում առկա մի շարք հիմնախնդիրների լուծմանը, հեղինակաբար՝ ընդհանուր առմամբ խթանել ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վստահության աճը:

Հետազոտությունն օգտակար կլինի պետական իշխանության և քաղաքական ինքնակառավարման մարմիններում ծառայողների, գիտահետազոտական գործունեությամբ զբաղվողների, բուհերի դասախոսների և ուսանողության համար:

ՀՏԴ 342.8(479.25)
ԳՄԴ 67.99(2Հ)05

ISBN 978–9939–68–221–1

© ԱՊՀ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԻՋԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎ, 2013
© «ԶԱՆԳԱԿ–97» ՍՊԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ընտրությունները՝ որպես ժողովրդաիշխանության իրացման անմիջական ձև, առանցքային դերակատարություն ունեն յուրաքանչյուր ժողովրդավարական պետության և հասարակության կյանքում: Դրանց կարևորագույն առաքելություններից է հասարակության ներսում կուտակված հակասությունների լուծմանը, սոցիալ-քաղաքական լարվածության թուլացմանը նպաստելը: Սույն գործընթացում առաջ եկող համակարգային խափանումների հիմնական պատճառներից մեկն էլ ընտրական հարաբերությունների կանոնակարգմանն ուղղված իրավական կառուցակարգերի անկատարությունն է, ինչը ոչ միայն ծնում է ընտրական գործընթացի նկատմամբ հանրային անվստահություն, այլև հաճախ նպաստում է դրա խորացմանը: Այս առումով ընտրական համակարգի կայացումը և դրա հետևողական կատարելագործումը ժողովրդաիշխանության և ներկայացուցչական ինստիտուտների ձևավորման ու արդյունավետ, անխոչընդոտ գործառնության կարևորագույն նախապայմանն է:

Հայաստանի Հանրապետությունում ազատ ժողովրդավարական ընտրությունները սահմանադրական կարգի հիմունքների կայացման և զարգացման գործընթացում զբաղեցնում են առանձնահատուկ տեղ: Դրանք գործնականում վերածվում են իշխանության մարմինների կազմավորման արդյունավետ կառուցակարգերի, որոնք, առաջին հերթին, ապահովում են պետական իշխանության իրավահաջորդությունը և պետության ներսում քաղաքական կայունությունը:

Ընտրական գործընթացի բոլոր մասնակիցների կողմից ընտրական օրենսդրության դրույթներին անշեղորեն հետևելու աստիճանից են կախված ընտրությունների անցկացման կազմակերպաիրավական մակարդակը, դրանց արդյունքների լեգիտիմությունը: Այս կապակցությամբ ընտրական գործընթացի

առավել հստակ իրավական կանոնակարգումն, անշուշտ, դրա նկատմամբ հանրային վստահության աճի կարևորագույն նախապայմաններից է: Սույն ոլորտում իրավակարգավորումների բացերը, դրանց անհստակությունը բավական լուրջ ազդեցություն են ունենում ժողովրդավարական պետությանը հարիր ընտրական մշակույթի արմատավորման գործընթացի վրա: Սույն հարցում իրավական չափորոշիչների ոչ համարժեք ընտրությունը, ինչպես նաև դրանց զանգվածային խախտումները հաճախ վճռորոշ նշանակություն են ունենում պետության հիմնական օրենքով ամրագրված ժողովրդաիշխանության երաշխիքների կայունությունը պահպանելու տեսանկյունից: Ընտրական գործընթացի տարբեր փուլերի հստակ կանոնակարգմանն ուղղված իրավական հիմնարար չափորոշիչների թյուրըմբռնումը, ինչպես նաև գործող իրավակարգավորումներն անտեսելու արմատավորված իրավաքաղաքական մշակույթը նվազագույնը բացառում են ոչ միայն սոսկ ընտրական իրավունքի արդյունավետ իրացման, այլև ժողովրդաիշխանության բնականոն գործընթացները, խեղաթյուրում և խարխլում են ողջ սահմանադրական կարգը:

2011 թվականին՝ ՀՀ ընտրական նոր օրենսգրքի ընդունումից հետո անցկացված համապետական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների հետ կապված, կարելի է փաստել, որ էապես նվազել են նախկինում արձանագրված մի շարք ընտրախախտումներ (բազմակի քվեարկություն, քվեատուփերի լցոնում, ընտրողների, դիտորդների, վստահված անձանց ահաբեկում, թեկնածուների, քաղաքական ուժերի համար ակնհայտ անհավասար պայմաններ և այլն):

ՀՀ ընտրական նոր օրենսգրքի նախագծի միջազգային փորձագիտական գնահատականները, ինչպես նաև օրենսգրքի ընդունումից հետո անցկացված ընտրություններում միջազգային դիտորդական առաքելությունների դիրքորոշումները վկայում են, որ ընտրական գործընթացի իրավակարգավորման ոլորտում արձանագրվել է առաջընթաց:

Միաժամանակ դեռևս առկա են իրավական լուծումներ կամ առավել հստակ իրավական կանոնակարգումներ պահանջող մի

շարք հիմնախնդիրներ, որոնց վերհանմանը և դրանց լուծմանն ուղղված իրավական կառուցակարգերի հնարավոր ամրագրման, դրանք կանոնակարգող իրավական չափորոշիչների հնարավոր ներդրման կամ հստակեցման վերաբերյալ առաջարկությունների ներկայացմանն է նպատակաուղղված սույն հետազոտությունը: Հետազոտության շրջանակներում տեղ գտած վերլուծությունները և դրանց հիման վրա ներկայացված առաջարկությունները կարող են գործնականում նպաստել մեր հանրապետությունում ընտրական հարաբերությունների իրավական կարգավորման ոլորտում առկա մի շարք հիմնախնդիրների լուծմանը, հետևաբար՝ ընդհանուր առմամբ, ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վստահության աճին:

Իհարկե, իրական ժողովրդավարական ընտրությունների կազմակերպման և անցկացման համար բավարար չէ սուսկ ՀՀ ընտրական օրենսդրության հետևողական բարելավումը: Դրա համար չափազանց կարևոր նախապայմաններ են նաև անհրաժեշտ քաղաքական կամքի առկայությունը, ինչպես նաև ընտրական գործընթացի բոլոր մասնակիցների կողմից ՀՀ ընտրական գործող օրենսդրության նորմերի պահանջներին հետևելու, դրանք չանտեսելու պատրաստակամությունը:

Սույն հետազոտության հիմքում ընկած են, մասնավորապես, ընտրական հարաբերությունների կանոնակարգմանն ուղղված ներպետական իրավական ակտերը, միջազգային մի շարք փաստաթղթեր, այդ թվում՝ Եվրախորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) ակտերը («Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագիրք. ցուցումներ և բացատրական զեկույց» փաստաթուղթը (CDL-AD (2002) 23) և այլն), Եվրախորհրդի նախարարների կոմիտեի մի շարք հանձնարարականներ, ԵԱՀԿ կոպենհագենյան փաստաթուղթը (1990 թ.), ԱՊՀ մասնակից պետությունների միջխորհրդարանական վեհաժողովի ակտերը, այդ թվում՝ «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետություններում ժողովրդավարական ընտրությունների, ընտրական իրավունքների և ազատությունների չափանիշների մասին» 2002 թվականի

կոնվենցիան, ինչպես նաև ՀՀ սահմանադրական դատարանի մի շարք որոշումներ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք ակտեր, ՀՀ Նախագահի և Ազգային ժողովի, արտասահմանյան մի շարք պետություններում (օրինակ՝ Ուկրաինա, Ղազախստան, Լիտվա) անցկացված ընտրությունների վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ընտրությունների դիտորդական առաքելության զեկույցները և այլն:

1. ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊԱԾ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

1.1. ԱԶԱՏԱԶՐԿԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾ ԵՎ ՊԱՏԻԺԸ ԿՐՈՂ ԹԱՂԱԹԱՅԻՆԵՐԻ ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆ ՈՒ ԱՅՐ ՀԻՄՆԱԽՆԴԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀՀ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀՐԱՄԱՅՈՒՄՆԵՐ

ՀՀ Սահմանադրության 30-րդ հոդվածի համաձայն՝ ընտրել և ընտրվել չեն կարող դատարանի վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատագրված դատապարտված և պատիժը կրող քաղաքացիները: 2013 թ. փետրվարի 18-ի՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի ընտրությունների վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ Ընտրությունների դիտորդական առաքելության վերջնական զեկույցում ընդգծվել է, որ բոլոր դատապարտյալներին, անկախ գործած հանցագործության ծանրությունից, ընտրելու իրավունքից զրկելը հակասում է համընդհանուր ընտրական իրավունքին և այս հարցի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին¹:

Այդ առումով հարկ է նկատի ունենալ, որ 1990 թ. ԵԱՀԿ կոալենսիազենյան փաստաթղթի 7.3-րդ պարբերությունը սահմանում է, որ մասնակից երկրները կերաշխավորեն ընդհանուր և հավասար ընտրական իրավունք բոլոր չափահաս քաղաքացիների համար, իսկ 24-րդ պարբերությունը նախատեսում է, որ իրավունքների և ազատությունների սահմանափակումը պետք

¹ REPUBLIC OF ARMENIA PRESIDENTIAL ELECTION, 18 February 2013, OSCE/ODIHR Election Observation Mission Final Report, IV I»i, <http://www.osce.org/odihr/elections/101314>:

է խիստ համապատասխանի օրենքով սահմանված կարգին: ՄԱԿ-ի «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 25-րդ հոդվածի վերաբերյալ Մարդու իրավունքների կոմիտեի կողմից ընդունված Ընդհանուր մեկնաբանության (1966) 14-րդ պարբերությունը սահմանում է, որ ընտրական իրավունքների սահմանափակումները պետք է լինեն օբյեկտիվ և ողջամիտ¹: Իսկ Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) «Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագիրք» փաստաթուղթն ամրագրում է. «Քվեարկելու և ընտրվելու իրավունքից զրկումը.

ա) կարելի է նախատեսել մի դրույթ, որը կվերաբերի անձանց քվեարկելու և ընտրվելու իրավունքից զրկմանը, սակայն միայն հետևյալ ընդհանուր պայմանների դեպքում,

բ) այն պետք է նախատեսված լինի օրենքով,

գ) պետք է կիրառվի համամասնականության սկզբունքով. ընտրություններին առաջադրվելու իրավունքից անձանց զրկման համար անհրաժեշտ պայմանները պետք է ավելի պակաս խիստ լինեն, քան քաղաքացիական իրավունքներից նրանց զրկման պայմանները,

դ) զրկումը պետք է հիմնավորված լինի մտավոր թերության կամ լուրջ հանցագործության համար քրեական դատապարտման փաստով,

ե) բացի այդ, քաղաքական իրավունքներից զրկումը կամ մտավոր թերության բացահայտումը կարող է իրականացվել օրինական դատարանի անաչառ որոշմամբ միայն»²:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ ընտրական իրավունքից զրկումը պետք է հիմնված լինի ծանր հանցագործության համար քրեական դատապարտման վրա,

¹ <http://www.unhchr.ch/tbs/doc.nsf/0/d0b7f023e8d6d9898025651e004bc0eb>

² CDL-AD (2002) 23 rev, "Code of Good Practice in Electoral Matters: Guidelines and Explanatory Report", Adopted by the Venice Commission at its 52nd session (Venice, 18-19 October 2002), 1-ին բաժնի 1.1 կետի d ենթակետ:

իսկ քաղաքական իրավունքներից զրկումը պետք է կատարվի միայն դատարանի հստակ վճռով:

Հարկ է նկատել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նույնպես «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրության 3-րդ հոդվածի խախտում է համարում բոլոր դատապարտյալներին, անկախ հանցագործության ծանրությունից, ընտրելու և ընտրվելու իրավունքից զրկելը:

Վերը շարադրվածի առնչությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. «Դատարանն ընդունում է, որ սա այն բնագավառն է, որտեղ ազգային օրենսդրին պետք է տրվի հայեցողության լայն շրջանակ՝ որոշելու, թե արդյոք ազատագրվման դատապարտվածների ընտրական իրավունքի սահմանափակումները կարող են արդարացված համարվել արդի ժամանակաշրջանում, և եթե այդպես է, ապա ինչպե՞ս պետք է ապահովել արդարացի հավասարակշռությունը: Մասնավորապես, օրենսդիրն ինքը պետք է որոշի, թե արդյոք ընտրական իրավունքի նախատեսվող սահմանափակումը պետք է կապված լինի կոնկրետ իրավախախտումների, թե ծանրության կոնկրետ աստիճան ունեցող իրավախախտումների հետ, կամ արդյոք, օրինակ, դատավճիռ կայացնող դատարանին պետք է տրվի դատապարտված անձին ընտրական իրավունքից զրկելու հայեցողությունը: ...: Այնուամենայնիվ, Դատարանը չի կարող ընդունել, որ ազատագրվման դատապարտված և պատիժը կրող յուրաքանչյուր անձի ընտրական իրավունքի բացարձակ արգելքն ընդգրկվում է հայեցողության ընդունելի շրջանակների համատեքստում: Տվյալ գործով դիմողը կորցրել է իր ընտրական իրավունքը ազատագրվման դատապարտված և պատիժը կրող անձանց ընտրական իրավունքի մեխանիկական և համընդհանուր սահմանափակման արդյունքում...»¹:

¹ JUDGMENT on CASE OF HIRST v. THE UNITED KINGDOM (No. 2) (Application no. 74025/01), 6 October 2005, [http://hudoc.echr.coe.int/sites/eng/pages/search.aspx?i=001-70442#\[%22itemid%22:\[%22001-70442%22\]\]](http://hudoc.echr.coe.int/sites/eng/pages/search.aspx?i=001-70442#[%22itemid%22:[%22001-70442%22]]).

Հիշյալ համատեքստում ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ մի շարք երկրներում ազատագրկման դատապարտված և պատիժը կրող քաղաքացիներն ունեն ընտրական իրավունք՝ առանց որևէ սահմանափակումների: Այդպիսիք են, օրինակ, Ալբանիան, Ադրբեջանը, Խորվաթիան, Չեխիան, Դանիան, Ֆինլանդիան, Գերմանիան, Իսլանդիան, Լիտվան, Մոլդովան, Մոնտենեգրոն, Նիդերլանդները, Պորտուգալիան, Սլովենիան, Շվեդիան, Շվեյցարիան, Ուկրաինան: Իսկ Ռումինիայում, օրինակ, ազատագրկման ձևով պատիժը կրող քաղաքացիները չեն կարող մասնակցել ընտրություններին, եթե նրանց նկատմամբ նշանակվել է 2 տարի ժամկետով ազատագրկումը գերազանցող հիմնական պատիժ¹:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ քննարկվող հիմնախնդրին առնչվող միջազգային պրակտիկան ու չափանիշներն այնպիսին են, որ ազատագրկման դատապարտված և պատիժը կրող քաղաքացիների առնչությամբ կարող են նախատեսվել ընտրական իրավունքի առանձին սահմանափակումներ, սակայն ընդհանրապես ընդունելի չեն և միջազգային չափորոշիչներին չեն համապատասխանում նրանց ընտրական իրավունքից լրիվ զրկելու առնչությամբ գործող իրավակարգավորումները:

Ավելին՝ հարկ է նկատի ունենալ, որ արդի ժամանակաշրջանում ընտրական իրավունքը չի կարող ընկալվել որպես առավելություն: Այն, իհարկե, նաև բացարձակ իրավունք չէ, և պետությունները հայեցողության համապատասխան շրջանակներ ունեն հիշյալ բնագավառում: Թեև այդ շրջանակները բավականին լայն են, սակայն անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ ընտրական իրավունքի սահմանափակումները, մասնավորապես նշված կատեգորիայի անձանց նկատմամբ կիրառվող, չպետք է խաթարեն քննարկվող իրավունքի բուն էությունը, զրկեն հիշյալ իրավունքն արդյունավետությունից, պետք է հետապնդեն իրավաչափ նպատակ և լինեն համաչափ:

1 JUDGMENT on CASE OF HIRST v. THE UNITED KINGDOM (No. 2) (Application no. 74025/01), 6 October 2005.

Դրանք առաջին հերթին չպետք է խաթարեն ժողովրդի կամքի ազատ արտահայտման սկզբունքը, այլ կերպ ասած՝ ընտրական գործընթացը չպետք է զրկեն ամբողջականությունից ու արդյունավետությունից, քանզի այդ գործընթացը նպատակաուղղված է համընդհանուր ընտրական իրավունքի հիման վրա ժողովրդի կամքի բացահայտմանը:

Հետևաբար, հաշվի առնելով վերը շարադրվածը՝ կարծում ենք, որ ՀՀ սահմանադրական ու օրենսդրական բարեփոխումների ընթացքում անհրաժեշտ է հաշվի առնել նաև վերոնշյալ հանգամանքը՝ գործող իրավակարգավորումները համապատասխանեցնելով միջազգային համապատասխան չափանիշներին:

1.2. ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԱԿՏԻՎ ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԹԻ ԻՐԱՅՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Սուբյեկտիվ իմաստով ընտրական իրավունքն անձին տրված հնարավորություն է մասնակցելու պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների կազմավորմանը՝ ընտրելու (ակտիվ ընտրական իրավունք) և ընտրվելու (պասիվ ընտրական իրավունք) միջոցով:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրքը) 54-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քվեարկությունն անցկացվում է միայն ՀՀ տարածքում կազմավորված տեղամասային կենտրոններում, բացառությամբ սույն օրենսգրքով սահմանված դեպքերի: Նշված դեպքերը սահմանված են Օրենսգրքի 60-րդ հոդվածում: Ըստ այդմ՝ քվեարկության օրը ՀՀ տարածքից դուրս գտնվելու դեպքում ՀՀ դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություններում դիվանագիտական ծառայություն անցնող ընտրողները և նրանց հետ արտերկրում բնակվող ընտանիքի՝ ընտրելու իրավունք ունեցող անդամները կարող են մասնակցել համապետական ընտ-

րություններին՝ քվեարկելով էլեկտրոնային եղանակով՝ կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով և ժամկետներում¹: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը պարտավոր է սահմանել այնպիսի պայմաններ, որոնք կապահովեն էլեկտրոնային եղանակով քվեարկողների կամքի ազատ արտահայտման հնարավորությունը և քվեարկության գաղտնիությունը (մաս 1): Նշված դրույթները տարածվում են նաև Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձանց (անկախ սեփականության ձևից)՝ արտասահմանում տեղակայված ներկայացուցչությունների՝ ընտրելու իրավունք ունեցող աշխատակիցների և նրանց հետ արտերկրում բնակվող ընտանիքի՝ ընտրելու իրավունք ունեցող անդամների վրա (մաս 3):

Այսպիսով՝ 26.05.2011 թվականին ընդունված ՀՀ ընտրական օրենսգրքով առաջին անգամ նախատեսվեց քվեարկության օրը ՀՀ տարածքից դուրս գտնվող ընտրական իրավունք ունեցող առանձին կատեգորիայի սուբյեկտների (ՀՀ քաղաքացի հանդիսացող)՝ ՀՀ համապետական ընտրություններին մասնակցության հնարավորությունը՝ էլեկտրոնային եղանակով քվեարկության միջոցով:

Գիտության և տեխնիկայի զարգացմամբ պայմանավորված՝ մարդու ամենօրյա կյանքի ոլորտ են ներթափանցում նոր տեխնոլոգիաներ: Ուստի և ծագում է դրանց կիրառության իրավական կանոնակարգման անհրաժեշտությունը: Այս կապակցությամբ հետաքրքրություն է ներկայացնում էլեկտրոնային քվեարկության ինստիտուտը, որի զարգացումը և լայն կիրառությունը հանգեցրել են սույն ոլորտում հատուկ նորմատիվ-իրավական

¹ Մանրամասն տե՛ս ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 31.01.2012 թվականի թիվ 19-Ն որոշումը «Համապետական ընտրություններին Հայաստանի Հանրապետության դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություններում դիվանագիտական ծառայություն անցնող ընտրողների և նրանց հետ արտերկրում բնակվող ընտանիքի՝ ընտրելու իրավունք ունեցող անդամների՝ էլեկտրոնային եղանակով քվեարկության կարգը և ժամկետները սահմանելու մասին»:

հիմքի մշակման անհրաժեշտությանը, այդ թվում՝ միջազգային-իրավական մակարդակով:

Առաջին անգամ «Էլեկտրոնային քվեարկություն» արտահայտությունը (electronic(al) voting – e-voting) շրջանառության մեջ դրվեց 1960–ական թվականներին ԱՄՆ–ում, որտեղ քվեարկության նպատակով սկսեցին օգտագործվել հատուկ պերֆոքարտեր, որոնք թույլ էին տալիս օպտիկական սքանավորման օգնությամբ հաշվարկել տեղեկատվությունը ընտրողի կամաարտահայտության վերաբերյալ՝ արտացոլված հատուկ քվեաթերթիկում: Այստեղ էլեկտրոնային քվեարկությունը ներառում էր մի քանի նոր եղանակներ, որոնք ենթադրում էին անհատական համակարգիչների և ընտրողների քվեները տալու ու հաշվարկելու համար հատուկ մեքենաների օգտագործում, ինչպես նաև էլեկտրոնային միջոցների օգնությամբ քվեարկողի կամաարտահայտության դրսևորման հնարավորությունը: Ի տարբերություն ԱՄՆ–ի՝ Եվրոպայում էլեկտրոնային քվեարկությունը ներդրվեց շատ ավելի ուշ՝ 1980–ականների սկզբներին: Այսպես, օրինակ՝ 1982 թվականին՝ Նիդերլանդներում ընտրությունների ժամանակ, առաջին անգամ օգտագործվեցին քվեարկության համար հատուկ մեքենաներ (electronic voting machines), որոնց օգտագործումն օրենսդրական մակարդակով հավանության արժանացավ կառավարության կողմից 1989 թվականին՝ էլեկտրոնային քվեարկության հարցերով գլխավոր ակտով (General Act on Electronic Voting): 1990–ականների սկզբներին Նիդերլանդներին միացավ Բելգիան, որտեղ ևս ընտրություններ անցկացնելիս օգտագործվեցին հատուկ մեքենաներ՝ ընտրական տեղամասերում ձայների տրման ու հաշվարկման գործընթացը դյուրացնելու նպատակով: 11.04.1994 թվականին Բելգիայի Թագավորության «Ընտրությունների մասին» օրենքում (The Election Law) քվեարկության գործընթացի ավտոմատացման մասին հատուկ ակտով (Law on Automated Voting) կատարվեցին փոփոխություններ, որոնցով օրենսդրական մակարդակով ամրագրվեց էլեկտրոնային քվեարկության կիրառության իրավաչափությունը: Այնուհետև էլեկտրոնային քվեարկությունը լայն տարածում ստացավ 1999 և 2000 թվականների խորհրդարանական

և մունիցիպալ ընտրությունների անցկացման ընթացքում: Հետևելով Նիդերլանդների և Բելգիայի համար ընդհանուր միտումներին՝ Ֆրանսիան քվեարկության համար մեքենաները սկսեց ակտիվորեն օգտագործել 1990-ականների կեսերին: 1994 թվականին 4000 ընտրողներ Ստրասբուրգում մասնակցեցին Եվրոպական խորհրդարանի ընտրություններին էլեկտրոնային քվեարկության գործընթացի փորձարկմանը, 1995 թվականի նախագահական ընտրությունների ժամանակ էլեկտրոնային քվեարկության մասնակիցներ դարձան Ֆրանսիայի քաղաքներից մեկի բնակիչները, իսկ 2000 թվականին՝ Լիոնում ընտրությունների անցկացման ժամանակ, առաջին անգամ օգտագործեցին քվեարկության համար էլեկտրոնային քվեաթերթիկներ: Ֆրանսիայում ձևավորված հատուկ Ազգային հանձնաժողովը (Commission Nationale de l'informatique et des libertés) 01.07.2003 թվականին ընդունեց էլեկտրոնային քվեարկության համակարգերի անվտանգությանը վերաբերող հանձնարարական, որում բարձրացվեց էլեկտրոնային քվեարկություն անցկացնելիս ընտրողին իդենտիֆիկացնելու հնարավորություն ընձեռող տվյալները ընտրողի՝ քվեարկության արդյունքում կատարած ընտրության վերաբերյալ տվյալներից առանձնացնելու անհրաժեշտության վերաբերյալ հարցը: 2000-ականների սկզբներին այնպիսի պետություններ, ինչպիսիք են, օրինակ, Մեծ Բրիտանիան, Իտալիան, Իսպանիան և մի շարք այլ պետություններ, նախաձեռնեցին ազգային նախագծեր՝ ուղղված ընտրությունների անցկացման ժամանակահատվածում էլեկտրոնային քվեարկության ընթացակարգերի ներդրմանը:

Այսպիսով՝ կարելի է փաստել, որ էլեկտրոնային քվեարկության ինստիտուտի կայացման և զարգացման գործընթացի սկզբում սույն ինստիտուտի իրավական կարգավորումն իրականացվում էր ներազգային մակարդակով էլեկտրոնային քվեարկության առանձին հարցերի շուրջ համապատասխան օրենսդրական ակտերի և հանձնարարականների ընդունման միջոցով:

2000-ականների կեսերին իրավիճակը կտրուկ փոխվեց: 2003 թվականի մայիսին Մեծ Բրիտանիայի ընտրական հանձ-

նաժողովը (the UK Electoral Commission) տեղերում Ինտերնետի, բջջային հեռախոսներով կարճ հաղորդագրությունների ծառայությունների, թվային հեռուստատեսության օգտագործմամբ էլեկտրոնային քվեարկության մի շարք փորձնական նախագծերի իրականացումից հետո բազմաթիվ խնդիրներ ի հայտ բերելու կապակցությամբ առաջարկեց կառավարությանը զարգացնել և կատարելագործել էլեկտրոնային քվեարկության անցկացման տեխնիկական չափորոշիչները՝ ապագայում դրա հաջող կիրառության հնարավորության ապահովման նպատակով: Իսկ, օրինակ, Նորվեգիայում 2003 թվականի տեղական ընտրությունների ժամանակ էլեկտրոնային քվեարկության ընթացակարգի փորձարկման արդյունքում Տեղական ինքնակառավարման և տարածքային զարգացման նախարարության աջակցությամբ հրապարակվեց գնահատողական զեկույց, որում մանրամասն լուսաբանվեց ընտրողների կամաարտահայտության գաղտնիության սկզբունքի ապահովման և քվեարկության էլեկտրոնային համակարգերի հուսալիության բարձրացման հետ կապված հարցերի հետագա կատարելագործման անհրաժեշտությունը:

Ընտրությունների ժամանակ էլեկտրոնային քվեարկության անցկացման հետ կապված՝ մի շարք խնդիրներ վերհանվեցին նաև եվրոպական այլ պետություններում:

Ընտրությունների անցկացման պրակտիկայում էլեկտրոնային քվեարկության լայն տարածման հետ մեկտեղ, հասունացավ դրա հետ կապված հարցերում եվրոպական պետությունների փորձի կոնսոլիդացման անհրաժեշտությունը՝ էլեկտրոնային քվեարկության ընթացակարգերի անվտանգության, թափանցիկության, հավաստիության ապահովման նպատակով՝ ընտրական իրավունքի հիմնական սկզբունքների պահպանմամբ: Էլեկտրոնային քվեարկության ընթացակարգերի ներազգային իրավական կարգավորումն այլևս բավարար չէր դրա զարգացման գործընթացում էական առաջընթացի ապահովման համար: Եվրոպական պետություններին անհրաժեշտ էր միասնական միջազգային-իրավական փաստաթուղթ, որը, որպես հիմնական գործիք, կամրագրեր սույն ոլորտում շրջանակային չափորոշիչները՝ նախ և առաջ, ունակ լինելով նվազագույնի հասցնե-

լու տվյալ ոլորտում բոլոր պետությունների համար ընդհանուր քննադատելի սխալները, ապա՝ երաշխավորելով էլեկտրոնային քվեարկության կիրառության արդյունավետությունը, տնտեսապես շահեկան լինելը, ապահովելով տվյալ ինստիտուտի հանդեպ քաղաքացիների վստահությունը, ուղղված լինելով ժողովրդավարական ընտրությունների հիմնական սկզբունքների ապահովմանն ու հարգմանը, նպաստելով հասարակության հետագա տեխնոլոգիական զարգացմանը:

30.09.2004 թվականին Եվրախորհրդի նախարարների կոմիտեն ընդունեց էլեկտրոնային քվեարկության իրավական, կիրառական և տեխնիկական չափանիշների վերաբերյալ R (2004)11 հանձնարարականը¹, որը դարձավ էլեկտրոնային քվեարկության չափանիշների միջազգային-իրավական կարգավորման ոլորտում առաջին հիմնարար փաստաթուղթը: Ներկայումս սույն ոլորտում միջազգային մակարդակով իր մշակվածությամբ դրան համարժեք փաստաթուղթ գոյություն չունի: Այն համախմբում է ընտրական իրավունքի առաջատար սկզբունքները, որոնք հիմնված են միջազգային-իրավական նորմերի, էլեկտրոնային քվեարկության տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գիտնականների կողմից մշակված ժամանակակից տեխնոլոգիական, ինչպես նաև կազմակերպական չափանիշների վրա, որոնք թույլ են տալիս նվազագույնի հասցնել և բացառել էլեկտրոնային քվեարկություն անցկացնելիս առաջացող՝ ընտրական իրավունքների խախտման հավանական ռիսկերը:

Վերը նշված հանձնարարականում, մասնավորապես, նշված է, որ էլեկտրոնային քվեարկությունը պետք է կառուցվի ժողովրդավարական ընտրությունների և հանրաքվեների սկզբունքների հիման վրա: Այն պետք է նույնքան հուսալի և անվտանգ լինի, որքան առանց էլեկտրոնային միջոցների օգտագործման անցկացվող ժողովրդավարական ընտրությունները և հանրաքվեները: Տվյալ ընդհանուր սկզբունքը տարածվում

¹ Մանրամասն տե՛ս Рекомендация R (2004)11 Комитета Министров СЕ государствам-членам по правовым, организационным и техническим стандартам электронного голосования (принята Комитетом Министров 30 сентября 2004 года на 898-ом заседании):

է ընտրական բոլոր հարցերի վրա՝ անկախ այն հանգամանքից՝ հիշատակված են դրանք սույն հանձնարարականի հավելվածներում, թե ոչ:

Քննարկվող հարցի համատեքստում ուշադրության է արժանի նաև Եվրախորհրդի նախարարների կոմիտեի՝ Էլեկտրոնային ժողովրդավարության վերաբերյալ CM/Rec (2009)1 հանձնարարականը¹, որի հավելվածում սահմանված է, որ «Էլեկտրոնային ժողովրդավարություն» հասկացությունը ներառում է նաև Էլեկտրոնային ընտրությունները, հանրաքվեն, քվեարկությունը, քարոզչությունը, ձայների Էլեկտրոնային հաշվումը և Էլեկտրոնային հարցումները...(P. 35): Ըստ այդմ՝ Էլեկտրոնային ընտրությունները և հանրաքվեները հանդիսանում են քաղաքական ընտրություններ և հանրաքվեներ, որոնցում մեկ կամ մի քանի փուլերում օգտագործվում են Էլեկտրոնային միջոցներ: Էլեկտրոնային քվեարկությունը ենթադրում է ընտրությունների կամ հանրաքվեների ժամանակ Էլեկտրոնային միջոցների օգտագործում առնվազն ձայն տալիս: Հեռակա Էլեկտրոնային քվեարկությունն արագացնում է համապատասխան ընթացակարգերը՝ օգնելով իրականացնել քվեարկության Էլեկտրոնային մշտադիտարկում և ձայների Էլեկտրոնային հաշվարկ: Այն նաև դյուրացնում է ավելի հեռու տարածության վրա բնակվող քաղաքացիների և հատուկ պահանջմունքներով անձանց մասնակցությունը (P. 41, 42):

Հատկանշական է, որ վերը նշված հանձնարարականի հավելվածում նշված է, որ Էլեկտրոնային ժողովրդավարություն ներդնելիս անհրաժեշտ է հաշվի առնել քաղաքական բնութագրիչները և քաղաքական մշակույթը: Էլեկտրոնային ժողովրդավարությունը կարող է ներդրվել՝ ընդգծելու համար նաև ժողովրդավարության հատուկ տիպը (P. 60):

Անառարկելի է, որ Էլեկտրոնային քվեարկության ինստիտուտն ունի մի շարք առավելություններ: Ընդհանուր առմամբ

¹ Մանրամասն տե՛ս Рекомендация Комитета Министров Совета Европы CM/Rec(2009)1 государствам-участникам Совета Европы по электронной демократии (принята Комитетом Министров 18 февраля 2009 года на 1049-м собрании заместителей министров):

դրանց շարքին կարելի է դասել քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացի էական արագացումը, ընտրական հանձնաժողովների աշխատանքային ծանրաբեռնվածության թերևսացումը, սխալվելու ռիսկերի նվազեցումը, սահմանափակ ֆիզիկական կարողություններով ընտրողների համար անհրաժեշտ հարմարությունների ստեղծումը (օրինակ՝ տեսողական խնդիրներ ունեցող ընտրողներին աուդիոհիստերֆեյսի տրամադրումն՝ ականջակալների միջոցով) և այլն: Միաժամանակ, սույն ինստիտուտին ներհատուկ են մի շարք բացասական երևույթներ, ինչպիսիք են, օրինակ, էլեկտրոնային քվեարկության համակարգի ոչ բավարար անվտանգությունը, հուսալիությունը, հավաստիությունը (օրինակ՝ Ինտերնետի միջոցով քվեարկելիս հնարավոր է, որ սերվերը ենթարկվի հաքերային հարձակման, կամ ստեղծվեն վիրուսներ և վնասակար ծրագրեր, որոնք կարող են փոխել ընտրողի կամաարտահայտության արդյունքները վերջինիս անհատական համակարգչում), դրա ծրագրային ապահովման հետ կապված հնարավոր մի շարք խնդիրներ և այլն:

Այնուամենայնիվ, ժամանակակից աշխարհում էլեկտրոնային քվեարկության համակարգերի կատարելագործման աշխատանքները շարունակելու անհրաժեշտությունն այսօր կասկածի տակ չի դրվում: Ընտրական տեխնոլոգիաների մասնագետների կարծիքով խնդիրը ոչ թե էլեկտրոնային քվեարկության անհրաժեշտության մեջ է, այլ նրանում, թե ինչպես նախապատրաստել և լավագույնս ներդնել դրա պրակտիկան:

Ներկայումս էլեկտրոնային քվեարկությունն, ի թիվս այլ միջոցների, իրականացվում է նաև Ինտերնետի միջոցով: Քվեարկության նպատակով Ինտերնետի օգտագործման գաղափարը սկսեց քննարկվել դեռևս 1980-ականներին, թեև սկզբնական շրջանում չէր ենթադրվում այս միջոցի օգտագործումը համապետական ընտրությունների կամ հանրաքվեների ժամանակ դրա տեղեկատվական թույլ պաշտպանվածության պատճառով¹:

¹ Մանրամասն տե՛ս Electronic Voting // http://en.wikipedia.org/wiki/Electronic_voting#Overview:

2000-ականներին Ինտերնետի միջոցով քվեարկության համակարգը ներդրվեց եվրոպական մի շարք պետություններում: Օրինակ՝ 2005 թվականին Ինտերնետ քվեարկություն անցկացվեց Էստոնիայում տեղական ընտրությունների ժամանակ: 9317 ընտրողներ քվեարկեցին Ինտերնետի միջոցով: Համակարգը դիմացավ փորձություններին և պաշտոնյաների կողմից որակվեց բարեհաջող: 2007 թվականին Էստոնիան առաջին անգամ օգտագործեց Ինտերնետ քվեարկության համակարգը համապետական մակարդակով՝ խորհրդարանական ընտրությունների ժամանակ, երբ Ինտերնետ քվեարկության ծառայությունից օգտվեցին 30 275 ընտրողներ: 2009 թվականին Էստոնիայում անցկացվեցին տեղական մունիցիպալ ընտրություններ, որոնց Ինտերնետի միջոցով մասնակցեցին 104 415 ընտրողներ, այսինքն՝ քվեարկության իրավունք ունեցողների շուրջ 9,5 տոկոսը: 2011 թվականի խորհրդարանական ընտրությունների ժամանակ Ինտերնետի միջոցով տրվեցին ռեկորդային թվով ձայներ՝ 140 846 ձայն, ինչը կազմում է ձայների ընդհանուր թվի 24,5 տոկոսը:

Նիդերլանդներում առցանց ռեժիմով փորձական քվեարկության մասին օրենքը (ուժի մեջ է մտել 2003 թվականի դեկտեմբերին) թույլ է տալիս քվեարկել մունիցիպալիտետի տարածքում գտնվող ցանկացած ընտրական տեղամասում ինչպես Ինտերնետով (քվեարկության օրվանից 4 օր առաջ), այնպես էլ հեռախոսով: Ընդ որում՝ այսպիսի եղանակներով քվեարկելու հնարավորություն է ընձեռված նաև արտերկրում գտնվող ընտրողներին: Նիդերլանդներում նշված եղանակներով քվեարկության առաջին փորձարկումն անցկացվեց 2004 թվականին՝ Եվրոպական խորհրդարանի ընտրությունների ժամանակ, որոնց արդյունքները ցույց տվեցին, որ Ինտերնետի միջոցով քվեարկությունն, ընդհանուր առմամբ, հաջող անցավ, մինչդեռ հեռախոսի միջոցով քվեարկելու հնարավորությունից օգտվեցին ոչ մեծ թվով ընտրողներ: Ուստի որոշվեց հրաժարվել ընտրողների կամահայտնության հեռախոսային եղանակից և հետագայում զարգացնել Ինտերնետ քվեարկության համակարգը: Ինտերնետ քվեարկության համակարգը կրկին օգտագործվեց 2006 թվականի մունի-

ցիպալ ընտրությունների ընթացքում: Արտերկրում գրանցված 34305 ընտրողներից 21593-ը Ինտերնետի միջոցով քվեարկության հայտ ներկայացրին: Արդյունքում 19815 ընտրողներ քվեարկեցին այս եղանակով¹:

Կանադայում առաջին Ինտերնետ քվեարկությունն անցկացվեց 2003 թվականին՝ Նոր դեմոկրատական կուսակցության ղեկավարի ընտրությունների ժամանակ, որի ընթացքում ծագեցին լուրջ խնդիրներ: Ընտրողներին տևական ժամանակ չէր հաջողվում գրանցվել համակարգում: Իսկ երբ խնդիրը լուծվեց, պարզվեց, որ քվեարկության համար հատկացված ժամանակը սպառվել է 45 րոպե առաջ: Այնուամենայնիվ, ընտրությունների արդյունքները ձանաչվեցին²:

Իսպանիայում 2004 թվականին ընդունվեց «Բասկերի ինքնավարության համար էլեկտրոնային կառավարության մասին» օրենքը, որը դրույթներ է բովանդակում Ինտերնետ քվեարկության վերաբերյալ³: 2005 թվականի հանրաքվեի ժամանակ երկու միլիոն ընտրողներից (52 միլիոնից պալիտետներում) Ինտերնետ քվեարկության համակարգից օգտվել է շուրջ 10000 քաղաքացի:

01.06.2003 թվականին ԱՄՆ-ում բնակվող Ֆրանսիայի քաղաքացիներին հնարավորություն ընձեռվեց ընտրելու իրենց ներկայացուցիչներին արտասահմանում բնակվող Ֆրանսիայի քաղաքացիների Ասամբլեայում (*Assemblée des Français de l'Étranger* – AFE)

¹ Sten Leontine Loeber. «E-Voting in the Netherlands; from General Acceptance to General Doubt in Two Years» // www.e-voting.cc/files/loeber_e-voting-in-the-netherlands_21-30:

Ընտրողներին առաջարկվեց լրացնել առցանց հարցաթերթիկներ՝ փորձարկման հաջողության վերաբերյալ նրանց կարծիքները բացահայտելու նպատակով: Արդյունքում հարցաթերթիկներին պատասխանեցին 11 003 ընտրողներ, որոնց 99 տոկոսը նախընտրեց Ինտերնետի միջոցով քվեարկությունը. ընդ որում՝ հարցվածների 94 տոկոսը ցանկություն հայտնեց, որ Ինտերնետ քվեարկությունը ներդրվի մշտական հիմունքներով:

² Стен И. Борисов, В. Журавлев. Развитие электронного голосования // Журнал о выборах, N 4, 2011, էջ 43 (www.cikrf.ru/about/library/journal/2011/n4/Borisov.pdf):

³ Sten Rosa M. Fernández, Esther González, José Manuel Vera. The electoral legislation of the Basque autonomous community regarding electronic vote // www.e-voting.cc/files/fernandez_basque_e-voting_71-83:

հեռակա էլեկտրոնային քվեարկության միջոցով: Այն հանդես է գալիս որպես օրենսդիր մարմին, որ ընտրում է 150 պատվիրակների, որոնք էլ, իրենց հերթին, ընտրում են Ֆրանսիայի խորհրդարանի վերին պալատի 12 անդամների՝ Ֆրանսիայի սահմաններից դուրս բնակվող քաղաքացիների շահերը ներկայացնելու նպատակով: ԱՄՆ-ում գրանցված 61056 ընտրողների 8,77 տոկոսը, որը կազմում է նշված ընտրությունների ժամանակ ձայնի իրավունք ունեցող բոլոր ընտրողների 60,6 տոկոսը, քվեարկեց Ինտերնետի միջոցով: Նույն թվականին մասնավոր նախաձեռնություններից մեկը (Forum des droits sur l'Internet) Ֆրանսիայի կառավարության աջակցությամբ հրապարակեց Ֆրանսիայում էլեկտրոնային քվեարկության ապագային վերաբերող մի շարք հանձնարարականներ: Մասնավորապես արձանագրվեց, որ Ֆրանսիայում հեռակա էլեկտրոնային քվեարկության համակարգը չպետք է օգտագործվի, բացառությամբ AFE պատվիրակների ընտրությունների: Վերջին դեպքում պետք է հնարավորություն ընձեռվի քվեարկելու Ինտերնետի միջոցով: Միաժամանակ ողջունվեց ստացիոնար էլեկտրոնային քվեարկության համակարգի օգտագործումը, ինչը հաստատվեց Ֆրանսիայի կառավարության 18.03.2004 թվականի դեկրետով¹: Ինտերնետ քվեարկության համակարգը Ֆրանսիայում օգտագործվեց նաև 2012 թվականի Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ, ինչի արդյունքում ծագեցին մի շարք խնդիրներ: Ինտերնետ քվեարկություններ են անցկացվել նաև Մեծ Բրիտանիայում, Ավստրիայում, Գերմանիայում, Պորտուգալիայում և մի շարք այլ պետություններում²:

Ինտերնետի միջոցով էլեկտրոնային քվեարկության առավելություններից են, օրինակ, քվեարկության հարմարավետությունը և քվեարկության համար ընտրական տեղամաս այցելելու անհրաժեշտության բացակայությունը (ժամանակի նվազագույն ծախս), ընտրությունների անցկացման ծախսերի կրճատումը:

¹ Стн Электронное голосование в разных странах (<http://aceproject.org/ace-ru/focus/e-voting/countries>):

² Стн Г. П. Акимова, А. К. Попов, А. В. Соловьев. Аналитическое исследование систем для электронного голосования // Труды ИСА РАН, 2007, էջեր 124-125 (<http://www.isa.ru/proceedings/images/documents/2007-29/123-138.pdf>):

Ինտերնետի միջոցով քվեարկության տեխնոլոգիաները գործնականում էական ծախսեր չեն պահանջում¹:

Կասկածից վեր է, որ Ինտերնետի միջոցով քվեարկության համակարգի ներդրումն անհրաժեշտություն է, սակայն այդ նորամուծությանը պետք է զգուշորեն մոտենալ ինչպես տեխնիկական առումով, այնպես էլ իրավաբանական տեսանկյունից²: Ինտերնետի օգտագործմամբ քվեարկությունը պետք է հիմնվի ժողովրդավարական ընտրությունների չափանիշների վրա և պետք է լինի նույնքան հուսալի ու անվտանգ, որքան առանց էլեկտրոնային միջոցների օգտագործման անցկացվող քվեարկությունը³:

Հայաստանի Հանրապետությունում ևս էլեկտրոնային եղանակով քվեարկությունն իրականացվում է համացանցով (ինտերնետով) ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում՝ էլեկտրոնային քվեարկությունն ապահովող ծրագրի միջոցով՝ քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 9 և ոչ ուշ, քան 5 օր առաջ: Այն քաղաքացու ընտրական իրավունքն իրացնելու այլընտրանքային հնարավորություն է, որը զուգորդվում է քվեարկության ավանդական եղանակի հետ. քաղաքացին է որոշում քվեարկել նախապես՝ էլեկտրոնային եղանակով, թե քվեարկության օրը Հայաստանի Հանրապետության տարածքում կազմավորված տեղամասային կենտրոնում: Այս կապակցությամբ հարց է ծագում, թե որքանով էր նպատակահարմար համապետական ընտրությունների ժամանակ էլեկտրոնային քվեարկության հնարավորության նախատեսումը ՀՀ ընտրական օրենսգրքում: Նախ և առաջ ուշադրության է արժանի 2012 թվականի մայիսի 6-ի և

¹ Стен Гертнер Д. А. Электронная совесть – феномен информационных технологий // Защита информации. Конфидент. СПб., 2004, N 6, էջ 25:

² Стен Дурнова И. А. Зарубежный опыт проведения интернет-выборов и проблемы для России // Информационное право, 2007, N 2(9), էջեր 26–30:

³ Стен Рекомендации для международных наблюдателей от Содружества Независимых Государств по наблюдению за выборами и референдумами (новая редакция), Межпарламентская Ассамблея государств-участников Содружества Независимых Государств, Санкт-Петербург, 2011 г., բաժին 6, ենթակետ 7.2:

2013 թվականի փետրվարի 18-ի համապատասխանաբար՝ ՀՀ Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով և ՀՀ նախագահական ընտրություններին՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված էլեկտրոնային եղանակով քվեարկությունների պատկերը: Այսպես՝ 06.05.2012 թվականի և 18.02.2013 թվականի ընտրություններին էլեկտրոնային եղանակով քվեարկության ցուցակներում ընդգրկված ընտրողների թիվը կազմել է համապատասխանաբար՝ 238 և 243: Ընդ որում՝ էլեկտրոնային եղանակով քվեարկություններին մասնակցել են համապատասխանաբար՝ 195 և 228 ընտրողներ: Հատկանշական է, որ իշխող կուսակցության օգտին (Հայաստանի հանրապետական կուսակցություն) քվեարկված քվեաթերթիկների թիվը կազմել է 174՝ 195-ից, իսկ ՀՀ գործող Նախագահի օգտին՝ 218՝ 228-ից:

06.05.2012 թվականի՝ ՀՀ Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով ընտրությունների ժամանակ ընտրողների ընդհանուր թիվը կազմել է 2523101, իսկ քվեարկության մասնակիցների թիվը՝ 1573053: ՀՀ Նախագահի՝ 18.02.2013 թվականի ընտրությունների ժամանակ ընտրողների ընդհանուր թիվը կազմել է 2528050, իսկ քվեարկության մասնակիցների թիվը՝ 1521489¹:

Վերը նշված ցուցանիշները վկայում են, որ էլեկտրոնային եղանակով քվեարկություններին մասնակցած ընտրողների թիվը չնչին է: Հետևաբար ի՞նչ նպատակ(ներ) է հետապնդում ՀՀ ընտրական օրենսգիրքը՝ համապետական ընտրություններին էլեկտրոնային եղանակով քվեարկելու հնարավորություն նախատեսելով միայն առանձին կատեգորիաների սուբյեկտների համար: Դրանք են՝

1) քվեարկության օրը ՀՀ տարածքից դուրս գտնվելու դեպքում ՀՀ դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություններում դիվանագիտական ծառայություն անցնող

¹ Նշված ցուցանիշները վերցված են ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքէջից (www.elections.am):

ընտրողները և նրանց հետ արտերկրում բնակվող ընտանիքի՝ ընտրելու իրավունք ունեցող անդամները.

2) Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձանց (անկախ սեփականության ձևից)՝ արտասահմանում տեղակայված ներկայացուցչությունների՝ ընտրելու իրավունք ունեցող աշխատակիցները և նրանց հետ արտերկրում բնակվող ընտանիքի՝ ընտրելու իրավունք ունեցող անդամները:

Թերևս փորձ է կատարվել ներդնելու արտասահմանյան բազմաթիվ պետություններում արդեն իսկ կիրառություն ստացած հնտերնետ քվեարկության համակարգը, և նախատեսվել է սույն եղանակով քվեարկելու իրավունք ունեցող սուբյեկտների խիստ սահմանափակ շրջանակ, ինչը չի կարելի արդարացված համարել՝ առավել ևս նկատի ունենալով այն հանգամանքը, որ ՀՀ տարածքում քվեարկությունն առայժմ իրականացվում է բացառապես ավանդական եղանակով: Փաստորեն, արտերկրում բնակվող ՀՀ քաղաքացիների ճնշող մեծամասնությունը Հայաստանի Հանրապետությունում անցկացվող համապետական ընտրությունների ժամանակ զրկված է ցանկացած եղանակով քվեարկությանը մասնակցելու հնարավորությունից քվեարկության օրը ՀՀ տարածքից դուրս գտնվելու դեպքում: Քվեարկության օրը ՀՀ տարածքում կազմավորված տեղամասային կենտրոններում քվեարկելու գործընթացը արտասահմանում բնակվող ՀՀ քաղաքացիներից պահանջում է բավական մեծ ծախսեր (ձանապարհածախս, կեցության ծախսեր և այլն), և թեև ընտրություններին մասնակցելը քաղաքացու իրավունքն է, այլ ոչ պարտականությունը, այնուամենայնիվ, արտասահմանում բնակվող ՀՀ քաղաքացիներից քչերի մոտ կառաջանա Հայաստանի Հանրապետությունում զուտ քվեարկելու նպատակով այսպիսի ծախսեր կատարելու ցանկություն: Մյուս կողմից՝ նրանց ճնշող մեծամասնությունն օրենսդրորեն չունի էլեկտրոնային եղանակով քվեարկելու իրավունք: Որպես նշված խնդրի լուծման հնարավոր տարբերակներ՝ առավել նպատակահարմար է կան ընդհանրապես հրաժարվել էլեկտրոնային եղանակով քվեարկության համակարգից, կան

ընդլայնել նշված եղանակով քվեարկելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը, կամ էլ արտասահմանում բնակվող ՀՀ քաղաքացիներին ՀՀ համապետական ընտրություններին ՀՀ դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություններում կազմավորված տեղամասային կենտրոններում քվեարկելու հնարավորություն ընձեռել: Նշված հարցով հստակ դիրքորոշում է արտահայտված ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի և Եվրախորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով)՝ ՀՀ ընտրական նոր օրենսգրքի նախագծի վերաբերյալ 20.04.2011 թվականի համատեղ եզրակացության մեջ (CDL(2011)020): Ըստ այդմ՝ հեռահար էլեկտրոնային քվեարկությունը խիստ վիճելի է, քանի որ այն չի կարող երաշխավորել քվեարկության գաղտնիությունը, և հնարավոր չէ իրականացնել այնպիսի դիտորդություն, ինչպիսին իրականացվում է տեղամասային կենտրոններում: Էլեկտրոնային քվեարկության համակարգի ներդրումը մի իրավիճակում, երբ վստահությունը ընտրական վարչարարության անկողմնակալության նկատմամբ սահմանափակ է, պետք է զգուշորեն գնահատվի: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը և Վենետիկի հանձնաժողովն առաջարկեցին վերանայել Հայաստանի Հանրապետության դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություններում դիվանագիտական ծառայություն անցնող ընտրողների և նրանց հետ արտերկրում բնակվող ընտանիքների համար էլեկտրոնային քվեարկության անհրաժեշտության հարցը¹:

Սույն հիմնախնդրին անդրադարձ է կատարված նաև ԱՊՀ անդամ պետությունների միջխորհրդարանական վեհաժողովի դիտորդական խմբի եզրակացության մեջ՝ կապված ՀՀ Ազգային ժողովի 06.05.2012 թվականի ընտրությունների հետ: Ըստ այդմ. «Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս ՀՀ քաղաքացիների քվեարկության նպատակա-

¹ Տե՛ս ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի և Եվրախորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով)՝ ՀՀ ընտրական նոր օրենսգրքի նախագծի վերաբերյալ 20.04.2011 թվականի համատեղ եզրակացության 60-րդ կետը (CDL(2011)020):

հարմարության և կառուցակարգի վերաբերյալ հարցերը պահանջում են համակողմանի քննարկում...»¹:

Մյուս կողմից՝ Եվրախորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողովի) «Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագիրք. ցուցումներ և բացատրական զեկույց» (CDL-AD (2002) 23) փաստաթղթի բացատրական զեկույցում ամրագրված է. «Բվեարկության էլեկտրոնային մեթոդները պետք է լինեն ապահով և հուսալի: Դրանք ապահով կարող են համարվել, եթե համակարգն ի վիճակի լինի դիմանալու հատուկ նպատակադրված հարձակման, և հուսալի, եթե կարողանան գործել ինքնուրույն՝ անկախ հաշվողական տեխնիկայի և ծրագրերի թերություններից: Բացի այդ, ընտրողը պետք է կարողանա ձեռք բերել իր քվեի հաստատումը և անհրաժեշտության դեպքում ուղղել այն՝ առանց որևէ ձևով խախտելու ընտրությունների գաղտնիությունը: Ավելին՝ համակարգի թափանցիկությունը պետք է երաշխավորված լինի այն առումով, որ հնարավոր լինի ստուգել և հավաստիանալ, որ այն աշխատում է պատշաճ կերպով» (կետեր 43, 44)²:

Խնդրի լուծման տարբերակներից մեկն էլ կարող է լինել արտասահմանում բնակվող՝ ընտրելու իրավունք³ ունեցող ՀՀ քաղաքացիների համար Հայաստանի Հանրապետությունում անցկացվող համապետական ընտրություններին քվեարկելու հնարավորության նախատեսումը քվեարկության օրը ՀՀ տարածքից

¹ Стн Заключение группы наблюдателей от Межпарламентской Ассамблеи государств – участников Содружества Независимых Государств на выборах Национального Собрания Республики Армения 6 мая 2012 года.

² Стн «Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագիրք. ցուցումներ և բացատրական զեկույց» փաստաթուղթը (CDL-AD (2002) 23 (ընդունված Վենետիկի հանձնաժողովի կողմից 52-րդ լիագումար նստաշրջանի ընթացքում (Վենետիկ, 2002 թ. հոկտեմբերի 18-19)), բացատրական զեկույցի կետեր 43, 44:

³ Ընտրել և ընտրվել չեն կարող դատարանի վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատագրվման դատապարտված և պատիժը կրող քաղաքացիները (ՀՀ Սահմանադրության 30-րդ հոդված, ՀՀ ընտրական օրենսգրքի 2-րդ հոդվածի 3-րդ մաս):

դուրս գտնվելու դեպքում: Իհարկե, տվյալ դեպքում ՀՀ սահմաններից դուրս ընտրությունների կազմակերպման և անցկացման կազմակերպատեխնիկական մի շարք միջոցառումներ կարող են ոչ իրատեսական թվալ: Օրինակ՝ դժվար է պատկերացնել, թե ինչպես պետք է կազմավորվեն ընտրական տեղամասերը Ամերիկայի Միացյալ Նահանգների կամ Ռուսաստանի Դաշնության յուրաքանչյուր բնակավայրում: Տվյալ դեպքում խնդրին կարելի է լուծում տալ՝ ընտրական տեղամասեր բացելով արտերկրում ՀՀ դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություններում: Ճիշտ է, նշված դեպքում ևս հնարավոր չի լինի լուծում տալ բոլոր խնդիրներին: Օրինակ՝ վերը նշված պետությունների հեռավոր բնակավայրերում բնակվող ՀՀ քաղաքացիների մեծամասնությունը չեն իրացնի իրենց ակտիվ ընտրական իրավունքը այն պարզ պատճառաբանությամբ, որ տվյալ պետություններում գործող ՀՀ դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությունների տեղակայման վայրեր հասնելու համար նրանցից կպահանջվեն մեծ ջանքեր: Ավելին՝ որոշ դեպքերում արտերկրում բնակվող ՀՀ քաղաքացիները քվեարկությանը մասնակցելու նպատակով կնախընտրեն այցելել Հայաստանի Հանրապետություն, քան օտարերկրյա համապատասխան պետության ՀՀ դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություն: Այնուամենայնիվ, նշված քայլով արտերկրում բնակվող ՀՀ քաղաքացիներին իրավաբանորեն կրնձեռվի քվեարկության օրը ՀՀ տարածքից դուրս գտնվելու դեպքում ՀՀ համապետական ընտրություններին մասնակցելու հնարավորություն, և անկախ այն հանգամանքից, թե այն ինչպես կիրացվի գործնականում՝ պայմանավորված օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով, կասկածից վեր է, որ նման իրավակարգավորում նախատեսելու դեպքում իրենց ակտիվ ընտրական իրավունքը կիրացնեն արտասահմանում բնակվող ընտրական իրավունք ունեցող անհամեմատ ավելի մեծ թվով ՀՀ քաղաքացիներ, քան գործող իրավակարգավորման պայմաններում: Ավելորդ չենք համարում նշել, որ մինչև «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 26.02.2007 թվականի

ՀՕ-79-Ն օրենքի ընդունումը¹ Հայաստանի Հանրապետության 05.02.1999 թվականի ընտրական օրենսգիրքը² նախատեսում էր, որ արտասահմանում բնակվող կամ գտնվող ՀՀ քաղաքացիների ընտրական իրավունքի իրականացումն ապահովում են ՀՀ դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունները՝ սույն օրենսգրքով և կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով (հոդ. 2, կետ 2): Ըստ այդմ՝ օտարերկրյա պետություններում ՀՀ դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությունների ղեկավարների կազմած ընտրողների ցուցակում (ՀՀ տարածքից դուրս կազմվող ընտրողների ցուցակ) կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով ընդգրկվում էին ընտրելու իրավունք ունեցող և հայտ ներկայացրած ՀՀ այն քաղաքացիները, ովքեր բնակվում կամ գտնվում էին ՀՀ տարածքից դուրս, իսկ օտարերկրյա պետություններում ՀՀ դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչության բացակայության դեպքում ՀՀ քաղաքացին ընտրողների ցուցակում գրանցվելու հայտով կարող էր դիմել իր բնակվելու կամ գտնվելու վայրին մոտ գտնվող պետությունում գործող ՀՀ դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություն (հոդ. 9, կետ 5, հոդ. 10, կետեր 6, 7):

ՀՀ համապետական ընտրությունների ժամանակ կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով տեղամասային կենտրոններ էին կազմավորվում արտասահմանում՝ ՀՀ դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություններում (հոդ. 15, կետ 4): Դրանք կազմավորում էր ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հիմնարկի ղեկավարը քվեարկության օրվանից առնվազն 45 օր առաջ, ինչպես նաև քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 19 և ոչ ուշ, քան 16 օր առաջ ձևավորում ընտրական հանձնաժողովներ ընտրական իրավունք ունեցող ՀՀ քաղաքացիներից³:

¹ Ներկայումս չի գործում:

² Ուժը կորցրել է 26.05.2011 ՀՕ-164-Ն:

³ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 10.10.2005 թվականի՝ «Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչություններում և հյուպատոսական հիմնարկներում Հա-

Քվեարկությունից 7 օր առաջ կենտրոնական ընտրական հանձնաժողովը ՀՀ արտաքին գործերի նախարարության միջոցով ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություններ կամ հյուպատոսական հիմնարկներ էր ուղարկում ՀՀ Նախագահի՝ գրանցված թեկնածուների տվյալները և Ազգային ժողովի՝ համամասնական ընտրակարգով գրանցված կուսակցությունների ընտրական ցուցակները, քվեաթերթիկները, ընտրական այլ փաստաթղթերի նմուշները: Քվեաթերթիկների պատրաստումն ապահովում էր ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հիմնարկի ղեկավարը, որը նախապատրաստում, կազմակերպում և անցկացնում էր ընտրությունները, ամփոփում քվեարկության արդյունքները, կազմում էր արձանագրություն, որի տվյալները պաշտոնապես անհապաղ ուղարկում էր կենտրոնական ընտրական հանձնաժողով: Այդ արձանագրությունն, ընտրական փաստաթղթերի հետ միասին զմուշկված վիճակում հատուկ փոստով ուղարկվում էր կենտրոնական ընտրական հանձնաժողով (հոդ. 51):

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 26.02.2007 թվականի ՀՕ-79-Ն օրենքի ընդունման անհրաժեշտությունը փորձեցին պայմանավորել 27.11.2005 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում երկքաղաքացիության ինստիտուտի ներդրմամբ, ինչի հետևանքով, ըստ որոշ կարծիքների, էապես կմեծանա սփյուռքի ազդեցությունը Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցող ընտրական գործընթացների վրա: Այսպիսի մտավախությունն, իհարկե, հիմնազուրկ չէ, սակայն, մյուս կողմից, չի կարող բացարձակացվել: Տեսականորեն այսօր էլ արտասահմանում բնակվող ընտրական իրավունք ունեցող ՀՀ քաղաքացիները կարող են մասնակցել ՀՀ համապետական ընտ-

յաստանի Հանրապետության քաղաքացիների ընտրական և (կամ) հանրաքվեին մասնակցելու իրավունքի իրականացումն ապահովելու կարգի մասին» թիվ 49-Ն որոշման հավելվածի 8-րդ կետը: Սույն որոշումն ուժը կորցրել է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 14.03.2007 թվականի՝ «Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 52-Ն որոշմամբ:

րություններին՝ պայմանով, եթե քվեարկության օրը գտնվեն ՀՀ տարածքում, բացառությամբ էլեկտրոնային եղանակով քվեարկելու իրենց իրավունքն իրացրած ՀՀ քաղաքացիների: Այսինքն՝ իրավունքն իրավաբանորեն ամրագրված է, սակայն դրա իրացման կառուցակարգերը պայմանավորված են բազում դժվարություններով: Մինչդեռ ընդհանուր ընտրական իրավունքը ենթադրում է դրա իրացման հնարավորինս մատչելի, արդյունավետ կառուցակարգերի սահմանում, ինչի բացակայությունը հանգեցնում է քաղաքացիների՝ սահմանադրորեն և միջազգային մի շարք հիմնարար փաստաթղթերով ամրագրված ընդհանուր ընտրական իրավունքի սահմանափակման՝ ընթացակարգային առումով:

Արտասահմանում բնակվող կամ գտնվող տվյալ պետության քաղաքացիների՝ դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչություններում ընտրական իրավունքի իրականացումն ապահովող դրույթներ են բովանդակվում մի շարք պետությունների օրենսդրության մեջ: Այսպես, օրինակ՝ Ղրղզստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող կամ գտնվող Ղրղզստանի քաղաքացիները քվեարկում են բացառապես Ղրղզստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունների, հյուպատոսական հիմնարկների տարածքում: Նրանց ընտրական իրավունքներն ապահովվում են արտաքին գործերի հարցերով իրավասու պետական մարմնի կողմից, իրենց դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների միջոցով¹:

Արտերկրներում Ղազախստանի Հանրապետության ներկայացուցչություններին կից ձևավորվում են ընտրական տեղամասեր, որոնք վերաբերում են այն ընտրատարածքին, որի տարածքում է գտնվում Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը²: Ընդ որում՝ արտերկրներում Ղազախստանի Հան-

¹ Стн Конституционный закон Кыргызской Республики “О выборах Президента Кыргызской Республики и депутатов Жогору Кенеша Кыргызской Республики” от 2 июля 2011 года N 68 (в ред. конституционного Закона КР от 25 ноября 2011 года N 221), *հոդ. 2, մաս 2*:

² Стн Конституционный закон Республики Казахстан “О выборах в Республике Казахстан” от 28.09.1995 N 2464, *հոդ. 23, կետ 3*:

րապետության ներկայացուցչություններին կից ձևավորված ընտրական տեղամասերում ընտրողների ցուցակում ընդգրկվում են օտարերկրյա համապատասխան պետությունում բնակվող կամ արտասահմանում երկարատև գործուղման մեջ գտնվող և Հանրապետության քաղաքացու վավերական անձնագրեր ունեցող բոլոր անձինք: Մասնավոր հրավերներով, ծառայողական, գործնական և ճամփորդական այցերով արտերկրներ ժամանած Ղազախստանի Հանրապետության քաղաքացիները տեղամասային ընտրական հանձնաժողով դիմելու և իրենց մոտ Ղազախստանի Հանրապետության քաղաքացու վավերական անձնագրեր ունենալու դեպքերում ընդգրկվում են ընտրողների ցուցակներում¹:

Թուրքմենստանում, արտաքին գործերի նախարարության ներկայացմամբ, կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից Թուրքմենստանի դիվանագիտական ներկայացուցչություններին կից կարող են կազմավորվել ընտրական տեղամասեր, որտեղ ընտրողների ցուցակում ընդգրկվում են Թուրքմենստանի՝ արտերկրում գտնվող քաղաքացիները²:

Ռուսաստանի Դաշնության սահմաններից դուրս բնակվող ՌԴ քաղաքացին պետական իշխանության դաշնային մարմինների ընտրությունների ժամանակ օժտված է ընտրական իրավունքների ամբողջ ծավալով: Ռուսաստանի Դաշնության դիվանագիտական ներկայացուցչությունները, հյուպատոսական հիմնարկները պարտավոր են աջակցել ՌԴ քաղաքացուն՝ իրացնելու ՌԴ համապատասխան դաշնային օրենքներով սահմանված ընտրական իրավունքները պետական իշխանության դաշնային մարմինների ընտրություններ անցկացնելիս³: Քվեարկության օրը Ռուսաստանի Դաշնության սահմաններից դուրս գտնվող ընտրողների քվեարկության անցկացման և ձայները հաշվելու համար ընտրողների գտնվելու պետության տարածքում ՌԴ դի-

¹ Տե՛ս նույն տեղում, հոդ. 25, կետ 1:

² Տե՛ս Закон Туркменистана от 4 мая 2013 года “Об утверждении и введении в действие Избирательного кодекса Туркменистана” (ուժի մեջ է 01.07.2013 թ–ից), հոդ. 39, մաս 4, հոդ. 41, մաս 5:

³ Տե՛ս Федеральный закон от 12.06.2002 N 67–ФЗ “Об основных гарантиях избирательных прав и права на участие в референдуме граждан Российской Федерации” (ред. от 07.05.2013), հոդ. 3, կետ 4:

վանագիտական ներկայացուցչությունների կամ հյուպատոսական հիմնարկների ղեկավարների կողմից կազմավորվում են ընտրական տեղամասեր: ՌԴ սահմաններից դուրս կազմավորված ընտրական տեղամասում ընտրողների ցուցակը կազմվում է համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից՝ ՌԴ սահմաններից դուրս մշտապես բնակվող կամ արտասահմանում երկարատև գործուղումների մեջ գտնվող ՌԴ քաղաքացիների դիմումների հիման վրա¹:

Նշված հիմնախնդրին անդրադարձել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը *Sitaropoulos and Giakoumopoulos v. Greece* (N 42202/07) գործով: «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածում, որը վերաբերում է ազատ ընտրությունների իրավունքին, ամրագրված է. «Քարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են անցկացնել ազատ ընտրություններ՝ ողջամիտ պարբերականությամբ, գաղտնի քվեարկությամբ, այնպիսի պայմաններում, որոնք կապահովեն ժողովրդի կամքի ազատ արտահայտումն օրենսդիր իշխանություն ընտրելիս»: 2007 թվականի սեպտեմբերին Ֆրանսիայում մշտապես բնակվող դիմումատուները Ֆրանսիայում Հունաստանի դեսպանին ուղղված ֆաքսի միջոցով ցանկություն հայտնեցին Ֆրանսիայում իրացնել Հունաստանի խորհրդարանական ընտրություններին մասնակցելու իրենց իրավունքը: Դեսպանը պարզաբանեց, որ նրանց պահանջը չի կարող բավարարվել օբյեկտիվ պատճառներով, մասնավորապես՝ օրենսդրական կարգավորման բացակայության պատճառով, ինչը պահանջվում էր «դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչություններում քվեարկության համար ընտրական տեղամասերի կազմավորմանն ուղղված հատուկ

¹ Տե՛ս Федеральный закон от 10.01.2003 N 19-ФЗ “О выборах Президента Российской Федерации” (ред. от 07.05.2013), հոդ. 25, կետ 6, հոդ. 26, կետ 6: Տե՛ս նաև Федеральный закон от 18.05.2005 N 51-ФЗ “О выборах депутатов Государственной Думы Федерального Собрания Российской Федерации” (в ред. от 02.07.2013), հոդ. 5, մաս 3, հոդ. 13, մաս 6, հոդ. 15, մաս 7:

միջոցառումների» ապահովման նպատակով: Արդյունքում դիմումատուները չկարողացան իրացնել ընտրությունների ժամանակ քվեարկության իրենց իրավունքը: Նշված գործի հետ կապված՝ Եվրոպական դատարանն արձանագրեց, որ Հունաստանի Սահմանադրության համապատասխան հոդվածը նախատեսել է օրենսդրի կողմից արտասահմանում գտնվող ընտրողների՝ քվեարկության իրավունքի իրականացման համար պայմանների ստեղծման հնարավորությունը: Սակայն Սահմանադրությունն ազգային իշխանություններին ուղղակիորեն չի պարտավորեցրել ապահովել այդ իրավունքը: Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածը չի կարող մեկնաբանվել որպես ազգային իշխանությունների համար պոզիտիվ պարտականություն ստեղծող՝ ապահովելու խորհրդարանական ընտրությունների ժամանակ արտասահմանում բնակվող ընտրողների քվեարկության իրավունքը: Սակայն Սահմանադրությամբ նախատեսված հնարավորությունը չի կարող մնալ առանց կիրառության անորոշ ժամանակահատվածի ընթացքում. հակառակ դեպքում դրա բովանդակությունը և այն մշակողների մտադրությունները կգրկվեն նորմատիվ նշանակությունից: Սահմանադրության ընդունումից 35 տարի անց օրենսդիրը Սահմանադրության այն նորմը դեռևս գործողության մեջ չի դրել: Դրա օրենսդրական կենսագործման բացակայությունը փաստացի ցույց տվեց, որ ազգային իշխանությունները հակված չեն ապահովելու էքսպատրիանտների կողմից ըստ բնակության վայրի իրենց ձայնի իրավունքի իրացման հնարավորությունը: Հավանական է, որ նրանք տնտեսական, մասնագիտական կամ ընտանեկան պատճառներով գործնականում հնարավորություն չեն ունեցել վերադառնալու իրենց ծննդավայրի պետություն՝ ազգային ընտրություններին մասնակցելու նպատակով: Դրա հետևանքով այդչափ տևական ժամանակահատվածում որևէ իրավակարգավորման բացակայությունը, թերևս, հանդիսացել է արտասահմանում բնակվող Հունաստանի քաղաքացիների հանդեպ ոչ արդարացի վերաբերմունք, ի համեմատ Հունաստանում բնակվողների: Բացի այդ, պատասխանող պետությունը (Հունաստանը) ակնհայ-

տորեն դուրս է եկել Եվրոպայի խորհրդի կողմից ողջունվող՝ ազգային ընտրություններին տվյալ պետության տարածքում չբնակվող քաղաքացիների մասնակցության առավելագույնս ապահովման անհրաժեշտության վերաբերյալ մասնակից պետությունների փոխզիջման շրջանակներից: Պատասխանող պետության հայեցողության շրջանակները եղել են սահմանափակ, քանի որ քվեարկության իրավունքի սահմանափակումները գնահատելիս, ակտիվ ընտրական իրավունքի իրացման հետ կապված, Եվրոպական դատարանը դրսևորել է ավելի մեծ պահանջկոտություն, քան պասիվ ընտրական իրավունքի հանդեպ: Չնայած ձայնի իրավունքի իրացման հարցում ազգային ինքնավարության հանգամանքին՝ այն փաստը, որ ավելի քան երեք տասնամյակների ընթացքում բացակայել է Սահմանադրության համապատասխան հոդվածի օրենսդրական ապահովումը, վկայում է պատասխանող պետության պատասխանատվության մասին: Պետության կողմից արդյունավետ միջոցների կիրառումից խուսափելը խախտել է ազատ ընտրությունների իրավունքը: Այսպիսով՝ արձանագրվեց, որ սույն գործով խախտվել են Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի պահանջները¹:

Ավելի ուշ Եվրոպական դատարանի Մեծ պալատը կայացրեց տրամագծորեն հակառակ որոշում²: Մասնավորապես արձանագրվեց, որ ո՛չ գործող միջազգային և տարածաշրջանային փաստաթղթերը, ո՛չ էլ դրանց մեկնաբանությունները միջազգային իրավասու մարմինների կողմից թույլ չեն տալիս եզրահանգել, որ պետությունից ժամանակավորապես կամ մշտապես դուրս գտնվող դրա քաղաքացիների քվեարկելու իրավունքը տարածվում է տվյալ պետության պարտականության վրա՝ ձեռնարկելու միջոցներ արտասահմանում

¹ Sfin Ситаропулос и Зякумопулос против Греции (N 42202/07). По материалам Постановления Европейского Суда по правам человека от 8 июля 2010 года (вынесено I Секцией):

² Sfin Ситаропулос и Зякумопулос против Греции (N 42202/07). По материалам Постановления Европейского Суда по правам человека от 15 марта 2012 года (вынесено Большой Палатой):

դրա իրացման համար: Եվրոպայի խորհրդի մարմիններն, իրոք, բազմիցս առաջարկել են մասնակից պետություններին ապահովել արտասահմանում բնակվող իրենց քաղաքացիների առավելագույնս հնարավոր մասնակցությունն ընտրական գործընթացին: Սակայն, ինչպես ընդգծել է Վենետիկի հանձնաժողովը, արտասահմանում բնակվող քաղաքացիների ձայնի իրավունքի իրականացմանն աջակցությունը (անշուշտ՝ ցանկալի) պետության համար պարտադիր չէ, սակայն հնարավորություն է, որը ենթակա է քննարկման օրենսդրի կողմից յուրաքանչյուր պետությունում: Երկրորդ՝ Եվրոպայի խորհրդի մասնակից պետությունների օրենսդրության համեմատական վերլուծությունը վկայում է, որ ներկայումս չի կարելի պնդել, որ այդ պետությունները պարտավոր են ապահովել արտասահմանում բնակվող իրենց քաղաքացիների քվեարկության իրավունքը: Երբ մասնակից պետությունների ճնշող մեծամասնությունը թույլ էր տալիս իրենց քաղաքացիներին քվեարկել արտասահմանում, որոշ պետություններ դրանից ձեռնպահ մնացին: Ինչ վերաբերում է նշված իրավունքի իրականացումը կարգավորող պայմաններին, ապա դրանք մշտապես և զգալիորեն փոփոխվել են, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ մասնակից պետությունները տվյալ հարցում ունեն հայեցողության լայն շրջանակներ: Երրորդ՝ թեև Հունաստանի Սահմանադրությունը բովանդակում է դրույթ, որը թույլ է տալիս օրենսդրին կազմակերպել արտասահմանում բնակվող քաղաքացիների քվեարկության իրավունքի իրականացումը, այն օրենսդրին չի պարտավորեցնում անել դա, քանի որ դրույթի բովանդակությունն ածանցյալ է: Այսպիսով՝ Եվրոպական դատարանն իրավասու չէ ազգային իշխանություններին մատնանշել՝ երբ և ինչպես իրացնել նշված դրույթը: Բացի այդ, անվիճելի է, որ հունական իշխանությունները բազմիցս փորձել են ներդնել օրենսդրություն՝ ի կատարումն նշված դրույթի, սակայն այդ փորձերը չեն ամրապնդվել քաղաքական համաձայնությամբ: Ցանկացած դեպքում իրավասու մարմինները, քվեարկության իրավունքի հարցը կարգավորելիս չէին կարող ի գիտություն ընդունել յուրաքանչյուր

անհատական գործ, այլ պետք է սահմանեն ընդհանուր կանոն: Այսպիսով՝ Եվրոպական դատարանն արձանագրեց, որ սույն գործով Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի պահանջների խախտում տեղի չի ունեցել:

Որպես խնդրի լուծման հնարավոր տարբերակ՝ կարելի է դիտարկել նաև արտասահմանում բնակվող ընտրական իրավունք ունեցող ՀՀ բոլոր քաղաքացիներին էլեկտրոնային եղանակով քվեարկելու հնարավորության ընձեռումը, թեև նշված դեպքում էլ կարող են առաջ գալ մի շարք կազմակերպատելանիական խնդիրներ:

**2. ՊԱՍԻՎ ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ՑԵՆԶԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՈՐՈՇ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ. ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ
ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ
ՑԵՆԶԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀՀ
ԻՐԱՎԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ**

ՀՀ Սահմանադրության 50-րդ հոդվածի համաձայն՝ Հանրապետության Նախագահ կարող է ընտրվել երեսունհինգ տարին լրացած, վերջին տասը տարում Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին տասը տարում Հանրապետությունում մշտապես բնակվող և ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք, իսկ 64-րդ հոդվածին համապատասխան՝ պատգամավոր կարող է ընտրվել քսանհինգ տարին լրացած, վերջին հինգ տարում Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին հինգ տարում Հանրապետությունում մշտապես բնակվող և ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք:

Հարկ է նկատել, որ ՀՀ նոր Ընտրական օրենսգրքի նախագծի վերաբերյալ Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ համատեղ եզրակացությունում դիրքորոշում է արտահայտվել այն մասին, որ Նախագահ ընտրվելու համար 10 տարվա բնակության և 10 տարվա քաղաքացիության պահանջը անհամաչափ, անհամամասնական է: Ազգային ժողովի պատգամավորության թեկնածուների առնչությամբ նույնպես հինգ տարվա մշտական բնակության պահանջը դիտարկվել է որպես միջազգային չափանիշների հակասող: Միևնույն ժամանակ Վենետիկի հանձնաժողովը և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը առաջարկել են Ընտրական օրենսգրքի նա-

խագծում վերանայել համապետական ընտրությունների դեպքում թեկնածուներին առաջադրվող բնակության վերաբերյալ հիշյալ պահանջները¹: Նմանատիպ դիրքորոշում է արտահայտվել նաև 2013 թ. փետրվարի 18-ի Հայաստանի Հանրապետության Նախագահի ընտրությունների վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ Ընտրությունների դիտորդական առաքելության վերջնական զեկույցում²:

Մինչ քննարկվող հիմնախնդրի բովանդակային հարցերին անդրադառնալը հարկ ենք համարում նկատել, որ այն առաջին հերթին ոչ թե ընտրական օրենսգրքի, այլ Սահմանադրության տեքստի փոփոխման հրամայական է ստեղծում, հետևաբար հիշյալ հիմնախնդրին առնչվող ցանկացած մոտեցում պետք է առաջին հերթին նպատակաուղղված լինի սահմանադրական բարեփոխումների հետագա առանձին ուղղությունների կանխորոշմանը:

Նշենք, որ թեև Նախագահ կամ պառլամենտի անդամ ընտրվելու համար նախատեսված բնակության համեմատաբար կարճ ցենզի սահմանումը դեռևս համընդհանուր տարածում չի գտել միջազգային պրակտիկայում, սակայն առավել մեծ ընդգրկում են ստանում տարբեր պետություններում ընթացող այն զարգացումները, երբ կրճատվում է բնակության ցենզի հիշյալ ժամանակահատվածը: Այսպես, օրինակ՝ Լիտվայի Հանրապետության Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝ Հանրապետության Նախագահ կարող է ընտրվել ընտրության օրը 40 տարին լրացած, վերջին երեք տարվա ընթացքում Լիտվայում բնակվող, լիտվական ծագումով այն քաղաքացին, ով կարող է ընտրվել որպես Սեյմի անդամ: Իսկ Սահմանադրության 56-րդ հոդվածի համապատասխան՝

¹ CDL-AD(2011)032, “Joint Final Opinion on the Electoral Code of Armenia”, Adopted by the Council for Democratic Elections at its 38th meeting (Venice, 13 October 2011) and by the Venice Commission at its 88th Plenary Session (Venice, 14–15 October 2011), կետ 37, 38:

² REPUBLIC OF ARMENIA PRESIDENTIAL ELECTION, 18 February 2013, OSCE/ODIHR Election Observation Mission Final Report, VII կետ, <http://www.osce.org/odihr/elections/101314>:

Սեյմի անդամ կարող է ընտրվել ընտրության օրը 25 տարին լրացած, Լիտվայում մշտապես բնակվող Լիտվայի Հանրապետության այն քաղաքացին, ով օտարերկրյա պետության հետ կապված չէ երդմամբ կամ պարտավորությամբ¹: Լատվիայի Հանրապետության Սահմանադրությունն իր հերթին նախատեսում է, որ Հանրապետության Նախագահ և Սեյմի անդամ կարող են ընտրվել համապատասխանաբար 40 և 21 տարին լրացած Լատվիայի լիարժեք քաղաքացիները²: Լեհաստանի Սահմանադրության 127-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ Հանրապետության Նախագահ կարող է ընտրվել ընտրությունների օրը 35 տարին լրացած, Սեյմի ընտրություններին մասնակցելու լիարժեք ընտրական իրավունքներ ունեցող Լեհաստանի քաղաքացին, իսկ 99-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերն ամրագրում են, որ Սեյմի և Սենատի անդամ կարող են ընտրվել ընտրությունների օրը համապատասխանաբար 21 և 30 տարին լրացած և ընտրական իրավունք ունեցող քաղաքացիները³:

Հարկ է նկատել, որ չնայած մի շարք պետություններում շարունակում է գործել քաղաքացիության ու բնակության ցենզի բավականին բարձր շեմ (օրինակ՝ Ղազախստանում, Վրաստանում Հանրապետության Նախագահ ընտրվելու համար նախատեսված բնակության ցենզը⁴), սակայն ներկայացված օրինակները հիմք են տալիս եզրակացնելու, որ քննարկվող հիմնախնդրի զարգացումներն ընթանում են այն ուղղությամբ, որ, որպես կանոն, պառլամենտի անդամ ընտրվելու համար թեկնածուներին այլևս չի ներկայացվում քաղաքացիության կամ բնակության որևէ ցենզ: Ինչ վերաբերում է Հանրապետության Նախագահի ընտրություններին, ապա վերջինիս համար, որ-

¹ http://www.lrkt.lt/Documents2_e.html

² Լատվիայի Հանրապետության Սահմանադրության 37-րդ և 9-րդ հոդվածներ, <http://www.satv.tiesa.gov.lv/?lang=2&mid=8>:

³ <http://www.trybunal.gov.pl/eng/index.htm>

⁴ Ղազախստանի Հանրապետության Սահմանադրության 41-րդ հոդվածի 2-րդ մաս, Վրաստանի Հանրապետության Սահմանադրության 70-րդ հոդվածի 2-րդ մաս:

պես կանոն, կամ չի ներկայացվում նմանատիպ որոշակի ժամկետ, կամ նախատեսվում է բնակության ավելի կարճ ժամանակահատված, քան ամրագրված է ՀՀ օրենսդրությամբ:

Քննարկվող հիմնախնդրի առնչությամբ հարկ է նկատի ունենալ, որ Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողով) դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ բնակության որոշակի ժամկետի պահանջ կարող է նախատեսվել տեղացիների համար միայն տեղական կամ տարածքային ընտրությունների առնչությամբ¹: Ավելին՝ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովն արձանագրել է, որ ընտրվելու իրավունք ունեցող անձանց նկատմամբ չպետք է կիրառվեն անհիմն կամ խտրական պահանջներ, ինչպիսին է... բնակության կամ ծագման ցենզր²:

Հիշյալ հիմնախնդրի առնչությամբ հիշատակման է արժանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումն այն մասին, որ 1-ին արձանագրության 3-րդ հոդվածում ամրագրված իրավունքները բացարձակ չեն և կարող են ենթակա լինել սահմանափակումների: Անդրադառնալով բնակության ցենզին առնչվող սահմանափակումներին՝ Դատարանն արձանագրել է, որ անդամ պետությունները հայեցողության լայն շրջանակներ ունեն՝ հաշվի առնելով ընտրական օրենսդրության գործողության ժամանակահատվածի և վայրի տարբերությունները: Միևնույն ժամանակ ընդգծվել է, որ նրանց հայեցողության այդ շրջանակներն անսահմանափակ չեն: Քննարկվող իրավունքները չեն կարող այն աստիճանի սահմանափակվել, որպեսզի վտանգվի վերջիններիս էությունը, և այդ իրավունքները կորցնեն արդյունավետությունը, սահմանափակումները պետք է իրավաչափ նպատակ հետապնդեն, իսկ դրա համար անհրաժեշտ օգտագործվող միջոցները չպետք է անհամաչափ լինեն: Դատարանն ընդգծել է նաև,

¹ CDL-AD (2002) 23 rev, “Code of Good Practice in Electoral Matters: Guidelines and Explanatory Report”, Adopted by the Venice Commission at its 52nd session (Venice, 18–19 October 2002) , 1-ին բաժնի 1.1 կետի c ենթակետ:

² UN Human Rights Committee General Comment 25, կետ 15:

որ ընտրական իրավունքին առնչվող դրույթները, որոնք ապահովում են ինչպես քաղաքացիների մասնակցությունը, այնպես էլ կոնկրետ տարածաշրջանում առկա իրավիճակի իմացությունը, տարբերվում են՝ պայմանավորված յուրաքանչյուր պետությանը բնորոշ պատմական ու քաղաքական կոնկրետ հանգամանքներով: Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների ընտրական օրենսդրությամբ նախատեսված տարատեսակ կարգավորումները վկայում են քննարկվող հիմնախնդրի լուծման հնարավոր տարբերակների բազմազանության մասին: Այդուհանդերձ, հիշյալ չափանիշներից որևէ մեկը սկզբունքորեն չի կարող որպես ավելի հիմնավորված դիտարկվել, քան մյուսները, եթե, իհարկե, դրանք բոլորը երաշխավորում են ժողովրդի կամահայտնությունը ազատ, արդար և պարբերական ընտրությունների միջոցով: 3-րդ հոդվածի առումով ցանկացած ընտրական օրենսդրություն պետք է գնահատվի կոնկրետ պետության քաղաքական էվոլյուցիայի լույսի ներքո: Այդ տեսանկյունից էլ հարկ է նկատի ունենալ, որ որոշակի առանձնահատկություններ, որոնք անընդունելի կլինեն մի համակարգի համատեքստում, կարող են արդարացված լինել մյուսի շրջանակներում¹:

Հետևաբար այն հանգամանքը, թե արդյոք բնակության նմանատիպ ցենզի սահմանումը հետապնդում է իրավաչափ նպատակ, թե ոչ, որոշվում է յուրաքանչյուր կոնկրետ գործի համատեքստում: Այդ առնչությամբ Վենետիկի հանձնաժողովն արձանագրել է, որ բացառությամբ որոշակի առանձնահատուկ իրավիճակների, որոնք, թվում է, առկա չեն Հայաստանի պարագայում, նման սահմանափակումները չեն կարող արդարացվել ազգային կամ ժողովրդավարական շահերի պաշտպանության անհրաժեշտությամբ²:

¹ ECHR Py v. France, 11 January 2005, Application no. 6289/01, 45–47 կետեր:

² CDL–AD(2011)032, “Joint Final Opinion on the Electoral Code of Armenia”, Adopted by the Council for Democratic Elections at its 38th meeting (Venice, 13 October 2011) and by the Venice Commission at its 88th Plenary Session (Venice, 14–15 October 2011), կետ 37:

Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ կարծում ենք, որ քննարկվող հիմնախնդրին առնչվող ՀՀ սահմանադրական ու օրենսդրական բարեփոխումներն անհրաժեշտ է իրականացնել ընթացող միջազգային-իրավական զարգացումների ու դրանց ուղղությունների համատեքստում և նպատակահարմար ենք համարում Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի պատգամավորության թեկնածուների համար նախատեսված քաղաքացիության ու բնակության ցենզերի նվազեցումը:

3. ԸՆՏՐԱԿԱՆ ԳՐԱՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ ՊԱՍԻՎ ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

3.1. ԸՆՏՐԱԳՐԱՎԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊՐԱ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Ընտրագրավ կամ, ինչպես այն անվանում են, դեպոզիտ է կոչվում այն գումարը, որը թեկնածուն պարտավոր է վճարել, որպեսզի ձեռք բերի ընտրություններին մասնակցելու իրավունք: Միջազգային պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ դեպոզիտի ինստիտուտը վերաբերելի է հատկապես պառլամենտական ընտրություններին, սակայն այն գործածվում է նաև այլ քաղաքական պաշտոնների ընտրությունների ժամանակ:

Հարկ է նշել, որ յուրաքանչյուր երկիր յուրովի է կարգավորում ընտրագրավի ինստիտուտը. հիմնական տարբերությունը, առաջին հերթին, ընտրագրավի գումարի չափի և ընտրագրավի վերադարձի կանոնների մեջ է: Օրինակ՝ Անգլիայում դեպոզիտի պահանջը վերաբերում է միայն պառլամենտական ընտրություններին իրենց թեկնածությունն առաջադրած անձանց: Այստեղ պառլամենտական ընտրությունների համար սահմանված ընտրագրավը կազմում է 500 (անգլիական ֆունտ): Ընտրագրավը վերադարձվում է միայն այն դեպքում, երբ թեկնածուն ստանում է ձայների ավելի քան 5 %-ը:

Այլ կարգավորման կարող ենք հանդիպել Չինաստանում, որտեղ դեպոզիտ վճարելը պարտադիր պահանջ է թե՛ տեղական ինքնակառավարման մարմինների, թե՛ հանրապետական մարմինների, օրինակ՝ պառլամենտական ընտրություններին թեկնածություն առաջադրելու համար:

Այսպիսով՝ ընտրական գրավը դրամական գումար է, որը վճարվում է որոշ ընտրովի պաշտոններում որպես թեկնածու առաջադրվելիս: Ընտրական գրավը, որպես կանոն, չի

վերադարձվում այն դեպքում, երբ թեկնածուն ընտրության արդյունքում չի ստանում ընտրողների ձայների՝ օրենքով սահմանված նվազագույն քանակություն: Այն իրենից ներկայացնում է թեկնածուի գրանցման պայման և հանդես է գալիս որպես ընտրությունները ձևական թեկնածուներից զերծ պահելու լրացուցիչ միջոց: Գոյություն ունի նաև կարծիք, որ պատմականորեն ընտրական դեպոզիտի մեխանիզմի էությունը և ներդրման պատճառը հիմնականում այն է, որ հասարակության ֆինանսական իշխանություն ունեցող շերտերը իրենց ձեռքերում պահեն նաև քաղաքական իշխանությունը¹: Դա մարդկությանը ծանոթ է դեռ Հին Հունաստանի պատմական ժառանգությունից:

Ընտրագրավի ինստիտուտը սերտորեն կապված է կոնկրետ երկրի սոցիալական և քաղաքական անցյալից և ներկա իրավիճակից: Դա է պատճառը նաև, որ յուրաքանչյուր երկիր սահմանում է իր պետության սոցիալական իրավիճակին համապատասխան ընտրագրավ և դրա վերադարձի կանոններ: Այսպես՝ այն երկրներում, որտեղ դեպոզիտը նախապայման է պառլամենտական ընտրություններին մասնակցելու համար, հաճախակի տարբեր կարգավորումներ են սահմանվում մեծամասնական և համամասնական եղանակով ընտրություններին թեկնածությունն առաջադրելու պարագայում: Օրինակ՝ Չինաստանում (3 million (=490 000 USD) դեպոզիտ պետք է վճարի մեծամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող թեկնածուն և (6 million(=980 000 USD))՝ համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող թեկնածուն: Հարկ է նշել, որ Չինաստանը ընտրագրավի ամենաբարձր գումար սահմանած երկիրն է: Պատմականորեն բարձր դեպոզիտի գումարը պայմանավորված էր այն քաղաքական նպատակներով, որ իր առջև դրել էր Չինաստանը, այն է՝ կոմունիստական կուսակցության դեմ այսպես կոչված պայքարը, իրենց քաղաքական դիրքերի թուլացումը: Սակայն այժմ

¹ Philip Brasor & Masako Tsubuku. Candidate deposit requirement guarantees same faces on the ballot. October 26th, 2012. <http://blog.japantimes.co.jp/yen-for-living/candidate-deposit-requirement-guarantees-same-faces-on-the-ballot/>

երկրի քաղաքական իրավիճակը կանգնել է մեկ այլ խնդրի առջև, որը հաճախ ընտրական գումարի արդյունք է, այն է՝ նոր, երիտասարդ քաղաքական գործիչների և կուսակցությունների մասնակցությունը երկրի քաղաքական կյանքին¹:

Դաշնային պետություններում ընտրագրավի կարգավորումը կարող է տարբերվել նաև նահանգից նահանգ: Օրինակ՝ Կանադայում պառլամենտական ընտրություններին թեկնածություն առաջադրելու համար անձը պետք է վճարի 1000 CAD (կանադական դոլար) ընտրական դեպոզիտ, որը վերադարձվում է օրենքով սահմանված՝ ընտրողների ձայների 10 % նվազագույն շեմը հաղթահարելու դեպքում: Միևնույն ժամանակ Կանադայի Բրիտիշ Կոլումբիա նահանգում ընտրական դեպոզիտի ինստիտուտը վերացվել է դեռ 1920 թվականին:

Առանձնահատուկ է դեպոզիտի կարգավորումը նաև Եվրամիության անդամ հանդիսացող երկրներում, քանի որ այնտեղ դեպոզիտը նախապայման է ոչ միայն ներպետական ընտրություններին, այլ նաև Եվրախորհրդարանի ընտրություններին մասնակցելու համար (օրինակ՝ Անգլիա, Հոլանդիա): Անգլիայում Եվրախորհրդարանի ընտրություններին իր թեկնածությունն առաջադրող անձը պետք է վճարի 5 000 (անգլիական ֆունտ), որը կվերադարձվի միայն ձայների 2,5 % նվազագույն շեմը հաղթահարելու դեպքում²:

Ավստրալիայում ընտրագրավի տարբեր չափ է ամրագրված Պառլամենտի ստորին և Վերին Պալատների համար (Lower and Upper house)՝ կազմելով համապատասխանաբար \$1000 և \$2000, որը վերադարձվում է «արտոնյալ ձայների» առնվազն 4 %-ը ստանալու դեպքում: Ընտրագրավի գումարի նմանատիպ տարբերակում է (ըստ Պառլամենտի պալատների) սահմանված նաև Հնդկաստանի օրենսդրությամբ:

Այսպիսով՝ ընտրագրավի ինստիտուտը պատմականորեն հաստատվել է բազմաթիվ երկրներում, սակայն ընտ-

¹ Տե՛ս նույն տեղում:

² Standing at a UK Parliamentary general election in Great Britain. August 2009. P.2. http://www.electoralcommission.org.uk/__data/assets/electoral_commission_pdf_file/0007/79540/UKPGE-nominations-factsheet-FINAL.pdf

րագրավի գումարի և դրա վերադարձի կարգավորումը տարբեր է՝ կախված տվյալ երկրի սոցիալական և քաղաքական մթնոլորտից:

3.2. ԸՆՏՐԱԳՐԱԿԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հայաստանի Հանրապետությունում ընտրական գրավը կիրառվում է ինչպես Հանրապետության Նախագահի, այնպես էլ ՀՀ Ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ: Այսպես՝ ՀՀ ընտրական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 24-րդ հոդվածի համաձայն՝ թեկնածուները, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները կենտրոնական ընտրական հանձնաժողովի հաշվեհամարին վճարում են ընտրական գրավ: Ընտրական գրավի գումարը դիմումը ստանալուց հետո՝ յոթնօրյա ժամկետում, վերադարձվում է՝

1. ընտրվելու կամ համամասնական ընտրակարգով մանդատների բաշխմանը մասնակցելու,
2. թեկնածուներին կողմ քվեարկված քվեաթերթիկների թվի 5 կամ 5-ից ավելի տոկոս կողմ քվեարկված քվեաթերթիկներ ստանալու,
3. մինչև թեկնածուների, կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակների գրանցումն ինքնաբացարկ ներկայացնելու,
4. ընտրության արդյունքներն անվավեր ճանաչվելու և նոր ընտրություն նշանակվելու դեպքերում,
5. ժառանգներին՝ թեկնածուի մահվան դեպքում:

Մյուս բոլոր դեպքերում ընտրական գրավի գումարը չի վերադարձվում:

Օրենսգրքի 80-րդ հոդվածի համաձայն՝ Հանրապետության Նախագահի թեկնածուները Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկում բացված կենտրոնական ընտրական

հանձնաժողովի հաշվեհամարին վճարում են ընտրական գրավ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հաշվարկային նվազագույն աշխատավարձի 8000-ապատիկի չափով: Ընտրական օրենսգիրքը ընտրագրավը փաստացի սահմանում է որպես թեկնածության առաջադրման պարտադիր նախապայման՝ 79-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետում նշելով, որ կուսակցության համագումարի կամ մշտապես գործող մարմնի որոշմանը, քաղաքացու ինքնաառաջադրման մասին դիմումին կից պետք է ներկայացնել նաև ընտրական գրավի վճարման անդորրագիրը:

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետության խորհրդարանական ընտրություններին, ապա ընտրությունների համամասնական ցուցակով առաջադրված կուսակցությունները և դաշինքները պետք է վճարեն 8 միլիոն (նվազագույն աշխատավարձի 8000-ապատիկի չափով) ՀՀ դրամ ընտրագրավ, մինչդեռ մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների ընտրագրավը կազմում է 1 միլիոն (նվազագույն աշխատավարձի 1000-ապատիկի չափով) ՀՀ դրամ: Ընտրագրավը վերադարձվում է այն դեպքում, եթե կուսակցությունը կամ դաշինքը Ազգային ժողովում մանդատներ է ստանում (համամասնական ընտրակարգ), կամ թեկնածուն ընտրվում կամ ստանում է ձայների առնվազն հինգ տոկոս (մեծամասնական ընտրակարգ):

ՀՀ սահմանադրական դատարանը 05.03.2013 թվականի իր ՍԴՈ-1076 որոշման մեջ՝ քաղաքացի Նարինե Մկրտչյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 23-րդ հոդվածի 3-րդ մասի, 24-րդ հոդվածի, 38-րդ հոդվածի 7-րդ մասի, 79-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի և 80-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով¹, անդրադարձել է ընտրական գրավի ինստիտուտի սահմանադրականության հարցին և ընտրական գրավի մեծության համաչափության իրավաչափ նպատակին: Դատարանը իր որոշման 6-րդ կետում նշել է. «Ինչպես վկայում է միջազգային իրավական պրակտիկան,

¹ Մանրամասն տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 05.03.2013 թվականի ՍԴՈ-1076 որոշումը:
<http://concourt.am/armenian/decisions/common/2013/pdf/sdv-1076.pdf>

ներկայացուցչական ժողովրդավարության իրականացման համար ելակետային նշանակություն ունեցող հանգամանքներ են թե՛ ընտրական իրավունքի ճանաչումը, թե՛ երաշխավորումը, թե՛ այնպիսի ընտրակարգի սահմանումը, երբ թեկնածուի ընտրությունը կատարվում է ոչ թե պատահականորեն, ինչը կարող է վտանգել հանրային շահը, այլ հանրային աջակցության որոշակի երաշխիքների առկայության պայմաններում: Եթե առաջին խնդիրը լուծվում է անձի ընտրական իրավունքի ճանաչման և սահմանադրորեն ամրագրման միջոցով, ապա երկրորդ խնդրի լուծումն օրենսդրական կանոնակարգման առարկա է, և, որպես կանոն, այն օրենսդիր մարմնի հայեցողության շրջանակներում է լուծվում:

Միջազգային փորձը նաև վկայում է, որ երկրորդ խնդրի լուծման ընդունելի ու լայն տարածում գտած միջոցները երկուսն են՝ որոշակի թվով նախնական ստորագրահավաքի միջոցով ընտրվել ցանկացողի նկատմամբ հանրային վստահության նվազագույն շեմի ապահովումը կամ նույն նպատակով՝ ընտրագրավը: Այս հարցում եվրոպական երկրների համար ելակետ են ընդունվում Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովի 30 հոկտեմբերի 2002 թ. CDL-AD(2002)023rev «Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագիրք. ցուցումներ և բացատրական գեկույց» փաստաթղթում ամրագրված մոտեցումները: Վերջինիս 1.3 (թեկնածուների առաջադրում) կետով, մասնավորապես, փաստվում է, որ «Անհատական թեկնածությունների կամ թեկնածուների ցուցակների ներկայացումը կարող է ենթակա լինել ստորագրությունների նվազագույն քանակի հավաքագրման պահանջին»: Այա շեշտված է նաև. «Եթե կանխավձար է պահանջվում, ապա թեկնածուի կամ կուսակցության կողմից որոշակի միավորների հավաքագրման դեպքում այն պետք է փոխհատուցվի: Պահանջվող գումարը և միավորները չպետք է լինեն չափազանց մեծ»:

Այստեղ էականն այն է, որ նշված պահանջները չեն դիտարկվում որպես թեկնածուի ընտրական իրավունքի ճանաչման բաղադրատարր, ինչն ակնարկում է դիմողը, այլ այդ պայմաններն ընտրակարգի այնպիսի տարրեր են, որոնք անհրաժեշտ են

անհատի ու հանրության շահերը ներդաշնակելու և ընտրական գործընթացն իր նպատակին ծառայեցնելու համար: Նման ընտրակարգն առաջին հերթին ակտիվ ընտրական իրավունքի իրացման կարևոր բաղադրատարր է՝ նկատի ունենալով ընտրողների կողմից իրենց ժողովրդափշխանական լիազորությունների պատվիրակման ժամանակ այն սուբյեկտի ճիշտ ընտրությունը, որին պատվիրակվում է դրանց իրացումը: Ժողովրդափշխանության սկզբունքի իրավաչափ իրացման համար ոչ միայն կարևոր են պետության նախագահ դառնալ ցանկացողի սուբյեկտիվ կամքն ու ընտրվելու իրավունքը, այլև հանրային-քաղաքական նման գործառույթ իրականացնելու համար հայտ ներկայացնողի պատասխանատվության ու կարողունակության վերաբերյալ ժողովրդի նախնական վստահության որոշակի (կամ նվազագույն) աստիճանը: Իսկ դա, որպես կանոն, որոշվում է վերոնշյալ երկու ինստիտուտների միջոցով՝ թույլ չտալով նաև ընտրական իրավունքի չարաշահում, ինչն առանձնապես կարևոր է համապետական ընտրությունների դեպքում: Միջազգային պրակտիկայում դա նաև ընդունված է անվանել, այսպես կոչված, «նախնական վստահության» միջոց:

ՀՀ սահմանադրական դատարանն այնուհետև վկայակոչում է Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովի 30 հոկտեմբերի 2002 թ. CDL-AD (2002) 023rev «Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագիրք, ցուցումներ և բացատրական զեկույց»-ի 8-րդ և 9-րդ մասերը, համաձայն որոնց ընտրություններին առաջադրվելու համար ստորագրությունների որոշակի քանակ հավաքագրելու պարտավորությունը տեսականորեն համատեղելի է համընդհանուր ընտրական իրավունքի սկզբունքի հետ:

Գոյություն ունի մեկ այլ ընթացակարգ, երբ թեկնածուները կամ կուսակցությունները պետք է կանխավճար ներդնեն, որը կփոխհատուցվի միայն, եթե տվյալ թեկնածուն կամ կուսակցությունը հավաքի ձայների նախատեսված տոկոսից ավելին: Այդօրինակ գործընթացներն ավելի արդյունավետ են, քան ստորագրությունների հավաքագրումը:

Սահմանադրական դատարանը նշում է, որ, հիմք ընդունելով վերոհիշյալ դրույթները, ստորագրահավաքը և ընտրական գրավը ոչ այլ ինչ են, քան ընտրությունների ընթացակարգի բաղադրատարր, իսկ նախապատվությունը տրվում է ընտրական գրավի ինստիտուտին: Դատարանն իր որոշման 7-րդ կետում նշում է, որ ընտրագրավի ինստիտուտի սահմանադրաիրավական բովանդակությունն աղձատվում է, երբ այն չի դիտարկվում իրավակարգավորման ամբողջականության մեջ: Այդ ինստիտուտի և ընտրողների երաշխավորական վստահության միջև փոխկապվածությունը, որպես ժողովրդաիշխանության իրականացման կարևոր բաղադրատարր, դրսևորվում է նաև այդ գրավի վերադարձելիության հատուկ կարգի սահմանման միջոցով: Օրինակ՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված է, որ ընտրական գրավը վերադարձվում է թեկնածուին կողմ քվեարկված քվեաթերթիկների թվի 5 կամ 5-ից ավելի տոկոս կողմ քվեարկված քվեաթերթիկներ ստանալու դեպքում: Ակնհայտ է, որ ընտրագրավը ոչ թե թեկնածուի ունեցվածքի գնահատման միջոց է կամ պասիվ ընտրական իրավունքի ձանաչման ցենզ, այլ որոշակի թվով ընտրողների վստահության երաշխիք է՝ նրանցից պետական իշխանության կրողի մանդատ հայցելու ու այդ նվազագույն վստահությունն ու անհրաժեշտ պատասխանատվությունը նախապես ունեցող կամ ակնկալող այլ թեկնածուների հետ ընտրական մրցակցությանը մասնակցելու համար: Յուրաքանչյուր թեկնածու, ով օբյեկտիվորեն է գնահատում իր հնարավորությունները, չի չարաշահում իր պասիվ ընտրական իրավունքը, պատասխանատվությամբ է վերաբերվում համապետական ընտրություններին և ունի ընտրողների գոնե ավելի քան 5 տոկոսի կողմից ակնկալվող մանդատը ստանալու վստահություն, նույն կերպ պետք է վստահ լինի, որ ընտրագրավը վերադարձվելու է, և իր նյութական վիճակի վրա այն որևէ ազդեցություն ունենալ չի կարող:

Վեճի առարկա հիմնախնդրի տեսանկյունից ուշադրության են արժանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներն ընտրագրավի ինստիտուտի վե-

րաբերյալ, մասնավորապես՝ Սուխովեցկին ընդդեմ Ուկրաինայի գործով (թիվ 13716/02, 28.03.2006 թ.): Այս գործով վեճի առարկան դարձյալ եղել է ընտրական գրավի ինստիտուտի իրավաչափությունը: Անդրադառնալով ընտրական գրավի վերաբերյալ Ուկրաինայի սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներին (ընդհուպ՝ վկայակոչելով նաև Հայաստանում ընտրական գրավի որոշման օրենսդրական կարգը), ներկայացնելով տարբեր երկրների մոտեցումները՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել է, որ՝

- ընտրական գրավը կիրառվում է Եվրոպայի խորհրդի անդամ շատ երկրներում և հետապնդում է իրավաչափ նպատակ,
- այն չի հասցեագրված կոնկրետ անձանց և խտրականություն չի ենթադրում,
- այն հանրային և մասնավոր շահերի ներդաշնակման միջոց է,
- դրա սահմանումը, չափի որոշումը երկրի օրենսդիր իշխանության հայեցողության սահմաններում է:

Արդյունքում Եվրոպական դատարանը հանգել է այն հետևությանը, որ Կոնվենցիայի 1-ին Արձանագրության 3-րդ հոդվածի խախտում առկա չէ:

ՀՀ սահմանադրական դատարանն այնուհետև նշում է, որ «...երկրում համապետական ընտրություններն առաջին հերթին հենվում են հասարակության քաղաքական կառուցակարգերի վրա: Չի կարող լինել հասարակական կայունություն առանց կարողունակ քաղաքական ուժերի կողմից երկրի այսօրվա ու վաղվա համար ժողովրդավարական եղանակներով քաղաքական պատասխանատվություն ստանձնելու: Կուսակցությունն իր հանրային առաքելությունը կարող է իրականացնել միայն այն դեպքում, երբ ոչ միայն ծրագրային ցանկություն, այլև անհրաժեշտ ու բավարար կարողունակություն ունի քաղաքական պատասխանատվություն ստանձնելու համար, և դա տեսանելի ու գնահատելի է ընտրողի կողմից»:

Հանրապետության Նախագահի ընտրությունների ժամանակ, եթե կուսակցությունները նախորդ ընտրությունների

արդյունքներով ու իրենց գաղափարախոսական ծրագրային կողմնորոշումներով նախապես վաստակել են ժողովրդի վստահության համապատասխան աստիճան, ապա ժողովրդից պետության գլխի մանդատ ակնկալող ինքնաառաջադրվող անհատը չի կարող միայն իր պասիվ ընտրական իրավունքի ուժով կուսակցությունների կողմից առաջադրված ու երաշխավորված թեկնածուների հետ ընթացակարգային միևնույն պայմաններում գրանցվել որպես նախագահի թեկնածու: Այս հանգամանքը հաշվի առնելով է, որ պետությունների մեծ մասում, որտեղ առկա է ինքնաառաջադրման ինստիտուտը, նման հայտ ներկայացնող անձը նախապես ձևավորում է որոշակի թվով ընտրողների խումբ կամ առաջադրող կոմիտե (Ռուսաստանի Դաշնություն, Սերբիա, Բուլղարիա, Լեհաստան և այլն)՝ թեկնածությանն աջակցելու համար:

ՀՀ սահմանադրական դատարանը գտել է, որ տարբերակների ընտրությունը ՀՀ Ազգային ժողովի իրավասության հարցն է, սակայն պետության ժողովրդավարական կառուցակարգերի բնականոն զարգացման շահերից ելնելով՝ կարող է ընդհուպ տարբերակային մոտեցում դրսևորվել ընտրագրավի ու ստորագրահավաքի ինստիտուտների առանձին-առանձին կամ համակցված կիրառման հարցում (ինչպես, օրինակ՝ Բուլղարիայում)՝ պառլամենտական խմբակցություններ ունեցող, այդպիսին չունեցող կուսակցությունների կողմից թեկնածուների առաջադրման ու ինքնաառաջադրումների դեպքերում: Ի դեպ՝ ԱՄՆ գերագույն դատարանը 1972 թվականին ըստ էության իրավական դիրքորոշում է արտահայտել, որ նույնիսկ անհրաժեշտ է ստորագրահավաքի ու ընտրագրավի համակցված կիրառումը: ՀՀ սահմանադրական դատարանը նույնպես գտնում է, որ համադրելի չէ այն իրողությունը, երբ առանձին կուսակցություններ, որոնք արդեն իսկ ունեն ընտրողների 5 տոկոսից ավելիի վստահությունը և ժողովրդավարական ընթացակարգերով ու իրենց երաշխավորությամբ թեկնածու են առաջադրում, հայտնվում են հավասար վիճակում մեկ առանձին՝ հաճախ հանրությանը բացարձակապես անհայտ ու առաջադրող խումբ, կոմիտե կամ այլ մարմին չունեցող անհատի

հետ: Միայն ընտրագրավն այս պարագայում կարող է նաև ոչ իր իրավական բնույթին համարժեք դերակատարություն ունենալ, քանի որ այն համեմատաբար քիչ թափանցիկ է ու որոշակի իրավական ու քաղաքական մշակույթի պակասի պայմաններում կարող է առանձին ուժերի կողմից քաղաքական պատվերի ու ոչ իրավաչափ գործընթացների տեղիք տալ:

Մյուս կողմից, ինչպես բազմիցս նշել են Եվրախորհրդի դիտորդները (օրինակ՝ 2012 թ. մարտին Ռուսաստանի Դաշնության նախագահական ընտրությունների արդյունքներով ներկայացված գեկույցում), միայն ստորագրահավաքը նույնպես խնդիրներ է բուլանդակում, երբ այդ հարցում հատկապես ընդդիմադիր թեկնածուների համար արհեստական դժվարություններ են ստեղծվում: Ժամանակին այս հանգամանքը շեշտադրվում էր նաև Հայաստանի քաղաքական ընդդիմադիր դաշտի կողմից: Այս ամենը հաշվի առնելով՝ հատկապես նոր ժողովրդավարության երկրների համար ցանկալի տարբերակն այդ երկու ձևերի համակցումը կարող է լինել, երբ ինքնաառաջադրման դեպքում կամ ընտրողների առնվազն 5 տոկոսի քվեն չստացած կուսակցությունների կողմից թեկնածու առաջադրելու դեպքում նախապես հավաքվելիք ստորագրությունների՝ օրենքով սահմանված պահանջը չի գերազանցում ընտրողների թվի 1 տոկոսը, իսկ ընտրագրավ սահմանվում է այն հաշվով, որ այն ոչ միայն կաշկանդի թեկնածության «հետաքրքրությունից դրդված» առաջադրումը, այլև ընտրողներն ունենան դրա ձևավորմանը որոշակի մասնակցություն՝ որպես ինքնաառաջադրվողի նկատմամբ հանրային վստահության արտահայտություն: Տօգուտ այդ տարբերակի է, մասնավորապես, վկայում նաև այն փաստը, որ 2013 թվականի ՀՀ Նախագահի ընտրության հրապարակված արդյունքներով թեկնածուների կեսը չհավաքեցին ընտրողների ձայների նույնիսկ 1 տոկոսը:

ՀՀ սահմանադրական դատարանն այնուհետև նշում է, որ «... գրավի պահանջվող գումարը չպետք է լինի չափազանց մեծ, ինչպես նշված է նաև Վենետիկի հանձնաժողովի ու ԵԱՀԿ Մարդու իրավունքների և ժողովրդավարական հաստատությունների գրասենյակի /ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ/ մոտեցումներ

րում: Սակայն այն չի կարող լինել նաև «սիմվոլիկ»՝ կորցնելով իր իրավական իմաստն ու կանխարգելիչ նշանակությունը: Այս շրջանակներում համապատասխան գումարի չափի որոշումը Ազգային ժողովի իրավասության հարցն է և քննության առարկա գործի իրավական փաստարկների առումով սահմանադրականության խնդիր չի առաջացնում: Դատարանը միաժամանակ գտնում է, որ տվյալ համակարգը հետագա օրենսդրական բարեփոխումների անհրաժեշտություն ունի՝ հաշվի առնելով սույն որոշման մեջ Սահմանադրական դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումները»:

Փաստարկների քննության արդյունքում Սահմանադրական դատարանն իր որոշմամբ հաստատել է վերոնշյալ դրույթների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխան լինելը:

3.3. ԸՆՏՐԱԳՐԱՎ. ԴՐԱԿԱՆ ԵՎ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԿՈՂՄԵՐ

Ինչպես և ցանկացած սոցիալական ինստիտուտ, ընտրագրավը ևս ունի իր դրական և բացասական կողմերը: Այսպես՝ դեպոզիտի առկայության կողմնակիցները նշում են, որ այն մի քայլ է, որը ետ է պահում «ոչ լուրջ» և էքստրեմիստ թեկնածուների առաջադրմանը երկրի բարձրաստիճան պաշտոնների համար: Որպես դեպոզիտի ինստիտուտի առկայությունն արդարացնող մեկ այլ պատճառ է նշվում այն, որ դեպոզիտ վճարելը կանխում է անբարեխիղճ թեկնածուների կողմից մեղիա դաշտի շահագործումը անձնական շահերով, օրինակ՝ գովազդային և կոմերցիոն նպատակներով:

Դեպոզիտի հակառակորդները նշում են, որ դեպոզիտի ինստիտուտը արգելք է հանդիսանում անձանց համար իրենց պասիվ ընտրական իրավունքն (ընտրվելու իրավունքն) իրականացնելիս, ինչը իր հերթին հակասում է բազմաթիվ միջազ-

գային փաստաթղթերի և առանձին երկրների սահմանադրական դրույթներին:

Դեպոզիտի վերոնշյալ բացասական կողմերը հանգեցրել են մի շարք երկրներում օրենսդրական բարեփոխումների անցկացմանը, որոնց միջոցով առաջարկվում է հանել ընտրագրավը՝ որպես ընտրություններին թեկնածություն առաջադրելու նախապայման: Այսպես, օրինակ՝ Անգլիայի Ընտրական Հանձնաժողովը Պառլամենտի քննարկմանն է ներկայացրել մի նախագիծ, որում առաջարկվում էր վերացնել ընտրագրավի նախապայմանը կամ առնվազն իջեցնել օրենքով սահմանված ընտրողների ձայների նվազագույն շեմը: Հանձնաժողովը հիմնվում էր այն փաստարկի վրա, որ ցանկացած մարդ պետք է իրավունք ունենա ազատ ներկայացնելու իր թեկնածությունն ընտրություններին, քանի որ քաղաքականությունը պետք է բաց լինի բոլորի համար, և ցանկացած անձ պետք է հնարավորություն ունենա ներկայացնելու իր քաղաքական հայացքները հանուն հանրային շահի: Հարկ է նշել, որ նախագիծը պատգամավորների կողմից քննադատվեց՝ որպես 19-րդ դարից ի վեր ընտրական իրավունքի ամենաարմատական փոփոխության առաջարկ: Շատերի կողմից այն մեկնաբանվեց որպես հետընթաց, որը ճանապարհ կբացի էքստրեմիստական խմբավորումների և ընտրություններին տրամադրվող լրատվական միջոցների շահագործման:

Կարծիք է հնչում, որ ընտրագրավի ինստիտուտը հակասում է նաև մարդկանց հավասարության սկզբունքին և փաստացի խտրական պայմաններ է նախատեսում, ֆինանսական, սոցիալական հիմքով տարբերակում անցկացնում: Այս պնդումը, ինչպես նաև ընտրագրավը, որպես ընտրվելու իրավունքը սահմանափակող երևույթ, կարգավորում, մի շարք երկրներում ճանաչվել է հակասահմանադրական: Այսպես՝ 2001 թվականին Իռլանդիայի Գերագույն դատարանը *Redmond v Minister for the Environment (Ռեդմոնդը ընդդեմ Շրջակա միջավայրի նախարարի)* գործով կայացրած որոշմամբ սահմանել է, որ դեպոզիտը, սահմանված որպես Իռլանդիայի պառլամենտական (IR:300+=:250) և Եվրախորհրդարանի (IR:1,000 =:830)

ընտրություններին թեկնածության առաջադրման նախապայման հանդիսանում է հակասահմանադրական: Դատավոր Դան Հերբերթը հետազայում նաև նշել է, որ ընտրական դեպոզիտը անարդար էր մի շարք քաղաքացիների նկատմամբ, և չկա ապացույց առ այն, որ ընտրական համակարգը կծանրաբեռնվի շինծու թեկնածուներով դեպոզիտի բացակայության պարագայում: Դատարանն իր որոշման մեջ նշել է նաև, որ այն կարգավորումը, որը եթե անգամ ոչ դիտավորյալ, սակայն փաստացի ստեղծում է խտրական պայմաններ՝ հիմնված անձի ֆինանսական դրության վրա, վնաս է հասցնում այդ գումարը չունեցող անձանց արժանապատվությանը: Մեկ այլ օրինակ է հանդիսանում նաև Վրաստանի սահմանադրական դատարանը, որը իր 2012 ապրիլի 11-ի որոշմամբ հակասահմանադրական է ճանաչել մեծամասնական ճանապարհով առաջադրված անկախ թեկնածուների համար սահմանված ընտրագրավը՝ որպես ընտրություններին մասնակցելու նախապայման: Դատարանն իր որոշման մեջ նշել է, որ ընտրագրավի այդ կարգավորումը հակասում է Սահմանադրության մեջ ամրագրված օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքին: Վրաստանի ընտրական օրենսգիրքը չի նախատեսում ընտրագրավի պայման համամասնական կուսակցական ցուցակներով ընտրություններին մասնակցող անձանց համար:

Ամփոփելով կարելի է նշել, որ իր դրական և բացասական կողմերով հանդերձ՝ ընտրագրավի ինստիտուտը չի կարելի միանշանակորեն համարել անհրաժեշտ կամ չափազանց սահմանափակումներ սահմանող մի երևույթ: Դեպոզիտի առկայությունն, առաջին հերթին, պետք է հիմնավոր լինի՝ կոնկրետ երկրի իրավիճակից ելնելով: Նույնը վերաբերում է նաև դեպոզիտի չափին և վերադարձի կանոններին: Միակ բանը, որ կարելի է եզրակացնել, այն է, որ թեև շատ երկրներ կանգնել են այս ինստիտուտից հրաժարվելու ճանապարհին, այդուհանդերձ, ներկայիս զարգացած մի շարք պետություններ ընտրագրավի վերացումը համարում են ընտրական իրավունքի պատմական հիմքերից հրաժարում և կիրառում են այն ընտրությունների գրեթե բոլոր ձևաչափերում:

4. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՀԱՎԱՍԱՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՆՐԱՅԻՆ ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ԱՃԻ ԵՐԱՇԽԻՔ

4.1. ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԶԱՐՈՉՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԸ ՍԱՀՄԱՆՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՍԱՍԻՆ

Ընտրությունների նախապատրաստական փուլի առավել հստակ իրավական կանոնակարգումն, անշուշտ, ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վստահության աճի կարևորագույն երաշխիքներից է: Այս կապակցությամբ իրավակարգավորումների բացերը, դրանց անհստակությունը կարող են էական ազդեցություն ունենալ ընտրությունների արդյունքների վրա: Բացի այդ, եթե անտեսվում, խախտվում են սահմանված համապատասխան իրավական նորմերի պահանջները, ապա կասկածի տակ է դրվում ընտրությունների օրինականությունը, ինչն էլ խաթկվում է ժողովրդավարական բոլոր ինստիտուտների հիմքերը:

Ընտրությունների նախապատրաստական փուլի կարևոր միջոցառումներից են նախընտրական քարոզչության պատշաճ կազմակերպումն ու անցկացումը, ինչի համար, առաջին հերթին, պահանջվում է իրավական հստակ կանոնակարգումների առկայություն: Նախընտրական քարոզչության իրավական չափանիշների ոչ համարժեք ընտրությունը, ինչպես նաև դրանց զանգվա-

ծային խախտումները հաճախ էական նշանակություն են ունենում Սահմանադրությամբ ամրագրված ժողովրդաիշխանության երաշխիքների կայունությունը պահպանելու տեսանկյունից:

Նախընտրական քարոզչությունն այն ժամանակահատվածն է, որի ընթացքում թեկնածուներին **հավասար հնարավորություններ** (ընդգծումը մերն է) ապահովելու նպատակով գործում են հանրային ներուժից օգտվելու, քարոզչություն իրականացնելու և ֆինանսական թափանցիկությունն ապահովելու՝ ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված կանոնները¹: Այս առումով, մեր կարծիքով, խնդրահարույց են ՀՀ ընտրական օրենսգրքի՝ նախընտրական քարոզչության ժամանակահատվածն ամրագրող նորմերը: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է ՀՀ ընտրական օրենսգրքի՝ նախընտրական քարոզչության պաշտոնական մեկնարկն ազդարարող նորմին և սրա հետ կապված ընտրական գործընթացի մասնակիցների համար հավասար հնարավորությունների գործնականում ապահովման հիմնախնդրին: Այսպես՝ Հայաստանի Հանրապետությունում նախընտրական քարոզչության *պաշտոնական մեկնարկը* տրվում է թեկնածուների, կուսակցությունների ընտրական ցուցակների գրանցման համար ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետի վերջին օրվան հաջորդող 7-րդ օրը և ավարտվում քվեարկության օրվանից մեկ օր առաջ: Այս կապակցությամբ ուշադրության է արժանի ՀՀ ընտրական օրենսգրքի այն նորմը, համաձայն որի՝ **նախընտրական քարոզչության ժամանակահատվածի սահմանված լինելը չի սահմանափակում սույն օրենսգրքով չարգելված այլ ժամանակահատվածում քարոզչության իրականացումը** (ընդգծումը մերն է) (հոդ. 18, մաս 1): Փաստորեն, գործող իրավակարգավորումները հնարավորություն են ընձեռում թեկնածուներին, կուսակցություններին, դրանց դաշինքներին իրենց ոչ պաշտոնական քարոզարշավը սկսելու շատ ավելի վաղ, ինչի արդյունքում ընտրություններին մասնակցող թեկնածուների, քաղաքական ուժերի միջև առաջանում

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մաս (ընդ. 26.05.2011 թ.):

է փաստացի անհավասարություն՝ պայմանավորված այնպիսի գործոններով, ինչպիսիք են, օրինակ՝ նախքան նախընտրական քարոզչության՝ օրենքով սահմանված ժամկետի սկիզբը որոշ լրատվամիջոցներով քողարկված քարոզչության իրականացումը, որը կարող է դրսևորվել ինչպես կոնկրետ անհատ(ներ)ի, քաղաքական ուժ(եր)ի օգտին, այնպես էլ ընդդեմ վարչական ռեսուրսների չարաշահմանը և այլն:

Դեռևս 2007 թվականի հունիսի 10-ի ՍԴՈ-703 որոշման մեջ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է. «օրենսդրական ոչ բավարար կարգավորման են ենթարկված քվեարկությանը նախորդող գործընթացների հետ կապված իրավահարաբերությունները, մասնավորապես՝ հստակ և միակերպ ընկալելի կերպով սահմանման կարիք ունի «նախընտրական քարոզչություն» արտահայտությունը, որը, ինչպես վկայում է ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընտրությունների 2007 թ. գործընթացների հետ կապված պրակտիկան, հաճախ նույնացվել է «քաղաքական գործընթացներ», «քարոզչությանը նախորդող ու դրա անցկացման ժամանակաշրջան» և այլ արտահայտությունների հետ»: ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարել «նախընտրական քարոզչության» բովանդակության և ժամանակի մեջ այդ ինստիտուտը կիրառելու միակերպ (որոշակի) կարգի և պայմանների նախատեսումը ՀՀ ընտրական օրենսգրքում¹:

2011 թվականին ընդունված ՀՀ ընտրական օրենսգրքում այս հարցին տրվել է մասնակի լուծում: Մասնավորապես օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասում տրված է նախընտրական քարոզչության ժամանակահատվածի սահմանումը, ինչին արդեն իսկ անդրադարձ կատարվեց: ՀՀ ընտրական օրենսգրքի՝

¹ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2007 թվականի հունիսի 10-ի ՍԴՈ-703 որոշումը «Իմպիչմենտ» դաշինքի, «Նոր ժամանակներ», «Օրինաց երկիր» և «Հանրապետություն» կուսակցությունների դիմումների հիման վրա ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2007 թվականի մայիսի 19-ի՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով պատգամավորներ ընտրվելու մասին» թիվ 149-Ա որոշումը վիճարկելու վերաբերյալ գործով:

քարոզարշավին վերաբերող դրույթները, որոնք երաշխավորում են հավասար պայմաններ ընտրական գործընթացի բոլոր մասնակիցների համար, կիրառվում են միմիայն պաշտոնական քարոզարշավի ժամանակահատվածում, այսինքն՝ ոչ այն գրեթե մեկ շաբաթվա ընթացքում, որը հաջորդում է թեկնածուների, կուսակցությունների ընտրական ցուցակների գրանցման համար ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետի վերջին օրվան: Այս կապակցությամբ դեռևս 2011 թվականին ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի և Եվրախորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով)՝ ՀՀ ընտրական նոր օրենսգրքի նախագծի վերաբերյալ համատեղ եզրակացության մեջ նշված էր. «...քարոզչության պաշտոնական ժամանակահատվածը չի սկսվում մինչև թեկնածուների, կուսակցությունների ընտրական ցուցակների գրանցման համար օրենսգրքով նախատեսված վերջին օրվան հաջորդող 7-րդ օրը: Սա ստեղծում է հնարավոր ձեղքվածք (բաց) թեկնածուների գրանցման և քարոզչության ազդարարման ժամանակահատվածի միջև: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը և Վենետիկի հանձնաժողովն առաջարկում են, որ այս հոդվածը վերանայվի այնպես, որ հնարավորություն տա վերացնելու այս ձեղքվածքը (բացը)...»¹: Սույն խնդրին անդրադարձ է կատարված նաև ՀՀ Նախագահի 18.02.2013 թվականի ընտրությունների վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ընտրությունների դիտորդական առաքելության վերջնական զեկույցում, որում նշված է. «Ընտրական օրենսգրքը պետք է փոփոխվի՝ սահմանելով, որ նախընտրական քարոզչության շրջանը պաշտոնապես սկսվում է ամենաուշը թեկնածուների գրանցման վերջնաժամկետին հաջորդող օրը, որպեսզի քարոզարշավը կարգավորող կանոնները կիրառելի լինեն»²:

1 Տե՛ս ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի և Եվրախորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով)՝ ՀՀ ընտրական նոր օրենսգրքի նախագծի վերաբերյալ 20.04.2011 թվականի համատեղ եզրակացության 42-րդ կետը (CDL(2011)020):

2 Տե՛ս ՀՀ Նախագահի 18.02.2013 թվականի ընտրությունների վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ընտրությունների դիտորդական առաքելության վերջնական զեկույցը (Վարշավա, 08.05.2013), XIV Հանձնարարականներ, կետ 13:

Խնդրո առարկայի հետ կապված՝ դիտարկենք մի շարք պետություններում գործող իրավակարգավորումները: Այսպես՝ Բելառուսի Հանրապետության Նախագահի, պատգամավորության թեկնածուները **գրանցման պահից** (ընդգծումը մերն է) ունեն հավասար իրավունքներ՝ ելույթներ ունենալու նախընտրական և այլ ժողովներում, խորհրդակցություններում, նիստերում, տպագիր մամուլում, հանրային ռադիոյով, իսկ Հանրապետության Նախագահի, Ներկայացուցիչների պալատի պատգամավորության թեկնածուները՝ նաև պետական հեռուստատեսությամբ¹: Սույն նորմի վերլուծությունից հետևում է, որ նախընտրական քարոզչությունը մեկնարկում է թեկնածուների գրանցման պահից: Նմանատիպ իրավակարգավորում է սահմանված նաև Ղազախստանի Հանրապետությունում, որտեղ նախընտրական քարոզչությունը սկսվում է թեկնածուների **գրանցման համար սահմանված ժամկետի ավարտի պահից** (ընդգծումը մերն է): Գրանցման համար սահմանված ժամկետի ավարտի պահից թեկնածուները, կուսակցական ցուցակ առաջադրած քաղաքական կուսակցություններն իրավունք ունեն քարոզելու իրենց նախընտրական ծրագրերը մամուլում և զանգվածային լրատվության այլ միջոցներով²: Ուզբեկստանի Հանրապետությունում նախընտրական քարոզչությունը սկսվում է կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից Հանրապետության Նախագահի, պատգամավորության թեկնածուների **գրանցման օրվանից** (ընդգծումը մերն է)³: Թուրքմենստանի Հանրապետությունում ևս քարոզչությունը սկսվում է թեկնածուների **գրանցման օրվանից**⁴ (ընդգծումը մերն է):

¹ Տե՛ս “Избирательный кодекс Республики Беларусь” от 11.02.2000 N 370–3, հոդ. 74, մաս 1:

² Տե՛ս Конституционный закон Республики Казахстан “О выборах в Республике Казахстан” от 28.09.1995 N 2464, հոդ. 27, կետ 2, հոդ. 28, կետ 2:

³ Տե՛ս Закон Республики Узбекистан «О выборах Президента Республики Узбекистан» (дейст. ред.), №1. 28, Закон Республики Узбекистан «О выборах в Олий Мажлис Республики Узбекистан» (дейст. ред.), հոդ. 27:

⁴ Տե՛ս Закон Туркменистана от 4 мая 2013 года “Об утверждении и введении в действие Избирательного кодекса Туркменистана” (ուժի մեջ է 01.07.2013 թ–ից), հոդ. 63, մաս 1:

Ռուսաստանի Դաշնությունում **քարոզչության ժամանակահատվածը** սկսվում է թեկնածուի, թեկնածուների ցուցակի **առաջադրման օրվանից** (ընդգծումը մերն է): Հեռուստառադիոհեռարձակում իրականացնող կազմակերպությունների ալիքներով և պարբերական տպագիր հրատարակչություններում նախընտրական քարոզչությունը սկսվում է քվեարկության օրվանից 28 օր առաջ: Կրկնակի քվեարկության անցկացման դեպքում քարոզչության ժամանակահատվածը սկսվում է համապատասխան հանձնաժողովի կողմից կրկնակի քվեարկության օրվա նշանակման օրվանից¹:

Վրաստանում նախընտրական քարոզչությունը սկսվում է ընտրությունների օրվա նշանակման պահից²:

Այսպիսով՝ արտասահմանյան մի շարք պետությունների ընտրական օրենսդրության համապատասխան նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ, որպես կանոն, նախընտրական քարոզչությունը սկսվում է ընտրություններին մասնակցող անհատների, քաղաքական ուժերի ընտրական ցուցակների գրանցման համար սահմանված ժամկետի ավարտի պահից, ինչպիսի իրավակարգավորումը մեր կարծիքով միանգամայն տրամաբանական է:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք օրենսդրական համապատասխան փոփոխություն կատարել ՀՀ ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասում՝ սահմանելով, որ **նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սկսվում է թեկնածուների, կուսակցությունների ընտրական ցուցակների գրանցման համար սույն օրենսգրքով սահմանված ժամկետի վերջին օրվան հաջորդող օրը**: Կարծում ենք՝ սույն նորմի օրենսդրական ամրագրումը որևէ կերպ չի խոչընդոտի ՀՀ ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված այն նորմի իրացմանը, համաձայն որի՝ հանրային ռադիոյից և հանրային հեռուստատեսությունից Հանրապետության Նախագահի թեկնածուներին, համամասնական ընտրակարգով ընտ-

¹ Стн Федеральный закон от 12.06.2002 N 67-ФЗ “Об основных гарантиях избирательных прав и права на участие в референдуме граждан Российской Федерации” (ред. от 07.05.2013), հոդ. 49, կետեր 1, 2, 5:

² Стн Electoral Code of Georgia (as of August 1st, 2012), հոդ. 45, կետ 1:

րություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին անվճար և վճարովի եթերաժամ տրամադրելու կարգը և ժամանակացույցը յուրաքանչյուր համապետական և երևանի ավագանու ընտրության համար սահմանում է կենտրոնական ընտրական հանձնաժողովը թեկնածուների, կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակների գրանցման համար սահմանված ժամկետի ավարտից հետո՝ հաջորդ օրը: Առաջարկվող օրենսդրական փոփոխության արդյունքում, իհարկե, բավականին կերկարաձգվեն նախընտրական քարոզչության ժամկետները: Սույն խնդրին կարելի է լուծում տալ՝ փոփոխելով համապետական և երևանի ավագանու ընտրությունների ժամանակ թեկնածուների, կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակների գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացման և դրանց գրանցման ժամկետները:

4.2. ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՍԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՊԱՀԱՆՏՆԵՐԻ ԱՍՐԱԳՐՍԱՆ ՀՐԱՍԱՅԱԿԱՆԸ

Նախընտրական քարոզչությունը մի ժամանակահատված է, որի ընթացքում թեկնածուները, կուսակցությունները (դրանց դաշինքները) ընտրողներին պետք է ներկայացնեն իրենց ծրագրերը և դրանց կյանքի կոչմանն ուղղված քայլերը: Մինչդեռ մեր իրականության մեջ ոչ հազվադեպ ականատես ենք լինում ոչ թե գաղափարական, այլ միջանձնային պայքարի, և նախընտրական քարոզչությունը հաճախ քաղաքական գովազդի ստեղծագործական մրցույթ է հիշեցնում՝ սև «PR» հնարքների անխնա կիրառմամբ: Ճիշտ է, ՀՀ ընտրական օրենսգիրքն ընտրողներին, թեկնածուներին, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին չի արգելում քարոզչություն կատարելու նաև թեկնածուի, կուսակցության, կուսակցության դաշինքի դեմ (18-րդ

հող–ի 4–րդ մաս), սակայն դա պետք է տեղի ունենա օրենքով չարգելված ձևերով, և նախընտրական պայքարը պետք է ծավալվի առավելապես գաղափարական հարթության վրա, թեկնածուների, քաղաքական ուժերի ծրագրային դրույթների կյանքի կոչման իրատեսականության, ի կատար ածման կառուցակարգերի շուրջ: Այս կապակցությամբ՝ հստակ իրավական դիրքորոշում է արտահայտել ՀՀ սահմանադրական դատարանը. «Լուրջ խնդիրներից մեկն էլ նախընտրական ծրագրերին օրենքով ներկայացվող պահանջների ամրագրման անհրաժեշտությունն է: ՀՀ ընտրական օրենսգրքում այդ ծրագրերի մասին հիշատակվում է միայն 6–րդ հոդվածի 4–րդ մասում՝ նախատեսելով, որ «Համապետական և Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ թեկնածուները, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները) կարող են ներկայացնել իրենց նախընտրական ծրագրերը կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած էլեկտրոնային ձևով՝ կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում տեղադրելու համար: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը այդ ծրագրերը տեղադրում է համացանցային կայքում ներկայացվելուց հետո՝ մինչև հաջորդ աշխատանքային օրվա ավարտը»: Օրենսգրքի՝ նախընտրական քարոզչությանը նվիրված 5–րդ գլուխը հիմնականում լուծում է տեխնիկականակերպչական բնույթի խնդիրներ: Որևէ ձևով չի հստակեցվում, թե նախընտրական քարոզչության բուն բովանդակությունը ներկայացնող նախընտրական ծրագրերն ինչ են իրենցից ներկայացնում և իրավական ինչ պահանջներ պետք է բավարարեն: Գործի քննությունը վկայում է նաև, որ տվյալ նորմը ձևական բնույթ է կրել, ու որևէ կուսակցության կողմից նման ծրագիր չի ներկայացվել ու տեղակայվել համացանցում»¹:

¹ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 31.05.2012 թվականի ՍԴՈ–1028 որոշումը «Հայ ազգային կոնգրես» կուսակցությունների դաշինքի դիմումի հիման վրա՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2012 թվականի մայիսի 13–ի՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով պատգամավորներ ընտրվելու մասին» N 265–Ա որոշումը վիճարկելու վերաբերյալ գործով:

«Միջազգային պրակտիկան վկայում է, որ ընտրական օրենսդրությամբ նախատեսված, այսպես կոչված, «մաքուր» համամասնական ընտրակարգն այնպիսին է, որ ընտրողը ձայնը տալիս է որևէ քաղաքական ուժի՝ նրա քաղաքական կողմնորոշումների ու հանրությանը ներկայացրած ծրագրային մոտեցումների հիման վրա»¹:

«Իրավական կարգավորումից դուրս թողնելով նախընտրական ծրագրերին ներկայացվող պահանջները՝ ստեղծվում է մի վիճակ, երբ քաղաքական ուժերի բացարձակ հայեցողությանն են թողնվում ընտրողներին ներկայացվող խոստումների ծավալն ու բնույթը: Գործնականում առանձին քաղաքական ուժերի ծրագրային դրույթները շեղվում են ակնկալվող պետաիշխանական գործառնությունների բնույթից: Ավելին՝ ուռճացված և ոչ համարժեք խոստումները, բովանդակելով ՀՀ ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 7-րդ մասի հատկանիշներ, կպահանջեն համարժեք իրավական գնահատական: ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ համապատասխան ավանդույթների բացակայության պայմաններում ընտրական գործընթացի մասնակիցների ծրագրային մոտեցումների նկատմամբ իրավական կոնկրետ պահանջի առաջադրումը և այն օրենսդրորեն ամրագրելը ժողովրդավարական ընտրությունների կազմակերպման կարևոր գրավականներից մեկը կարող է հանդիսանալ»²:

Փաստորեն, ՀՀ գործող ընտրական օրենսգիրքը նախատեսում է համապետական և երևանի ավագանու ընտրությունների

¹ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 30.06.2009 թվականի ՍԴՈ-810 որոշումը «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ և 14-րդ հոդվածների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով:

² Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 31.05.2012 թվականի ՍԴՈ-1028 որոշումը «Հայ ազգային կոնգրես» կուսակցությունների դաշինքի դիմումի հիման վրա՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2012 թվականի մայիսի 13-ի՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով պատգամավորներ ընտրվելու մասին» N 265-Ա որոշումը վիճարկելու վերաբերյալ գործով:

Ժամանակ էլեկտրոնային ձևով նախընտրական ծրագրերի ներկայացման **հայեցողություն** (ընդգծումը մերն է), այլ ոչ պարտականություն՝ կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում տեղադրելու համար (հոդ. 6, մաս 4): Կարծում ենք՝ ՀՀ ընտրական օրենսգրքի սույն նորմը հարկ է փոփոխել՝ էլեկտրոնային ձևով նախընտրական ծրագրերի ներկայացումը կենտրոնական ընտրական հանձնաժողով նախատեսելով որպես պարտականություն: Բացի այդ, նպատակահարմար ենք համարում օրենսդրորեն ամրագրել նաև համապետական և Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ թեկնածուների, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) պարտականությունը՝ հրատարակել իրենց նախընտրական ծրագրերը պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների հիմնադրած թերթերում՝ նկատի ունենալով նաև ՀՀ ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 12-րդ մասի պահանջը, համաձայն որի՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների հիմնադրած թերթերը և ամսագրերը նախընտրական քարոզչության ժամանակահատվածում պարտավոր են թեկնածուների, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար ապահովել ոչ խտրական և ոչ կողմնակալ պայմաններ: Հայաստանի Հանրապետության գործող ընտրական օրենսգրքի 6-րդ հոդվածի 4-րդ մասում անհրաժեշտ է նախատեսել նաև *նախընտրական ծրագրերի ներկայացման ժամկետները*: Ներկայումս դրանք սահմանված չեն, ինչը վկայում է, որ սույն նորմն առավելապես ձևական բնույթ է կրում: Միայն նշված է, որ կենտրոնական ընտրական հանձնաժողովը այդ ծրագրերը տեղադրում է համացանցային կայքում ներկայացվելուց հետո՝ մինչև հաջորդ աշխատանքային օրվա ավարտը:

Այս կապակցությամբ, օրինակ, Ռուսաստանի Դաշնությունում ընտրական հանձնաժողովի կողմից գրանցված թեկնածուներ, դրանց ցուցակներ առաջադրած քաղաքական կուսակցությունը քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ հրատարակում

է իր նախընտրական ծրագիրը ոչ պակաս, քան մեկ պետական կամ մունիցիպալ (ընտրությունների մակարդակին համապատասխան) պարբերական տպագիր հրատարակչությունում, ինչպես նաև այն տեղադրում է «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցության ցանցում: Այսպիսի հրատարակման համար օգտագործվում է թեկնածուներին, ընտրական միավորումներին՝ օրենքին համապատասխան տրամադրվող անվճար տպագիր մակերեսը կամ էլ հրատարակման համար վճարում է կատարվում քաղաքական կուսակցության, դրա կողմից առաջադրված թեկնածուի նախընտրական հիմնադրամի միջոցների¹: Քաղաքական կուսակցության կողմից սահմանված պարտականության չկատարման դեպքում ընտրական հանձնաժողովն իրավասու է նշված կուսակցությանը հայտարարել նախագգուշացում: Ասվածը վերաբերում է նաև «Ռուսաստանի Դաշնության քաղաքացիների ընտրական իրավունքների և հանրաքվեին մասնակցելու իրավունքի հիմնական երաշխիքների մասին» դաշնային օրենքի պահանջները խախտած թեկնածուներին²: Վարչական իրավախախտումների վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության օրենսգրքով պատասխանատվություն է նախատեսված հեռուստահեռարձակում և (կամ) ռադիոհեռարձակում իրականացնող կազմակերպությունների ալիքներում և պարբերական տպագիր հրատարակչություններում ընտրությունների և հանրաքվեների վերաբերյալ օրենսդրությամբ նախատեսված նախընտրական քարոզչության, հանրաքվեի հարցերի վերաբերյալ քարոզչության իրականացման կարգի և պայմանների խախտման համար՝ վարչական տուգանքի տեսքով³: Վարչական պատասխանատվություն է նախատեսված

¹ Տե՛ս Федеральный закон от 12.06.2002 N 67-ФЗ “Об основных гарантиях избирательных прав и права на участие в референдуме граждан Российской Федерации” (ред. от 07.05.2013), հոդ. 48, կետ 10: Տե՛ս նաև Федеральный закон от 11.07.2001 N 95-ФЗ “О политических партиях” (ред. от 07.05.2013) հոդ. 36, կետ 4:

² Տե՛ս Федеральный закон от 12.06.2002 N 67-ФЗ “Об основных гарантиях избирательных прав и права на участие в референдуме граждан Российской Федерации” (ред. от 07.05.2013), հոդ. 20, կետ 5.1:

³ Տե՛ս “Кодекс Российской Федерации об административных правонарушениях” от 30.12.2001 N 195-ФЗ (ред. от 07.06.2013), հոդ. 5.8:

նաև ընտրությունների, հանրաքվեների տեղեկատվական ապահովման գործընթացին զանգվածային լրատվության միջոցների մասնակցության կարգի խախտման համար: Մասնավորապես՝ զանգվածային լրատվության միջոցի գլխավոր խմբագրի, խմբագրության, հեռուստահեռարձակում և (կամ) ռադիոհեռարձակում իրականացնող կազմակերպության կամ զանգվածային լրատվության միջոցի թողարկումը կամ տարածումն իրականացնող այլ կազմակերպության կողմից ընտրությունների, հանրաքվեների նախապատրաստման և անցկացման հետ կապված, այդ թվում՝ քարոզչական նյութերի հրապարակման (հրատարակման) կարգի խախտումը, ինչպես նաև ընտրական, հանրաքվեի քարոզչության ժամանակահատվածում տեղեկատվական-հեռահաղորդակցության ցանցերում, որոնց հասանելիությունը սահմանափակված չէ անձանց որոշակի շրջանակով, նշված նյութերի հրապարակման (հրատարակման) կարգի խախտումը առաջ է բերում վարչական տուգանքի նշանակում¹:

ՀՀ ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ թեկնածուները, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները, ինչպես նաև ընտրությունների մյուս մասնակիցները պարտավոր են պահպանել նախընտրական քարոզչության կազմակերպման սահմանված կարգը: Ընտրական հանձնաժողովները հսկում են նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանումը: Թեկնածուների, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների կողմից այդ կարգի խախտման դեպքում թեկնածուին, կուսակցության, կուսակցության դաշինքի ընտրական ցուցակը գրանցած հանձնաժողովը դիմում է իրավասու մարմիններ՝ դրանք կանխելու կամ կիրառում **նախազգուշացում** (ընգծումը մերն է) խախտում

¹ Տե՛ս նույն տեղում, հոդ. 5.5, մաս 1:

Հայաստանի Հանրապետությունում զանգվածային լրատվության միջոցներով նախընտրական քարոզչության իրականացման համար օրենքով սահմանված կարգը խախտելը առաջ է բերում վարչական պատասխանատվություն (ՎԻՎՕ հոդ. 40⁷):

թույլ տված թեկնածուի, կուսակցության, կուսակցությունների դաշինքի նկատմամբ՝ տալով խախտումը դադարեցնելու համար 3 օրը չգերազանցող ողջամիտ ժամկետ: Նշված ժամկետում խախտումը չդադարեցնելու դեպքում հանձնաժողովը դիմում է դատարան՝ թեկնածուի, կուսակցության, կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու (ընգծումը մերն է) համար: Նպատակահարմար ենք համարում *պատասխանատվության վերը նշված միջոցների կիրառումը* նաև համապետական և Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ թեկնածուների, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) կողմից իրենց *նախընտրական ծրագրերը* կենտրոնական ընտրական հանձնաժողով՝ *հանձնաժողովի սահմանած ձևով և ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետում չներկայացնելու համար:*

Որպես քաղաքական կուսակցության նախընտրական ծրագիր՝ կարող է հրապարակվել կուսակցության՝ ավելի վաղ ընդունված ծրագիրը, սակայն դա չի նշանակում, որ «քաղաքական կուսակցության ծրագիր» և «քաղաքական կուսակցության նախընտրական ծրագիր» հասկացությունները նույնական են: Դրանք կարող են չհամընկնել ինչպես ծավալով, այնպես էլ բովանդակությամբ: Քաղաքական կուսակցության ծրագիրն անհրաժեշտ է դիտարկել որպես կենտրոնական փաստաթուղթ, որը կազմում է, ընդհանուր առմամբ, կուսակցության քաղաքական գործունեության և, մասնավորապես, դրա քարոզչական աշխատանքի հիմքը: «Կուսակցությունների մասին» 03.07.2002 թվականի ՀՀ օրենքի համաձայն՝ կուսակցությունը պետք է ունենա ծրագիր, որում նշվում են դրա գործունեության հիմնական սկզբունքները, նպատակները, խնդիրները, ինչպես նաև այդ նպատակներին հասնելու եղանակներն ու խնդիրները լուծելու ուղիները և միջոցները: Կուսակցության ծրագրում կատարված փոփոխությունների և լրացումների պետական գրանցումն իրականացվում է կուսակցության պետական գրանցման համար սահմանված ընթացակարգով (հոդ. 16): Քաղաքական կուսակցության նախընտրական ծրագիրը ծառայում է ընտրու-

թյուններում որոշակի արդյունքի հասնելուն ուղղված նպատակներին՝ հանդիսանալով կուսակցության ընտրարշավի գլխավոր հավաքական փաստաթուղթը:

«Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքին համապատասխան՝ կուսակցության ծրագրի ընդունման մասին որոշումն ընդունվում է հիմնադիր համագումարի ընթացքում պատվիրակների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, որի կազմակերպիչները համագումարի անցկացման օրվանից առնվազն մեկ ամիս առաջ <http://www.azdarar.am> հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակում են նաև կուսակցության ծրագրի նախագծի հիմնական դրույթները (հոդ. 11, մաս 2, հոդ. 12, մասեր 1, 3): Քաղաքական կուսակցության ծրագիրը դրա պետական գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերից է: Կուսակցության պետական գրանցումը կարող է մերժվել նաև, եթե կուսակցության ծրագրի դրույթները հակասում են ՀՀ օրենքներին (հոդ. 14, մաս 1): Ինչ վերաբերում է քաղաքական կուսակցության նախընտրական ծրագրին, ապա դրա ընդունման կարգը ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չէ:

Իրավական լուծում պահանջող խնդիրներից է նաև ընտրական գործընթացի մասնակիցների *նախընտրական ծրագրերին ներկայացվող օրենսդրական պահանջների ամրագրումը*, ինչի անհրաժեշտությունը մատնանշել է ՀՀ սահմանադրական դատարանը: Գործնականում նախընտրական ծրագրերին ներկայացվող օրենսդրական միասնական պահանջների մշակման գործընթացը կարող է ոչ իրատեսական թվալ՝ հաշվի առնելով, օրինակ, քաղաքական կուսակցության ծրագրի և քաղաքական կուսակցության նախընտրական ծրագրի դրույթների հաճախակի նույնական լինելու հանգամանքը: Այնուամենայնիվ, *համապետական և Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ թեկնածուների, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) կողմից կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվող նախընտրական ծրագրերին իրավական որոշակի պահանջների առաջադրումը կարող է էական դերակատար*

րություն ունենալ ընտրագանգվածին ներկայացվող փառաբնույթ խոսքումների բնույթի և դրանց ծավալի հափալեցման հարցում: Գործող իրավակարգավորումները հնարավորություն են ընձեռում ընտրական գործընթացի մասնակիցներին իրենց նախընտրական ծրագրերի դրույթների շարքում ներառել ոչ իրատեսական խոստումներ: Մինչդեռ ՀՀ ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված է նախընտրական քարոզչության ժամանակ, ինչպես նաև քվեարկության նախորդ և քվեարկության օրը թեկնածուների, կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների կողմից անձամբ կամ նրանց անունից կամ որևէ այլ եղանակով ընտրողներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով դրամ, սննդամթերք, արժեթղթեր, ապրանքներ տալու կամ ծառայություններ մատուցելու արգելքը, **ներառյալ՝ դրանք խոստանալու** (ընդգծումը մերն է): Սույն պահանջների խախտման համար նախատեսված է վարչական պատասխանատվություն: Այսպես՝ նախընտրական քարոզչության իրականացման համար օրենքով սահմանված ժամանակահատվածում բարեգործության անվան տակ կամ **որևէ այլ եղանակով** (ընդգծումը մերն է) վերը նշված գործողություններից մեկի (մի քանիսի) իրականացումը, եթե դրա (դրանց) համար քրեական պատասխանատվություն նախատեսված չէ, առաջացնում է տուգանքի նշանակում (ՎԻՎՕ հոդ. 40¹⁰): Տվյալ դեպքում «որևէ այլ եղանակով»-ը կարող է ներառել նաև ընտրական գործընթացի մասնակիցների ծրագրային դրույթներում արտացոլված համապատասխան խոստումները:

Առաջ քաշված հարցադրման հետ կապված՝ դիտարկենք որոշ պետություններում գործող իրավակարգավորումները: Այսպես՝ Բելառուսի Հանրապետության ընտրական օրենսգրքում նորմեր են բովանդակվում Հանրապետության Նախագահի, պատգամավորության թեկնածուների նախընտրական ծրագրերի վերաբերյալ: Ըստ այդմ՝ Հանրապետության Նախագահի, Ներկայացուցիչների պալատի պատգամավորության թեկնածուներն իրավունք ունեն պետական լրատվամիջոցներով, հանրապետական կամ տեղական բյուջեներից մասնակիորեն ֆինանսավորվող, ինչպես նաև այն լրատվամիջոցներով,

որոնց հիմնադիրներից մեկը պետական մարմիններն են կամ կազմակերպությունները, անվճար հրապարակելու իրենց նախընտրական ծրագրերը համապատասխանաբար՝ մինչև 5 և 2 մեքենագրական էջ ծավալով՝ ներկայացնելով նշված ծրագրերի տեքստերը ոչ ուշ, քան ընտրություններից 20 օր առաջ: Լրատվամիջոցների ցանկը որոշում է կենտրոնական հանձնաժողովը: Նախընտրական ծրագրերը հրապարակելիս պահպանվում է դրանց ստացման հաջորդականությունը: Հանրապետության Նախագահի, պատգամավորության թեկնածուների ապագա գործունեության ծրագրերի տեքստերը որոշվում են թեկնածուների կողմից: Թեկնածուի ծրագիրը չպետք է բովանդակի պատերազմի քարոզչություն, սահմանադրական կարգը բռնությամբ փոխելու, Բելառուսի Հանրապետության տարածքային ամբողջականության խախտման, սոցիալական, ազգային, կրոնական և ռասայական թշնամանքի կոչեր, Բելառուսի Հանրապետության պաշտոնատար անձանց, Հանրապետության Նախագահի, պատգամավորության թեկնածուների վերաբերյալ վիրավորանք և զրպարտություն: Նշված պահանջների խախտման դեպքում համապատասխան ընտրական հանձնաժողովն իրավասու է ուժը կորցրած ճանաչելու թեկնածուի գրանցման մասին որոշումը¹:

Համանման դրույթներ են բովանդակվում «Ղազախստանի Հանրապետությունում ընտրությունների մասին» ՂՀ սահմանադրական օրենքում, համաձայն որի՝ պետությունը թեկնածուներին երաշխավորում է հավասար հիմունքներով միջոցների տրամադրում՝ զանգվածային լրատվամիջոցներով իրենց ծրագրերով հանդես գալու համար: Յուրաքանչյուր թեկնածուի հատկացվում են հեռուստատեսությամբ 15, ռադիոյով 10 րոպե տևողությամբ հանդես գալու, ինչպես նաև տպագիր հրատարակչություններում 2 հոդված տպագրելու համար միջոցներ՝ 0,1 տպագիր էջը չգերազանցող ծավալով: Թեկնածուն, քաղական կուսակցությունը հանդես է գալիս իր ապագա գոր-

¹ Տե՛ս “Избирательный кодекс Республики Беларусь” от 11.02.2000 N 370-3, հոդվածներ 46, 75:

ծունեության նախընտրական ծրագրով, որը չպետք է հռչակի սահմանադրական կարգը բռնությամբ փոխելու, Հանրապետության ամբողջականությունը խախտելու, պետության անվտանգությունը խաթալելու, սոցիալական, ռասայական, ազգային, կրոնական, դասակարգային և սեռային խտրականություն բորբոքելու գաղափարներ, դաժանության և բռնության պաշտամունք, ինչպես նաև օրենսդրությամբ չնախատեսված ռազմականացված կազմավորումների ստեղծում¹: Նշված պահանջների խախտման դեպքում համապատասխան ընտրական հանձնաժողովն իրավասու է մերժելու թեկնածուի, կուսակցական ցուցակի գրանցումը, իսկ թեկնածուի կամ կուսակցական ցուցակի գրանցումից հետո այդպիսի նախընտրական ծրագրի առաջադրման դեպքում՝ ուժը կորցրած ձանաչել թեկնածուի կամ կուսակցական ցուցակի գրանցման մասին որոշումը²:

4.3. ԶԼՍ-ՆԵՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՀԱՎԱՍԱՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԾՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԲԱՐՈՋՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

Ընտրական գործընթացում զանգվածային լրատվամիջոցներն ունեն էական դերակատարություն: Դրանք ակտիվորեն ներգրավված են ընտրական գործընթացին՝ հանդես գալով որպես ընտրազանգվածին իրազեկելու աղբյուր, նախընտրական քարոզչության միջոց, ինչպես նաև քաղաքացիական վերահսկողության գործիք:

Նախընտրական քարոզչության ժամանակահատվածում թեկնածուների, կուսակցությունների (դրանց դաշինքների) կող-

¹ Նմանատիպ իրավակարգավորում է սահմանված նաև Վրաստանի ընտրական օրենսգրքում (Electoral Code of Georgia (as of August 1st, 2012), հոդ. 45, կետ 3):

² Стн Конституционный закон Республики Казахстан “О выборах в Республике Казахстан” от 28.09.1995 N 2464, №1. 28, կետ 3, հոդ. 29:

մից ԶԼՄ-ներից օգտվելու հավասար հնարավորությունների ապահովման անհրաժեշտության մասին հիշատակված է միջազգային հեղինակավոր մի շարք փաստաթղթերում: Օրինակ՝ Եվրախորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողովի) «Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագիրք. ցուցումներ և բացատրական զեկույց» (CDL-AD (2002) 23) փաստաթղթի բացատրական զեկույցի 18-րդ կետում մասնավորապես նշված է. «Հնարավորությունների հավասարությունը պետք է երաշխավորվի կուսակցությունների և թեկնածուների միջև ու պետք է պարտադրի պետությանը անկողմնակալ դիրք գրավել նրանց նկատմամբ և կիրառել նույն իրավունքը բոլորի հանդեպ: Չեզոքության պահանջը կիրառվում է նաև ընտրարշավի՝ լրատվամիջոցներով լուսաբանման նկատմամբ»: Նույն փաստաթղթի 19-րդ կետի համաձայն. «Հիմնական քաղաքական ուժերը պետք է կարողանան հնչեցնել իրենց կարծիքը երկրի կարևոր լրատվամիջոցներով... Սակայն այն փաստը, որ լրատվամիջոցները կարող են չտրամադրել ընտրարշավի և թեկնածուների վերաբերյալ անկողմնակալ տեղեկատվություն, ընտրությունների ժամանակ ծագող ամենատարածված թերություններից է: Ամենակարևորը յուրաքանչյուր երկրի համար լրատվամիջոցների ցուցակ կազմելն է և հավաստիանալը, որ թեկնածուները կամ կուսակցությունները ստանան հավասար եթերաժամանակ կամ գովազդային ժամաքանակ, ներառյալ՝ պետական ռադիո- և հեռուստատեսային կայաններով»:

Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների նախարարների կոմիտեի՝ Զանգվածային լրատվության միջոցներով ընտրական քարոզչության լուսաբանման միջոցառումների վերաբերյալ N R (99) 15 հանձնարարականի հավելվածում տպագիր լրատվամիջոցների մասով սահմանված է. «Զանգվածային լրատվամիջոցների կողմից ընտրությունների լուսաբանման կանոնակարգումը չպետք է նսեմացնի թերթերի և ամսագրերի ո՛չ խմբագրական անկախությունը, ո՛չ էլ դրանց իրավունքը՝ արտահայտելու ցանկացած քաղաքական նախընտրություն: Անդամ պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն, համաձայն

որոնց՝ հանրային իշխանություններին պատկանող տպագիր լրատվամիջոցները կուսաբանեն ընտրական քարոզչությունը արդար, հավասարակշռված և անկողմնակալ, առանց խտրականության կամ որևէ կոնկրետ քաղաքական կուսակցությանը կամ թեկնածուի աջակցելու: Եթե այդպիսի լրատվամիջոցները տեղադրում են վճարովի քաղաքական գովազդ, ապա դրանք պետք է ապահովեն հավասար և ոչ խտրական պայմաններ գովազդային մակերես ձեռք բերելու ցանկություն ունեցող բոլոր հավակնորդների և քաղաքական կուսակցությունների համար»¹: Սույն հանձնարարականում հեռուստառադիոհեռարձակում իրականացնող ընկերությունների մասով սահմանված է. «Ընտրական քարոզչության ժամանակահատվածում համապատասխան կանոնակարգումը պետք է խթանի և դյուրացնի կարծիքների արտահայտման բազմազանությունը հեռուստառադիոհեռարձակում իրականացնող լրատվամիջոցների օգնությամբ: Հեռարձակողների խմբագրական անկախությունը հավուր պատշաճի հաշվի առնելով՝ կանոնակարգումը պետք է նախատեսի ընտրական քարոզչությունն արդար, հավասարակշռված և անկողմնակալ լուսաբանելու պարտականությունը հեռարձակող ընկերության բոլոր հաղորդումներում: Տվյալ պարտականությունը պետք է դրվի ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր հեռուստառադիոհեռարձակում իրականացնող ընկերությունների վրա: Ինքնակարգավորման կանոնների բացակայության դեպքում անդամ պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն, որոնց ուժով հանրային և մասնավոր հեռարձակող ընկերությունները ընտրությունների ժամանակահատվածում պետք է լինեն հատկապես արդար, հավասարակշռված և անկողմնակալ լրատվական և հրապարակախոսական հաղորդումներում... Այդպիսի հաղորդումների ժամանակ հանրային իշխանությունները չպետք է օգտագործեն իրենց արտոնյալ դիրքը: Տվյալ հարցն, առաջին հերթին, պետք է լուծվի

¹ Стн Рекомендация N R (99) 15 Комитета Министров государств-членов Совета Европы о мерах по освещению избирательной кампании средствами массовой информации (принята Комитетом Министров 9 сентября 1999 года на 678 встрече заместителей министров), Приложение, I:

ինքնակարգավորման համապատասխան միջոցներով: Անդամ պետությունները կարող են քննարկել ընտրությունների լուսաբանումը վերահսկող համապատասխան մարմիններին միջամտելու իրավունք վերապահելու վերաբերյալ հարցը՝ հնարավոր թերությունների վերացման համար: Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձվի այլ հաղորդումներին, որոնք ուղղակիորեն կապված չեն ընտրական քարոզչության հետ, սակայն կարող են ազդեցություն ունենալ ընտրողների վերաբերմունքի վրա»¹:

Մինչև Հայաստանի Հանրապետության ընտրական նոր օրենսգրքի ընդունումը և «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» 09.10.2000 թվականի ՀՀ օրենքում համապատասխան փոփոխությունների կատարումը² լրատվամիջոցների, մասնավորապես հեռուստաընկերությունների կողմից թեկնածուների, կուսակցությունների (դրանց դաշինքների) նախընտրական քարոզչության լուսաբանման հետ կապված՝ պարբերաբար ծագել են լուրջ խնդիրներ, որոնց մասին են վկայում, օրինակ՝ 2007 և 2008 թվականներին տեղի ունեցած ՀՀ խորհրդարանական և նախագահական ընտրությունների լուսաբանումների դիտարկումների արդյունքները Հայաստանի հեռարձակվող ՁԼՄ-ներում³:

ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2008 թվականի մարտի 8-ի ՄԴՈ-736 որոշման մեջ արձանագրվել է Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի կողմից (ՀՌԱՀ) օրենքի պահանջների կատարմանը ձևական մոտեցում դրսևորելու փաստը՝ կապված հեռուստաընկերությունների կողմից նախընտրական քարոզչության՝ ՀՀ ընտրական օրենսգրքով

¹ Տե՛ս նույն տեղում, Приложение, II:

² Օրենքը նոր խմբագրությամբ շարադրվել է 10.06.2010 թվականին (ՀՕ-100-Ն):

³ Տե՛ս Հայաստանի հեռարձակվող ՁԼՄ-ներում 2007 և 2008 թթ. խորհրդարանական և նախագահական ընտրությունների լուսաբանումների դիտարկումները (Երևանի մամուլի ակումբ, «Թիմ» հետազոտությունների կենտրոն, Բաց հասարակության ինստիտուտի ՁԼՄ-ների ցանցային ծրագիր (Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ)), Երևան-2007, 2008:

սահմանված կարգի պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացման հետ: ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ դրա արդյունքում լրատվամիջոցներում ոչ միայն տեղ են գտել կողմնակալ մոտեցումներ, այլև առանձին լուսաբանումների ընթացքում արձանագրվել են նաև իրավական ու բարոյական նորմերի խախտումներ¹:

Լրատվամիջոցների կողմից թեկնածուների, կուսակցությունների (դրանց դաշինքների) նախընտրական քարոզարշավի լուսաբանման գործընթացում մի շարք խախտումներ ու օրենսդրական բացթողումներ են արձանագրվել նաև ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԺՀՄԻԳ) ընտրությունների դիտորդական առաքելության՝ 2007 թվականի սեպտեմբերի 10-ին Վարշավայում հրապարակված զեկույցում՝ կապված 2007 թվականի մայիսի 12-ին անցկացված ՀՀ խորհրդարանական ընտրությունների հետ²:

Սույն հիմնախնդրի հետ կապված՝ ՀՀ օրենսդրական մի շարք ակտերում փոփոխությունների կատարումից և 26.05.2011 թվականին Հայաստանի Հանրապետության ընտրական նոր օրենսգրքի ընդունումից հետո իրավիճակն էապես բարելավվեց:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ հանրային հեռուստառադիոընկերությունը ղեկավարվում է օբյեկտիվության, ժողովրդավարության, անկողմնակալության, բազմազանության, բազմակարծության սկզբունքներով... (հոդ. 26, մաս 4): Նույն օրենքն արգելում է հանրային հեռուստառադիոընկերության հեռարձակվող հաղորդումներում քաղաքական դիրքորոշման գերակշռությունը (հոդ. 26, մաս 6, կետ 2): Իսկ ՀՀ ընտրական օրենսգրքում ամրագրված է,

¹ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2008 թվականի մարտի 8-ի ՍԴԴ-736 որոշումը Հանրապետության Նախագահի թեկնածուներ Տիգրան Կարապետյանի և Լևոն Տեր-Պետրոսյանի դիմումների հիման վրա՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2008 թվականի փետրվարի 24-ի՝ «Հանրապետության Նախագահ ընտրվելու մասին» թիվ 24-Ա որոշումը վիճարկելու վերաբերյալ գործով:

² Մանրամասն տե՛ս Զեկույցի 8-րդ բաժնի (Զանգվածային լրատվամիջոցները) «բ» (Լրատվամիջոցների գործունեության իրավական դաշտը) և «գ» (Զանգվածային լրատվամիջոցների մոնիթորինգ) կետերը:

որ հանրային ռադիոընկերությունը և հանրային հեռուստաընկերությունը պարտավոր են թեկնածուների, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար ապահովել ոչ խտրական պայմաններ: Հանրային ռադիոյի և հանրային հեռուստատեսության լրատվական հաղորդումներում թեկնածուների, կուսակցությունների, դրանց դաշինքների նախընտրական քարոզարշավի վերաբերյալ ներկայացվում է անկողմնակալ և գնահատականներից զերծ տեղեկատվություն: Նշված դրույթները հավասարապես տարածվում են նաև թեկնածուներին, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին քարոզչություն իրականացնելու համար եթերաժամ տրամադրող վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող մյուս ռադիոընկերությունների և հեռուստաընկերությունների վրա՝ անկախ սեփականության ձևից (հոդ. 19, մասեր 3, 5):

ՀՀ ընտրական օրենսգրքի համաձայն՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների հիմնադրած թերթերը և ամսագրերը նախընտրական քարոզչության ժամանակահատվածում պարտավոր են թեկնածուների, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար ապահովել ոչ խտրական և ոչ կողմնակալ պայմաններ (հոդ. 19, մաս 12):

Համանման դրույթներ են բովանդակվում մի շարք պետությունների օրենսդրության մեջ: Այսպես՝ Բելառուսի Հանրապետությունում պետական լրատվամիջոցները, պետական կամ տեղական բյուջեներից մասնակիորեն ֆինանսավորվող լրատվամիջոցները, ինչպես նաև այն լրատվամիջոցները, որոնց հիմնադիրներից մեկը պետական մարմիններն են կամ կազմակերպությունները, պարտավոր են ապահովել հավասար հնարավորություններ թեկնածուների նախընտրական ելույթների, քարոզչության իրականացման համար¹:

¹ Տե՛ս “Избирательный кодекс Республики Беларусь” от 11.02.2000 N 370–3, հոդ. 46, մաս 2:

Ղազախստանի Հանրապետությունում զանգվածային լրատվամիջոցները պարտավոր են օբյեկտիվորեն լուսաբանել թեկնածուների, քաղաքական կուսակցությունների ընտրական քարոզչությունը, ձեռնպահ մնալ քարոզչական նյութերի և այլ տեղեկությունների հրապարակումից, որոնք արատավորում են թեկնածուների պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավը, նշված անձանց հնարավորություն ընձեռել անվճար հրապարակելու պատվի, արժանապատվության և գործարար համբավի պաշտպանությանն ուղղված հերքում տպագիր հրատարակչության առաջիկա համարում կամ հեռուստահաղորդմամբ (ռադիոհաղորդմամբ): Զանգվածային լրատվամիջոցները պարտավոր են տարածել տեղեկություններ բոլոր թեկնածուների և կուսակցական ցուցակների առաջադրման, ընտրական հանձնաժողովների կողմից դրանց գրանցման միջոցառումների վերաբերյալ՝ տպագիր մակերեսի, էթերաժամանակի հավասար ծավալներով¹:

Թուրքմենստանի Հանրապետությունում զանգվածային լրատվամիջոցներում տեղադրվող կամ այլ եղանակով տարածվող տեղեկատվական նյութերի բովանդակությունը պետք է լինի օբյեկտիվ, հավաստի, թեկնածուների հավասարության սկզբունքը չխախտող. դրանցում անթույլատրելի է որևէ թեկնածուի նախապատվություն տալը²:

Ռուսաստանի Դաշնությունում տեղեկատվական հեռուստահաղորդումներում և ռադիոհաղորդումներում, պարբերական տպագիր հրատարակչությունների հրապարակումներում նախընտրական միջոցառումների անցկացման վերաբերյալ տեղեկությունները պետք է տրվեն բացառապես առանձին տեղեկատվական հատվածով, առանց մեկնաբանությունների: Դրանցում չպետք է նախապատվություն տրվի որևէ թեկնածուին, ընտրական միավորմանը, այդ թվում՝ նրանց նախընտրական

¹ Стн Конституционный закон Республики Казахстан “О выборах в Республике Казахстан” от 28.09.1995 N 2464, հոդ. 27, կետ 7:

² Стн Закон Туркменистана от 4 мая 2013 года “Об утверждении и введении в действие Избирательного кодекса Туркменистана” (ուժի մեջ է 01.07.2013 թ–ից), հոդ. 61, մաս 3:

գործունեության լուսաբանման ժամանակի, այդպիսի հաղորդագրությունների համար առանձնացված տպագիր մակերեսի ծավալի առումով¹:

Դրդվատանի Հանրապետությունում թեկնածուների, քաղաքական կուսակցությունների համար երաշխավորվում են զանգվածային լրատվամիջոցներից օգտվելու հավասար պայմաններ: Այն լրատվամիջոցները, որոնց հիմնադիրներն (հիմնադիրներից) են պետական և տեղական ինքնակառավարման մարմինները կամ դրանց ենթակա հաստատությունները, որոնք ամբողջությամբ կամ մասնակիորեն ֆինանսավորվում են պետական կամ տեղական բյուջեների միջոցների հաշվին, ինչպես նաև այն լրատվամիջոցները, որոնք այլ լրատվամիջոցների համեմատ հարկերի և պարտադիր վճարների գծով ունեն արտոնություններ, պարտավոր են թեկնածուների, քաղաքական կուսակցությունների համար ապահովել նախընտրական քարոզչության իրականացման հավասար հնարավորություններ²:

Ուզբեկստանի Հանրապետության Նախագահի թեկնածուները, քաղաքական կուսակցություններն ունեն զանգվածային լրատվամիջոցներից օգտվելու հավասար իրավունքներ՝ Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից սահմանված կարգով³: Այստեղ նախընտրական քարոզչություն իրականացնելիս պատգամավորության թեկնածուների, քաղաքական կուսակցությունների համար ապահովվում են պետական լրատվամիջոցներից օգտվելու հավասար պայմաններ՝ նրանց անվճար հիմունքներով միևնույն ծավալով եթերաժամ և տպագիր մակերես տրամադրելով: Եթերաժամի, տպագիր մակերեսի համար ընտրական գործընթացին մասնակցող

¹ Стн Федеральный закон от 12.06.2002 N 67-ФЗ “Об основных гарантиях избирательных прав и права на участие в референдуме граждан Российской Федерации” (ред. от 07.05.2013), հոդ. 45, կետ 5:

² Стн Конституционный закон Кыргызской Республики “О выборах Президента Кыргызской Республики и депутатов Жогору Кенеша Кыргызской Республики” от 2 июля 2011 года N 68 (в ред. конституционного Закона КР от 25 ноября 2011 года N 221), հոդ. 22, մասեր 12, 18:

³ Стн Закон Республики Узбекистан «О выборах Президента Республики Узбекистан» (дейст. ред.), հոդ. 28:

լրատվամիջոցների կողմից որոշվող վճարման պայմանները և այլ պահանջներ պետք է լինեն հավասար և միատեսակ պատգամավորության բոլոր թեկնածուների, քաղաքական կուսակցությունների համար¹:

Վերը հիշատակված դրույթներն ուղղված են բոլոր թեկնածուների, կուսակցությունների, դրանց դաշինքների՝ ԶԼՄ-ներից անխոչընդոտ օգտվելու ապահովմանը՝ առանց խտրականության: Այս կապակցությամբ ԵԱՀԿ կոպենհագենյան փաստաթղթում նշված է. «...մասնակից պետություններն ապահովում են, որ զանգվածային լրատվության միջոցներից, առանց խտրականության, անարգել օգտվելու ինչ-ինչ իրավաբանական կամ վարչական արգելքներ չստեղծվեն այն բոլոր քաղաքական խմբավորումների և առանձին անձանց առջև, որոնք ցանկանում են մասնակցել ընտրական գործընթացին»²: Այս առումով Հայաստանի Հանրապետությունում դեռևս առկա են իրավական լուծումներ պահանջող որոշ խնդիրներ:

Վերոնշյալի կապակցությամբ ուշադրության է արժանի, օրինակ, «Ռուսաստանի Դաշնության քաղաքացիների ընտրական իրավունքների և հանրաքվեին մասնակցելու իրավունքի հիմնական երաշխիքների մասին» ՌԴ օրենքի այն նորմը, համաձայն որի՝ լրագրողը, զանգվածային լրատվության միջոցի թողարկումն իրականացնող կազմակերպության ստեղծագործական այլ աշխատակից, պաշտոնատար անձ, որոնք մասնակցում են ընտրությունների տեղեկատվական ապահովմանն ուղղված գործունեությանը, ընտրությունների և հանրաքվեների մասին ՌԴ օրենսդրությանը համապատասխան՝ ընտրական քարոզչության ժամանակահատվածում և դրա ավարտից հետո՝ 1 տարվա ընթացքում, վարչակազմի (գործատուի) նախաձեռնությամբ չեն կարող ազատվել աշխատանքից կամ առանց իրենց համաձայնության տեղափոխվել այլ աշխատանքի, բացառությամբ այն դեպքի, երբ աշխատանքային օրենսդրությանը

¹ Стн Закон Республики Узбекистан «О выборах в Олий Мажлис Республики Узбекистан» (дейст. ред.), հոդ. 27²:

² Стн Document of the Copenhagen Meeting of the Conference on the Human Dimension of the CSCE, 1990, 7.8:

համապատասխան՝ նրանք ենթարկվել են տույժի, որը դատական կարգով չի վիճարկվել կամ նույն կարգով օրինական ու հիմնավոր է ճանաչվել¹:

Հայաստանի Հանրապետությունում հեռուստառադիոընկերությունների կողմից նախընտրական քարոզչության՝ ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված կարգի պահպանման նկատմամբ վերահսկողությունը և հեռուստառադիոընկերությունների գործունեության մշտադիտարկումն իրականացնում է ՀՌԱՀ-ը²: Այս կապակցությամբ վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների, ռադիոընկերությունների կողմից 2012 թվականի մայիսի 6-ի ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման վերաբերյալ ՀՌԱՀ մշտադիտարկման արդյունքների և եզրակացության մեջ արձանագրված են, մասնավորապես, «Կենտրոն» և «Երկիր Մեդիա» հեռուստաընկերությունների կողմից թեկնածուներին, կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին հատկացված եթերաժամանակի էական անհամաչափությունները, ինչի կապակցությամբ 10.05.2012 թվականին Հանձնաժողովը վարչական վարույթներ հարուցեց նշված հեռուստաընկերությունների նկատմամբ, որոնք Հանձնաժողովի 18.05.2012 թվականի որոշումներով կարճվեցին:

07.05.2012 թվականին ՀՌԱՀ-ը վարչական վարույթ է հարուցել «Կենտրոն» հեռուստաընկերության նկատմամբ՝ ընտրությունների և հանրաքվեների մասին ՀՀ օրենսդրությամբ արգելված ժամանակահատվածում քարոզչական բնույթի հաղորդում հեռարձակելու համար: Հանձնաժողովի 2012 թվականի մայիսի 11-ի որոշմամբ «ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ընկերությունը («Կենտրոն» հեռուստաընկերությունը) ենթարկվեց վարչական պատասխանատվության՝ Ազգային ժողովի ընտրու-

¹ Стн Федеральный закон от 12.06.2002 N 67-ФЗ “Об основных гарантиях избирательных прав и права на участие в референдуме граждан Российской Федерации” (ред. от 07.05.2013), հոդ. 45, կետ 6:

² Стн «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքը, հոդ. 36, մաս 1, կետեր 12, 14, ՀՀ ընտրական օրենսգրքի հոդ. 19, մասեր 10, 11:

թյունների օրը՝ մայիսի 6-ին, օրենքի խախտմամբ քարոզչության տարրեր պարունակող հաղորդում հեռարձակելու համար:

2012 թվականի խորհրդարանական ընտրությունների հետ կապված՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի համապատասխան որոշումներով մերժվել է վարչական վարույթների հարուցումը մի շարք դիմումներով (բողոքներով)՝ կապված որոշ հեռուստաընկերությունների կողմից ՀՀ ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերի պահանջների խախտումների հետ¹:

ՀՀ Ազգային ժողովի 06.05.2012 թվականի ընտրությունների վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՄԻԳ ընտրությունների դիտորդական առաքելության վերջնական գեկույցում մասնավորապես նշված է, որ լրատվամիջոցներն ընդհանուր առմամբ կատարեցին անվճար և վճարովի եթեր տրամադրելու իրենց պարտականությունը և ոչ խտրական պայմաններ ապահովելու ու անկողմնակալ լրատվություն ապահովելու իրենց պարտավորությունը քարոզարշավի պաշտոնական շրջանում: Այնուամենայնիվ, ԵԱՀԿ/ԺՄԻԳ-ը ԶԼՄ-ներում արձանագրել է կանխակալության դեպքեր որոշ կուսակցությունների նկատմամբ, որոնք հակասում են անկողմնակալ լրատվություն ապահովելու՝ ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված սկզբունքին: Մասնավորապես նշված է, որ հանրային հեռուստաընկերությունը իր նորություններում 20 տոկոս լուսաբանել է ՀՀ-ին, 19-ը՝ ՀԱԿ-ին, 12-ական տոկոս՝ ՀՅԴ-ին, Ժառանգությանը, ՕԵԿ-ին և 8 տոկոս՝ ԲՀԿ-ին: Լրատվության ոճը հիմնականում չեզոք է եղել, չնայած դրական երանգ է արձանագրվել ՀՀ-ի և ՕԵԿ-ի հանդեպ: Հանրային ռադիոն իր լրատվությունը հիմնականում հավասար է բաշխել հիմնական կուսակցությունների միջև: Չնայած օրենքը սահմանում է, որ պետական թերթերը պետք է անաչառ լինեն, «Հայաստանի Հանրապետություն» պետական օրաթերթն իր ծավալի 24 տոկոսը հատկացրել է ՀՀ-ին՝ հիմնականում չեզոք կամ դրական երանգով, 12 տոկոսը՝ պետական պաշտոնյաներին, և

¹ Տե՛ս, օրինակ, ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2012 թվականի ապրիլի 17-ի N 131-Ա, ապրիլի 20-ի N 137-Ա, 147-Ա, 148-Ա որոշումները:

5 տոկոսը ՀՀ Նախագահին՝ պաշտոնական դիրքի կտրվածքով: 2 մասնավոր հեռարձակողների լրատվությունը որոշ կողմնակալություն դրսևորեց. «Կենտրոն» հեռուստաընկերությունը մեծապես սատարում էր ԲՀԿ-ին՝ 48 տոկոս՝ մեծմասամբ դրական լուսաբանմամբ, «Երկիր Մեդիա»-ն լրատվության 27 տոկոսը հատկացրել է ՀՅԴ-ին և 16 տոկոսը ԲՀԿ-ին՝ երկու դեպքում էլ՝ հիմնականում դրական երանգներով: «Հ2», «Արմենիա» և «Շանթ» հեռուստաընկերություններն ավելի հավասարակշռված են եղել իրենց լուսաբանումների մեջ, չնայած նույնիսկ նրան, որ դրանց դեպքում ավելի դրական երանգ է նկատվել ՀՀԿ-ի, ՕԵԿ-ի և ԲՀԿ-ի հանդեպ: «Ազատություն» ռադիոկայանը առավել բացասական երանգով է հանդես եկել ՀՀԿ-ի հանդեպ՝:

Վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների, ռադիոընկերությունների կողմից 2013 թվականի փետրվարի 18-ի ՀՀ Նախագահի ընտրությունների նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման վերաբերյալ ՀԻԱՀ մշտադիտարկման արդյունքների և եզրակացության մեջ մասնավորապես արձանագրված է առանձին հեռուստառադիոընկերություններից յուրաքանչյուրի կողմից ՀՀ Նախագահի թեկնածուներին և (կամ) նրանց ներկայացուցիչներին հատկացված եթերաժամանակի անհամաչափությունը: Հանձնաժողովն իրականացրած ուսումնասիրության և վերլուծության արդյունքում հանգել է եզրակացության, որ այն պայմանավորված է վերջիններիս կողմից իրենց նախընտրական քարոզչության ծրագրման և իրականացման միջոցառումների քանակական, տարածքային և ժամանակացուցային բաշխման անհամասեռություններով, քարոզչության իրականացման, ինչպես նաև նրանց նախընտրական հիմնադրամներում առկա միջոցների, անվճար և վճարովի եթերաժամանակի օգտագործման, հեռուստառադիոծրագրերում հյուրընկալվելու պատրաստականության առանձնահատկություններով: Այս

¹ Տե՛ս ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ընտրությունների դիտորդական առաքելության վերջնական գեկույցը ՀՀ Ազգային ժողովի 06.05.2012 թվականի ընտրությունների վերաբերյալ (Վարչակա, 26.06.2012), IX. Լրատվամիջոցներ, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտարկած լրատվամիջոցները:

հանգամանքով պայմանավորված եթերաժամանակի տրամադրման անհամաչափությունները ՀՌԱՀ-ը որպես հեռուստա-ռադիոընկերությունների կողմից ՀՀ Նախագահի թեկնածուների նկատմամբ հավասար պայմաններ ապահովելու խախտում չի գնահատել: 2013 թ. փետրվարի 18-ի ՀՀ Նախագահի ընտրությունների քարոզարշավի (21.01.13–16.02.13թթ.), ինչպես նաև լռության օրը և քվեարկության օրը մինչև ժամը 20⁰⁰-ն ՀՀ ընտրական օրենսգրքի և «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտումներ չեն արձանագրվել¹: Այս կապակցությամբ ՀՀ Նախագահի 18.02.2013 թվականի ընտրությունների վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ընտրությունների դիտորդական առաքելության վերջնական զեկույցում նշված է. «Պետք է քննարկել ՀՌԱՀ իրավասությունների և ռեսուրսների ուժեղացման հարցերը, որոնք անհրաժեշտ են լրատվամիջոցների լիարժեք և անկախ մշտադիտարկում իրականացնելու համար, և փոխաբենը չհանձնարարել լրատվամիջոցներին տրամադրել հեռարձակման տվյալներ: Ավելին՝ հարկ է քննարկել ՀՌԱՀ-ի՝ լրատվամիջոցների մշտադիտարկման մեթոդաբանության զարգացումը այնպես, որ հնարավոր լինի մշտադիտարկել և գնահատել **լուսաբանման տոնայնությունը** (ընդգծումը մերն է): Բացի այդ, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ՀՌԱՀ-ը պետք է կատարի իր վերահսկիչ դերը՝ իրականացնելով լրատվամիջոցների մշտադիտարկում քարոզարշավի ժամանակահատվածից դուրս»²: Զեկույցում արձանագրված են մի շարք լրատվամիջոց-

¹ Հաստատված է ՀՌԱՀ 2013 թվականի փետրվարի 22-ի թիվ 3-Ա որոշմամբ: Համանման ձևակերպումներ են բովանդակվում նաև վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների, ռադիոընկերությունների կողմից 2013 թվականի մայիսի 5-ի՝ Երևանի ավագանու ընտրությունների նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման վերաբերյալ ՀՌԱՀ մշտադիտարկման արդյունքների և եզրակացության մեջ (հաստատված է ՀՌԱՀ 2013 թվականի մայիսի 8-ի թիվ 10-Ա որոշմամբ):

² Տե՛ս ՀՀ Նախագահի 18.02.2013 թվականի ընտրությունների վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ընտրությունների դիտորդական առաքելության վերջնական զեկույցը (Վարշավա, 08.05.2013), IX.բ. «Լրատվամիջոցների իրավական դաշտը»:

ների կողմից առանձին թեկնածուների նկատմամբ կողմնակալ վերաբերմունքի դրսևորման փաստեր¹:

Մի շարք խնդիրներ են ծագում՝ կապված նախքան պաշտոնական քարոզարշավի մեկնարկը լրատվամիջոցներով քարոզչական նյութերի տարածման հետ: Օրինակ՝ ՀՀ Ազգային ժողովի 2012 թվականի ընտրությունների հետ կապված՝ պաշտոնական քարոզարշավի մեկնարկից (ապրիլի 8) առաջ մի շարք հեռուստաընկերությունների կողմից թաքնված քաղաքական գովազդի (քարոզչության) հատկանիշներ պարունակող նյութերի ցուցադրմանն անդրադարձ է կատարված Երևանի մամուլի ակումբի, Եվրոպական միության, Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության երևանյան գրասենյակի՝ Հայաստանի հեռարձակվող ԶԼՄ-ների կողմից 2012 թվականի մայիսի 6-ի ՀՀ խորհրդարանական ընտրությունների լուսաբանման մշտադիտարկման հաշվետվության մեջ: Դրանում մասնավորապես արձանագրված է. «Նախընտրական քարոզչությամբ նախորդած ժամանակաշրջանում «Բարգավաճ Հայաստան» կուսակցության (ԲՀԿ) և, ավելի նվազ չափով, «Օրինաց երկիր» կուսակցության (ՕԵԿ) բարեգործական ակցիաներին, սոցիալական ուղղվածության նախաձեռնություններին և նախընտրական հանդիպումներին նվիրված որոշ նյութեր պարունակում էին թաքնված քաղաքական գովազդի անուղղակի հատկանիշներ: Նույն կամ գրեթե նույն սյուժեները (ինչպես տեսաշարով, այնպես էլ տեքստով) եթեր են տրվել մեկից ավելի ալիքներում՝ հիմնականում «Կենտրոն»-ում և Հ2-ում, իսկ առանձին դեպքերում՝ նաև «Երկիր Մեդիա», «Արմենիա» ու «Շանթ» հեռուստաընկերությունների եթերում: Այդ հատկանիշները հիմք են տալիս ենթադրելու, որ նշյալ սյուժեներն իրենցից ներկայացնում էին ոչ թե իրադարձությունների խմբագրական լուսաբանում, այլ թաքնված քաղաքական քարոզչություն, որն իրականացվում էր պայմաններով, որոնք հակասում են ՀՀ օրենսդրությանը: Անմիջականորեն նախընտրական քարոզչու-

¹ Տե՛ս նույն տեղում, IX.գ. «ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ կողմից լրատվամիջոցների դիտարկում»:

թյան ժամանակաշրջանում ԶԼՄ-ների անգամ կատարյալ աշխատանքը ոչ միշտ էլ ի գործ լինում փոխհատուցելու մինչ այդ ձևավորված անհամաչափությունը: Դա ստիպում է հերթական անգամ հարց բարձրացնել քաղաքական կուսակցությունների համար կանխապես անհավասար պայմանների մասին, նաև այն բանի անհրաժեշտության մասին, որ հստակեցվի օրենսդրական նորմատիվ կարգավորումը և մշտադիտարկում անցկացվի ոչ միայն նախընտրական քարոզչության կարճ ժամանակաշրջանում, այլև **դրան նախորդող ժամանակաշրջանում** (ընդգծումը մերն է): Մասնավորապես *կուսակցությունների կողմից տարբեր հեռարձակվողներին ներկայացվող «մամուլի տեսահաղորդաքությունները»* ԵՄԱ մշտադիտարկման խմբի կարծիքով պետք է որպես քաղաքական գովազդ ընկալվեն, եթե դրանք անհրաժեշտ խմբագրական մշակման չեն ենթարկվում: Եթերում անփոփոխ տարբերակով դրանց հեռարձակումը չի կարող ներկայացվել որպես ԶԼՄ-ի կողմից լուսաբանում, քանի որ լսարանն իրավունք ունի իմանալու, թե երբ է իրեն լրագրողական նյութ առաջարկվում, և որ դեպքում է դա քաղաքական գործիչների անմիջական ուղերձ»¹:

Ելնելով վերոգրյալից՝ նպատակահարմար ենք համարում վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների, ռադիոընկերությունների կողմից թեկնածուների, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար հավասար պայմանների ապահովման գնահատման մշտադիտարկման (մոնիթորինգ) իրականացումը ՀՌԱՀ-ի կողմից՝ սկսած համապետական և Երևանի ավագանու **ընտրությունների նշանակման հաջորդ օրվանից**: Ընդ որում՝ գնահատման մեթոդաբանությունը պետք է մշակվի այնպես, որ նախատեսի նաև լուսաբանման տոնայնության մշտադիտարկ-

¹ Տե՛ս Երևանի մամուլի ակումբի, Եվրոպական միության, Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության երևանյան գրասենյակի՝ Հայաստանի հեռարձակվող ԶԼՄ-ների կողմից 2012 թվականի մայիսի 6-ի ՀՀ խորհրդարանական ընտրությունների լուսաբանման մշտադիտարկման հաշվետվությունը (www.ypc.am):

ման և գնահատման հնարավորությունը: Այս կապակցությամբ *առաջարկում ենք* համապատասխան փոփոխություններ կատարել ՀՀ ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ մասերում, ինչպես նաև լրացում կատարել «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածում՝ նախատեսելով ՀՌԱՀ-ի կողմից տուգանքի նշանակման հնարավորություն վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող այն հեռուստաընկերության, ռադիոընկերության նկատմամբ, որը, համապետական և Երևանի ավագանու ընտրությունների նշանակման հաջորդ օրվանից սկսած, իր լրատվական և այլ հաղորդումներում ՀՌԱՀ-ի կողմից իրականացված մշտադիտարկման արդյունքներով ակնհայտ խտրական մոտեցում կդրսևորի թեկնածուների, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների նկատմամբ: Ընդ որում՝ պատասխանատվության նշված միջոցը կարող է կիրառվել թեկնածուների, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների գրանցման համար ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված վերջին օրվան հաջորդող մեկշաբաթյա ժամկետում, քանզի ընտրությունների նշանակման պահին դեռևս պարզ չէ, թե ովքեր կամ քաղաքական որ ուժերն են մասնակցելու ընտրապայքարին, և բացի այդ, առանձին թեկնածուների, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների գրանցումը համապատասխան իրավական հիմքերի առկայության դեպքում կարող է մերժվել: Նշված դեպքում տուգանք նշանակելիս ՀՌԱՀ-ը պետք է հաշվի առնի համապետական և Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերության, ռադիոընկերության կողմից ակնհայտ խտրական վերաբերմունքը **գրանցված** թեկնածուների, քաղաքական միավորումների նկատմամբ՝ նախքան նախընտրական քարոզչության պաշտոնական մեկնարկը՝ որպես հիմք ընդունելով իր կողմից իրականացված մշտադիտարկման միջանկյալ արդյունքները: Խնդրո առարկայի հետ կապված՝ նպա-

տակահարմար ենք համարում վերանայել նաև ՀՀ ընտրական օրենսգրքի այն նորմը, համաձայն որի՝ նախընտրական քարոզչության ժամանակահատվածի սահմանված լինելը չի սահմանափակում սույն օրենսգրքով չարգելված այլ ժամանակահատվածում քարոզչության իրականացումը (հոդ. 18, մաս 1): Սույն առաջարկն ամենևին չի ենթադրում քարոզչության իրականացման արգելքի նախատեսում՝ սկսած ընտրությունների նշանակման հաջորդ օրվանից: Սակայն, մյուս կողմից, *գործող իրավունորմը հնարավորություն է ընձեռում ընտրական գործընթացի մասնակիցներին նախքան նախընտրական քարոզչության պաշտոնական մեկնարկն ակտիվորեն իրականացնելու բացահայտ և (կամ) քողարկված քարոզչություն կամ հակաքարոզչություն, ինչը ոչ միայն չի խթանում ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վստահության արմատավորմանը, այլև էլ ավելի է խորացնում առկա անվստահությունը:*

2012 թվականի ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների հետ կապված՝ կենտրոնական ընտրական հանձնաժողովի համապատասխան որոշումներով մերժվել է վարչական վարույթների հարուցումը մի շարք դիմումներով (բողոքներով)՝ կապված որոշ լրատվամիջոցների կողմից նախքան նախընտրական քարոզչության պաշտոնական մեկնարկը (ապրիլի 8-ը) քարոզչական նյութերի հեռարձակման հետ¹:

Քննարկվող հիմնախնդրի հետ կապված՝ Երևանի մամուլի ակումբի, Եվրոպական միության, Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության երևանյան գրասենյակի՝ Հայաստանի հեռարձակվող ԶԼՄ-ներում 2013 թվականի ՀՀ նախագահական ընտրությունների լուսաբանման մշտադիտարկման հաշվետվության մեջ մասնավորապես նշված է. «Եթե 2012 թ. խորհրդարանական ընտրություններին հավասարակշիռ լուսաբանում ապահովվել է միայն պաշտոնական նախընտրական քարոզչության ժամանակ, ապա այս անգամ նման գնահատական կարելի է տալ նաև դրան նախորդած

¹ Տե՛ս, օրինակ, ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2012 թվականի մարտի 15-ի N 57-Ա, 58-Ա, մարտի 21-ի N 65-Ա, 66-Ա, 67-Ա որոշումները:

ժամանակաշրջանին: Հնարավոր թեկնածուների նկատմամբ «ցաքուցրիվ» ուշադրությունը հաշվի առնելով՝ առավել հատկանշական էր կուսակցությունների լուսաբանումը: Այսպես՝ 2012 թ. հոկտեմբեր-դեկտեմբերին հայաստանյան հեռարձակվողների ուշադրության կենտրոնում են հայտնվել հինգ քաղաքական ուժեր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցությունը (ՀՀԿ), «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը (ԲՀԿ), Հայ ազգային կոնգրեսը (ՀԱԿ), Հայ Յեղափոխական Դաշնակցությունը (ՀՅԴ) և «Ժառանգություն» կուսակցությունը: ՀՀ Ազգային ժողովում ներկայացված վեցերորդ կուսակցությունը՝ «Օրինաց երկիր»-ը, զգալիորեն քիչ ուշադրության է արժանացել, քան առաջատար «հնգյակը»: Այս տարբերությունը կարելի է բացատրել նախընտրական գործելակերպում այդ կուսակցություններից «ինտրիգների» ակնկալման աստիճանով:

Դրա հետ մեկտեղ, տեղեկատվական և տեղեկատվական-վերլուծական հաղորդումներում գործադիր իշխանության մարմինների ներկայացուցիչներին խոսքի հաճախակի տրամադրումը (6,337 անգամ՝ միասին վերցրած բոլոր կուսակցությունների ներկայացուցիչներին 4,874 դեպքերի դիմաց) խոսում է 2012 թ. հոկտեմբեր-դեկտեմբերին կառավարող կոալիցիայի ունեցած որոշակի տեղեկատվական առավելության մասին»¹:

Նախընտրական քարոզչության պաշտոնական մեկնարկից առաջ հեռարձակող լրատվամիջոցների կողմից ընտրական գործընթացի մասնակիցների գործունեության անհամաչափ լուսաբանման փաստեր են արձանագրված նաև ՀՀ Ազգային ժողովի 06.05.2012 թվականի ընտրությունների վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ընտրությունների դիտորդական առաքելության վերջնական զեկույցում, որում մասնավորապես նշված է. «Նախքան պաշտոնական քարոզարշավի մեկնարկը (ապրիլի 8-ը), լրատվամիջոցները, հոգուտ իշխող կուսակցությունների,

¹ Տե՛ս Երևանի մամուլի ակումբի, Եվրոպական միության, Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության երևանյան գրասենյակի՝ Հայաստանի հեռարձակվող ԶԼՄ-ներում 2013 թվականի ՀՀ նախագահական ընտրությունների լուսաբանման մշտադիտարկման հաշվետվությունը (www.ypc.am):

իրականացրել են ՀՀ Նախագահի և պետական պաշտոնյաների գործունեության լայնածավալ լուսաբանում»¹:

Քննարկվող հարցադրման հետ կապված՝ առաձնակի հետաքրքրություն են ներկայացնում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներն այն գործերով, որոնք կապված են ընտրական քարոզչության ժամանակահատվածում կարծիքների արտահայտման ազատության և տեղեկացված լինելու իրավունքի սահմանների որոշման հետ: Մասնավորապես «Բոումանն ընդդեմ Միացյալ Թագավորության» գործով Եվրոպական դատարանի 1998 թվականի փետրվարի 19-ի որոշման մեջ նշված է, որ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածով երաշխավորված խոսքի ազատության իրավունքը անհրաժեշտ է դիտարկել ազատ ընտրությունների իրավունքի լույսի ներքո²: Եվրոպական դատարանն ընդգծել է, որ ազատ ընտրություններն ու խոսքի ազատությունը, մասնավորապես քաղաքական բանավեճի ազատությունը ձևավորում են ցանկացած ժողովրդավարական համակարգի հիմքը, դրանք փոխկապված են և ամրապնդում են միմյանց: Ուստի հատկապես կարևոր է, որպեսզի ցանկացած բնույթի տեղեկություն և կարծիք կարողանան շրջանառվել ազատորեն ընտրություններին նախորդող ժամանակահատվածում: Այնուամենայնիվ, որոշակի հանգամանքներում նշված եր-

¹ Մարտի 27-ից ապրիլի 7-ը ընկած ժամանակահատվածում ՀՀ Նախագահի և պետական պաշտոնյաների գործունեության լուսաբանումը դիտարկված լրատվամիջոցներով եղել է հետևյալը՝ Հ1-49 տոկոս, Հ2-28 տոկոս, «Արմենիա» հ/ը-19 տոկոս, «Կենտրոն» հ/ը-17 տոկոս, «Շանթ» հ/ը-51 տոկոս, «Երկիր Մեդիա» հ/ը-18 տոկոս, Հանրային ռադիո-21 տոկոս, «Ազատություն» ռ/կ-11 տոկոս (տես ԵԱՀԿ/ԺՀԿԳ ընտրությունների դիտորդական առաքելության վերջնական զեկույցը ՀՀ Ազգային ժողովի 06.05.2012 թվականի ընտրությունների վերաբերյալ (Վարչավա, 26.06.2012), IX. Լրատվամիջոցներ, ԵԱՀԿ/ԺՀԿԳ դիտարկած լրատվամիջոցները:

² Ազատ ընտրությունները պետք է անցկացվեն ողջամիտ պարբերականությամբ՝ գաղտնի քվեարկության միջոցով, այնպիսի պայմաններում, որոնք կապահովեն ժողովրդի ազատ կամահայտնությունն օրենսդիր մարմնին ընտրելիս («Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրության հոդ. 3):

կու իրավունքները կարող են բախվել, և այդ ժամանակ կարող է առաջ գալ ընտրությունների անցկացումից առաջ կամ դրանց ընթացքում խոսքի ազատության որոշակի սահմանափակումների սահմանման անհրաժեշտությունը, որոնք սովորական պայմաններում անընդունելի կլինեին: Դրանց նպատակն է ապահովել ժողովրդի կարծիքի ազատ արտահայտումն օրենսդիր մարմնին ընտրելիս:

Ուշադրության են արժանի նաև Ռուսաստանի Դաշնության սահմանադրական դատարանի 2003 թվականի հոկտեմբերի 30-ի որոշման մեջ ներկայացված իրավական դիրքորոշումները¹, որոնցում անդրադարձ է կատարված ընտրությունների ժամանակահատվածում ԶԼՄ-ների գործունեության այնպիսի տեսակների հարաբերակցությանը, ինչպիսիք են ընտրողներին իրազեկելը և նախընտրական քարոզչությունը: Մասնավորապես ՌԴ սահմանադրական դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ թեկնածուներից որևէ մեկի վերաբերյալ ինքնին դրական կամ բացասական կարծիքը նախընտրական քարոզչություն չի հանդիսանում և չի կարող զանգվածային լրատվության միջոցի թողարկումն իրականացնող կազմակերպության ներկայացուցչին վարչական պատասխանատվության ենթարկելու հիմք ծառայել, եթե չապացուցվի դրա հատուկ նպատակը, այն է՝ կոնկրետ թեկնածուին, ընտրական միավորմանը, դաշինքին աջակցելուն կամ հակազդելուն ուղղվածությունը: «Նախապատվության արտահայտումը» ոչ այլ ինչ է, քան կարծիքների արտահայտման տարատեսակ: Հետևաբար ԶԼՄ-ների ներկայացուցիչների մասնագիտական գործունեության առումով որպես իրավախախտում այնպիսի գործողության մեկնաբանումը, ինչպիսին է նախապատվության

¹ Стн Постановление Конституционного Суда Российской Федерации от 30 октября 2003 года №15-П по делу о проверке конституционности отдельных положений Федерального закона «Об основных гарантиях избирательных прав и права на участие в референдуме граждан Российской Федерации» от 12 июня 2002 года № 67-ФЗ в связи с запросом группы депутатов Государственной Думы Федерального Собрания Российской Федерации и жалобами граждан С. А. Бунтмана, К. А. Катаняна и К. С. Рожкова:

արտահայտումը, առանց հենց քարոզչությանը դրա ուղղվածության ապացուցված լինելու, կնշանակեր կարծիքների արտահայտման ազատության սահմանափակում և զանգվածային լրատվության ազատության խախտում:

Այնուամենայնիվ, վերոնշյալը չի ենթադրում ԶԼՄ-ների և լրագրողների բացարձակ ազատություն, անգամ ընտրողներին իրազեկելու ոլորտում: Նրանք չեն ազատվում ընտրական քարոզչության անկողմնակալ, հավասարակշռված և անաչառ լուսաբանման պարտականությունից, ինչպես նաև ընտրական քարոզչության մասնակիցներից որևէ մեկին նախապատվություն, առավելություն տալու կամ նրանցից որևէ մեկի նկատմամբ խտրական միջոցներ ձեռնարկելու արգելքից: Դրա հետ մեկտեղ ԶԼՄ-ներն ու լրագրողներն, ունենալով ընտրողներին տեղեկացնելու ձևերի և մեթոդների ընտրության ազատություն, իրավունք չունեն միախառնելու ընտրողներին իրազեկելն ու նախընտրական քարոզչությունը, առաջինը փոխարինելու երկրորդով, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ իրականացնելու նախընտրական քարոզչություն, ինչն, ըստ էության, նշանակում է տեղեկատվական գործունեության սուբյեկտների կողմից իրենց իրավունքների չարաշահում¹:

Ընտրողներին իրազեկելը նախընտրական քարոզչությունից սահմանազատելու գլխավոր չափանիշը պետք է դառնա տարածվող տեղեկատվական նյութերի և դրանց տարածմանն ուղղված գործողությունների, համապատասխանաբար, տեղեկատվական կամ քարոզչական բնույթը, որում դրսևորվում է քարոզչական նպատակի առկայությունը կամ բացակայությունը: Այնպիսի գործողություններն, ինչպիսիք են այս կամ այն թեկնածուի, կուսակցության, կուսակցությունների դաշինքի օգտին կամ դրա դեմ ընտրողների կարծիքների հրապարակումը, պատշաճ կարգով անցկացված և ձևակերպում ստացած սոցիոլոգիական հարցումների արդյունքների հրապարակումը, նախընտրական

¹ Մանրամասն տե՛ս Постановление Центральной избирательной комиссии Российской Федерации №90/744-4 от 20 февраля 2004 года «О жалобах кандидатов на должность Президента Российской Федерации Н. М. Харитова и И. М. Хакамады»:

միջոցառումների վերաբերյալ տեսանյութերի հեռարձակումը, ընդհանուր կանոնի համաձայն, չպետք է գնահատվեն որպես նախընտրական քարոզչություն: Լրատվամիջոցները պետք է անկողմնակալ, անաչառ լուսաբանեն ընտրական քարոզչությունը՝ տեղեկացնելով ընտրողներին դրա ընթացքի, նախընտրական միջոցառումների և թեկնածուների, կուսակցությունների, դրանց դաշինքների գործունեության մասին, առանց որևէ մեկին ակնհայտ նախապատվություն տալու կամ ընտրական գործընթացի մասնակիցներից որևէ մեկին վարկաբեկելու:

Իսկ եթե ընտրողներին իրազեկելու շրջանակներում ընտրական քարոզչության լուսաբանումն ընդունում է ծրագրված «տեղեկատվական պատերազմի» կամ «ուղեղների լվացման» բնույթ, ինչի արդյունքում նկատելի է դառնում ընտրական գործընթացի մասնակցի դրական կամ բացասական կերպար ստեղծելու ակնհայտ միտումը, ձգտումը, ապա այդպիսի ծրագրված տեղեկատվական քարոզչության հիման վրա կարելի է խոսել, լայն առումով, լրագրողի կամ լրատվամիջոցի խմբագրության գործողություններում քարոզչական նպատակի առկայության մասին և բարձրացնել ընտրական քարոզչության համապատասխան մասնակցի օգտին կամ նրա դեմ հակաիրավական կամ թաքնված նախընտրական քարոզչության ձևով զանգվածային լրատվության ազատության չարաշահման հարցը: Տեղեկատվական գործունեության հենց համակարգային բնույթը, որի դեպքում թեկնածուների, կուսակցությունների, դրանց դաշինքների գովաբանումը կամ վարկաբեկումն իրականացվում է ծրագրված տեղեկատվական քարոզչության շրջանակներում, կարող է ծառայել որպես լրատվամիջոցների, լրագրողների գործունեության մեջ քարոզչական նպատակների առկայության արտաքին դրսևորում¹:

ՀՀ Ազգային ժողովի 06.05.2012 թվականի ընտրությունների վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՄԻԳ ընտրությունների դիտորդական առաքելության վերջնական զեկույցում նշված է. «ԵԱՀԿ/ԺՄԻԳ

¹ Տե՛ս М. Кудрявцев. Постановление Конституционного Суда РФ об агитации: пристальный взгляд. Законодательство и практика масс-медиа. –2004, № 7–8:

ԸԴԱ կողմից լրատվամիջոցների դիտարկումն արձանագրել է, որ շատ դեպքերում հեռուստաալիքները սեփական նյութերի վրա հիմնվելու փոխարեն իրենց նորությունների հեռարձակման ընթացքում օգտագործել են նույն քարոզչական նյութը, որն օգտագործվել է նաև քաղաքական գովազդում: Օրինակ՝ ԲՀԿ քարոզչական նյութը, որն այդպես չի ներկայացվել, 16 անգամ հեռարձակվել է «Կենտրոն», 5 անգամ՝ «Շանթ» և 1 անգամ՝ «Երկիր Մեդիա» հեռուստաընկերություններով: Ապրիլի 19-ին ՀՀ և «Արմենիա» հեռուստաընկերությունները հեռարձակել են նույն լուրը ՀՀԿ մեծամասնական ընտրակարգով գրանցված թեկնածուի քարոզչական միջոցառման վերաբերյալ: Նման գործելաոճը վնասում է լրատվական հաղորդման արժանահավատությանը և նվազեցնում լրատվամիջոցների անկախությունը քաղաքական դաշտից, ինչպես նաև դրանց բազմազանությունը: Երբ սա տեղի է ունենում, լուրերի և քաղաքական գովազդի միջև ոչ հստակ տարանջատումը սահմանափակում է տեսակետներն անկախ հաղորդումներում»¹:

ՀՀ Նախագահի 18.02.2013 թվականի ընտրությունների վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ընտրությունների դիտորդական առաքելության վերջնական զեկույցում նշված է. «Դիտարկված հեռարձակվող լրատվամիջոցները (բացառությամբ «Արմնյուզ»-ի, «Երկիր Մեդիա»-ի և «Ազատություն» ռադիոկայանի) լսարանին առաջարկել են ֆորմալ լուրերի լուսաբանում, որը մեծապես կենտրոնացած է եղել քարոզարշավի ընթացքում իրականացվող միջոցառումների, այլ ոչ կոնկրետ քաղաքական գաղափարների վրա, և հետևաբար չի տրամադրվել նախընտրական ուղերձներին վերլուծական մեկնաբանում: Սրան հակառակ՝ առցանց և տպագիր լրատվամիջոցները ներկայացրել են որոշ քննադատական մեկնաբանություններ և վերլուծություններ: Դիտարկված հեռուստաալիքների մեծ մասը քաղաքական լուրերը լուսաբանելիս համեմատաբար քիչ ծավալ են հատկացրել

¹ Տե՛ս ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ընտրությունների դիտորդական առաքելության վերջնական զեկույցը ՀՀ Ազգային ժողովի 06.05.2012 թվականի ընտրությունների վերաբերյալ (Վարչակա, 26.06.2012), IX. Լրատվամիջոցներ, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտարկված լրատվամիջոցները:

իշխանություններին և գործող Նախագահին: ՀՀ գործող Նախագահի վերաբերյալ լրատվամիջոցների հաղորդումները, ներառյալ նրա կողմից տարբեր հասարակական կառույցներ կամ բացման արարողությունների այցերը, հաճախ հստակորեն չեն տարանջատվել, թե արդյոք իրականացվել են վերջինիս նախընտրական քարոզարշավին զուգահեռ, թե որպես դրա մաս: Սա ընդգծել է նրա պաշտոնական գործունեության և քարոզարշավի շրջանակներում իրականացված գործունեության միջև տարանջատում կատարելու կարևորությունն ու անհրաժեշտությունը»¹:

ՀՀ ընտրական օրենսգիրքը վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող ռադիոընկերությունների և հեռուստաընկերությունների՝ որպես թեկնածու գրանցված աշխատակիցներին արգելում է ընտրությունների լուսաբանումը, ռադիոհաղորդումների կամ հեռուստահաղորդումների վարումը կամ դրանցով հանդես գալը, բացառությամբ սույն օրենսգրքով սահմանված դեպքերի (հոդ. 21, մաս 1): Հատկանշական է, որ նման արգելք է սահմանված միայն ռադիոընկերությունների և հեռուստաընկերությունների՝ որպես թեկնածու գրանցված աշխատակիցների համար: Փաստորեն, այլ լրատվամիջոցների՝ որպես թեկնածու գրանցված աշխատակիցների նկատմամբ ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված՝ վերը նշված արգելքը չի տարածվում: Արդյունքում լրատվամիջոցների՝ որպես թեկնածու գրանցված աշխատակիցների միջև առաջ է գալիս իրավական և փաստացի անհավասարություն: Նպատակահարմար ենք համարում այսպիսի սահմանափակում նախատեսել բոլոր լրատվամիջոցների՝ որպես թեկնածու գրանցված աշխատակիցների համար:

Վերը նշված խնդրի հետ կապված՝ դիտարկենք մի շարք պետություններում գործող իրավակարգավորումները: Այսպես՝ Բելառուսի Հանրապետությունում լրագրողներին, զանգվա-

¹ Տե՛ս ՀՀ Նախագահի 18.02.2013 թվականի ընտրությունների վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ընտրությունների դիտորդական առաքելության վերջնական զեկույցը (Վարշավա, 08.05.2013), IX. Լրատվամիջոցներ, գ. «ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ կողմից լրատվամիջոցների դիտարկում»:

ծային լրատվամիջոցների պաշտոնատար անձանց արգելվում է վարել հեռուստահաղորդումներ և ռադիոհաղորդումներ, մասնակցել զանգվածային լրատվամիջոցներով ընտրությունների լուսաբանմանը, եթե նշված անձինք հանդիսանում են Բելառուսի Հանրապետության Նախագահի, Ներկայացուցիչների պալատի, Պատգամավորների տեղական խորհուրդների պատգամավորության թեկնածուներ կամ նրանց վստահված անձինք¹:

Դրդզատանի Հանրապետությունում զանգվածային լրատվամիջոցներում աշխատող թեկնածուների լիազորությունների իրականացումը դադարեցվում է որպես թեկնածու նրանց գրանցման պահից մինչև ընտրությունների արդյունքների որոշումը: Լրագրողներին, լրատվամիջոցների խմբագրությունների պաշտոնատար անձանց արգելվում է վարել տեղեկատվական հեռուստահաղորդումներ և ռադիոհաղորդումներ, մասնակցել տվյալ լրատվամիջոցներով ընտրությունների լուսաբանմանը, եթե վերը նշված անձինք, օրենքին համապատասխան, հանդիսանում են տվյալ լրատվամիջոցի հիմնադիր, թեկնածու կամ նրա ներկայացուցիչ: Սույն կանոնը չի վերաբերում նշված անձանց քարոզչական ելույթներին թեկնածուների կողմից պետական և տեղական հեռուստառադիոընկերությունների ալիքներով օրենքով սահմանված կարգով անվճար եթերաժամանակն օգտագործելիս:

Ղազախստանի Հանրապետությունում լրագրողները, զանգվածային լրատվամիջոցների խմբագրությունների պաշտոնատար անձինք, որոնք գրանցված են որպես թեկնածուներ կամ նրանց վստահված անձինք են, չեն կարող մասնակցել զանգվածային լրատվամիջոցներով ընտրությունների լուսաբանմանը²:

Ռուսաստանի Դաշնությունում զանգվածային լրատվության միջոցների թողարկումն իրականացնող կազմակերպություններում աշխատող գրանցված թեկնածուները ընտրություններին մասնակցության ժամանակահատվածում ազատվում են իրենց

¹ Տե՛ս “Избирательный кодекс Республики Беларусь” от 11.02.2000 N 370–3, հոդ. 46, մաս 12:

² Տե՛ս Конституционный закон Республики Казахстан “О выборах в Республике Казахстан” от 28.09.1995 N 2464, հոդ. 27, կետ 6:

պարտականությունների կատարումից՝ գրանցման օրվանից ոչ ուշ, քան 5 օր առաջ ընտրական հանձնաժողով ներկայացնելով համապատասխան հրամանների վավերացված պատճենները: Լրագրողներին, զանգվածային լրատվության միջոցների թողարկումն իրականացնող կազմակերպությունների ստեղծագործական այլ աշխատակիցներին, եթե նշված անձինք հանդիսանում են թեկնածուներ կամ նրանց վստահված անձինք կամ ֆինանսական հարցերով լիազոր ներկայացուցիչներ, ընտրական միավորումների լիազոր ներկայացուցիչներ կամ վստահված անձինք, արգելվում է մասնակցել զանգվածային լրատվամիջոցներով ընտրական քարոզչության լուսաբանմանը¹:

Ամփոփելով վերոգրյալը՝ հարկ է փաստել, որ ՀՀ Ազգային ժողովի 06.05.2012 թվականի և ՀՀ Նախագահի 18.02.2013 թվականի ընտրությունների լուսաբանումը լրատվամիջոցներով շահագրգիռ անձանց և կազմակերպությունների կողմից, ընդհանուր առմամբ, դրական է գնահատվել, ինչի հետ կապված՝ էական առաջընթաց է արձանագրվել՝ ի համեմատ նախորդ բոլոր ընտրությունների: Ջանգվածային լրատվության միջոցները բոլոր թեկնածուներին և քաղաքական ուժերին հնարավորություն ընձեռեցին հանրությանը ներկայացնելու իրենց տեսակետները, գաղափարները, ծրագրերը: Այս կապակցությամբ, մասնավորապես, 2012 թվականի ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների վերաբերյալ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 27.06.2012 թվականի արտահերթ զեկույցում նշված է. «Ցավոք, գաղափարական և ծրագրային լուրջ քննարկումներ ծավալելու համար մրցակից ուժերը չկարողացան օգտագործել ընձեռված այս լայն հնարավորությունը: Հանրության զգալի մասը այդպես էլ չստացավ իրեն հուզող բազմաթիվ արտաքին և ներքին քաղաքական հիմնահարցերի այլընտրանքային լուծումները, ինչն էլ նպաստեց հաճախ ապաքաղաքական և ապագաղափարական ընտրությանը, որն էլ, իր հերթին, պարարտ հիմք է ընտրազանգվածին ընտրակաշառքով կողմնորոշելու համար: Հաջորդ ընտրու-

¹ Стн Федеральный закон от 12.06.2002 N 67-ФЗ “Об основных гарантиях избирательных прав и права на участие в референдуме граждан Российской Федерации” (ред. от 07.05.2013), հոդ. 40, կետեր 2, 7:

թյուններին, նման ազատ և հավասար լուսաբանման միտումները պահպանվելու պարագայում, զանգվածային լրատվության միջոցները պետք է ստիպեն թեկնածուներին և քաղաքական ուժերին չսահմանափակվել վերամբարձ, ընդհանրական, հաճախ մերկապարանոց, երբեմն ծայրահեղական հռչակագրերով և լոզունգներով: Լրագրողները կարող են և պետք է մրցակից ուժերից ստանան ու հանրությանը մատուցեն տարբեր խնդիրների շուրջ բովանդակային, իրատեսական ու կոնկրետ ծրագրային լուծումներ և առաջարկներ»¹:

¹ Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 27.06.2012 թվականի արտահերթ զեկույցը 2012 թվականի ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների վերաբերյալ:

5. ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶԶՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԸՆԹԱՑԻԿ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ, ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ ԼԾԱԿՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎԻՄՆԱԽՆ ԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՈՒՂԻՆԵՐԸ

Նախընտրական քարոզչության և քաղաքական ընթացիկ գործունեության հստակ սահմանազատմանն ուղղված իրավական կառուցակարգերի կատարելագործման անհրաժեշտությունը բազմիցս է մատնանշվել: Սույն հիմնախնդրին անդրադարձել են միջազգային դիտորդական առաքելությունները, շահագրգիռ այլ սուբյեկտներ, ինչպես նաև ՀՀ սահմանադրական դատարանը: Մասնավորապես՝ ՀՀ սահմանադրական դատարանի 10.06.2007 թվականի ՍԴՈ-703 որոշման մեջ հստակ իրավական դիրքորոշում է արտահայտված, համաձայն որի՝ **պետությունը պարտավոր է այնպիսի երաշխիքներ ապահովել, որպեսզի քաղաքական ընթացիկ գործունեությունը հստակ տարանջատվի նախընտրական քարոզչությունից¹** (ընդգծումը մերն է):

Թեև 2011 թվականին՝ ՀՀ ընտրական նոր օրենսգրքի ընդունումից հետո, ընդհանուր առմամբ ընտրական գործընթացի իրավական կարգավորման առաջընթացն ակնհայտ է, այնուա-

¹ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 10.06.2007 թվականի ՍԴՈ-703 որոշումը «Իմպիչմենտ» դաշինքի, «Նոր ժամանակներ», «Օրինաց երկիր» և «Հանրապետություն» կուսակցությունների դիմումների հիման վրա ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2007 թվականի մայիսի 19-ի՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով պատգամավորներ ընտրվելու մասին» թիվ 149-Ա որոշումը վիճարկելու վերաբերյալ գործով:

Տե՛ս նաև ՀՀ սահմանադրական դատարանի 08.03.2008 թվականի ՍԴՈ-736 և 31.05.2012 թվականի ՍԴՈ-1028 որոշումները:

մենայնիվ, սույն հարցադրման հետ կապված՝ դեռևս առկա են իրավական լուծումներ պահանջող որոշ խնդիրներ:

ՀՀ ընտրական օրենսգրքի համաձայն՝ արգելվում է նախընտրական քարոզչություն կատարել և ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածել պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, ինչպես նաև պետական և համայնքային ծառայողներին, ուսումնական հաստատությունների մանկավարժական կազմի աշխատողներին՝ իրենց լիազորություններն իրականացնելիս, Սահմանադրական դատարանի անդամներին, դատավորներին, դատախազներին, ոստիկանությունում, ազգային անվտանգությունում, քրեակատարողական հիմնարկներում ծառայողներին, զինծառայողներին և ընտրական հանձնաժողովի անդամներին (հոդ. 18, մաս 6): Նախընտրական քարոզչության ընթացքում հանրային ծառայողներին, լրատվամիջոցների աշխատակիցներին արգելվում է իրենց վերապահված լիազորությունները գործադրել թեկնածուների, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունների (դրանց դաշինքների) միջև անհավասար պայմաններ ստեղծելու, կողմնակալություն ցուցաբերելու միջոցով ընտրողների կամքի ազատ արտահայտման վրա ներգործելու նպատակով (հոդ. 21, մաս 2):

Համանման օրենսդրական արգելքներ են նախատեսված արտասահմանյան մի շարք պետություններում: Այսպես, օրինակ՝ Ղազախստանի Հանրապետությունում արգելվում է նախընտրական քարոզչություն կատարել, ցանկացած բնույթի քարոզչական նախընտրական նյութ տարածել պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, ինչպես նաև դրանց պաշտոնատար անձանց՝ իրենց ծառայողական լիազորություններն իրականացնելիս, զինծառայողներին, ազգային անվտանգության, իրավապահ մարմինների աշխատակիցներին, դատավորներին, ընտրական հանձնաժողովների անդամներին, կրոնական միավորումներին¹:

¹ Стн Конституционный закон Республики Казахстан “О выборах в Республике Казахстан” от 28.09.1995 N 2464, հոդ. 27, կետ 4:

Դրդգատանի Հանրապետությունում նշված արգելքը տարածվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցների, ընտրական հանձնաժողովների անդամների, դիտորդների, միջազգային դիտորդների, դատավորների, կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչների, բարեգործական կազմակերպությունների անդամների, 18 տարին չլրացած անձանց, օտարերկրյա քաղաքացիների և կազմակերպությունների, քաղաքացիություն չունեցող անձանց վրա¹:

Թուրքմենստանում ընտրական հանձնաժողովների անդամները, դիտորդները, դատավորները, բարեգործական և կրոնական կազմակերպությունների անդամներն ու ներկայացուցիչները, իրավապահ մարմինների աշխատակիցները, բացառությամբ այն դեպքերի, երբ նշված անձինք գրանցված են որպես թեկնածուներ, ինչպես նաև որպես թեկնածուների վստահված անձինք, իրավունք չունեն մասնակցելու քարոզչությանը, այդ թվում՝ թողարկելու և տարածելու ցանկացած քարոզչական նյութ: Քարոզչությանը չի թույլատրվում մասնակցել նաև 18 տարին չլրացած անձանց, օտարերկրյա քաղաքացիներին, օտարերկրյա պետություններին և կազմակերպություններին, միջազգային կազմակերպություններին և միջազգային հասարակական շարժումներին: Պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմիններում ծառայության մեջ գտնվող անձինք չեն կարող քարոզչություն կատարել իրենց պաշտոնական կամ ծառայողական պարտականությունները կատարելիս, ինչպես նաև քարոզչություն կատարելու համար օգտագործել պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների ռեսուրսները²:

¹ Стн Конституционный закон Кыргызской Республики “О выборах Президента Кыргызской Республики и депутатов Жогору Кенеша Кыргызской Республики” от 2 июля 2011 года N 68 (в ред. конституционного Закона КР от 25 ноября 2011 года N 221), հոդ. 22, մաս 15:

² Стн Закон Туркменистана от 4 мая 2013 года “Об утверждении и введении в действие Избирательного кодекса Туркменистана” (ուժի մեջ է 01.07.2013 թ–ից), հոդ. 62, մասեր 7, 8:

Ռուսաստանի Դաշնությունում արգելվում է նախընտրական քարոզչություն կատարել, ցանկացած քարոզչական նյութ թողարկել և տարածել պետական իշխանության դաշնային մարմիններին, ՌԴ սուբյեկտների պետական իշխանության մարմիններին, պետական այլ մարմիններին, տեղական ինքնակառավարման մարմիններին, պետական կամ ընտրովի մունիցիպալ պաշտոններ զբաղեցնող անձանց, պետական և մունիցիպալ ծառայողներին, կազմակերպությունների՝ անկախ սեփականության ձևից, կառավարման մարմինների անդամներ հանդիսացող անձանց (բացառությամբ քաղաքական կուսակցությունների) իրենց պաշտոնական կամ ծառայողական պարտականությունները կատարելիս, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքի՝ և (կամ) իրենց պաշտոնական կամ ծառայողական դիրքի առավելությունների օգտագործմամբ, զորամասերին, ռազմական հաստատություններին և կազմակերպություններին, բարեգործական և կրոնական կազմակերպություններին, դրանց կողմից հիմնադրված կազմակերպություններին, ինչպես նաև կրոնական միավորումների անդամներին և մասնակիցներին՝ ժամերգություններ և ծեսեր կատարելիս, հանձնաժողովներին, դրանց անդամներին՝ վճռորոշ ձայնի իրավունքով, օտարերկրյա քաղաքացիներին, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքի, քաղաքացիություն չունեցող անձանց, օտարերկրյա իրավաբանական անձանց, միջազգային կազմակերպություններին և միջազգային հասարակական շարժումներին, զանգվածային լրատվամիջոցների թողարկումն իրականացնող կազմակերպությունների ներկայացուցիչներին՝ իրենց մասնագիտական գործունեությունն իրականացնելիս, անձանց,

¹ Պետական կամ ընտրովի մունիցիպալ պաշտոններ զբաղեցնող անձինք իրավասու են հանրաքվեի հարցերով քարոզչություն կատարելու, այդ թվում՝ հեռուստառադիոհեռարձակում իրականացնող կազմակերպությունների կապուղիներով և պարբերական տպագիր հրատարակչություններում թողարկել և տարածել քարոզչական նյութեր, սակայն իրավասու չեն օգտագործել իրենց պաշտոնական կամ ծառայողական դիրքի առավելությունները (տե՛ս Федеральный закон от 12.06.2002 N 67-ФЗ “Об основных гарантиях избирательных прав и права на участие в референдуме граждан Российской Федерации” (ред. от 07.05.2013), հոդ. 48, կետ 8.1):

որոնց նկատմամբ դատարանի որոշմամբ հաստատված է ընտրական քարոզչության անցկացման ժամանակահատվածում օրենքով սահմանված սահմանափակումների խախտման փաստը: Արգելվում է նախընտրական քարոզչությանը ներգրավել քվեարկության օրվա դրությամբ 18 տարին չլրացած անձանց: Պետական կամ ընտրովի մունիցիպալ պաշտոններ զբաղեցնող անձանց արգելվում է նախընտրական քարոզչություն կատարել հեռուստառադիոհեռարձակում իրականացնող կազմակերպությունների կապուղիներով և պարբերական տպագիր հրատարակչություններում, բացառությամբ այն դեպքերի, երբ նշված անձինք գրանցված են որպես պատգամավորության կամ ընտրովի պաշտոնների թեկնածուներ¹:

Այսպիսով՝ մի շարք պետություններում նախընտրական քարոզչություն կատարելու և ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածելու օրենսդրական արգելքը, ի թիվս բազմաթիվ այլ սուբյեկտների, սահմանված է նաև 18 տարին չլրացած անձանց համար: Այս առումով *նպատակահարմար ենք համարում ընդլայնել ՀՀ ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 6-րդ մասում թվարկված սուբյեկտների շրջանակը՝ դրանում ներառելով 18 տարին չլրացած անձանց*: Ընդ որում՝ *նպատակահարմար է արգելել ոչ միայն անչափահասների ներգրավմամբ նախընտրական քարոզչության իրականացումը, այլև նրանց կերպարների տեսաձայնային կամ այլ ձևով օգտագործումը նախընտրական գովազդներում*: Հարկ է նշել, որ «Գովազդի մասին» 30.04.1996 թվականի ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ արգելվում է անչափահասների կերպարների տեսաձայնային կամ այլ ձևով օգտագործումը գովազդում, եթե այն չի վերաբերում անչափահասների համար նախատեսված ապրանքներին:

Քննարկվող հարցադրման հետ կապված, օրինակ, Ռուսաստանի Դաշնությունում, ինչպես վերը նշվեց, արգելվում է նախընտրական քարոզչությանը ներգրավել քվեարկության օրվա դրությամբ 18 տարին չլրացած անձանց, այդ թվում՝ օգ-

¹ Стн Федеральный закон от 12.06.2002 N 67-ФЗ “Об основных гарантиях избирательных прав и права на участие в референдуме граждан Российской Федерации” (ред. от 07.05.2013), հոդ. 48, կետեր 6–8:

տագործել այդպիսի անձանց պատկերներն ու արտահայտությունները քարոզչական նյութերում, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքի: Ըստ այդմ՝ թեկնածուի, ընտրական միավորման քարոզչական նյութերում ֆիզիկական անձի պատկերի, թեկնածուի, ընտրական միավորման վերաբերյալ ֆիզիկական անձի արտահայտությունների օգտագործումը հնարավոր է միայն տվյալ ֆիզիկական անձի գրավոր համաձայնությամբ: Սույն սահմանափակումը չի տարածվում թեկնածուի կողմից սեփական պատկերների, ընտրական միավորման կողմից առաջադրված թեկնածուների պատկերների օգտագործման վրա, այդ թվում՝ իր ամուսնու, երեխաների (ներառյալ՝ 18 տարին չլրացած երեխաների), ծնողների և այլ մերձավոր ազգականների հետ, ինչպես նաև անձանց անորոշ շրջանակում¹:

Կարծում ենք՝ վերը նշված առաջարկության օրենսդրական ամրագրումը կբացառի ընտրական գործընթացի առանձին մասնակիցների կողմից վարչական լծակների կիրառման հնարավորությունը:

ՀՀ ընտրական օրենսգրքի 22-րդ հոդվածում սահմանված են քաղաքական, հայեցողական, քաղաքացիական պաշտոններ զբաղեցնող, պետական կամ համայնքային ծառայող հանդիսացող թեկնածուների նախընտրական քարոզչության սահմանափակումները: Մասնավորապես արգելվում են թեկնածուին, կուսակցությանը, կուսակցությունների դաշինքին կողմ կամ դեմ քվեարկելուն ուղղված ուղղակի կամ անուղղակի կոչերը պաշտոնեական լիազորություններն իրականացնելիս կամ պաշտոնեական դիրքի ցանկացած չարաշահումը՝ ընտրությունների ժամանակ առավելություն ստանալու համար (մաս 1, կետ 1): Այս կապակցությամբ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 13.05.2012 թվականի N 263-Ա որոշման մեջ, մասնավորապես, նշ-

¹ Տե՛ս նույն տեղում, հոդ. 48, կետ 6, կետ 9, ենթակետ «դ»: Տե՛ս նաև Федеральный закон от 10.01.2003 N 19-ФЗ “О выборах Президента Российской Федерации” (ред. от 07.05.2013), հոդ. 49, կետ 6, կետ 7, ենթակետ 5: Федеральный закон от 18.05.2005 N 51-ФЗ “О выборах депутатов Государственной Думы Федерального Собрания Российской Федерации” (в ред. от 02.07.2013), հոդ. 55, մաս 9, մաս 10, կետ 5:

ված է, որ համապատասխան սահմանափակումներ նախատեսող նորմերն արգելքներն ուղղակիորեն սահմանում են միմիայն այն դեպքերի համար, երբ նախընտրական քարոզչությունն ու ցանկացած բնույթի քարոզչական նյութի տարածումն իրականացվում են տվյալ անձանց լիազորություններն իրականացնելիս: Օրենքն արգելում է պաշտոնատար անձին իրականացնել նախընտրական քարոզչություն՝ հանդես գալով հենց որպես պաշտոնատար անձ՝ քարոզչությունն իրականացնելով իրեն վերապահված այս կամ այն իրավասության գործադրմամբ, օգտագործմամբ կամ միջոցով, սակայն օրենքը չի արգելում թեկնածուին իրականացնել տվյալ կուսակցության օգտին նախընտրական քարոզչություն միայն այն պատճառով, որ տվյալ անձը մինևույն ժամանակ պաշտոնատար անձ է¹: Փաստորեն, «պաշտոնական լիազորություններն իրականացնելիս» արտահայտությունը ժամկետային առումով գործնականում ընկալվում է մինչև աշխատանքային օրվա ավարտը, այսինքն՝ ժամը 18-ը:

Ի տարբերություն ՀՀ ընտրական օրենսգրքի՝ «պաշտոնական դիրքի չարաշահում» արտահայտության իրավական բովանդակությունը բացահայտված է մի շարք պետությունների՝ ընտրություններին վերաբերող օրենսդրության մեջ: Այսպես, օրինակ՝ Ղազախստանի Հանրապետությունում պետական մարմինների պաշտոնատար անձ հանդիսացող թեկնածուներին արգելվում է իրենց պաշտոնական կամ ծառայողական դիրքի առավելությունների օգտագործումը: Պաշտոնական կամ ծառայողական դիրքի առավելությունների օգտագործման տակ հասկացվում է նրանց ենթակայության ներքո կամ նրանցից ծառայողական այլ կախվածության մեջ գտնվող անձանց ներգրավումը նախընտրական քարոզչության կատարմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ նշված անձինք քարոզչություն են

¹ «Հայ Ազգային Կոնգրես» կուսակցությունների դաշինքի «2012 թ. մայիսի 6-ին տեղի ունեցած Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների համամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքները անվավեր ճանաչելու մասին» դիմումի քննարկման մասին» ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 13.05.2012 թվականի N 263-Ա որոշումը:

կատարում որպես թեկնածուի վստահված անձինք, ինչպես նաև պետական մարմինների կողմից զբաղեցված տարածքների օգտագործումը թեկնածուի, կուսակցական ցուցակ առաջադրած քաղաքական կուսակցության ընտրությանը նպաստող գործունեության իրականացման համար, եթե այլ թեկնածուների, քաղաքական կուսակցությունների համար երաշխավորված չէ նույնպիսի պայմաններով նշված տարածքների օգտագործումը: Միաժամանակ նշված սահմանափակումների պահպանումը չպետք է խոչընդոտի պաշտոնատար անձանց կողմից իրենց ծառայողական պարտականությունների կատարմանը¹:

Ռուսաստանի Դաշնությունում պետական կամ ընտրովի մունիցիպալ պաշտոններ զբաղեցնող թեկնածուները, պետական կամ մունիցիպալ ծառայության մեջ գտնվող թեկնածուները, կազմակերպությունների՝ անկախ սեփականության ձևից (բացառությամբ քաղաքական կուսակցությունների), կառավարման մարմինների անդամներ հանդիսացող թեկնածուները, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցների թողարկումն իրականացնող կազմակերպությունների պաշտոնատար անձ, լրագրող, ստեղծագործական այլ աշխատակից հանդիսացող թեկնածուները իրենց ընտրական քարոզչությունն իրականացնելիս իրավասու չեն օգտագործելու իրենց պաշտոնեական կամ ծառայողական դիրքի առավելությունները: Անձինք, ովքեր թեկնածուներ չեն և զբաղեցնում են պետական կամ ընտրովի մունիցիպալ պաշտոններ կամ գտնվում են պետական կամ մունիցիպալ ծառայության մեջ կամ հանդիսանում են կազմակերպությունների՝ անկախ սեփականության ձևից (բացառությամբ քաղաքական կուսակցությունների), կառավարման մարմինների անդամներ, ընտրական քարոզչության ժամանակահատվածում իրավասու չեն օգտագործելու իրենց պաշտոնեական կամ ծառայողական դիրքի առավելությունները՝ թեկնածուի, թեկնածուների ցուցակների

¹ Стн Конституционный закон Республики Казахстан “О выборах в Республике Казахстан” от 28.09.1995 N 2464, հոդ. 27, կետ 5:

առաջադրման և (կամ) դրանց ընտրության նպատակներով¹: Պաշտոնեական կամ ծառայողական դիրքի առավելությունների օգտագործման տակ հասկացվում է նրանց ենթակայության ներքո կամ նրանցից ծառայողական այլ կախվածության մեջ գտնվող անձանց, պետական և մունիցիպալ ծառայողների ներգրավումը ծառայողական (աշխատանքային) ժամերին թեկնածուների, թեկնածուների ցուցակների առաջադրմանը և (կամ) դրանց ընտրությանը նպաստող գործունեության իրականացմանը, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների՝ անկախ սեփականության ձևից, կողմից զբաղեցված տարածքների (բացառությամբ քաղաքական կուսակցությունների կողմից զբաղեցված տարածքների) օգտագործումը թեկնածուների, թեկնածուների ցուցակների առաջադրմանը և (կամ) դրանց ընտրությանը նպաստող գործունեության իրականացման համար, եթե այլ թեկնածուների, ընտրական միավորումների համար չէր աշխատողի նույնպիսի պայմաններով նշված տարածքների տրամադրումը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական և մունիցիպալ հաստատությունների, կազմակերպությունների՝ անկախ սեփականության ձևից, գործունեությունն ապահովող կապի, տեխնիկայի միջոցների, տեղեկատվական ծառայությունների (բացառությամբ քաղաքական կուսակցությունների գործունեությունն ապահովող կապի, տեխնիկայի միջոցների, տեղեկատվական ծառայությունների) օգտագործումը՝ նախընտրական քարոզչություն կատարելու համար, եթե դրանց օգտագործման համար վճարում չի կատարվել համապատասխան նախընտրական հիմնադրամից: Պաշտոնեական կամ ծառայողական դիրքի առավելությունների օգտագործման տակ հասկացվում է նաև անհատույց հիմունքներով կամ արտոնյալ պայմաններով պետական կամ մունիցիպալ սեփականության, կազմակերպու-

¹ Стн Федеральный закон от 12.06.2002 N 67-ФЗ “Об основных гарантиях избирательных прав и права на участие в референдуме граждан Российской Федерации” (ред. от 07.05.2013), հոդ. 40, կետեր 1, 4:

թյունների սեփականության ներքո գտնվող տրանսպորտային միջոցների (բացառությամբ քաղաքական կուսակցությունների սեփականության ներքո գտնվող տրանսպորտային միջոցների) օգտագործումը թեկնածուների, թեկնածուների ցուցակների առաջադրմանը և (կամ) դրանց ընտրությանը նպաստող գործունեության իրականացման համար: Սույն դրույթը չի տարածվում պետական պահպանության մասին ՌԴ օրենսդրությանը համապատասխան նշված տրանսպորտային միջոցներից օգտվող անձանց վրա:

Վերոնշյալի կապակցությամբ հարկ է նշել, որ ՀՀ ընտրական օրենսգրքի համաձայն՝ արգելվում է նախընտրական քարոզչության նպատակով ծառայողական պարտականությունների իրականացման համար տրամադրված տարածքների, տրանսպորտային և կապի միջոցների, նյութական ու մարդկային ռեսուրսների օգտագործումը, բացառությամբ «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքով պետական պահպանության ենթակա բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ կիրառվող անվտանգության միջոցառումների: Նախընտրական քարոզչության նպատակով պետական սեփականությունն այս թեկնածուներն օգտագործում են այլ թեկնածուների հետ հավասար պայմաններով (հոդ. 22, մաս 1, կետ 2):

Ռուսաստանի Դաշնությունում պաշտոնեական կամ ծառայողական դիրքի առավելությունների օգտագործման տակ հասկացվում են նաև ընտրողների ստորագրությունների հավաքումը, նախընտրական քարոզչության իրականացումը պետական կամ ընտրովի մունիցիպալ պաշտոններ զբաղեցնող կամ պետական կամ մունիցիպալ ծառայության մեջ գտնվող կամ տեղական վարչակազմերի ղեկավարներ հանդիսացող անձանց կամ կազմակերպությունների՝ անկախ սեփականության ձևից (բացառությամբ քաղաքական կուսակցությունների), կառավարման մարմինների անդամներ հանդիսացող անձանց կողմից՝ իրենց ծառայողական (համապատասխան բյուջեի, համապատասխան կազմակերպության միջոցների հաշվին վճարվող) գործուղումների ընթացքում, ինչպես նաև պետական և

մունիցիպալ զանգվածային լրատվամիջոցներին հասանելիությունը (դրա ապահովումը)՝ ընտրողների ստորագրությունների հավաքման, նախընտրական քարոզչության իրականացման նպատակներով, եթե այլ թեկնածուների, ընտրական միավորումների համար այդ նպատակներով չերաշխավորվի նույնպիսի հասանելիություն՝ ՌԴ օրենսդրությանը համապատասխան: Պաշտոնեական կամ ծառայողական դիրքի առավելությունների օգտագործման տակ հասկացվում է նաև ընտրական քարոզչության ժամանակահատվածում քարոզչական ելույթը՝ պետական և (կամ) մունիցիպալ մարմինների, կազմակերպությունների՝ անկախ սեփականության ձևից (բացառությամբ քաղաքական կուսակցությունների), կողմից կազմակերպվող հանրային միջոցառման անցկացման ժամանակ, ինչպես նաև ընտրական քարոզչության ժամանակահատվածում զանգվածային լրատվամիջոցներում, քարոզչական տպագիր նյութերում կատարված աշխատանքի վերաբերյալ հաշվետվությունների հրապարակումը, թեկնածու հանդիսացող քաղաքացու անունից շնորհավորանքների և այլ նյութերի տարածումը, որոնց համար համապատասխան նախընտրական հիմնադրամի միջոցներից վճարում չի կատարվել:

Վերը թվարկված սահմանափակումների պահպանումը չպետք է խոչընդոտի Ռուսաստանի Դաշնության Նախագահի, պատգամավորների կողմից իրենց լիազորությունների իրականացմանը և նրանց կողմից ընտրողների առջև իրենց պարտականությունների կատարմանը¹:

Համանման դրույթներ են բովանդակվում նաև այլ պետությունների օրենսդրության մեջ²:

¹ Տե՛ս Федеральный закон от 12.06.2002 N 67-ФЗ “Об основных гарантиях избирательных прав и права на участие в референдуме граждан Российской Федерации” (ред. от 07.05.2013), հոդ. 40, կետեր 5, 6:

² Տե՛ս, օրինակ, Конституционный закон Кыргызской Республики “О выборах Президента Кыргызской Республики и депутатов Жогору Кенеша Кыргызской Республики” от 2 июля 2011 года N 68 (в ред. конституционного Закона КР от 25 ноября 2011 года N 221), հոդ. 21, մասեր 3, 4:

Այս կապակցությամբ, չնայած 2011 թվականին ՀՀ ընտրական նոր օրենսգրքի ընդունմամբ պայմանավորված ընտրական գործընթացի իրավական կանոնակարգման ոլորտում արձանագրված էական առաջընթացին, այսօր էլ շարունակում է արդիական մնալ նախընտրական քարոզչության և դրան նախորդող ժամանակահատվածում քաղաքական, հայեցողական, քաղաքացիական պաշտոններ զբաղեցնող, պետական կամ համայնքային ծառայող հանդիսացող թեկնածուների կողմից վարչական ռեսուրսների օգտագործման հիմնախնդիրը: Այս առումով, թեև ՀՀ ընտրական օրենսգրքով նախատեսված սահմանափակումները վերաբերում են նախընտրական քարոզչության պաշտոնական ժամանակահատվածին, միաժամանակ, արձանագրվել են վարչական ռեսուրսների օգտագործման փաստեր նաև նախընտրական քարոզչության պաշտոնական մեկնարկից առաջ: Այսպես, օրինակ՝ ՀՀ Ազգային ժողովի 06.05.2012 թվականի ընտրությունների վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ընտրությունների դիտորդական առաքելության վերջնական գեկույցում մասնավորապես նշված է, որ դիտարկվել են վարչական միջոցների չարաշահման դեպքեր: Թեպետ ՀՀ ընտրական օրենսգիրքը և «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը արգելում են կրթության ոլորտի աշխատակիցների կողմից քարոզչության և պաշտոնական պարտականությունների կատարման համատեղումը, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ երկարաժամկետ դիտորդները դիտարկել են բազմաթիվ դեպքեր, երբ ընտրական գործընթացի մասնակից ուժերից մեկը քարոզչական միջոցառումներում ակտիվորեն ընդգրկվել է ուսուցիչներին և աշակերտներին, այդ թվում՝ դպրոցներում և դասերի ժամանակ: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ երկարաժամկետ դիտորդների կողմից արձանագրվել են ընտրական գործընթացի մասնակից քաղաքական ուժերից մեկի հանրահավաքներին մասնակցելու համար ուսուցիչներին և ուսանողներին դասերից ազատելու կամ դասերից հետո հանրահավաքներին մասնակցելու խնդրանքների դեպքեր: Տեղական մակարդակով կուսակցություններից մեկի քարոզարշավն իրականացվել է դպրոցների տնօրենների և ուսուցիչների ակտիվ մասնակցությամբ: Մի դեպքում մասնավոր համալսարանի ռեկտորը դասերի ժամա-

նակ ներկաներին հորդորել է քվեարկել քաղաքական ուժերից մեկի թեկնածուների օգտին: Վարչական միջոցների չարաշահումը, այդ թվում՝ կրթական ոլորտի աշխատողների մարդկային ռեսուրսի ներգրավումը, խախտել է ՀՀ ընտրական օրենսգիրքը և նպաստել է քաղաքական մասնակիցների համար անհավասար մրցակցային դաշտի ձևավորմանը՝ հակասելով ԵԱՀԿ 1990 թվականի կոպենհագենյան փաստաթղթի 7.7 պարբերությանը¹: Ի դեպ՝ սույն փաստաթղթում ազդարարվում է. «Որպեսզի ժողովրդի կամքը կառավարության իշխանության հիմք հանդիսանա, մասնակից պետություններն ապահովում են, որ օրենքն ու պետական քաղաքականությունը թույլ տան քաղաքական համաշարժումների անցկացում ազատության ու ազնվության մթնոլորտում. ոչ մի վարչական գործողություն, բռնություն կամ ահաբեկում կուսակցություններին ու թեկնածուներին հետ չեն պահի իրենց հայացքներն ու գնահատականներն ազատորեն շարադրելուց, ինչպես նաև ընտրողներին չեն խանգարի ծանոթանալ դրանց և քննարկել դրանք կամ քվեարկել ազատորեն՝ երկյուղ չկրելով պատժից»:

Սույն հիմնախնդրի հետ կապված՝ 2012 թվականի ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների վերաբերյալ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ զեկույցում մասնավորապես նշված է, որ արձանագրվել են բողոքներ, որոնք վերաբերել են նախընտրական քարոզարշավի իրականացման ընթացքում թեկնածուների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց կողմից վարչական ռեսուրսների չարաշահմանը: Մարդու իրավունքների պաշտպանը ստացել է թվով 5 ահազանգ, որոնք վերաբերել են վարչական ռեսուրսների չարաշահման դեպքերին: Ահազանգերից 3-ը հերքվել են ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից:

¹ Տե՛ս ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ընտրությունների դիտորդական առաքելության վերջնական զեկույցը ՀՀ Ազգային ժողովի 06.05.2012 թվականի ընտրությունների վերաբերյալ (Վարչակա, 26.06.2012), VIII. Նախընտրական քարոզչություն և քարոզչության ֆինանսավորում:

մից ստացված պատասխան գրություններով, իսկ 2-ի քննարկման արդյունքում ընտրախախտումները վերացվել են¹:

ՀՀ Նախագահի 18.02.2013 թվականի ընտրությունների վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ընտրությունների դիտորդական առաքելության վերջնական զեկույցում նշված է, որ քարոզարշավի ընթացքում ընդհանուր առմամբ պահպանվել են հիմնարար ազատությունները, և մրցակիցները կարողացել են անխոչընդոտ իրականացնել իրենց քարոզչությունը: Սակայն ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ընտրությունների դիտորդական առաքելությունը նկատել է հանրային կառավարման անկողմնակալության բացակայություն և վարչական ռեսուրսի չարաշահում գործող Նախագահի օգտին: Զեկույցում մասնավորապես արձանագրված է, որ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԲԴԱ երկարաժամկետ դիտորդները հաստատել են վարչական միջոցների չարաշահման դեպքերը երևանում և տասը մարզերից ութում: Արարատի մարզի գյուղերից մեկում համայնքի ղեկավարը համայնքի շենքն օգտագործել է որպես նախընտրական շտաբ: Արագածոտնի մարզի գյուղերից մեկում համայնքի աշխատակիցներն օգտագործել են համայնքի սարքավորումները քարոզչության նպատակով, և նույն մարզի մի քաղաքում նախընտրական շտաբը մատակարարվել է քաղաքապետի գրասենյակի սարքավորումներով: Կապանի քաղաքապետարանն օգտագործել է իր միջոցները քարոզչության համար: Շիրակի մարզի գյուղապետներից մեկը քարոզչության նպատակով օգտագործել է գյուղապետարանի ավտոմեքենան: Լոռու մարզի գյուղապետները քարոզչություն են իրականացրել գյուղերի վարչական գրասենյակներում: Կոտայքի մարզի մի գյուղում վարչական շենքն օգտագործվել է որպես քարոզչական նյութերի տարածման կետ, և մեկ այլ վարչական շենքի սարքավորումներ օգտագործվել են քարոզչության համար: Նշված փաստերը կասկածի տակ են դնում պետության և քաղաքական կուսակցության բաժանման հարցը՝ ամրագրված ԵԱՀԿ 1990 թվականի կոպենհագենյան փաստաթղթի 5.4 պարբերու-

¹ Տե՛ս 2012 թվականի ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների վերաբերյալ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 27.06.2012 թվականի արտահերթ զեկույցը (Էական ընտրախախտումներ, Վարչական ռեսուրսի օգտագործում):

թյամբ: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ընտրությունների դիտորդական առաքելության երկարաժամկետ դիտորդները դիտարկել են ընտրողների նկատմամբ ահաբեկման և ճնշման դեպքեր, այդ թվում՝ վերադասների կողմից պետական ծառայողների վրա ճնշման գործադրում՝ քարոզչական միջոցառումներին մասնակցելու և պետության գործող ղեկավարի օգտին քվեարկելու նպատակով: Մասնավորապես որոշ քաղաքներում ուսուցիչներին պարտադրել են մասնակցել քարոզչական միջոցառումներին և իրենց անձնագրերի համարները տալ դպրոցների տնօրեններին: Քաղաքներից մեկում չորս տարբեր հաստատությունների բժշկական աշխատակազմերի պարտադրվել է մասնակցել հանրահավաքի... Զեկույցում նշված է, որ նման անհարկի ազդեցությունը, մասնավորապես պետական ծառայողների նկատմամբ, կարող է հետևանքներ ունենալ անհատի ապրուստի վրա և հարցականի տակ է դնում քաղաքացիների կարծիք ունենալու և արտահայտելու հնարավորությունը՝ պատժից երկյուղ չկրելով, ինչպես ամրագրված է ԵԱՀԿ 1990 թվականի կոպենհագենյան փաստաթղթի 7.7 պարբերությամբ¹:

Վերոգրյալի կապակցությամբ սույն զեկույցում նշված է, որ պետական պաշտոնյաները պետք է զերծ մնան վարչական ռեսուրսների չարաշահումից, ներառյալ պաշտոնեական դիրքի չարաշահումը նրանց աշխատակիցների և հանրության նկատմամբ: Արդյունավետ միջոցներ է պետք ձեռնարկել հանրային կառավարման, այդ թվում՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնյաների անկողնակալությունն ապահովելու ուղղությամբ: Նրանք պետք է զերծ մնան ընտրողների վրա ճնշում գործադրելուց ինչպես քարոզարշավի ընթացքում, այնպես էլ ընտրությունների օրը: Քրեական օրենսգիրքը պետք է փոփոխվի՝ ներառելով հանցագործություններ քարոզչության նպատակով պաշտոնեական դիրքի և վարչական ռեսուրսների չարաշահման համար:

¹ Տե՛ս ՀՀ Նախագահի 18.02.2013 թվականի ընտրությունների վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ընտրությունների դիտորդական առաքելության վերջնական զեկույցը (Վարչավա, 08.05.2013), VIII. Նախընտրական քարոզչության և քարոզչության ֆինանսավորում:

Զեկույցում նաև արձանագրված է, որ մեծ թվով պաշտոնյաներ, ովքեր, համաձայն ՀՀ ընտրական օրենսգրքի, իրավունք չունեն իրականացնելու քարոզչություն իրենց պաշտոնական լիազորություններն իրականացնելիս, շրջանցել են օրենքը՝ արձակուրդ ձևակերպելով, որպեսզի պետության գործող ղեկավարի համար ակտիվորեն մասնակցեն քարոզչությանը: Մասնավորապես տասը մարզպետներից ինը արձակուրդ են վերցրել՝ գործող Նախագահի օգտին քարոզչություն իրականացնելու նպատակով: Այս հանգամանքը նպաստել է պետության և քաղաքական կուսակցության, ինչպես նաև պաշտոնական և քարոզչական գործառույթների միջև բաժանման աղճատմանը: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ երկարաժամկետ դիտորդները մատնանշել են ՀՀ ընտրական օրենսգրքի դրույթների մի քանի խախտումներ մարզային կամ համայնքային ծառայողների կողմից, ովքեր կատարում էին քարոզչություն իրենց լիազորություններն իրականացնելիս: Օրինակ՝ մարզերից մեկում քարոզչական միջոցառումները տեղի են ունեցել աշխատանքային ժամերին, և հանրային ծառայողները, որոնք արձակուրդում չեն եղել, մասնակցել են դրանց: Մեկ այլ մարզի երեք գյուղերում գյուղապետերը քարոզչություն են իրականացրել առանց արձակուրդ վերցնելու: Հանրային կառավարման անկողմնակալության բացակայությունը հակասել է ԵԱՀԿ 1990 թվականի կոպենհագենյան փաստաթղթի 5.4 և 7.7 պարբերություններին¹:

ՀՀ ընտրական օրենսգրքի համաձայն՝ ընտրական շտաբները չեն կարող տեղակայվել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների զբաղեցրած շենքերում (բացառությամբ այն դեպքերի, երբ շտաբները զբաղեցնում են այդ մարմիններին չպատկանող տարածք), ինչպես նաև այն շենքերում, որտեղ գործում են ընտրական հանձնաժողովները (հոդ. 18, մաս 5): Այս կապակցությամբ ՀՀ Նախագահի 18.02.2013 թվականի ընտրությունների վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ընտրությունների դիտորդական առաքելության վերջնական զեկույցում նշված է, որ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ երկարաժամկետ դիտորդները

¹ Տե՛ս նույն տեղում:

գեկուցել են մի քանի դեպքերի մասին, երբ գործող Նախագահի կամ իշխող քաղաքական ուժի շտաբները գտնվել են կամ ընտրական հանձնաժողովների հետ մեկտեղ նույն շենքերում, կամ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների գրադեցրած շենքերում, կամ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների սեփականություն հանդիսացող շինություններում:

Սույն հիմնախնդրին անդրադարձել է նաև ՀՀ սահմանադրական դատարանը՝ իր 31.05.2012 թվականի ՍԴՈ-1028 որոշման մեջ, որում մասնավորապես նշված է. «Ընտրաբշավին պետական իշխանության չեզոքության ապահովմանն են նաև ուղղված ՀՀ ընտրական օրենսգրքի 22-րդ հոդվածով քաղաքական, հայեցողական, քաղաքացիական պաշտոններ զբաղեցնող, պետական կամ համայնքային ծառայող հանդիսացող թեկնածուների նախընտրական քարոզչության սահմանափակումները: Նույն նպատակին են ծառայում նաև օրենսգրքի 107-րդ հոդվածով նախատեսվող սահմանափակումները: Սահմանադրական դատարանը նախ արձանագրում է, որ նախընտրական քարոզչության ժամանակահատվածում պաշտոնատար անձանց կողմից ընտրական օրենսգրքով սահմանված սահմանափակումները խախտելու վերաբերյալ համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունների, այդ թվում՝ դիմող կուսակցությունների դաշինքի կողմից որևէ դիմում օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում չի ներկայացվել և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով քննության առարկա չի դարձել:

Պետական տարբեր պաշտոնյաների, մասնավորապես ՀՀ Նախագահի նախընտրական քարոզչությանը մասնակցելու վերաբերյալ ՀՀ ընտրական օրենսգրքին այլ սահմանափակումներ չի նախատեսել, և կենտրոնական ընտրական հանձնաժողովը պարտավոր էր և առաջնորդվել է օրենքի պահանջներով:

Սահմանադրական դատարանը գտնում է՝ առկա ընտրական համակարգի պայմաններում խնդիրը պետք է լուծվի ոչ թե քաղաքական պաշտոններ զբաղեցնողների՝ նախընտրական քարոզչությանը մասնակցությունն արգելելու ճանապարհով, այլ

ընտրական օրենսգրքի 18-րդ և 22-րդ հոդվածների պահանջների խստագույնս կատարումը երաշխավորելու միջոցով»¹:

Խնդրո առարկային անդրադարձ է կատարված նաև ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի և Եվրախորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով)՝ ՀՀ ընտրական նոր օրենսգրքի նախագծի վերաբերյալ 20.04.2011 թվականի համատեղ եզրակացության մեջ: Ըստ այդմ. «Պետական միջոցների (ռեսուրսների) տարանջատումը թեկնածուի կամ կուսակցության միջոցներից Հայաստանում խրոնիկ բնույթի խնդիր է, ինչը 1996 թվականից ի վեր նշվել է ընտրությունների վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի յուրաքանչյուր գեկույցում: Համապետական ընտրությունների ժամանակ պետական որոշ հիմնարկների վերահսկողության տակ գտնվող միջոցներն օգտագործվում են քարոզչական նպատակներով իշխող թեկնածուների կողմից: Սա ստեղծում է իշխող և ոչ իշխող թեկնածուների միջև միջոցների անհավասարություն: Այս պրակտիկան համահունչ չէ ԵԱՀԿ-ի ստանձնած պարտավորություններին, որոնք կոչ են անում տարանջատելու կուսակցությունն ու պետությունը կամ էլ քարոզչություն իրականացնելու հավասար հիմունքներով: Դրանք նաև համահունչ չեն Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագրքին, որտեղ հնարավորությունների հավասարության սկզբունքը հանգեցնում է պետական իշխանության կողմից չեզոք վերաբերմունքի: Ընտրական օրենսգրքի 22-րդ հոդվածը պետք է լուծում տա այս հարցերին»²:

ՀՀ ընտրական օրենսգրքի համաձայն՝ ՀՀ Նախագահի թեկնածուները, բացառությամբ քաղաքական պաշտոն զբաղեցնող-

¹ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2012 թվականի մայիսի 31-ի ՍԴՈ-1028 որոշումը «Հայ ազգային կոնգրես» կուսակցությունների դաշինքի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2012 թվականի մայիսի 13-ի՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով պատգամավորներ ընտրվելու մասին» N 265-Ա որոշումը վիճարկելու վերաբերյալ գործով, կետ 8:

² Տե՛ս ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի և Եվրախորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով)՝ ՀՀ ընտրական նոր օրենսգրքի նախագծի վերաբերյալ 20.04.2011 թվականի համատեղ եզրակացության 48-րդ կետը (CDL(2011)020):

ների (ընդգծումը մերն է), որպես թեկնածու գրանցվելուց հետո՝ մինչև ընտրությունների արդյունքների ամփոփումը, ազատվում են իրենց աշխատանքային պարտականությունները կատարելուց: Հանրապետության Նախագահի թեկնածուներն իրավունք չունեն օգտագործելու իրենց պաշտոնեական դիրքը նախընտրական քարոզչության ժամանակ առավելություն ստանալու համար (հոդ. 87, մաս 2): Օրենսգրքի 107-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցներն ու պաշտոնատար այն անձինք, որոնց նկատմամբ չեն տարածվում ՀՀ ընտրական օրենսգրքի 107-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված սահմանափակումները, Ազգային ժողովի պատգամավորի թեկնածու գրանցվելուց հետո՝ մինչև նախընտրական քարոզչության ավարտը, ժամանակավորապես ազատվում են իրենց աշխատանքային պարտականությունները կատարելուց, **բացառությամբ քաղաքական պաշտոն գրադեցնող անձանց** (ընդգծումը մերն է):

Չնայած վերը թվարկված օրենսդրական սահմանափակումներին՝ պետք է փաստել, որ սույն խնդրի լուծմանն ուղղված իրավական կառուցակարգերն ամբողջական չեն և կարիք ունեն կատարելագործման: Այսպես, օրինակ, ՀՀ ընտրական օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ի մասի 3-րդ կետն արգելում է նախընտրական քարոզչության ժամանակահատվածում քաղաքական, հայեցողական, քաղաքացիական պաշտոններ գրադեցնող, պետական կամ համայնքային ծառայող հանդիսացող թեկնածուների գործունեության լուսաբանումը զանգվածային լրատվության միջոցներով, բացառությամբ Սահմանադրությամբ սահմանված դեպքերի, պաշտոնական այցերի և ընդունելությունների, ինչպես նաև տարերային աղետների ընթացքում վերջիններիս իրականացրած գործունեության: Եթե իրականացվում է սույն հոդվածում նշված թեկնածուի այլ գործունեության լուսաբանում, ապա վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող զանգվածային լրատվության միջոցն այն հաշվի է առնում մյուս թեկնածուների գործունեությունը լուսաբանելիս՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածով սահմանված լուսաբանման

հավասարության ոչ խտրական սկզբունքը պահպանելու համար (հոդ. 22, մաս 2):

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում սահմանված արգելքը վերաբերում է *զանգվածային լրատվության միջոցներին ընդհանրապես*, մինչդեռ նույն հոդվածի 2-րդ մասում հիշատակված է *միայն վերգեյրնյա եթերային հեռարձակում իրականացնող զանգվածային լրատվության միջոցը*:

Վերը նշված դեպքերում ԶԼՄ-ների կողմից, օրինակ, պետական բարձր պաշտոն զբաղեցնող թեկնածուի գործունեության լուսաբանումը, անգամ ակնհայտ քարոզչական ուղղվածության կամ մյուս թեկնածուների համեմատ ակնհայտ առավելության դեպքում, կարող է «արդարացվել» տեղեկատվական առիթների առկայությամբ կամ քարոզչական նպատակի բացակայությամբ, ինչի առկայությունը ԶԼՄ-ների կամ դրանց ներկայացուցիչների գործունեության ոլորտում մրցակից թեկնածուները դեռ պետք է ապացուցեն: Նշված խնդրին անդրադարձ է կատարված, օրինակ, Երևանի մամուլի ակումբի, Եվրոպական միության, Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության երևանյան գրասենյակի՝ Հայաստանի հեռարձակվող ԶԼՄ-ների կողմից 2012 թվականի մայիսի 6-ի ՀՀ խորհրդարանական ընտրությունների լուսաբանման մշտադիտարկման հաշվետվության մեջ: Ըստ այդմ, եթե ոչ օրենսդրական կարգավորում, ապա ինքնակարգավորում պահանջող ևս մի ավանդական և դեռևս հրատապ խնդիր է կուսակցությունների առաջնորդների՝ ընտրարշավին չառնչվող գործունեության լուսաբանումը: Խորհրդարանական ընտրությունների ժամանակ այն գլխավորապես վերաբերում էր իշխող քաղաքական ուժին, որի ընտրացուցակի առաջին և երրորդ համարներն էին ՀՀ գործող Նախագահը և վարչապետը: Նախընտրական քարոզչության ժամանակաշրջանում նրանց ոչ կուսակցական գործունեության լուսաբանումը տարբեր ալիքներում կազմել է իշխող քաղաքական ուժի ողջ եթերաժամանակի միջին հաշվով 25%-ը: Դա նշանակում է, որ յուրաքանչյուր ալիքի երեկոյան եթերում նրանց օրական շուրջ 3 րոպե էր հատկացվում: Այս ծավալը կարելի էր ընդունելի համարել, եթե խոսքը անհետաձգելի հրապարակային միջոցառումների մասին լիներ: Սակայն նշված ան-

ձանց մասնակցությամբ ոչ բոլոր հրապարակային միջոցառումները կարելի էր պարտադիր համարել ընտրարշավի ժամանակաշրջանում, որում իրենք նաև թեկնածուներ էին: Եթե ներքին և արտաքին այնպիսի միջոցառումներին մասնակցությունը, որոնց ժամկետները որոշվում են իրենց կամքից անկախ (Սուրբ Զատիկի տոնակատարություն, կառավարության նիստեր և այլն), միանգամայն օրինաչափ էր, ապա ամենատարբեր հիմնարկ-ձեռնարկություններ հաճախակի այցելությունները, հանդիսավոր արարողություններին և այլնին մասնակցությունը ոչ միշտ են հանդիսացել որպես մի բան, որը չէր կարող նախատեսվել ընտրարշավի ժամանակաշրջանից առաջ կամ հետո: Առավել ևս, որ գոյություն ունի չգրված կանոն՝ նախընտրական քարոզչություն վարելու առավելագույնս հավասար պայմանների ապահովման համար քարոզարշավին մասնակցող պետության ղեկավարները պետք է կրճատեն, այլ ոչ հաճախակի դարձնեն իրենց մասնակցությունը ընտրարշավին չառնչվող հրապարակային միջոցառումներին:

Բնականաբար, հեռարձակվող ԶԼՄ-ներն ավանդաբար լուսաբանում են ՀՀ Նախագահի և վարչապետի մասնակցությամբ յուրաքանչյուր հրապարակային միջոցառում, և, փաստորեն, եթերաժամանակի և անդրադարձների հաճախականությամբ մրցակիցների նկատմամբ իշխող քաղաքական ուժի առավելությունը ձևավորվել էր գլխավորապես նրանց՝ որպես պաշտոնատար անձանց գործունեության հաշվին: Դա, առաջին հերթին, վերաբերում էր հանրային ռադիոյին և «Շանթ»-ին, որոնցում ՀՀ Նախագահի և վարչապետի մասնակցությամբ ընտրություններին անմիջականորեն չառնչվող միջոցառումների լուսաբանումը կազմել էր այդ ալիքների կողմից իշխող քաղաքական ուժին հատկացված ողջ եթերաժամանակի 41,7%-ը և կարող էր բնորոշվել որպես չափից դուրս:

Քաղաքական ուժերի առաջնորդների ոչ կուսակցական գործունեության լուսաբանման ծավալի առումով ուշագրավ էր «Կենտրոն»-ի վերաբերմունքը ԲՀԿ ընտրացուցակի առաջին համարի և Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի նախագահի նկատմամբ: Նախընտրական քարոզչության ժամանակաշրջանում «Կենտրոն»-ի երեկոյան եթերում՝ որպես ՀԱՕԿ-ի ղեկավար, նրա գործունեությանը մոտավորապես նույնքան ուշադրու-

թյուն էր հատկացվել, որքան «Միավորված հայեր» կուսակցությանը հատկացված ողջ եթերաժամանակը¹:

Իսկ, օրինակ, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ընտրությունների դիտորդական առաքելության 2012 թվականի ապրիլի 27-ին հրապարակված միջանկյալ զեկույցում (2012 թ. ապրիլի 3–24)՝ կապված 2012 թվականի մայիսի 6-ի ՀՀ խորհրդարանական ընտրությունների հետ, արձանագրված է, որ եթե մինչև քարոզարշավի մեկնարկը ՀՀ Նախագահի և կառավարության անդամների գործունեությունը դիտարկված ԶԼՄ-ներում չափազանց ծավալուն լուսաբանում էր ստանում, ապա ապրիլի 8-ից հետո դա զգալիորեն նվազել է:

Երևանի մամուլի ակումբի, Եվրոպական միության, Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության երևանյան գրասենյակի՝ Հայաստանի հեռարձակվող ԶԼՄ-ներում 2013 թվականի ՀՀ նախագահական ընտրությունների լուսաբանման մշտադիտարկման հաշվետվության մեջ նշված է, որ նախընտրական քարոզչությանը նախորդած ժամանակաշրջանում ԶԼՄ-ները բավական ինտենսիվ են անդրադարձել ՀՀ Նախագահի գործունեությանը ոչ թե որպես թեկնածուի, այլ որպես պաշտոնատար անձի: Մասնավորապես նախընտրական քարոզչությանը նախորդած վերջին շաբաթում (հունվարի 14–20) ՀՀ Նախագահի՝ որպես պաշտոնատար անձի գործունեության լուսաբանումը կազմել է հետազոտված 9 ալիքների կողմից նրան հատկացված միագումար ամբողջ եթերաժամանակի 65,6 %-ը (կամ գրեթե երկու երրորդը): «Շանթ»-ի եթերում այս ցուցանիշը կազմել է 93,4 %, Հ1-ում՝ 85,3 %: Արդյունքում ՀՀ Նախագահին էական տեղեկատվական առավելություն է ստացել բոլոր մյուս մրցակիցների նկատմամբ, որոնց գործունեությունը թեկնածուի կարգավիճակից դուրս չի լուսաբանվել՝ չհաշված Բ. Հովհաննիսյանի 30 վայրկյանը: ՀՀ Նախագահի՝ որպես թեկնածուի գործունեության լուսաբանման նկատմամբ նրա՝ որպես

¹ Տե՛ս Երևանի մամուլի ակումբի, Եվրոպական միության, Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության երևանյան գրասենյակի՝ Հայաստանի հեռարձակվող ԶԼՄ-ների կողմից 2012 թվականի մայիսի 6-ի ՀՀ խորհրդարանական ընտրությունների լուսաբանման մշտադիտարկման հաշվետվությունը (www.ypc.am):

գործող Նախագահի գործունեության լուսաբանման գերակայությունն արձանագրվել է հետազոտված 9 ԶԼՄ-ներից 8-ում:

Սակայն հետազոտված ԶԼՄ-ներում գործող Նախագահի գործունեության լուսաբանումն արմատապես փոխվել է նախընտրական քարոզարշավը սկսվելուն պես: Ընդ որում՝ ընտրությունների օրվա մոտենալուն պես գործող Նախագահի՝ նրա պաշտոնական կարգավիճակով, գործունեության լուսաբանումը գնալով նվազ ակտիվ էր դառնում: Սույն փաստը վկայում է այն մասին, որ, ի տարբերություն նախորդ բոլոր ընտրությունների, որոշակի ուշադրություն է դարձվել այն չգրված կանոնին, ըստ որի՝ առաջադրված պաշտոնատար անձը պետք է կրճատի իր մասնակցությունն ընտրարշավին չառնչվող հրապարակային միջոցառումներին, իսկ ԶԼՄ-ները պետք է ավելի հակիրճ լուսաբանեն նման միջոցառումները:

Լուսաբանման առումով նախընտրական քարոզչությանն անմիջապես նախորդած ժամանակահատվածի և արագընթաց նախընտրական քարոզչության միջև զգալի տարբերությունը հերթական անգամ ապացուցում է ոչ թե քարոզարշավային 4 շաբաթների, այլ ավելի տևական ժամանակահատվածի կանոնակարգման և դիտարկման անհրաժեշտությունը: Հակառակ պարագայում դժվար է խոսել թեկնածուների համար տեղեկատվական հավասար հնարավորությունների մասին¹:

Այս կապակցությամբ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների նախարարների կոմիտեի՝ Զանգվածային լրատվության միջոցներով ընտրական քարոզչության լուսաբանման միջոցառումների վերաբերյալ N R (99) 15 հանձնարարականի հավելվածում հեռուստառադիոհեռարձակում իրականացնող ընկերությունների մասով սահմանված է, որ ինքնակարգավորման կանոնների բացակայության դեպքում անդամ պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն, որոնց ուժով հանրային և

¹ Տե՛ս Երևանի մամուլի ակումբի, Եվրոպական միության, Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության երևանյան գրասենյակի՝ Հայաստանի հեռարձակվող ԶԼՄ-ներում 2013 թվականի ՀՀ նախագահական ընտրությունների լուսաբանման մշտադիտարկման հաշվետվությունը (www.ypc.am):

մասնավոր հեռարձակող ընկերություններն ընտրությունների ժամանակահատվածում պետք է լինեն առանձնակի արդար, հավասարակշռված և անկողմնակալ լրատվական և հրապարակախոսական հաղորդումներում, ներառյալ հարցազրույցները կամ բանավեճերը: Այդպիսի հաղորդումների ժամանակ հանրային իշխանության մարմինները չպետք է օգտագործեն իրենց գերակա դիրքը: Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձվի ոչ լրատվական և ոչ հրապարակախոսական հաղորդումներին, որոնք ուղղակիորեն կապված չեն ընտրական քարոզչության հետ, սակայն կարող են ազդեցություն ունենալ ընտրողների վերաբերմունքի վրա¹:

Հարկ է նշել, որ 2012 թվականի խորհրդարանական ընտրությունների հետ կապված՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի համապատասխան որոշումներով մերժվել է վարչական վարույթների հարուցումը մի շարք դիմումներով (բողոքներով)՝ կապված որոշ լրատվամիջոցների կողմից ՀՀ ընտրական օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ի մասի 3-րդ կետի պահանջների խախտումների հետ²:

Առաջ քաշված հարցադրման հետ կապված՝ դիտարկենք արտասահմանյան մի շարք պետություններում գործող իրավակարգավորումները: Այսպես, օրինակ՝ Ղրղզստանի Հանրապետությունում պետական-քաղաքական (բացառությամբ օրենսդիր մարմնի պատգամավորների և հանրապետության Նախագահի), վարչական և մունիցիպալ պաշտոններ զբաղեցնող կամ լրատվամիջոցների աշխատակիցներ հանդիսացող գրանցված թեկնածուների պաշտոնեական կամ ծառայողական լիազորությունները ժամանակավորապես դադարեցվում

¹ Стн Рекомендация N R (99) 15 Комитета Министров государств-членов Совета Европы о мерах по освещению избирательной кампании средствами массовой информации (принята Комитетом Министров 9 сентября 1999 года на 678 встрече заместителей министров), Приложение, II. 2, 3:

² Стн, օրինակ, ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2012 թվականի ապրիլի 20-ի N 134- 136-Ա, 138-146-Ա, 149-Ա, 152-154-Ա, 156-168-Ա, 172-176-Ա որոշումները:

են՝ գրանցման պահից մինչև ընտրությունների արդյունքների ամփոփումը¹:

Դազախստանի Հանրապետության Նախագահի, օրենսդիր մարմնի պատգամավորության թեկնածուները գրանցման օրվանից մինչև ընտրությունների արդյունքների հրապարակումն իրավասու են ազատվելու աշխատանքային պարտականությունների կատարումից²:

Ռուսաստանի Դաշնությունում պաշտոնեական կամ ծառայողական դիրքի առավելությունների օգտագործման հետ կապված օրենսդրական սահմանափակումների պահպանումը չպետք է խոչընդոտի Ռուսաստանի Դաշնության Նախագահի, պատգամավորների կողմից իրենց լիազորությունների իրականացմանը և նրանց կողմից ընտրողների առջև իրենց պարտականությունների կատարմանը³:

Ուզբեկստանի Հանրապետության Նախագահի թեկնածուն ընտրողների հետ հանդիպումներում, նախընտրական ժողովներում, հեռուստատեսությամբ և ռադիոյով ելույթների ժամանակահատվածում իրավունք ունի ազատվելու արտադրական կամ ծառայողական պարտականությունների կատարումից⁴: Աս-

¹ Տե՛ս Конституционный закон Кыргызской Республики “О выборах Президента Кыргызской Республики и депутатов Жогору Кенеша Кыргызской Республики” от 2 июля 2011 года N 68 (в ред. конституционного Закона КР от 25 ноября 2011 года N 221), հոդ. 21, մաս 5:

² Տե՛ս Конституционный закон Республики Казахстан “О выборах в Республике Казахстан” от 28.09.1995 N 2464, հոդ. 47, կետ 1:

³ Տե՛ս Федеральный закон от 12.06.2002 N 67-ФЗ “Об основных гарантиях избирательных прав и права на участие в референдуме граждан Российской Федерации” (ред. от 07.05.2013), հոդ. 40, կետեր 5, 6: Տե՛ս նաև Федеральный закон от 10.01.2003 N 19-ФЗ “О выборах Президента Российской Федерации” (ред. от 07.05.2013), հոդ. 41, կետեր 4, 5, Федеральный закон от 18.05.2005 N 51-ФЗ “О выборах депутатов Государственной Думы Федерального Собрания Российской Федерации” (в ред. от 02.07.2013), հոդ. 46, մասեր 4, 5:

⁴ Տե՛ս Закон Республики Узбекистан «О выборах Президента Республики Узбекистан» (дейст. ред.), հոդ. 28':

վածը վերաբերում է նաև որպես պատգամավորության թեկնածուներ գրանցված անձանց¹:

Վերադառնալով Հայաստանի Հանրապետությունում խնդրո առարկայի հետ կապված գործող իրավակարգավորումներին, ինչպես վերը նշվեց, ՀՀ Նախագահի թեկնածուները որպես թեկնածու գրանցվելուց հետո՝ մինչև ընտրությունների արդյունքների ամփոփումը, ազատվում են իրենց աշխատանքային պարտականությունները կատարելուց: Իսկ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցներն ու պաշտոնատար այն անձինք, որոնց նկատմամբ չեն տարածվում ՀՀ ընտրական օրենսգրքի 107-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված սահմանափակումները, Ազգային ժողովի պատգամավորի թեկնածու գրանցվելուց հետո՝ մինչև նախընտրական քարոզչության ավարտը, ժամանակավորապես ազատվում են իրենց աշխատանքային պարտականությունները կատարելուց: ՀՀ ընտրական օրենսգիրքն այս առումով բացառություն է նախատեսել քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց մասով (հոդ. 87, մաս 2, հոդ. 107, մաս 2), ինչը, մի կողմից, տրամաբանական է, մյուս կողմից՝ փաստացի հնարավորություն է ընձեռում քաղաքական պաշտոն զբաղեցնող թեկնածուներին օգտագործել իրենց պաշտոնեական կամ ծառայողական դիրքը նախընտրական քարոզչության ժամանակ առավելություն ստանալու համար՝ չնայած սահմանված իրավական արգելքներին:

Սույն հիմնախնդրի հետ կապված՝ ՀՀ սահմանադրական դատարանը իր 31.05.2012 թվականի ՄԴՈ-1028 որոշման մեջ իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ առկա ընտրական համակարգի պայմաններում խնդիրը պետք է լուծվի ոչ թե քաղաքական պաշտոններ զբաղեցնողների՝ նախընտրական քարոզչությանը մասնակցությունն արգելելու ճանապարհով, այլ ՀՀ ընտրական օրենսգրքի 18-րդ և 22-րդ հոդվածների պահանջների խստագույնս կատարումը երաշխավորելու միջոցով:

¹ Стн Закон Республики Узбекистан «О выборах в Олий Мажлис Республики Узбекистан» (дейст. ред.), հոդ. 29:

Իհարկե, օրինակ, ՀՀ գործող Նախագահի համար որպես ՀՀ Նախագահի թեկնածու գրանցվելուց հետո՝ մինչև ընտրությունների արդյունքների ամփոփումը, իր աշխատանքային պարտականությունների կատարումից ազատվելու վերաբերյալ օրենսդրական արգելքի նախատեսումը միանգամայն անտրամաբանական կլիներ՝ պայմանավորված պետական իշխանության մարմինների համակարգում նրա ունեցած առանձնահատուկ կարգավիճակով և վերջինիս՝ Սահմանադրությամբ վերապահված լիազորությունների շրջանակով ու դրանց իրականացման առանձնահատկություններով: Ասվածը վերաբերում է նաև որպես թեկնածու գրանցված քաղաքական պաշտոն գրադեցնող այլ սուբյեկտների: Օրինակ, եթե ՀՀ վարչապետը Ազգային ժողովի պատգամավորի թեկնածու գրանցվելուց հետո՝ մինչև նախընտրական քարոզչության ավարտը, ժամանակավորապես ազատվեր իր աշխատանքային պարտականությունները կատարելուց, ինչպես և նախարարները (այդ թվում՝ փոխվարչապետը), ապա հարց կարող էր ծագել, թե վերը նշված ժամանակահատվածում ով պետք է հրավիրեր և վարեր կառավարության նիստերը, ղեկավարեր կառավարության գործունեությունը և համակարգեր նախարարների աշխատանքը:

Մյուս կողմից՝ քաղաքական պաշտոն գրադեցնող **բոլոր** (ընդգծումը մերն է) սուբյեկտների համար ՀՀ ընտրական օրենսգրքով նախատեսված *քաջառության* առումով, թերևս, նպատակահարմար է սահմանափակել այսպիսի պաշտոն գրադեցնող սուբյեկտների շրջանակը: Խոսքը վերաբերում է համայնքների՝ որպես թեկնածու գրանցված *գործող* ղեկավարներին, այսինքն՝ նպատակահարմար ենք համարում, որպեսզի վերջիններս որպես հանրապետության Նախագահի կամ Ազգային ժողովի պատգամավորի թեկնածուներ գրանցվելուց հետո՝ համապատասխանաբար մինչև ընտրությունների արդյունքների ամփոփումը և նախընտրական քարոզչության ավարտը, ազատվեն (ժամանակավորապես ազատվեն) իրենց աշխատանքային պարտականությունները կատարելուց, ինչը կնպաստի վերջիններիս կողմից ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված՝ վերը նշված ժամանակահատվածներում վարչական ռեսուրսների չա-

րաշահման կանխարգելմանը կամ առնվազն սահմանափակմանը՝ հաշվի առնելով նաև ՀՀ ընտրական օրենսգրքի այն նորմը, համաձայն որի՝ հանրապետության Նախագահի թեկնածուներն իրավունք չունեն օգտագործելու իրենց պաշտոնական դիրքը **նախընտրական քարոզչության ժամանակ** (ընդգծումը մերն է) առավելություն ստանալու համար (հոդ. 87, մաս 2): Հատկանշական է, որ սույն սահմանափակումը վերաբերում է նախընտրական քարոզչության ժամանակահատվածին, որը, գործող իրավակարգավորմանը համապատասխան, սկսվում է թեկնածուների, կուսակցությունների ընտրական ցուցակների գրանցման համար ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետի վերջին օրվան հաջորդող 7-րդ օրը և ավարտվում քվեարկության օրվանից մեկ օր առաջ (հոդ. 18, մաս 1): ՀՀ ընտրական օրենսգրքի 87-րդ հոդվածի 2-րդ մասում, միաժամանակ, սահմանված է, որ հանրապետության Նախագահի թեկնածուներն ազատվում են իրենց աշխատանքային պարտականությունները կատարելուց **որպես թեկնածու գրանցվելուց հետո՝ մինչև ընտրությունների արդյունքների ամփոփումը** (ընդգծումը մերն է), *բացառությամբ քաղաքական պաշտոն զբաղեցնողների*, այսինքն՝ վերջին դեպքում խոսքը վերաբերում է ավելի տևական ժամանակահատվածի: Այս առումով, թեև ՀՀ ընտրական օրենսգրքի 22-րդ հոդվածով նախատեսված են քաղաքական, հայեցողական, քաղաքացիական պաշտոններ զբաղեցնող, պետական կամ համայնքային ծառայող հանդիսացող թեկնածուների նախընտրական քարոզչության սահմանափակումները, այնուամենայնիվ, չի բացառվում ՀՀ Նախագահի՝ քաղաքական պաշտոն զբաղեցնող թեկնածուների կողմից իրենց պաշտոնական դիրքի օգտագործման հնարավորությունը նախընտրական քարոզչության՝ ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված ժամանակահատվածից դուրս:

Համայնքների՝ որպես հանրապետության Նախագահի կամ Ազգային ժողովի պատգամավորի թեկնածուներ գրանցված գործող ղեկավարների կողմից վարչական ռեսուրսների հավանական չարաշահումը կանխարգելելու կամ առնվազն սահմանափակելու նկատառումից ելնելով՝ նպատակահարմար ենք

համարում նաև լրացում կատարել ՀՀ ընտրական օրենսգրքի 132-րդ և «Տեղական ինքնակառավարման մասին» 07.05.2002 թվականի ՀՀ օրենքի 24-րդ հոդվածներում՝ ամրագրելով, որ նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել համայնքի ղեկավարի պաշտոնում:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ 07.05.2002 թվականին ընդունված «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-337) 24-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված էր, որ նույն անձը համայնքի ղեկավարի պաշտոնում կարող է ընտրվել ոչ ավելի, քան երկու անգամ անընդմեջ: 28.11.2006 թվականին ընդունված ««Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքով (ՀՕ-226-Ն) սույն դրույթն ուժը կորցրած ճանաչվեց: Բացի այդ, 05.02.1999 թվականին ընդունված ՀՀ ընտրական օրենսգրքում (ՀՕ-284) վերը նշված սահմանափակումն ի սկզբանե նախատեսված չէր: 19.05.2005 թվականին ընդունված «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-101-Ն) 75-րդ հոդվածի «դ» կետով ՀՀ ընտրական օրենսգրքի 123-րդ հոդվածում ավելացվեց նոր կետ (9), որը նախատեսում էր նույն անձի կողմից ավելի, քան երկու անգամ անընդմեջ համայնքի ղեկավարի պաշտոնում ընտրվելու սահմանափակումը: Սույն կետն ուժը կորցրած ճանաչվեց 22.12.2006 թվականին ընդունված «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-1-Ն) 98-րդ հոդվածի 4-րդ կետով: Գործող ընտրական օրենսգրքում (26.05.2011 թ.) սույն սահմանափակումը նախատեսված չէ:

Խնդրո առարկայի հետ կապված՝ դիտարկենք արտասահմանյան որոշ պետություններում գործող իրավակարգավորումները: Այսպես, օրինակ՝ Ֆիլիպինների 1987 թվականի Սահմանադրության համաձայն՝ տեղական իշխանության ընտրովի ներկայացուցիչների ծառայության ժամկետը 3 տարի է, բացա-

¹ Ուժը կորցրել է 26.06.2011 թ.:

ռությանը առանձին կատեգորիայի ծառայողների, որոնց ծառայության ժամկետը սահմանվում է օրենքին համապատասխան, և ոչ մի այդպիսի ծառայող չի կարող պաշտոնավարել ավելի, քան 3 անգամ անընդմեջ: Կամավոր հիմունքներով ցանկացած ժամկետով լիազորությունները վայր դնելը չի համարվում ընդմիջում ծառայության մեջ, մինչև չավարտվի ծառայության ամբողջ ժամկետը, որով ընտրվել է տվյալ պաշտոնատար անձը (X, հոդ. 8): Ամերիկայի մի շարք նահանգներում ևս, քաղաքապետների ընտրվելու պարբերականության հետ կապված, նախատեսված են որոշակի իրավական սահմանափակումներ: Օրինակ՝ Ցինցինատիում (Օհայո) նույն անձը քաղաքապետի պաշտոնում չի կարող պաշտոնավարել ավելի, քան 2 անգամ անընդմեջ՝ յուրաքանչյուր անգամ 4 տարի ժամկետով¹: Կլովիս քաղաքի (Նյու Մեխիկո) կանոնադրությամբ² սահմանված է, որ 2 անգամ հաջորդաբար պաշտոնավարած քաղաքապետը չի կարող կրկին առաջադրել իր թեկնածությունը, քանի դեռ իր պաշտոնավարումից հետո 1 ամբողջական պաշտոնավարման ժամկետ չի լրացել: Յունիոն Սիթիում (Կալիֆոռնիա) ուղղակի ընտրությունների միջոցով ընտրված քաղաքապետը պաշտոնավարում է 4 տարի և չի կարող առաջադրել իր թեկնածությունն ավելի, քան 3 անգամ անընդմեջ: Երեք անգամ անընդմեջ պաշտոնավարելուց հետո նույն անձը կարող է կրկին առաջադրել իր թեկնածությունը 2 տարի անց³: Իրվինում (Կալիֆոռնիա) քաղաքապետն ընտրվում է 2 տարի պաշտոնավարման ժամկետով: Ընդ որում՝ նույն անձը չի կարող պաշտոնավարել ավելի, քան 2 անգամ անընդմեջ⁴:

¹ Sñu Charter of the City of Cincinnati (adopted by vote of the people on November 2, 1926), article IX, section 2b (added by Ord. No. 77-1999, eff. June 1, 2001; election of May 4, 1999; amended by Ord. No. 304-2012, eff. Aug. 1, 2012; election of Nov. 2, 2012):

² Sñu Charter of the City of Clovis (adopted by the voters of the City of Clovis at the special election on November 2, 1971, as amended by vote of the City of Clovis on March 6, 1984), Section 3-2 Term Limits:

³ Sñu Union City Municipal Code, 1991, title 2, chapter 2.07 (Ord. 495-96 § 1 (part), 1996):

⁴ Sñu Charter of the City of Irvine, article IV, section 400 (Amend. of 9-8-78; Amend. of 6-3-86; Amend. of 6-7-88; Amend. of 3-1-88, §1; Amend. of 11-5-91):

Հյուսթոնում (Թեքսաս) քաղաքապետի պաշտոնավարման ժամկետը 2 տարի է, և թույլատրվում է անընդմեջ առաջադրվել 2 անգամ¹, իսկ, օրինակ, Սան Անտոնիո քաղաքում՝ 4 անգամ²: Նյու Յորք քաղաքում 02.11.2010 թվականին անցկացված հանրաքվեի արդյունքներով որոշվեց քաղաքապետի համար նախկինում սահմանված 3 անգամ անընդմեջ ընտրվելու հնարավորության փոխարեն սահմանել 2 անգամ³:

Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետության համայնքներում անցկացված տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքները վկայում են, որ, որպես կանոն, համայնքների գործող ղեկավարները վերընտրվում են: Ընդ որում՝ նրանցից շատերը, որպես տվյալ համայնքի ղեկավար, արդեն իսկ պաշտոնավարելիս են լինում տեղական ժամանակ: Իհարկե, չպետք է բացառել, որ օրենսդրական առաջարկվող սահմանափակման գործողության պայմաններում կոնկրետ համայնքի բնակչությունն, արդյունավետ գնահատելով տվյալ համայնքի գործող ղեկավարի կատարած աշխատանքը, այնուամենայնիվ, հնարավորություն չի ունենա ընտրելու նրան ավելի, քան 2 անգամ անընդմեջ: Միաժամանակ հարկ է նշել, որ սույն սահմանափակման օրենսդրական ամրագրման դեպքում էականորեն կմեծանա նաև ընտրությունների ժամանակահատվածում նկատելի որոշ բացասական երևույթների հաղթահարման հավանականությունը: Մասնավորապես առավել իրատեսական կդառնա անհատների կամ քաղաքական ուժերի միջև հավասար հիմունքներով ընտրապայքար ծավալելու հնարավորությունը, առողջ մրցակցությունը, տեղական նշանակության հիմնախնդիրներին քաջածանոթ սուբյեկտների ներգրավման հնարավորությունը դրանց լուծմանը: Ի վերջո նույն անձի կող-

¹ Sñu Charter of the City of Houston, article V, sec. 5 (added by amendment August 11, 1979), 6a (added by amendment November 5, 1991):

² Sñu Charter of the City of San Antonio, 1951, article II, sec. 5 (Ord. No. 44391, § 1 (Prop. 7), 10–3–74; Ord. No. 85965, § 1 (Prop. 1), 5–5–97), article III, sec. 20 (Ord. No. 85965, § 1 (Prop. 5), 5–5–97; Ord. No. 2008–11–17–1010, §§ 4, 5 (Prop. 1), 11–17–08):

³ Sñu New York City Charter, chapter 50:

մից ընտրվելու պարբերականության առումով իրավական որևէ սահմանափակման բացակայությունը ինչ-որ չափով խոչընդոտում է տեղական մակարդակում ժողովրդավարության զարգացմանը:

Մեր կարծիքով նույն անձի կողմից ավելի, քան 2 անգամ անընդմեջ համայնքի ղեկավարի պաշտոնում ընտրվելը բացառող՝ օրենսդրական ամրագրում պահանջող դրույթը չի հակասի ՀՀ Սահմանադրությանը, որով այսպիսի սահմանափակում է նախատեսված միայն հանրապետության Նախագահի պաշտոնում ընտրվելու համար (հոդ. 50): Սույն դրույթը չի հակասի նաև Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիային, թեև վերջինս տեղական ինքնակառավարման մարմիններում ընտրվելու պարբերականության առումով որևէ սահմանափակում չի բովանդակում¹:

Առաջ քաշված հարցադրման հետ կապված՝ անհրաժեշտ է հստակեցնել նաև, թե երբ կարող է նույն անձը վերստին առաջադրվել համայնքի ղեկավարի թեկնածուի պաշտոնում՝ նկատի ունենալով այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են, օրինակ, համայնքի ղեկավարի հրաժարականը, մահը, նրան ազատագրկման դատապարտելը, անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելը, նրա կողմից անհամատեղելի պաշտոն զբաղեցնելը: Այս առումով նպատակահարմար ենք համարում օրենսդրորեն այսպիսի հնարավորության նախատեսումը, անկախ համայնքի ղեկավարի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման հիմքերից, նրա լիազորությունների ավարտից հետո:

¹ Մանրամասն տե՛ս Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան (Ստրասբուրգ, 15.10.1985 թ.):

6. ԸՆՏՐԱԿԱՇԱՌՔԻ ԲԱԺԱՆՄԱՆԸ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՏԵՂՄԱՆ ԲԱՑԱՌՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ

Ընտրությունների ժամանակահատվածում թեկնածուներին, կուսակցությունների, դրանց դաշինքների կողմից, այսպես կոչված, «ընտրակաշառքի» բաժանման, ինչպես նաև դրանց անուններին, անվանումներին նմանեցվող (ասոցացվող) անվանումներով բարեգործական կազմակերպությունների գործունեության ու լրատվամիջոցներով դրա լուսաբանման հետ կապված՝ այսօր Հայաստանի Հանրապետությունում գոյություն ունեն իրավական լուծումներ պահանջող որոշ հիմնախնդիրներ: Հարկ է նշել, որ «ընտրակաշառք» երևույթը, չնայած դրա բացառմանն ուղղված օրենսդրական կառուցակարգերի շարունակական կատարելագործմանն ուղղված քայլերին, արմատախիլ անելը գործնականում անհնար է: Այդուհանդերձ, սույն երևույթի դեմ պայքարն արդեն իսկ հանգեցրել է որոշակի դրական արդյունքների, որոնք առավել շոշափելի կարող են դառնալ, եթե ընտրական գործընթացի բոլոր մասնակիցներն անհրաժեշտ հետևողականություն դրսևորեն՝ ուղղված դրա ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի դրսևորումների բացառմանը:

ՀՀ ընտրական օրենսգրքով արգելված է նախընտրական քարոզչության ժամանակ, ինչպես նաև քվեարկության նախորդ և քվեարկության օրը թեկնածուներին, կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին անձամբ կամ նրանց անունից կամ որևէ այլ եղանակով ընտրողներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով տալ (խոստանալ) դրամ, սննդամթերք, արժեթղթեր, ապրանքներ կամ մատուցել (խոստանալ) ծառայություններ: Այն բարեգործական կազմակերպություններ

րը, որոնց անվանումները կարող են նմանեցվել (ասոցացվել) կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների անվանումներին, թեկնածուների անուններին, նախընտրական քարոզչության ժամանակ բարեգործություն չեն կարող իրականացնել այն համայնքներում, որտեղ անցկացվում են ընտրություններ, որոնց մասնակցում են այդ թեկնածուները, կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները կամ նրանց առաջադրած թեկնածուները (հոդ. 18, մաս 7):

Սույն հիմնախնդիրներին անդրադարձ է կատարված ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ընտրությունների դիտորդական առաքելության գեկույցներում: Այսպես, օրինակ՝ 12.05.2007 թվականի ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների վերաբերյալ վերջնական գեկույցում մասնավորապես արձանագրվեց, որ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն ուղղակիորեն ակնատես եղավ քաղաքական կուսակցություններից մեկի կողմից ապրանքների տրամադրման դրվագի, որը համապատասխանում էր նախընտրական քարոզչության ընթացքում արգելված վարքագծի իրավական բնորոշմանը: Թիվ 25 ԸԸՀ-ում (Հրազդան) թեկնածուներից մեկի օգտին աշխատող անձանցից մեկը ձերբակալվեց ընտրակաշառք բաժանելու համար: Սույն գեկույցում նաև նշված է, որ քարոզչության ընթացքում ընտրողներին նյութական շահագրգռում տրամադրելու վերաբերյալ բազմաթիվ հնչեցված մեղադրանքների և մի քանի հաստատված դեպքերի առկայությունը վկայում է, որ ապրանքների և ծառայությունների բնաիրային հանգանակություններ են կատարվել որոշ կուսակցությունների և թեկնածուների քարոզարշավներին՝ թեկնածուների կամ այլ անձանց կամ կազմակերպությունների կողմից: Ընտրական օրենսգիրքը չի նախատեսում քարոզարշավին բնաիրային հանգանակություններ կատարելու ուղղակի արգելք կամ դրանց բացահայտելու պահանջ: Այնուհանդերձ, ընտրակաշառքն արգելող նորմը, ըստ երևույթին, պետք է կիրառելի լիներ այն իրավիճակներում, երբ թեկնածուները կամ կուսակցություններն անձամբ կամ այլ եղանակով նյութապես շահագրգռում էին ընտրողներին:

Զեկույցում միաժամանակ նշված է, որ «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունն աչքի էր ընկնում բարեգործական գոր-

ծունեությամբ, բնակչությանը նվերներ բաժանելով և ծառայություններ մատուցելով: Կուսակցության ծավալած գործունեության խնդրին՝ կապված համայնքներին շտապ բուժօգնության մեքենաներ տրամադրելու հետ, հրավիրված մամուլ ասուլիսում անդրադարձ է կատարել կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը՝ նշելով, որ այդ գործունեությունն իրականացվել է նախքան պաշտոնական քարոզչության մեկնարկը, և հանգանակությունը կատարվել է համայնքին, այլ ոչ անհատ ընտրողների, ուստի չէր կարող համարվել ընտրակաշառք¹:

ՀՀ ընտրական նոր օրենսգրքի (26.05.2011թ.) ընդունումից հետո անցկացված ընտրությունների հետ կապված ևս ԵԱՀԿ/ԺՀ-ՄԻԳ ընտրությունների դիտորդական առաքելությունն անդրադարձել է «ընտրակաշառք» երևույթին: Այսպես՝ ՀՀ Ազգային ժողովի 06.05.2012 թվականի ընտրությունների վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ընտրությունների դիտորդական առաքելության վերջնական գեկույցում մասնավորապես նշված է. «ԸԴԱ շատ զրուցակիցներ ձայների գնման հարցը բարձրացրել էին որպես հիմնական և լայն տարածում ունեցող խնդիր: Ընտրությունների օրվանից առաջ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդների կողմից դիտարկված անսովոր եռուզեռը որոշակի ընտրական շտաբների դիմաց ու ներսում և ընտրությունների օրը ձայների գնման դեպքերի մասին ոստիկանությանը տրված հաղորդումները մատնանշում են, որ նման հայտարարությունները որոշակի առումով կարող էին հիմնավորված լինել»²: Այս կապակցությամբ վերը նշված գեկույցում, որպես առաջնային հանձնարարական, մասնավորապես սահմանված է, որ ձայների գնման դեպքերի առնչությամբ կարող է քննարկվել ՀՀ քրեական օրենսգրքում փոփո-

¹ Տե՛ս ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ընտրությունների դիտորդական առաքելության վերջնական գեկույցը ՀՀ Ազգային ժողովի 12.05.2007 թվականի ընտրությունների վերաբերյալ (Վարչակա, 10.09.2007), բաժին 7, կետ «գ» («Ընտրակաշառքներ»):

² Տե՛ս ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ընտրությունների դիտորդական առաքելության վերջնական գեկույցը ՀՀ Ազգային ժողովի 06.05.2012 թվականի ընտրությունների վերաբերյալ (Վարչակա, 26.06.2012), VIII. Նախընտրական քարոզչություն և քարոզչության ֆինանսավորում:

խություն կատարելու հնարավորության հարցը՝ անձեռնմխելիություն սահմանելով ձայների գնման հանցագործությունների վերաբերյալ հաղորդումներ ներկայացնող անձանց համար, և անհրաժեշտ է քաղաքացիներին խրախուսել ձայների գնման դեպքերի վերաբերյալ հաղորդումներ և ապացույցներ ներկայացնելու համար¹:

Սույն զեկույցում նշված է նաև, որ ԲՀԿ առաջնորդի «Մուլտիգրուպ» ընկերությունը քարոզարշավի ընթացքում 500 տրակտոր է բաժանել: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ երկարաժամկետ դիտորդները նկատել են տրակտորներ 7 մարզերում, որոնց վրա հաճախ փակցված են եղել ԲՀԿ քարոզչական նյութերը, կամ դրանք կանգնեցված են եղել ԲՀԿ մեծ պաստառի կողքին: Տրակտորները նաև ցուցադրվել են հեռուստացույցով՝ ԲՀԿ քաղաքական գովազդում: Սույն հարցի վերաբերյալ բողոքը լուծելիս կենտրոնական ընտրական հանձնաժողովն օրենքի խախտում չի արձանագրել՝ իր որոշումը հիմնավորելով ԲՀԿ-ի բացատրությամբ, որ ծրագիրը եղել է գործարար բնույթի և քարոզչության հետ կապ չի ունեցել: Իսկ Կապանում ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ երկարաժամկետ դիտորդները նկատել են մի ցուցանակ (վերանորոգվող ճանապարհի երկայնքով), որի վրա նշված է եղել, որ թիվ 38 ընտրատարածքի ՀՀԿ թեկնածուն, որը Քաջարանի լեռնահանքային գործարանի տնօրենի որդին է, ներգրավված է վերանորոգման ծրագրում, որը ֆինանսավորվում է գործարանի կողմից: Թիվ 38 ԸԸՀ-ն մերժել է սույն հարցով ՀԱԿ թեկնածուի ներկայացրած բողոքը՝ որպես հիմնավորում նշելով, որ այդ գործունեությունն անօրինական չէ, իսկ ԿԸՀ-ն հրաժարվել է քննելուց նշված ԸԸՀ-ի որոշման դեմ բերված բողոքը²:

Քննարկվող հիմնախնդրի համատեքստում հարկ է անդրադառնալ արտասահմանյան մի շարք պետություններում գործող իրավակարգավորումներին: Այսպես՝ Բելառուսի Հանրապետության Նախագահի, պատգամավորության թեկնածուները, նրանց վստահված անձինք, թեկնածուների ընտրության օգտին քարո-

¹ Տե՛ս նույն տեղում, XIV Ա., կետ 2:

² Տե՛ս նույն տեղում, VIII. Նախընտրական քարոզչություն և քարոզչության ֆինանսավորում:

զող անձինք և կազմակերպություններն իրավունք չունեն քաղաքացիներին բաժանելու դրամական միջոցներ, նվերներ և այլ նյութական արժեքներ, իրականացնելու ապրանքների՝ արտոնյալ պայմաններով վաճառք, անվճար մատուցելու ցանկացած ծառայություն և տրամադրելու ապրանքներ, բացառությամբ ընտրական քարոզչության համար հատուկ պատրաստված քարոզչական տպագիր նյութերի: Նախընտրական քարոզչություն իրականացնելիս արգելվում է քաղաքացիներին դրամական միջոցներ, նյութական արժեքներ փոխանցելու խոստումների միջոցով նրանց նկատմամբ ներգործությունը: Սույն պահանջների խախտման դեպքում համապատասխան հանձնաժողովները նախընտրական քարոզչության իրականացման իրավունքի չարաշահման կանխմանն ուղղված միջոցներ են ձեռնարկում, իսկ Բելառուսի Հանրապետության Նախագահի ընտրությունների հարցով հանձնաժողովները, ընտրական հանձնաժողովներն իրավասու են նաև վերացնելու թեկնածուի գրանցման վերաբերյալ որոշումը¹:

Ղազախստանի Հանրապետությունում ոչ պատշաճ նախընտրական քարոզչություն է համարվում նախընտրական քարոզչության իրականացումը, որն ուղեկցվում է ընտրողներին անվճար կամ արտոնյալ պայմաններով ապրանքների, ծառայությունների, արժեթղթերի տրամադրմամբ, ինչպես նաև վիճակախաղերի, բարեգործական միջոցառումների անցկացմամբ, դրամական միջոցների վճարմամբ կամ դրանց տրամադրման խոստումով, բացառությամբ ընտրական քարոզչության համար հատուկ պատրաստված տպագիր նյութերի, ինչպես նաև կրծքանշանների, դրոշների, դրոշակների, անվճար հիմունքներով բաժանման դեպքերի: Այստեղ ոչ պատշաճ նախընտրական քարոզչության իրականացումն արգելվում է: Հատկանշական է, որ **ընտրությունների հայտարարման (նշանակման) պահից** (ընդգծումը մերն է), թեկնածուներին, կուսակցական ցուցակներ առաջադրած քաղաքական կուսակցություններին, ինչպես նաև

¹ Տե՛ս “Избирательный кодекс Республики Беларусь” от 11.02.2000 N 370–3, հոդ. 47, մասեր 2, 3:

դրանց անունից կամ դրանց օգտին հանդես եկող ցանկացած ֆիզիկական և իրավաբանական անձի արգելվում է բարեգործական միջոցառումների անցկացումը, բացառությամբ զվարճալի և սպորտային միջոցառումների կազմակերպման դեպքերի: Թեկնածուի, կուսակցական ցուցակ առաջադրած քաղաքական կուսակցության, ինչպես նաև դրանց վստահված անձանց կողմից վերը նշված կանոնների խախտումը հանգեցնում է թեկնածուի, կուսակցական ցուցակի գրանցման մասին որոշման վերացմանը¹:

Թուրքմենստանում թեկնածուներին, նրանց մերձավոր ազգականներին, թեկնածուների վստահված անձանց **ընտրությունների նշանակման պահից** (ընդգծումը մերն է) արգելվում է կաշառել ընտրողներին, նրանց դրամական միջոցներ վճարել, հանձնել նվերներ և այլ նյութական արժեքներ, արտոնյալ պայմաններով ապրանքներ վաճառել, անվճար տարածել ցանկացած ապրանք, բացառությամբ քարոզչական տպագիր նյութերի, ինչպես նաև անհատույց կամ արտոնյալ պայմաններով ծառայություններ մատուցել: Թեկնածուները, նրանց մերձավոր ազգականները, թեկնածուների վստահված անձինք **ընտրությունների նշանակման պահից մինչև ընտրությունների արդյունքների հրապարակումը** (ընդգծումը մերն է) իրավունք չունեն զբաղվելու բարեգործական գործունեությամբ: Նշված պահանջների խախտման դեպքում թեկնածուին գրանցած ընտրական հանձնաժողովն իրավասու է նախազգուշացնելու նրան, իսկ թեկնածուի կողմից սույն պահանջների ոչ մեկանգամյա խախտումների դեպքում՝ չեղյալ ձանաչել թեկնածուի գրանցումը²:

Ռուսաստանի Դաշնությունում թեկնածուներին, ընտրական միավորումներին, դրանց վստահված անձանց և լիազոր ներկայացուցիչներին, ինչպես նաև այլ անձանց և կազմակերպություններին նախընտրական քարոզչություն իրականացնե-

¹ Стн Конституционный закон Республики Казахстан “О выборах в Республике Казахстан” от 28.09.1995 N 2464, հոդ. 27, կետ 9:

² Стн Закон Туркменистана от 4 мая 2013 года “Об утверждении и введении в действие Избирательного кодекса Туркменистана” (ովի մեջ է 01.07.2013 թ-ից), հոդ. 68, մասեր 3, 4, 7:

լիս արգելվում է կաշառել ընտրողներին, նրանց դրամական միջոցներ, նվերներ և այլ նյութական արժեքներ հանձնել, բացառությամբ կազմակերպչական աշխատանքի կատարման դեպքերի (ընտրողների ստորագրությունների հավաքման, քարոզչական աշխատանքի համար), պարգևատրել ընտրողներին, նշված կազմակերպչական աշխատանքը կատարողներին՝ կախված քվեարկության արդյունքներից, կամ խոստանալ այդպիսի պարգևատրում, արտոնյալ պայմաններով ապրանքներ վաճառել, անվճար հիմունքներով տարածել ցանկացած ապրանք, բացառությամբ ընտրական քարոզչության համար հատուկ պատրաստված տպագիր նյութերի և կրծքանշանների, անհատույց կամ արտոնյալ պայմաններով ծառայություններ մատուցել, ինչպես նաև ներգործել ընտրողների վրա՝ նրանց դրամական միջոցներ, արժեթղթեր և այլ նյութական բարիքներ փոխանցելու (այդ թվում՝ քվեարկության արդյունքներով), ծառայություններ մատուցելու խոստումների միջոցով այլ կերպ, քան պետական իշխանության, տեղական ինքնակառավարման մարմինների՝ օրենսդրությանը համապատասխան ընդունվող որոշումների հիման վրա: Ընտրական քարոզչության ժամանակահատվածում չի թույլատրվում վիճակախաղերի և ռիսկի վրա հիմնված այլ խաղերի անցկացումը, որոնցում մրցանակներ շահելը կամ դրանց խաղարկությանը մասնակցելը կախված է քվեարկության, ընտրությունների արդյունքներից, կամ որոնք այլ կերպ կապված են ընտրությունների հետ¹: Այստեղ թեկնածուները, թեկնածուներ, դրանց ցուցակներ առաջադրած ընտրական միավորումները, դրանց վստահված անձինք և լիազոր ներկայացուցիչները, ինչպես նաև ընտրական քարոզչության մեկնարկից հետո գրանցված կազմակերպությունները, որոնց հիմնադիրներ, սեփականատերեր, տիրապետողներ և (կամ) կառավարման մարմինների անդամներ են վերոնշյալ անձինք և (կամ) կազմակերպությունները, **ընտրական քարոզչության ժամանակահատվածում** (ընդգծումը մերն է) իրավունք չունեն

¹ Стн Федеральный закон от 12.06.2002 N 67-ФЗ “Об основных гарантиях избирательных прав и права на участие в референдуме граждан Российской Федерации” (ред. от 07.05.2013), հոդ. 56, կետեր 2, 3:

գրադվելու բարեգործական գործունեությամբ: Այլ ֆիզիկական և իրավաբանական անձինք ընտրական քարոզչության ժամանակահատվածում իրավունք չունեն թեկնածուների, ընտրական միավորումների, նրանց վստահված անձանց և լիազոր ներկայացուցիչների խնդրանքով, հանձնարարությամբ կամ նրանց անունից գրադվելու բարեգործական գործունեությամբ, ինչպես նաև բարեգործական գործունեության հետ միաժամանակ իրականացնելու նախընտրական քարոզչություն: Թեկնածուներին, ընտրական միավորումներին, նրանց վստահված անձանց և լիազոր ներկայացուցիչներին արգելվում է ընտրողներին նյութական, ֆինանսական օգնություն ցուցաբերելու կամ ծառայություններ մատուցելու վերաբերյալ առաջարկություններով դիմել այլ ֆիզիկական և իրավաբանական անձանց¹:

Նմանատիպ արգելքներ են սահմանված նաև Ղրղզստանի Հանրապետության օրենսդրությամբ, որոնք գործում են՝ սկսած **ընտրությունների նշանակման պահից** (ընդգծումը մերն է): Ըստ այդմ՝ կաշառել չի համարվում թեկնածուի, քաղաքական կուսակցության և կատարողի միջև գրավոր ձևակերպում ստացած աշխատանքային հարաբերությունների շրջանակներում կատարված աշխատանքի վարձատրությունը, որը վճարվում է թեկնածուի, քաղաքական կուսակցության նախընտրական հիմնադրամի միջոցներից: Այստեղ թեկնածուները, նրանց մերձավոր ազգականները, ամուսինը, թեկնածուների և քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչները **ընտրությունների նշանակման պահից մինչև դրանց արդյունքների հրապարակումը** (ընդգծումը մերն է) իրավունք չունեն գրադվելու բարեգործական գործունեությամբ: Թեկնածուի, քաղաքական կուսակցության կողմից վերը նշված պահանջների խախտման դեպքում համապատասխան ընտրական հանձնաժողովն իրավասու է խախտման մասին գրավոր նախազգուշացնելու նրանց: Վերջիններիս կողմից հիշյալ պահանջների ոչ մեկանգամյա խախտումների դեպքում կենտրոնական ընտրական հանձնաժողովը համապատասխան ընտրական հանձնաժողովի միջ-

¹ Տե՛ս նույն տեղում, հոդ. 56, կետ 5:

նորոգությամբ կամ սեփական նախաձեռնությամբ իրավասու է վերացնելու թեկնածուի, թեկնածուների ցուցակի գրանցման մասին որոշումները¹:

2012 թվականի ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների վերաբերյալ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 27.06.2012 թվականի արտահերթ զեկույցում անդրադարձ է կատարված նաև ընտրակաշառքի դեպքերին՝ որպես էական ընտրախախտումների: Զեկույցում մասնավորապես նշված է, որ նախընտրական քարոզչության և ընտրության օրվա ընթացքում Պաշտպանի ստացած 16 ահազանգերը վերաբերել են հանրապետության տարբեր վայրերից նախընտրական քարոզչություն իրականացնող որոշ կուսակցությունների կողմից բնակչությանը տարբեր տեսակի ընտրակաշառք բաժանելու դեպքերին, ներառյալ գումարի և բնամթերքի բաժանումը, կոմունալ վարձերի վճարման առաջարկությունը և այլն:

Նախընտրական փուլում ընտրակաշառք բաժանելու կապակցությամբ Ոստիկանությունում գրանցվել է 28 դեպք, որոնց վերաբերյալ, չնայած Ոստիկանության կողմից ձեռնարկված գործողություններին, այնուամենայնիվ, կայացվել է որոշում քրեական գործի հարուցումը մերժելու մասին՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով: Այդ դեպքերից 10-ը վերաբերել են Հայաստանի Հանրապետական կուսակցության, 4-ը՝ «Օրինաց Երկիր» կուսակցության, 3-ը՝ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության կողմից ընտրակաշառք բաժանելուն, իսկ մնացած դեպքերը կապված են եղել մեծամասնական ընտրակարգով առաջադրված պատգամավորության թեկնածուների կողմից ընտրակաշառք բաժանելու հետ:

Քվեարկության օրը ընտրակաշառք բաժանելու վերաբերյալ Ոստիկանություն ստացված 74 ահազանգերից 67 դեպքերով Ոստիկանությունից հայտնել են, որ ձեռնարկվել են օպերատիվ միջոցառումներ, ինչի արդյունքում այդ դեպքերին ենթադրա-

¹ Մանրամասն տե՛ս Конституционный закон Кыргызской Республики “О выборах Президента Кыргызской Республики и депутатов Жогору Кенеша Кыргызской Республики” от 2 июля 2011 года N 68 (в ред. конституционного Закона КР от 25 ноября 2011 года N 221), հոդ. 28, մասեր 3, 4, 9:

բար առնչություն ունեցող անձանցից վերցվել են բացատրություններ, որոնցով, սակայն, հնարավոր չի եղել պարզել հանցադեպի առկայությունը և (կամ) իրավախախտումը կատարած անձանց ինքնությունը, հետևաբար կայացվել են քրեական գործերի հարուցումը մերժելու մասին որոշումներ, և այդ դեպքերի վերաբերյալ ստացված պատասխանների ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ Դատախազությունը այդ որոշումներից որևէ մեկը չի վերացրել: Ընտրակաշառք բաժանելու դեպքերի վերաբերյալ գրություն է ուղարկվել նաև ՀՀ գլխավոր դատախազություն՝ տեղեկություններ ստանալու համար, սակայն պատասխան գրությունը ստացվել է ՀՀ հատուկ քննչական ծառայությունից: Ստացված պատասխանի համաձայն՝ մայիսի 6-ին ընտրախախտումների վերաբերյալ ահազանգերի և հաղորդումների հիման վրա հարուցվել են 8 գործեր՝ կապված ընտրակաշառք բաժանելու դեպքերի հետ:

Զեկույցում նաև նշված է, որ ստացվել են շուրջ 24 ահազանգեր՝ քաղաքացիներին տեղամասային կենտրոններ անվճար տեղափոխելու և ընտրողին թեկնածուներից մեկի օգտին քվեարկել հարկադրելու վերաբերյալ¹:

Խնդրո առարկայի հետ կապված՝ ՀՀ սահմանադրական դատարանի՝ 10.06.2007 թվականի ՍԴՈ-703 որոշման մեջ մասնավորապես արձանագրված է, որ պետությունը պարտավոր է այնպիսի երաշխիքներ ապահովել, որպեսզի **բացառվի քաղաքական ու բարեգործական գործունեության միատեղումը, ինչպես նաև ընտրական գործընթացի բոլոր փուլերում կանխվի քաղաքական ու գործարար շահերի միահյուսման հնարավորությունը**² (ընդգծումը մերն է):

ՀՀ սահմանադրական դատարանի՝ 31.05.2012 թվականի ՍԴՈ-1028 որոշման մեջ մասնավորապես նշված է. «Սահմանադրական դատարանն իր նախկին որոշումներում բազմիցս ան-

¹ Մանրամասն տե՛ս 2012 թվականի ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների վերաբերյալ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 27.06.2012 թվականի արտահերթ զեկույցը (էական ընտրախախտումներ, ընտրակաշառքի դեպքեր):

² Տե՛ս նաև ՀՀ սահմանադրական դատարանի 08.03.2008 թվականի ՍԴՈ-736 և 31.05.2012 թվականի ՍԴՈ-1028 որոշումները:

դրադարձել է նաև նախընտրական քարոզչության ու բարեգործության հստակ սահմանազատմանը և 2011 թվականին ընդունված ՀՀ ընտրական օրենսգրքի, մասնավորապես 18-րդ և 22-րդ հոդվածներով ամրագրված պահանջների հստակ կատարման համար անհրաժեշտ իրավական երաշխիքների ապահովմանը: Այս հարցում բացթողումներն ընտրախախտումների հիմնական պատճառն են դառնում:

Սահմանադրական դատարանի հիշյալ իրավական դիրքորոշումները զգալի չափով հաշվի առնվեցին ՀՀ ընտրական օրենսգրքի բարեփոխումների ընթացքում: Ընտրական նոր օրենսգրքի նախագծի միջազգային փորձագիտական գնահատականները, ինչպես նաև 2012 թվականի մայիսի 6-ի ՀՀ Ազգային ժողովի ընտրություններում միջազգային դիտորդական առաքելությունների մոտեցումները վկայում են, որ ընտրական գործընթացի իրավակարգավորման առաջընթացն ակնհայտ է: Սակայն Սահմանադրական դատարանը գտնում է, որ առանցքային խնդիր են շարունակում մնալ ընտրական գործընթացում քաղաքական ու գործարար շահերի միահյուսման կանխումը, ինչպես նաև քաղաքական ու բարեգործական գործունեության միատեղման բացառումը: Սահմանադրական դատարանը բազմիցս շեշտել է, որ այս խնդրի լուծումն օրգանապես շաղկապված է ՀՀ Սահմանադրության 65-րդ հոդվածի պահանջների հստակ երաշխավորման հետ: Ընտրական օրենսգրքի բարեփոխումները, համակարգային առումով ներդաշնակված նաև օրենսդրական այլ լուծումների հետ, նշված հիմնախնդիրը լիարժեք չեն հաղթահարել»:

Ինչպես վերը նշվեց, ՀՀ ընտրական օրենսգիրքը թեկնածուներին, կուսակցություններին, դրանց դաշինքներին արգելում է անձամբ կամ նրանց անունից կամ որևէ այլ եղանակով ընտրողներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով տալ (խոստանալ) դրամ, սննդամթերք, արժեթղթեր, ապրանքներ կամ մատուցել (խոստանալ) ծառայություններ: Սակայն խնդիրը այն է, որ *նշված արգելքը գործում է միայն նախընտրական քարոզչության ժամանակ, ինչպես նաև քվեարկության նախորդ և քվեարկության օրը*: Փաստորեն, նախքան նախընտրական քարոզ-

չության պաշտոնական մեկնարկը այսպիսի գործողությունների կատարման օրենսդրական արգելք սահմանված չէ, և թեկնածուները, կուսակցությունները, դրանց դաշինքները ազատ են ընտրողների ձայները «գնելու» ձևերի և միջոցների ընտրության հարցում, ինչին ուղղված նրանց գործունեությունը որոշ ԶԼՄ-ներով հաճախ լուսաբանվում է բարեգործության լույսի ներքո:

Ի դեպ՝ նախընտրական քարոզչության իրականացման համար օրենքով սահմանված ժամանակահատվածում բարեգործության անվան տակ կամ որևէ այլ եղանակով վերը նշված գործողություններից մեկի (մի քանիսի) իրականացումը, եթե դրա (դրանց) համար քրեական պատասխանատվություն նախատեսված չէ, առաջացնում է վարչական տուգանքի նշանակում¹:

ՀՀ ընտրական օրենսգիրքն արգելում է նաև այն բարեգործական կազմակերպություններին, որոնց անվանումները կարող են նմանեցվել (ասոցացվել) կուսակցությունների, դրանց դաշինքների անվանումներին, թեկնածուների անուններին, բարեգործություն իրականացնել այն համայնքներում, որտեղ անցկացվում են ընտրություններ, որոնց մասնակցում են այդ թեկնածուները, կուսակցությունները, դրանց դաշինքները կամ նրանց առաջադրած թեկնածուները: Վերջին դեպքում ևս *սահմանված արգելքը վերաբերում է միայն նախընտրական քարոզչության ժամանակահատվածին*²: Այս կապակցությամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով պատասխանատվություն է նախատեսված բարեգործության հետ միաժամանակ նախընտրական քարոզչություն իրականացնելու համար (հոդ. 40¹⁰):

Ելնելով վերոգրյալից՝ նպատակահարմար ենք համարում ընդլայնել ՀՀ ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված արգելքների գործողության ժամանակահատ-

¹ Տե՛ս Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 4010 հոդվածը:

² Հարկ է նշել, որ նախընտրական քարոզչության անգամ պաշտոնական մեկնարկից հետո արձանագրվել են, օրինակ, հասարակական տրանսպորտի առանձին միջոցներով անվճար հիմունքներով ուղևորափոխադրումների դեպքեր՝ բարեգործության լույսի ներքո:

վածք. մասնավորապես՝ *դրանք նախատեսել՝ սկսած թեկնածուների, ընտրական ցուցակների գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը համապատասխան ընտրական հանձնաժողով ներկայացնելու՝ օրենքով սահմանված վերջնաժամկետի հաջորդ օրվանից*, ինչը կնպաստի նշված սուբյեկտների՝ ընտրություններին մասնակցության հնարավորինս հավասար պայմանների ստեղծմանը, նրանց միջև առողջ մրցակցության բարենպաստ միջավայրի ձևավորմանը և ընտրությունների ժամանակահատվածում ընտրողների կարծիքների ձևավորման ու փոփոխման վրա ներգործող նյութական ռեսուրսների օգտագործման հնարավորության հնարավորինս սահմանափակմանը:

7. ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ. ՀԻՇՅԱԼ ՆՊԱՏԱԿԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

* * *

Ընտրությունները ժողովրդավարական գործընթացի առանցքն են, որոնց հիմնական նպատակը իշխանությանը լեգիտիմություն հաղորդելու հանգամանքն է: Այդ նպատակը կարող է իրացված համարվել սոսկ այն դեպքում, երբ ընտրական ողջ գործընթացը կազմակերպվում է իրավական համապատասխան սկզբունքների համատեքստում՝ հանգեցնելով ընտրությունների, հետևաբար նաև դրանց արդյունքում ձևավորվող մարմինների ու պաշտոնատար անձանց նկատմամբ հասարակական վստահության աճի: Սակայն որքան էլ ամբողջական լինեն քայլերը՝ ընտրական գործընթացների լեգիտիմությունն ապահովելու ուղղությամբ, ցանկացած ընտրություն, լինելով քաղաքական բարդ գործընթաց, անխուսափելիորեն ուղեկցվում է ընտրական իրավունքի իրական կամ ենթադրյալ խախտումներով՝ պահանջելով հիշյալ իրավունքների պաշտպանության ամբողջական ու լիարժեք համակարգի առկայություն: Ակնհայտ է, որ նմանատիպ համակարգի բացակայությունը, նույնիսկ ընտրական այլ գործընթացների համարժեք կազմակերպման դեպքում, անխուսափելիորեն հանգեցնում է ընտրությունների ու դրանց արդյունքում ձևավորվող մարմինների և պաշտոնատար անձանց նկատմամբ անվստահության: Հետևաբար ընտրական իրավունքների պաշտպանության լիարժեք ու արդյունավետ կառուցակարգերի առկայությունը որոշիչ դեր է կատարում քաղաքական համակարգի կայունությունն ապահովելու տեսանկյունից, որպիսի հանգամանքը հաշվի առնելով՝ ժամանակակից աշխարհում առանցքային նշանակություն է տրվում վերոնշյալ

համակարգի առկայությանն ու դրա կատարելագործմանն ուղղված իրավական մեխանիզմների երաշխավորմանը:

Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ ուսումնասիրության շրջանակներում հարկ ենք համարում անդրադառնալ Հայաստանի Հանրապետությունում ընտրական իրավունքի պաշտպանությանն առնչվող հիշյալ համակարգին ու դրա կատարելագործման հրամայականին՝ ընդգծելով, որ չնայած առկա տարատեսակ խնդիրներին՝ վերջին տարիներին ընտրական գործընթացի իրավակարգավորման առաջընթացը Հայաստանում ակնհայտ է¹:

Քննարկվող հարցերին վերաբերող հայաստանյան կարգավորումներն ուսումնասիրելիս կանդադառնանք նաև վերջիններիս առնչվող միջազգային-իրավական փաստաթղթերին ու դրանցում ամրագրված դիրքորոշումներին, ինչպես նաև այլ պետություններում գործող և այդ բնագավառին առնչվող իրավակարգավորումներին:

Այդ առումով հարկ է նկատի ունենալ, որ գոյություն չունի իրավական չափորոշիչներին ընտրական գործընթացների համապատասխանությունն ապահովելու որևէ միասնական ու համընդգրկուն բանաձև, ինչն էլ հանգեցնում է տարբեր պետություններում ընտրական իրավունքի պաշտպանության համակարգերի բազմազանության: Ցանկացած երկրում հիշյալ համակարգը ձևավորվում է պատմական ու սոցիալ-քաղաքական տարատեսակ հանգամանքների համատեքստում և արդյունք է այդ հասարակական միջավայրում գործող իրավական ավանդույթների: Հետևաբար ոչ բոլոր դեպքերում է, որ մի պետության փորձն այլ իրավական համակարգեր մեխանիկորեն ներմուծելը կարող է ընտրական իրավունքների պաշտպանության տե-

¹ ՀՀ սահմանադրական դատարանը նույնպես, հաշվի առնելով նոր ընտրական օրենսգրքի նախագծի միջազգային փորձագիտական գնահատականները, ինչպես նաև 2012 թ. մայիսի 6-ի ՀՀ Ազգային ժողովի ընտրություններում միջազգային դիտորդական առաքելությունների մոտեցումները, իր՝ 31 մայիսի 2012 թ. ՍԴԴ-1028 որոշմամբ դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ ընտրական գործընթացի իրավակարգավորման առաջընթացն ակնհայտ է (<http://concourt.am/armenian/decisions/common/2012/pdf/sdv-1028.pdf>):

սանկյունից արդյունավետ լինել: Այդուհանդերձ, հիշյալ փորձի վերլուծությունը հնարավորություն է տալիս բացահայտելու այն հիմնական ուղղությունները, որոնք կարող են նպաստել ընտրական իրավունքների պաշտպանությանն ուղղված իրավական մեխանիզմների կատարելագործմանը: Առավել ևս այն պայմաններում, երբ ժամանակակից աշխարհում գործող միջազգային հեղինակավոր կազմակերպությունների կողմից տարբեր պետությունների փորձի ընդհանրացման արդյունքում մշակվում են վերոնշյալ բնագավառի զարգացման հիմնական ուղղություններն ու քննարկվող հիմնախնդրի առավել արդյունավետ լուծումները: Հետևաբար Հայաստանի Հանրապետությունում ընտրական իրավունքի պաշտպանության համակարգն ու դրա կատարելագործման իրավական կառուցակարգերը կվերլուծենք միջազգային-իրավական համապատասխան չափորոշիչների համատեքստում:

7.1. ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՈՒ ԵՆԹԱԿԱՅԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵ-ԼԱԳՈՐԾՍԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ

Ընտրական իրավունքի պաշտպանությանն առնչվող կարևորագույն հարցերից մեկը, որը պարտադիր ուսումնասիրության առարկա է դառնում քննարկվող հիմնախնդրին առնչվող գրեթե բոլոր միջազգային փաստաթղթերի շրջանակներում, ընտրական հանձնաժողովների որոշումների, գործողությունների (անգործության) բողոքարկման միասնական ու ենթակայական համակարգի ստեղծումն ու այդ բնագավառում երկակի ընդդատության բացառումն է:

Հայաստանի Հանրապետությունում ընտրական հանձնաժողովների որոշումների, գործողությունների (անգործության) բողոքարկման կարգն ամրագրված է ՀՀ ընտրական օրենսգրքի 46-րդ հոդվածով: Այն մասնավորապես սահմանում է, որ «... 5. Տեղամասային ընտրական հանձնաժողովի որոշումները, գոր-

ծողությունները (անգործությունը), ընտրական տեղամասում քվեարկության արդյունքները կարող են բողոքարկվել ընտրատարածքային ընտրական հանձնաժողով:

6. Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները (անգործությունը) (բացառությամբ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի և համայնքի ղեկավարի ու ավագանու անդամների ընտրությունների արդյունքների վերաբերյալ որոշումների) կարող են բողոքարկվել կենտրոնական ընտրական հանձնաժողով: Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի ընտրությունների արդյունքների վերաբերյալ որոշումները կարող են բողոքարկվել Սահմանադրական դատարան: Համայնքի ղեկավարի ու ավագանու անդամների ընտրությունների արդյունքների վերաբերյալ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշումները կարող են բողոքարկվել վարչական դատարան:

7. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները (անգործությունը) (բացառությամբ համապետական ընտրությունների արդյունքների վերաբերյալ որոշումների) կարող են բողոքարկվել վարչական դատարան: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ համապետական ընտրությունների արդյունքների վերաբերյալ որոշումները կարող են բողոքարկվել Սահմանադրական դատարան: ... »:

Միննույն ժամանակ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածն ամրագրում է, որ ընտրական գործերով վարչական դատարան կարող են դիմել օրենսգրքի 3-րդ հոդվածում նշված անձինք, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված դեպքերում՝ համապատասխան ընտրական հանձնաժողովը: Իսկ օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ «Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ՝

1) խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները ...»:

Հաշվի առնելով ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հիշյալ կարգավորումները՝ 2013 թ. փետրվարի 18-ի Հայաստանի Հանրապետության Նախագահի ընտրությունների վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ Ընտրությունների դիտորդական առաքելության վերջնական գեկույցում դիրքորոշում է արտահայտվել այն մասին, որ ընդհանուր վարչական օրենքները հնարավորություն են տալիս բողոքատուներին ընտրելու և բողոքը անմիջապես Վարչական դատարան ներկայացնելու, ինչը վերադաս հանձնաժողովների հետ ընդդատության համընկնում է ստեղծում¹: Հարկ է նկատել, որ նմանատիպ դիրքորոշումներ են արտահայտվել մի շարք այլ պետություններում (օրինակ՝ Ղազախստանի², Ուկրաինայի³) ընտրությունների վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ Ընտրությունների դիտորդական առաքելության վերջնական գեկույցներում:

Տվյալ պարագայում հիշատակման է արժանի նաև քննարկվող հիմնախնդրի առնչությամբ Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) դիրքորոշումը, համաձայն որի՝ բողոքարկման ընթացակարգը և մասնավորապես տարբեր մարմինների լիազորություններն ու պարտականությունները պետք է հստակ կանոնակարգվեն օրենքով՝ դատաիրավական հակասություններից խուսափելու համար (դրական կամ բացասական): Ո՛չ բողոք ներկայացնողները և ո՛չ էլ իշխա-

¹ REPUBLIC OF ARMENIA PRESIDENTIAL ELECTION, 18 February 2013, OSCE/ODIHR Election Observation Mission Final Report, XI կետ, <http://www.osce.org/odihr/elections/101314>:

² REPUBLIC OF KAZAKHSTAN EARLY PARLIAMENTARY ELECTIONS, 15 January 2012, OSCE/ODIHR Election Observation Mission Final Report, XI կետ, <http://www.osce.org/odihr/elections/89401>:

³ UKRAINE PARLIAMENTARY ELECTIONS, 28 OCTOBER 2012, OSCE/ODIHR Election Observation Mission Final Report, XII կետ, A ենթակետ, <http://www.osce.org/odihr/98578>:

նությունները չպետք է հնարավորություն ունենան ընտրելու բողոքարկման մարմինը¹: Վենետիկի հանձնաժողովի այն դիրքորոշումը, որ բողոքարկման տարբեր մարմինների, մասնավորապես ընտրական հանձնաժողովների և դատարանների միջև ընտրություն կատարելու դիմողի հնարավորությունը կարող է հանգեցնել դիմողի կողմից իր համար հարմար որոշում կայացնելու ակնկալիք տվող մարմնին ընտրելու հանգամանքին, հետևաբար ընտրության այդ հնարավորությունը պետք է վերացվի, արձանագրվել է նաև տարբեր պետությունների (օրինակ՝ Ուկրաինայի², Ռուսաստանի Դաշնության³) ընտրական օրենսգրքերի նախագծերի վերաբերյալ եզրակացություններում:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ երկալի ընդդատության բացառումը բացառիկ կարևորություն ունի առաջին հերթին ընտրական իրավահարաբերությունների շրջանակներում հավասարության սկզբունքն ապահովելու և կայացվող որոշումների միասնականությունը երաշխավորելու տեսանկյունից: Հակառակ իրավիճակը կարող է լրջորեն վտանգել ընտրական բնականոն ամբողջ գործընթացը՝ կասկածի տակ դնելով ընդունվող որոշումների հիմնավորվածությունն ու ընտրական իրավահարաբերությունների սուբյեկտների նկատմամբ միասնական չափանիշների կիրառումը: Հետևաբար ընտրական իրավունքի պաշտպանության միասնական ու ենթակայական համակարգի արմատավորումն առանցքային նշանակություն ունի ընտրական բնականոն գործընթացի երաշխավորման և

¹ CDL-AD (2002) 23 rev, “Code of Good Practice in Electoral Matters: Guidelines and Explanatory Report”, Adopted by the Venice Commission at its 52nd session (Venice, 18–19 October 2002), 3-րդ բաժնի 3.3 կետի c ենթակետ:

² CDL-AD(2013)016, Joint Opinion “On the Draft Amendments to the Laws on Election of People’s Deputies and on the Central Election Commission and on the Draft Law on Repeat Elections of Ukraine”, Adopted by the Council for Democratic Elections at its 45th meeting (Venice, 13 June 2013) and by the Venice Commission at its 95th Plenary Session (Venice, 14–15 June 2013), կետ 98:

³ CDL-AD(2012)002, Opinion “On the Federal Law on the Election of the Deputies of the State Duma of the Russian Federation”, Adopted by the Council for Democratic Elections at its 40th meeting (Venice, 15 March 2012) and by the Venice Commission at its 90th Plenary Session (Venice, 16–17 March 2012), կետ 114:

ընտրությունների նկատմամբ քաղաքացիների վստահության աճի ապահովման համար:

Անդրադառնալով քննարկվող հիմնախնդրի առնչությամբ Հայաստանի Հանրապետության օրինակին՝ նշենք, որ ՀՀ օրենսդրությամբ ամրագրված կարգավորումներին ընդհանուր առմամբ հաջողվել է ապահովել ընտրական հանձնաժողովների որոշումների, գործողությունների (անգործության) բողոքարկման միասնական ու ենթակայական համակարգի ստեղծումն ու այդ բնագավառում երկակի ընդդատության բացառումը: Միևնույն ժամանակ, կարծում ենք, որ ՀՀ տարբեր օրենսդրական ակտերով նախատեսված կարգավորումները (մասնավորապես, օրինակ, վարչական դատավարության օրենսգրքի) կարող են հանգեցնել վերոնշյալ դրույթների ոչ միանշանակ մեկնաբանությունների և այնպիսի տպավորություն ստեղծել, որ ՀՀ օրենսդրությունը տալիս է բողոքը վերադաս հանձնաժողով կամ դատարան ներկայացնելու միջև ընտրություն կատարելու հնարավորություն: Հարկ է նկատել, որ այդ խնդրին օրենսդրական կարգավորումների մակարդակով փորձ է արվել լուծում գտնել, օրինակ՝ Մոլդովայի Հանրապետությունում, որտեղ ընտրական օրենսգրքի 65-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ատյան դիմելուն պեսք է նախորդի բողոքի ներկայացումը այն ընտրական մարմնի վերադաս մարմնին, որի ակտը բողոքարկվում է՝ բացառությամբ ընտրությունների օրը ընտրական հանձնաժողով ներկայացվող՝ ընտրական իրավունքի իրացմանը կամ ընտրական գործընթացի կառավարմանը վերաբերող բողոքների: Կարծում ենք, որ քննարկվող հիմնախնդրին առնչվող ՀՀ օրենսդրական կարգավորումների միանշանակ ընկալումն ու մեկնաբանությունն ապահովելու տեսանկյունից նպատակահարմար է ՀՀ ընտրական օրենսգրքում նույնպես դրույթ ամրագրել այն մասին, որ քննարկվող հարցերով դատարան դիմելուց առաջ անհրաժեշտ է դիմում ներկայացնել վերադաս ընտրական հանձնաժողով (բնականաբար, բացառությամբ այն գործերի, որոնցով նախատեսված է անմիջականորեն դատարան դիմելու հնարավորություն, օրինակ՝ Ազգային ժողովի՝ մեծամասնական ընտրակարգով պատգամավորի ընտրությունների արդյունքների, համայնքի ղեկավարի ու

ավագանու անդամների ընտրությունների արդյունքների վերաբերյալ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշումները, որոնք բողոքարկվում են համապատասխանաբար Սահմանադրական դատարան և վարչական դատարան, կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ համապետական ընտրությունների արդյունքների վերաբերյալ որոշումները, որոնք բողոքարկվում են Սահմանադրական դատարան):

7.2. ՏԵՂԱԿԱՆ ԴԻՏՈՐՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ) ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԱՌՆՉՎՈՂ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

ՀՀ ընտրական օրենսգրքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները (անգործությունը) կարող է բողոքարկել՝

1. յուրաքանչյուր ոք, եթե գտնում է, որ խախտվել կամ կարող է խախտվել իր սուբյեկտիվ ընտրական իրավունքը,
2. վստահված անձը, եթե գտնում է, որ խախտվել են վստահված անձի կամ իր վստահորդի՝ սույն օրենսգրքով սահմանված իրավունքները,
3. դիտորդը, եթե գտնում է, որ խախտվել են դիտորդի՝ սույն օրենսգրքով սահմանված իրավունքները,
4. հանձնաժողովի անդամը, եթե գտնում է, որ ստորադաս հանձնաժողովը կամ հանձնաժողովը, որի անդամն է ինքը, խախտել է իր կամ այլ անձանց՝ սույն օրենսգրքով սահմանված որևէ իրավունք»:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ ընտրական օրենսգրքի ներկայացված կարգավորումը սահմանափակում է քննարկվող հարցերով բողոք ներկայացնելու իրավունքը՝ այն տրամադրելով միայն նրանց, ում անձնական ընտրական իրավունքները վտանգված են: Մինչդեռ հարկ է նկատի ունենալ,

որ ընտրական իրավունքների՝ որպես անձի սահմանադրական կարգավիճակը ձևավորող առանցքային տարրերից մեկի կարևորությունն ընդգծվում է ոչ միայն զուտ որոշակի սուբյեկտիվ, անձնական իրավունքների իրացման, այլև ընդհանուր առմամբ պետական կառավարմանը և տեղական ինքնակառավարմանը մասնակցելու հնարավորության ապահովման տեսանկյունից: Հետևաբար ընտրական իրավունքի պաշտպանությունը նույնպես անհրաժեշտ է ընկալել ոչ միայն որոշակի սուբյեկտիվ, անձնական իրավունքների պաշտպանության համատեքստում, այլև հիշյալ ինստիտուտն անհրաժեշտ է մեկնաբանել ու կատարելագործել՝ նկատի ունենալով վերջինիս առաքելությանն առնչվող՝ վերը շարադրված բոլոր հանգամանքները:

Այդ առումով կարծում ենք, որ նպատակահարմար չէ ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները (անգործությունը) բողոքարկելու՝ քաղաքացիների և տեղական դիտորդների հնարավորությունը սահմանափակել որոշակի սուբյեկտիվ իրավունքների խախտման կամ դրա վտանգի հանգամանքով, և արդյունավետ ենք համարում ՀՀ ընտրական օրենսգրքով նախատեսված հիշյալ սահմանափակման վերացումը: Այդպիսի դիրքորոշում է արտահայտվել նաև 2013 թ. փետրվարի 18-ի Հայաստանի Հանրապետության Նախագահի ընտրությունների վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ Ընտրությունների դիտորդական առաքելության վերջնական զեկույցում¹:

Հարկ է նկատել, որ միջազգային պրակտիկայում նույնպես տարածված են նմանատիպ սահմանափակում չնախատեսող օրենսդրական կարգավորումները: Այսպես՝ «Ղազախստանի Հանրապետությունում ընտրությունների մասին» սահմանադրական օրենքի 20–1–ին հոդվածի 2–րդ մասի 6–րդ կետի համաձայն՝ Ղազախստանի Հանրապետության քաղաքական կուսակցությունների, հանրային միավորումների, շահույթ չհետապնդող կազմակերպությունների դիտորդներն իրավունք ունեն բողոքարկելու համապատասխան ընտրական հանձնաժողովի

¹ REPUBLIC OF ARMENIA PRESIDENTIAL ELECTION, 18 February 2013, OSCE/ODIHR Election Observation Mission Final Report, XI կետ, <http://www.osce.org/odihr/elections/101314>:

և/կամ նրա անդամների որոշումները, գործողությունները (անգործությունը) վերադաս ընտրական հանձնաժողով կամ դատարան¹: «Լիտվայի Հանրապետության Սեյմի ընտրությունների մասին» օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան նույնպես մինչև քվեարկության ավարտն ընդունված ընտրական հանձնաժողովի որոշումները կամ հանձնաժողովի այլ գործողություններ կարող են բողոքարկել Սեյմի անդամի թեկնածու առաջադրած կուսակցությունը, Սեյմի ընտրություններին մասնակցող անձը, ընտրություններում նրանց ներկայացուցիչը, ընտրությունների դիտորդը²: Նույն սուբյեկտները կարող են բողոքարկել տեղամասային ընտրական հանձնաժողովների՝ քվեարկության արդյունքների ամփոփման վերաբերյալ որոշումները ընտրատարածքային ընտրական հանձնաժողով³: Քննարկվող հիմնախնդրի առնչությամբ հիշատակման է արժանի նաև Վրաստանի Հանրապետության օրինակը: Մասնավորապես Վրաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 78-րդ հոդվածի 24-րդ մասի համաձայն՝ կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ ընտրությունների արդյունքների վերաբերյալ ամփոփիչ արձանագրության առնչությամբ դատարան դիմելու հնարավորություն ունեն նաև դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունները⁴: Վերջիններս նմանատիպ հնարավորությամբ են օժտված նաև ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի ամփոփիչ արձանագրության վերաբերյալ կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշման առնչությամբ դատարան դիմելու համատեքստում⁵:

Հետաքրքիր է նաև քննարկվող հիմնահարցի առնչությամբ Ռուսաստանի Դաշնությունում որդեգրված մոտեցումը: ՌԴ

¹ http://election.kz/docs/zakon_o_vaborah_ang.pdf

² http://www3.lrs.lt/pls/inter3/dokpaieska.showdoc_l?p_id=430477

³ «Լիտվայի Հանրապետության Սեյմի ընտրությունների մասին» օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մաս:

⁴ http://transparency.ge/sites/default/files/August%202012,%20Election_Code_of_Georgia_EN_-_codified.pdf

⁵ Վրաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 78-րդ հոդվածի 23-րդ մաս:

դաշնային օրենսդրությունն ինքնին դիտորդների մասով չի նախատեսում նմանատիպ սահմանափակում: Այսպես՝ «ՌԴ քաղաքացիների ընտրական իրավունքների և հանրաքվեի մասնակցության հիմնական երաշխիքների մասին» ՌԴ դաշնային օրենքի 30-րդ հոդվածի 9-րդ մասի *գ* կետի համաձայն՝ դիտորդն իրավունք ունի հիշյալ դաշնային օրենքի 75-րդ հոդվածով սահմանված կարգով բողոքարկելու հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) վերադաս հանձնաժողով, ՌԴ սուբյեկտի ընտրական հանձնաժողով, ՌԴ կենտրոնական ընտրական հանձնաժողով կամ դատարան¹, իսկ «ՌԴ Դաշնային ժողովի Պետական դումայի պատգամավորների ընտրությունների մասին» ՌԴ դաշնային օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասի 10-րդ կետին համապատասխան՝ դիտորդն իրավունք ունի անմիջականորեն վերադաս ընտրական հանձնաժողով կամ դատարան բողոքարկելու այն հանձնաժողովի որոշումները և գործողությունները (անգործությունը), ուր գործողված է²: Նմանատիպ կարգավորում է նախատեսում նաև «ՌԴ Նախագահի ընտրությունների մասին» դաշնային օրենքի 23-րդ հոդվածի 12-րդ մասի 8-րդ կետը³: Մինչդեռ ՌԴ սահմանադրական դատարանն իր՝ 22 ապրիլի 2012 թ. որոշմամբ, հաշվի առնելով ՌԴ օրենսդրությամբ ամրագրված այն կարգավորումը, որ ընտրություններ անցկացնելիս դիտորդ կարող են նշանակել գրանցված թեկնածուն, գրանցված թեկնածուին/թեկնածուներին առաջադրած ընտրական միավորումը, թեկնածուների ցուցակը գրանցած ընտրական միավորումը, դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ ընտրական միավորման, թեկնածուի կողմից նշանակված դիտորդը չի հանդիսանում ընտրելու իրավունքի և պետական իշխանության ու տեղական ինքնակառավարման մարմիններում ընտրվելու իրավունքի իրացման առնչությամբ ինքնուրույն շահերի կրող: Որպես ընտրական գործընթացի ածանցյալ (երկրորդական) մասնակից՝ նա հանդիսանում է թեկնածուի, ընտրական միավորման շահերի ներկայացուցիչը: Իրենց իրա-

¹ <http://base.consultant.ru/cons/cgi/online.cgi?req=doc;base=LAW;n=146237>

² <http://base.consultant.ru/cons/cgi/online.cgi?req=doc;base=LAW;n=148643>

³ <http://base.consultant.ru/cons/cgi/online.cgi?req=doc;base=LAW;n=146203>

վական կարգավիճակի ուժով դիտորդները փոխկապված են ընտրական գործընթացի՝ իրենց նշանակած սուբյեկտների շահերին և վերջիններիս ընտրական իրավունքների պաշտպանության հարաբերություններում չեն կարող փոխարինել թեկնածուներին, ընտրական միավորումներին: Հետևաբար դատարան դիմելու՝ դիտորդների իրավունքը պայմանավորված է սոսկ իրենց լիազորությունների իրացման համար արդյունավետ երաշխիքների ապահովման անհրաժեշտությամբ, ինչը ենթադրում է հանձնաժողովի որոշումները, գործողությունները (անգործությունը) դատարանում բողոքարկելու հնարավորություն առաջին հերթին այն դեպքերում, երբ դրանք խախտում են ընտրություններում դիտորդների գործառնությունների իրականացման համար անհրաժեշտ նրանց սուբյեկտիվ իրավունքները¹:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ սկզբունքային տարբերություն է առկա այն իրավիճակների միջև, երբ դիտորդը հանդես է գալիս որպես գրանցված թեկնածուի կամ կուսակցության ներկայացուցիչ, և այն դեպքերի, երբ վերջինս ընտրական իրավահարաբերությունների ինքնուրույն սուբյեկտ է: Ի տարբերություն առաջինի պարագայում դիտորդների կարգավիճակի՝ երկրորդի դեպքում վերջինս, լինելով իրավահարաբերության ինքնուրույն մասնակից, հետապնդում է ոչ թե այլ սուբյեկտների սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության, այլ ընդհանուր առմամբ ընտրությունների բնականոն գործընթացն ապահովելու նպատակ: Հետևաբար, եթե դիտորդների կարգավիճակին վերաբերող օրենսդրական առաջին կարգավորման պարագայում նպատակահարմար է, որպեսզի վերջինս օժտված լինի սոսկ իր սուբյեկտիվ իրավունքների խախտման առնչությամբ քննարկվող որոշումների բողոքարկման հնարավորությամբ, ապա նույնը չի կարելի ասել թեկնածուների, կուսակցությունների ներկայացուցիչ չհանդիսացող դիտորդների մասին, որոնք, հանդիսանալով ընտրական իրավահարաբերության ինքնուրույն մասնակից, պետք է ունենան

¹ ՌԴ սահմանադրական դատարանի՝ 22 ապրիլի 2012 թ. որոշումը, <http://www.krsf.ru/ru/Decision/Pages/default.aspx>:

հիշյալ որոշումները բողոքարկելու հնարավորություն՝ անկախ որևէ հանգամանքից:

Տվյալ պարագայում հարկ է նկատի ունենալ, որ դիտորդական առաքելության հիմնական նպատակը ընտրական բնականոն գործընթացի երաշխավորումն է ու վերջինիս համապատասխանության ապահովումը ներպետական ու միջազգային համապատասխան չափորոշիչներին: Դիտորդական առաքելության իրականացումը կարևոր նշանակություն ունի ընտրությունների, հետևաբար նաև դրանց արդյունքում ձևավորվող մարմինների ու ընտրվող պաշտոնատար անձանց նկատմամբ վստահության աճի, քաղաքացիների ընտրական իրավունքների պաշտպանության, ընտրական գործընթացի թափանցիկության ապահովման տեսանկյունից: Իսկ դա իր հերթին հիմք է տալիս եզրակացնելու, որ ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները (անգործությունը) բողոքարկելու՝ թեկնածուների, կուսակցությունների ներկայացուցիչ չհանդիսացող տեղական դիտորդների իրավասությունը չի կարող սահմանափակված լինել որոշակի սուբյեկտիվ իրավունքների խախտման հանգամանքով:

Այդ համատեքստում հարկ է նկատի ունենալ, որ, ի տարբերություն մի շարք այլ պետություններում ամրագրված կարգավորումների, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված տեղական դիտորդների կարգավիճակն ունի այն առանձնահատկությունը, որ վերջիններս չեն հանդիսանում ընտրական գործընթացին մասնակցող թեկնածուների, կուսակցությունների կամ կուսակցությունների դաշինքների ներկայացուցիչները: Մասնավորապես ՀՀ ընտրական օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելության իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա հասարակական այն կազմակերպությունները, որոնց կանոնադրական խնդիրները ներառում են ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հարցեր, և որոնք չեն աջակցում թեկնածուներին կամ կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին: Հետևաբար Հայաստանի Հանրապետությունում դիտորդները հանդես

են գալիս ընտրական իրավահարաբերությունների ինքնուրույն սուբյեկտի կարգավիճակում, որպիսի հանգամանքը հիմք է տալիս եզրակացնելու, որ ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները (անգործությունը) բողոքարկելու՝ վերջիններիս իրավասությունը որոշակի սուբյեկտիվ իրավունքների խախտման հանգամանքով սահմանափակելու պարագայում նրանք զրկվում են իրենց գործառույթների լիարժեք իրականացման ու առաքելության արդյունավետ իրացման փաստացի հնարավորությունից: Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ կարծում ենք, որ նպատակահարմար չէ ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները (անգործությունը) բողոքարկելու՝ տեղական դիտորդների հնարավորությունը սահմանափակել որոշակի սուբյեկտիվ իրավունքների խախտման կամ դրա վտանգի հանգամանքով, և արդյունավետ ենք համարում ՀՀ ընտրական օրենսգրքով նախատեսված հիշյալ սահմանափակման վերացումը:

Վերը շարադրվածի հետ փոխկապված է ևս մի կարևոր հիմնախնդիր, որին հարկ ենք համարում անդրադառնալ քննարկվող համատեքստում: ՀՀ ընտրական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «Եթե հանձնաժողովի անդամը կամ վստահված անձը գտնում է, որ քվեարկության ընթացքում տեղի է ունեցել սույն օրենսգրքով նախատեսված քվեարկության կարգի խախտում, ապա իրավունք ունի պահանջելու, որ իր գնահատականը արձանագրվի գրանցամատյանում»:

Կարծում ենք, որ հիշյալ իրավասությամբ սույն հանձնաժողովի անդամներին և վստահված անձանց օժտելու առնչությամբ ՀՀ օրենսդրությամբ ամրագրված վերոնշյալ իրավակարգավորումն ամբողջական չէ: Ավելին, հաշվի առնելով դիտորդների գործունեության նպատակի ու վերջիններիս առաքելության արդյունավետ իրացման առնչությամբ մեր կողմից ներկայացված վերոնշյալ մոտեցումները՝ գտնում ենք, որ գրանցամատյանում իրենց գնահատականն արձանագրելու հնարավորություն պետք է ունենան նաև ընտրական իրավահարաբերության հիշյալ սուբյեկտները՝ իրենց գործառույթների ու առաքելության լիարժեք իրականացումն ապահովելու նպատակով: Ակնհայտ է,

որ քննարկվող իրավասության իրացմանը որևէ կերպ չի կարող փոխարինել ՀՀ ընտրական օրենսգրքով ամրագրված այն իրավակարգավորումը, որ դիտորդը քվեարկության օրը հետևում է ընտրական հանձնաժողովի աշխատանքներին և կարող է հանձնաժողովի նախագահին ներկայացնել իր դիտարկումներն ու առաջարկությունները¹, քանզի ընտրական օրենսգրքը նմանատիպ իրավասությամբ է օժտել նաև վստահված անձանց², որոնք, դրա հետ մեկտեղ, ունեն նաև իրենց գնահատականները գրանցամատյանում արձանագրելու իրավունք:

Հարկ է նկատել, որ միջազգային պրակտիկայում նույնպես հանդիպում են քննարկվող հիմնախնդրին առնչվող այնպիսի օրենսդրական կարգավորումներ, երբ իրենց գնահատականները գրանցամատյանում արձանագրելու հնարավորություն է տրվում ոչ միայն հանձնաժողովի անդամներին ու վստահված անձանց, այլ նաև հանձնաժողովի նիստին ներկա գտնվելու իրավունք ունեցող այլ սուբյեկտների: Այսպես՝ Վրաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 62-րդ հոդվածի համաձայն՝ «... 9. Քվեարկության վայրում ներկա գտնվելու իրավունք ունեցող բոլոր անձինք իրավասու են գրանցամատյանում գրանցելու քվեարկության օրը քվեարկության ընթացակարգին առնչվող դիմումները, բողոքները և դիտարկումները, մատնանշելու վկաներին (եթե այդպիսիք կան): ...: 10. Որևէ մեկն իրավասու չէ խոչընդոտելու, որպեսզի քվեարկության վայրում գտնվելու իրավասություն ունեցող անձինք գրանցում կատարեն գրանցամատյանում»: Իսկ Միդլոդլայի Հանրապետության ընտրական օրենսգրքի 53-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների, ընտրական տեղամասում հավատարմագրված անձանց կամ ցանկացած ընտրողի խնդրանքով տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին առանձին փաստաթղթում արձանագրում է քվեարկության ընթացակարգին առնչվող նրանց դիտարկումներն ու առա-

¹ ՀՀ ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածի 3-րդ մաս:

² ՀՀ ընտրական օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետ:

շարկությունները, որոնք կցվում են տեղամասային ընտրական հանձնաժողովի արձանագրություններին:

Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ կարծում ենք, որ նպատակահարմար կլիներ Հայաստանի Հանրապետությունում նույնպես գրանցամատյանում քվեարկության կարգի խախտումների առնչությամբ իրենց գնահատականն արձանագրելու հնարավորություն տրամադրել նաև դիտորդներին:

7.3. ԶԱՂԱԶԱՅԻՆԵՐԻ (ԿԱՍՆՐԱՆՑ ԽՍԲԵՐԻ) ԿՈՐՄԻՑ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ) ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐՄԱՏԱՎՈՐՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՆԿԱՏԱԱՄԲ ՀԱՆՐԱՅԻՆ ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ԱՃԻ ԵՐԱՇԽԻՔ

Հաջորդ հիմնախնդիրը, որին հարկ ենք համարում անդրադառնալ հիշյալ համատեքստում, այն է, թե արդյոք քաղաքացիներին կամ նրանց խմբերին անհրաժեշտ է օժտել ընտրական հանձնաժողովների՝ **իրենց սուբյեկտիվ իրավունքների խախտման կամ դրա վտանգի հետ չկապված որոշումները, գործողությունները (անգործությունը)** (այդ թվում՝ քվեարկության/ընտրությունների արդյունքները կամ դրանց հետ կապված որոշումները վիճարկելու) բողոքարկելու հնարավորությամբ:

Արդեն նշեցինք, որ ՀՀ ընտրական օրենսգրքի 46-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները (անգործությունը) կարող է բողոքարկել յուրաքանչյուր ոք, եթե գտնում է, որ խախտվել է կամ կարող է խախտվել իր սուբյեկտիվ ընտրական իրավունքը: Իսկ ՀՀ ընտրական օրենսգրքի 46-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան՝ «Ընտրական տեղամասում քվեար-

կության արդյունքները անվավեր ճանաչելու դիմում կարող են ներկայացնել՝

1) թեկնածուն, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունը (կուսակցությունների դաշինքը),

2) վստահված անձը, եթե ներկա է եղել տվյալ ընտրական տեղամասում,

3) համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը, եթե արձանագրությունում կատարել է գրառում հատուկ կարծիք ունենալու մասին,

4) կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամը:

Ընտրությունների արդյունքները անվավեր ճանաչելու մասին դիմում կարող են ներկայացնել թեկնածուն, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունը (կուսակցությունների դաշինքը)»:

Մինչույն ժամանակ ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 9-րդ կետին համապատասխան՝ հանրապետության Նախագահի և պատգամավորների ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերի շրջանակներում իրենց առնչվող հարցերով Սահմանադրական դատարան կարող են դիմել հանրապետության Նախագահի և պատգամավորության թեկնածուները: Իսկ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 149-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ընտրությունների արդյունքները կարող են բողոքարկվել ընտրություններին մասնակցող թեկնածուի, կուսակցության կողմից:

Հետևաբար ՀՀ օրենսդրությունը ընտրությունների արդյունքների ու դրանցով ընդունված որոշումների բողոքարկման իրավասությամբ է օժտել սոսկ վերջիններիս մասնակցող թեկնածուներին ու կուսակցություններին, ընտրական տեղամասում քվեարկության արդյունքները անվավեր ճանաչելու դիմում ներկայացնելու իրավասությամբ՝ սոսկ թեկնածուներին, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին), վստահված անձանց, եթե ներկա են եղել տվյալ ընտրական տեղամասում, համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովի

անդամներին, եթե արձանագրությունում կատարել են գրառում հատուկ կարծիք ունենալու մասին, կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամներին: Մինչդեռ քաղաքացիներին հիշյալ համատեքստում հնարավորություն է տրվել սոսկ բողոքարկելու ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները (անգործությունը), ընդ որում՝ միայն այն դեպքերում, երբ անձը գտնում է, որ խախտվել է կամ կարող է խախտվել իր սուբյեկտիվ ընտրական իրավունքը: Իսկ դա ենթադրում է, որ օրենսդիրը քաղաքացիների կողմից հիշյալ իրավունքի իրացումը պայմանավորել է նրանց սուբյեկտիվ իրավունքների խախտման կամ դրա վտանգի հանգամանքով:

Ի տարբերություն ՀՀ ներպետական իրավակարգավորումների՝ ներկայացված հիմնախնդրին առնչվող միջազգային-իրավական զարգացումներն ընթանում են այն ուղղությամբ, որ քաղաքացիներին կամ նրանց խմբերին հնարավորություն է տրվում բողոքարկելու քննարկվող, այդ թվում՝ քվեարկության արդյունքների առնչությամբ ընդունված որոշումները՝ անկախ իրենց սուբյեկտիվ իրավունքների խախտման հանգամանքից: Թեև այդ պրակտիկան դեռևս չի գտել համընդհանուր ճանաչում, սակայն ունի հարաբերականորեն լայն տարածում, այդ թվում՝ այնպիսի երկրներում, ինչպիսիք են Հունգարիան, Գերմանիան, Իտալիան, Ղազախստանը, Մոլդովան, Լեհաստանը, Պորտուգալիան, Սերբիան, Սլովակիան, Տաջիկստանը, Ֆինլանդիան, Ուկրաինան, Խորվաթիան, Չեխիան, Շվեյցարիան, Էստոնիան¹:

Քննարկվող համատեքստում հետաքրքիր են Ռուսաստանի Դաշնությունում ընթացող իրավական զարգացումները, որոնց իրականացման հիմքում դրված է քաղաքացիներին քվեարկության արդյունքների վերաբերյալ որոշումները բողոքարկելու հնարավորություն տրամադրելու հանգամանքը: Մասնավորապես ՌԴ սահմանադրական դատարանն իր՝ 22 ապրիլի 2012 թ. որոշմամբ ՌԴ Սահմանադրությանը հակասող և անվավեր է

¹ ՌԴ սահմանադրական դատարանի՝ 22 ապրիլի 2012 թ. որոշումը, <http://www.krsf.ru/ru/Decision/Pages/default.aspx>:

ճանաչել ՌԴ օրենսդրության՝ քաղաքացիներին քննարկվող որոշումները բողոքարկելու հնարավորություն տվող համապատասխան դրույթներն այն մասով, որով վերջիններս, ամրագրելով իրենց ընտրական իրավունքների պաշտպանության նպատակով դատարան դիմելու՝ ընտրողների իրավունքը, միևնույն ժամանակ բացառում են ընտրություններին որպես ընտրողներ մասնակցած քաղաքացիների կողմից ընտրական հանձնաժողովների՝ քվեարկության արդյունքների արձանագրման առնչությամբ որոշումները, գործողությունները (անգործությունը) բողոքարկելու հնարավորությունն այն ընտրատեղամասերում, որոնցում հիշյալ քաղաքացիները մասնակցել են ընտրություններին՝ քվեարկության արդյունքների բողոքարկման առնչությամբ սուբյեկտների, դատարան դիմելու կարգի և պայմանների անորոշության ուժով, ինչպես նաև իրավակիրառական պրակտիկայի կողմից դրանց տրվող իմաստի առումով:

Հարկ է նկատել, որ 2013 թ. փետրվարի 18-ի Հայաստանի Հանրապետության Նախագահի ընտրությունների վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ Ընտրությունների դիտորդական առաքելության վերջնական գեկույցում նույնպես առաջարկվել է քաղաքացիական հասարակության խմբերին թույլ տալ բողոքներ ներկայացնել ընտրական հանձնաժողովների որոշումների և գործողությունների դեմ, ներառյալ ընտրությունների արդյունքների վերաբերյալ¹:

Մեր կարծիքով նպատակահարմար կլիներ, որպեսզի Հայաստանի Հանրապետությունում նույնպես ընտրական հանձնաժողովների՝ իրենց սուբյեկտիվ իրավունքների խախտման կամ դրա վտանգի հետ չկապված որոշումները, գործողությունները (անգործությունը) (այդ թվում՝ քվեարկության/ընտրությունների արդյունքները կամ դրանց հետ կապված որոշումները վիճարկելու) բողոքարկելու իրավասությամբ օժտված լինեին նաև քաղաքացիների խմբերը:

¹ REPUBLIC OF ARMENIA PRESIDENTIAL ELECTION, 18 February 2013, OSCE/ODIHR Election Observation Mission Final Report, XI կետ, <http://www.osce.org/odihr/elections/101314>:

Պատճառն այն է, որ պետական իշխանության ու տեղական ինքնակառավարման մարմիններում իրենց ներկայացուցիչներին ընտրելու և ընտրվելու քաղաքացիների իրավունքը պետական կառավարմանը և տեղական ինքնակառավարմանը մասնակցելու նրանց սահմանադրական իրավունքի առանցքային տարրերից մեկն է, որը նպատակաուղղված է ժողովրդի անմիջական կամահայտնության միջոցով հանրային իշխանության ընտրովի մարմինների և պաշտոնատար անձանց լեգիտիմացմանը: Միևնույն ժամանակ, լինելով ընտրողի սահմանադրական կարգավիճակի տարրերից մեկը, ընտրական իրավունքները նաև ընտրությունների հանրային-իրավական ինստիտուտի բաղկացուցիչ մասն են: Դրանք արտացոլում են ինչպես յուրաքանչյուր կոնկրետ ընտրողի, այնպես էլ ընտրությունների օբյեկտիվ արդյունքների ու դրանց հիման վրա ձևավորվող հանրային իշխանության մարմինների միջոցով արտահայտվող հանրային շահը:

Մասնակցելով ընտրական իրավահարաբերություններին՝ ընտրողն իրացնում է ոչ միայն իր որոշակի քաղաքական ազատությունն ու այս կամ այն քաղաքական նախընտրություններին առնչվող սուբյեկտիվ շահերը, այլ նաև կյանքի է կոչում ՀՀ սահմանադրական կարգի հիմքը կազմող ժողովրդաիշխանության սկզբունքը: Նա մասնակցում է հանրային իշխանության ինքնուրույն և անկախ մարմինների ձևավորմանը, որոնք կոչված են իրենց գործունեությամբ ապահովելու ժողովրդի շահերի ներկայացուցչությունը: Իսկ դա ենթադրում է, որ ակտիվ ընտրական իրավունքի բովանդակությունն իր գործառնական ու նպատակային բնութագրիչների տեսանկյունից պահանջում է ժողովրդի սուվերեն կամքի համարժեք արտահայտումն ապահովելու անհրաժեշտություն, որն առարկայանում է ընտրությունների օբյեկտիվ արդյունքներում: Ակնհայտ է, որ այդ պայմաններում քաղաքացին՝ որպես ընտրող, պետք է հնարավորություն ունենա հավաստիանալու, որ իր ձայնը, որը միևնույն ժամանակ ժողովրդի ընդհանուր կամքի արտահայտությունն է, իրավասու մարմնի կողմից հաշվի է առնվել օբյեկտիվորեն և

ձևակերպվել է ընդհանուր կամահայտնության արդյունքներին ձիշտ համապատասխան:

Հետևաբար ակտիվ ընտրական իրավունքի սահմանադրաիրավական բովանդակությունը չի սահմանափակվում սոսկ քվեարկությանը քաղաքացիների մասնակցությունն ապահովելու հանգամանքով, այլ պայմանավորում է նաև դրան նախորդող ու հաջորդող իրավահարաբերությունները՝ կապված առաջին հերթին ընտրական իրավունքի պաշտպանության, այդ թվում՝ քվեարկության/ընտրությունների արդյունքների ամփոփման հետ: Հակառակ մոտեցումը, որն ակտիվ ընտրական իրավունքի իրացման գործընթացի ավարտը պայմանավորում է քվեարկության փուլով, ուստի չի ենթադրում դրան նախորդող ու հաջորդող ընտրական գործընթացների շրջանակներում ընտրողի շահերի ձանաչում ու պաշտպանություն, վտանգում է ոչ միայն ընտրական իրավունքների, այլև ազատ ընտրությունների ամբողջ ինստիտուտի սահմանադրական արժեքը: Տվյալ պարագայում քաղաքացին հնարավորություն չի ունենում հավաստիանալու, որ իր ձայնը ձիշտ ու օբյեկտիվորեն է հաշվարկվել, ինչն իր հերթին կասկածի տակ է դնում հանրային իշխանության համապատասխան ընտրովի մարմնի կամ պաշտոնատար անձի լեգիտիմությունը:

Մինչդեռ հարկ է նկատի ունենալ, որ անձի և հանրային իշխանության փոխհարաբերությունների հիմքում ընկած է փոխադարձ վստահության սահմանադրական սկզբունքը: Վերջինս պահանջում է պետության կողմից այնպիսի պայմանների ստեղծում, որոնց շրջանակներում քաղաքացիները համոզված կլինեն, որ իրենց իշխանությունն անմիջականորեն իրականացնելու կարևորագույն եղանակներից մեկի՝ ընտրությունների առաքելությունն իրացված է: Միայն ընտրողների ազատ կամահայտնության և քվեարկության արդյունքներում դրանց ճշգրիտ առարկայացման դեպքում հանրային իշխանության ընտրված մարմիններն ու պաշտոնատար անձինք կարող են դիտարկվել որպես ժողովրդի ներկայացուցչությունն իրականացնող սուբյեկտներ: Հետևաբար իրավական, ժողովրդավարական պետությունում ընտրողի՝ ընտրական գործընթացների (այդ թվում՝

քվեարկության ու ընտրությունների արդյունքների ամփոփման հետ կապված) նկատմամբ այս կամ այն, այդ թվում՝ դատավարական եղանակներով վերահսկողություն իրականացնելու իրավունքը և բացահայտված խախտումներին արձագանքելու իրավաչափ հնարավորությունը չեն կարող պայմանավորված լինել սոսկ վերջինիս սուբյեկտիվ իրավունքների խախտման կամ դրա վտանգի հանգամանքով: Հակառակ պարագայում քաղաքացին հանդես կգա ոչ թե պետությանն իրավահավասար սուբյեկտի կարգավիճակում, որը կարող է պաշտպանել իր իրավունքներն օրենքով չարգելված բոլոր միջոցներով, այլ պետական գործունեության օբյեկտի դերում, ինչն անկասկած հակասում է բոլոր բնագավառներում, այդ թվում՝ քաղաքական հարաբերություններում պետության կողմից անձի արժանապատվությունը հարգելու ու պաշտպանելու պահանջին:

Ավելին՝ հարկ է նկատի ունենալ, որ քաղաքացիների և թեկնածուների շահերը նույնական չեն և, պայմանավորված կոնկրետ սոցիալ-քաղաքական հանգամանքներով, կարող են չհամընկնել, որոշակի դեպքերում նույնիսկ հակասել միմյանց: Հետևաբար ընտրողների կամահայտնության արտահայտմանն առնչվող հարցերի, առաջին հերթին նրանց ձայների ճշգրիտ հաշվարկի նկատմամբ արդյունավետ վերահսկողությունը չի կարող ապահովվել՝ սոսկ պասիվ ընտրական իրավունք ունեցող սուբյեկտներին կամ նրանց ներկայացնող անձանց քվեարկության/ընտրությունների արդյունքներն ու դրանց հետ կապված որոշումները վիճարկելու հնարավորություն տրամադրելով: Իսկ դա իր հերթին պահանջում է, որպեսզի վերոնշյալ իրավասությամբ օժտված լինեն նաև քաղաքացիները՝ որպես ակտիվ ընտրական իրավունքի միակ կրողներ և ժողովրդաիշխանությունն իրացնող սուբյեկտներ:

Հետևաբար ակտիվ ընտրական իրավունքը պահանջում է նաև քաղաքացիների կամահայտնությանն առնչվող հարցերի, այդ թվում՝ քվեարկության արդյունքների արձանագրման օբյեկտիվության նկատմամբ վերահսկողություն, ինչը ցանկացած պարագայում ենթադրում է քաղաքացիների հնարավորությունը՝ օրենքով սահմանված կարգով պահանջելու վերաց-

նել ընտրական գործընթացները թույլ տրված խախտումները, և համապատասխանաբար պետության պարտավորությունը՝ ստեղծելու այդ իրավասության արդյունավետ իրացման համար իրավական, կազմակերպական և այլ անհրաժեշտ ու բավարար պայմաններ՝ անձնական և հասարակական շահերի հավասարակշռման հիման վրա¹:

Ավելին՝ կարծում ենք, որ քաղաքացիներին նման իրավասությամբ օժտելը բացառիկ կարևորություն ունի նաև ընտրությունների նկատմամբ վստահության աճի ապահովման տեսանկյունից, քանզի վերոնշյալ համակարգը կարող է հնարավորություն ընձեռել ամրապնդելու ժողովրդի կամահայտնության և ընտրությունների արդյունքների միջև փոխադարձ կապը: Այդ հանգամանքն արձանագրվել է նաև Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի՝ «Ընտրություններում ավելի մեծ ժողովրդավարության ապահովման մասին» 1897(2012) բանաձևում, որի 2-րդ կետի համաձայն՝ այսօր, երբ քաղաքացիներն ավելի ու ավելի քիչ վստահություն ունեն ներկայացուցչական ժողովրդավարության ինստիտուտների նկատմամբ, առավել քան կարևորվում է ընտրությունների ժողովրդավարական բնույթը բարձրացնելու և, այդպիսով, ժողովրդի կամահայտնության և ընտրությունների փաստացի արդյունքների միջև կապն ամրապնդելու հանգամանք²: ՀՀ սահմանադրական դատարանը նույնպես իր՝ 31 մայիսի 2012 թ. ՍԴՈ-1028 որոշմամբ արձանագրել է, որ «Սահմանադրական դատարանը դրական է համարում հատկապես քաղաքացիական հասարակության դերակատարության մեծացումն ընտրական գործընթացի վերահսկման նկատմամբ և գտնում է, որ ՀՀ ընտրական օրենսգիրքը հանրային վերահսկման իրավական հիմքերի ամրապնդման ուղղությամբ նոր լուծումներ պետք է նախատեսի»³:

¹ Այդ մասին տես նաև ՌԴ սահմանադրական դատարանի՝ 22 ապրիլի 2012 թ. որոշումը, <http://www.ksrf.ru/ru/Decision/Pages/default.aspx>:

² Resolution 1897 (2012) of the Parliamentary Assembly “Ensuring greater democracy in elections”, <http://assembly.coe.int/ASP/Doc/XrefViewPDF.asp?FileID=19121&Language=en>

³ <http://concourt.am/armenian/decisions/common/2012/pdf/sdv-1028.pdf>

Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ կարծում ենք, որ նպատակահարմար կլիներ Հայաստանի Հանրապետությունում նույնպես ընտրական հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները բողոքարկելու (ինչպես նաև քվեարկության/ընտրությունների արդյունքները վիճարկելու) իրավասությանը օժտել նաև քաղաքացիներին:

Հիշյալ համատեքստում ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ տարբեր պետություններում ընտրական հանձնաժողովների որոշումների (այդ թվում՝ քվեարկության/ընտրությունների արդյունքների հետ կապված) բնագավառում քաղաքացիների քննարկվող իրավունքի իրացման նորմատիվ բովանդակությունն ու կարգն ունեն իրենց առանձնահատկությունները, որոնց հիմքում ընկած են հանրային ու մասնավոր շահերի հավասարակշռման առնչությամբ գոյություն ունեցող տարատեսակ մոտեցումները: Այդ համատեքստում առանձնահատուկ կարևորություն ունի բողոքը ներկայացնելու համար անհրաժեշտ քաղաքացիների որոշակի նվազագույն թվի նախատեսումը: Դա անհրաժեշտ է առաջին հերթին այն պատճառով, որպեսզի ընտրությունների սահմանադրական արժեքն ու դրանց լեգիտիմությունը կասկածի տակ չդրվեն դատարան ներկայացվող ակնհայտ անհիմն, հորինվածքային բնույթ ունեցող դիմումներով, իսկ համապատասխան դատավարական ընթացակարգերը չօգտագործվեն սուկ որպես քաղաքական պայքարի միջոց: Հաշվի առնելով այդ հանգամանքը, ինչպես նաև մեր հասարակության իրավական, սոցիալ-քաղաքական և մի շարք այլ առանձնահատկություններ՝ նպատակահարմար ենք համարում Հայաստանի Հանրապետությունում նույնպես հիշյալ իրավունքի իրացման հնարավորությունը վերապահել ոչ թե անհատ քաղաքացիներին, այլ քաղաքացիների խմբերին: Այդ առումով հիշատակման է արժանի քննարկվող հիմնախնդրի առնչությամբ Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարություն» իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) դիրքորոշումը, որը, նշելով, որ տվյալ ընտրատարածքում գրանցված բոլոր թեկնածուներն ու ընտրողները պետք է բողոքարկման հնարավորություն ունենան, միևնույն ժամանակ ընդգծել է, որ քվեարկողների

կողմից ընտրության արդյունքների բողոքարկման համար կարող է նախատեսվել որոշակի քվորում¹:

Ինչ վերաբերում է վերոնշյալ հիմնախնդրին առնչվող օրենսդրական կարգավորումներին, կարծում ենք, որ դրանք անհրաժեշտ է կանոնակարգել այն ուղղությամբ, որ ընտրական իրավունքների պաշտպանության հիշյալ մեխանիզմը հիմնվի հանրային և մասնավոր շահերի հավասարակշռման ու քննարկվող իրավունքի չարաշահման անթույլատրելիության վրա: Այդ համատեքստում օրենսդիրն իրավասու է, հանրային և մասնավոր շահերի անհրաժեշտ հավասարակշռությունն ապահովելու նպատակով, նախատեսել քաղաքացիների կողմից հիշյալ իրավունքի իրացման որոշակի պայմաններ ու կարգ, մասնավորապես, օրինակ՝ քվեարկության արդյունքների առնչությամբ ընդունված որոշումների բողոքարկման հնարավորություն սուկ այն քաղաքացիների համար, ովքեր քվեարկել են կոնկրետ ընտրական տեղամասում:

Այդ համատեքստում է կարևորվում նաև այն հանգամանքը, թե ինչպիսի մոտեցում կորդեգրվի այն հիմնախնդրի առնչությամբ, թե կոնկրետ որ որոշումներն ու դրանցում արձանագրվող արդյունքները կարող են վիճարկվել քաղաքացիների (կամ նրանց խմբերի) կողմից: Հարկ է նկատի ունենալ, որ պետությունների մեծամասնությունում քաղաքացիները նմանատիպ հնարավորությամբ են օժտված սուկ կոնկրետ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքները վիճարկելու առնչությամբ, մինչդեռ կան երկրներ, որտեղ քաղաքացիները (կամ նրանց խմբերը) կարող են վիճարկել նաև ընտրությունների արդյունքները կամ դրանց առնչությամբ ընդունված որոշումները, օրինակ՝ Գերմանիան, Խորվաթիան²: Այդ առումով հետաքր-

¹ CDL-AD (2002) 23 rev, “Code of Good Practice in Electoral Matters: Guidelines and Explanatory Report”, Adopted by the Venice Commission at its 52nd session (Venice, 18–19 October 2002) , 2-րդ բաժնի 3.3 կետի f ենթակետ, http://www.regjeringen.no/upload/KRD/Kampanjer/valgportal/valgobservatorer/Code_of_good_practice_CD_L_AD%282002%29023rev_e.pdf

² Law of Germany “On the Scrutiny of Elections”, «Խորվաթիայի Պառլամենտի ներկայացուցիչների ընտրության մասին» օրենքի 84–8ձ հոդված:

քիր է Լիտվայի Հանրապետության 14 հոկտեմբերի 2012 թ-ի պառլամենտական ընտրությունների վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀ-ՄԻԳ Ընտրությունների դիտորդական առաքելության վերջնական գեկույցում ներկայացված այն դիրքորոշումը, որ օրենքում անհրաժեշտ է փոփոխություններ կատարել՝ հնարավորություն տալով ընտրողներին վիճարկելու ընտրությունների վերջնական արդյունքները¹:

Հետևաբար վերը նշված առաջնահերթությունների ընտրության և հավասարակշռության ապահովման համատեքստում է անհրաժեշտ դիտարկել նաև ՀՀ օրենսդրի հայեցողությունը՝ ընտրելու, թե արդյոք քաղաքացիների խմբերին անհրաժեշտ է հնարավորություն տալ վիճարկելու սոսկ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքները, թե նաև ընտրությունների արդյունքների վերաբերյալ ընդունված որոշումները: Միևնույն ժամանակ հարկ է նկատի ունենալ, որ անկախ այն հանգամանքից, թե ինչպիսի մոտեցում կորդեգրվի սահմանադրի և/կամ օրենսդրի կողմից հիշյալ հիմնախնդրի առնչությամբ, կարևորագույն հանգամանքը տվյալ պարագայում այն հրամայականի ապահովումն է, որ քաղաքացիները (կամ նրանց խմբերը) օժտված լինեն առնվազն որևէ փուլում հիշյալ արդյունքները կամ դրանց առնչությամբ ընդունված որոշումները վիճարկելու հնարավորությամբ՝ հաշվի առնելով քննարկվող հիմնախնդրի արդյունավետ կարգավորման համար անհրաժեշտ վերոնշյալ հանգամանքներն ու դրան առնչվող միջազգային-իրավական չափորոշիչները: Ավելին՝ կարևոր է, որպեսզի իրավասու սուբյեկտների կողմից հիշյալ իրավունքն օգտագործվի բարեխղճորեն, սոսկ որպես ընտրական իրավունքի պաշտպանության միջոց ու չծառայեցվի քաղաքական պայքարի անձնավորված շահերին: Հակառակ պարագայում քննարկվող համակարգը կվերածվի պատրանքային բնույթ ունեցող լուծումի՝ վտանգելով ընտրությունների սահմանադրական արժեքն ու լեգիտիմությունը:

¹ REPUBLIC OF LITHUANIA PARLIAMENTARY ELECTIONS, 14 October 2012, OSCE/ODIHR Election Assessment Mission Report, X կետ, <http://www.osce.org/odihr/98586>

7.4. ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱԿՈՒՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՅԵՐՈՎ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ. ԱՐԴԻ ՎԻՃԱԿՆ ՈՒ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԵՏԱԳԱ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերով վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը վերջնական են, վերանայման ենթակա չեն և ուժի մեջ են մտնում հրապարակման պահից:

Հետևաբար ՀՀ օրենսդրությունը չի նախատեսում վերոնշյալ հարցերով կայացված դատական ակտերի բողոքարկման հնարավորություն, ինչը մեր կարծիքով սահմանափակում է արդյունավետ իրավական պաշտպանության մատչելիությունը՝ բացասաբար անդրադառնալով ընտրական գործընթացների նկատմամբ հասարակության վստահության բարձրացմանն ուղղված մեխանիզմների վրա: Այդ հանգամանքն արձանագրվել է նաև 2013 թ. փետրվարի 18-ի Հայաստանի Հանրապետության Նախագահի ընտրությունների վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ Ընտրությունների դիտորդական առաքելության վերջնական զեկույցում¹:

Քննարկվող հիմնախնդրի առնչությամբ հարկ է նկատի ունենալ, որ դատական ակտերի բողոքարկման ինստիտուտին առնչվող ընդհանուր մոտեցումն այն է, որ սկզբունքորեն պետք է գոյություն ունենա ստորադաս դատարանի որոշման նկատմամբ վերադաս դատարանի կողմից վերահսկողության հնարավորություն: Միևնույն ժամանակ բացառիկ դեպքերում թույլատրելի են համարվում հիշյալ ընդհանուր սկզբունքից առանձին բացառություններ, որոնք, սակայն, պետք է համապատասխանեն արդարադատության ընդհանուր սկզբունքներին²: Այդ առումով առա-

¹ REPUBLIC OF ARMENIA PRESIDENTIAL ELECTION, 18 February 2013, OSCE/ODIHR Election Observation Mission Final Report, XI 1»i, <http://www.osce.org/odihr/elections/101314>

² Recommendation No. R (95) 5 of the Committee of Ministers to Member States concerning the Introduction and Improvement of the Functioning of Appeal Systems and Procedures in Civil and Commercial Cases, հոդված 1:

ջին հերթին անհրաժեշտ է նկատի ունենալ, որ նմանատիպ բոլոր դեպքերում պետք է ելակետային լինի այն հանգամանքը, որ արդարադատության մատչելիության իրավունքը սահմանափակելիս չխաթարվի քննարկվող իրավունքի էությունը: Այդ սահմանափակումները պետք է հետապնդեն իրավաչափ նպատակ, և գոյություն ունենա ողջամիտ համաչափություն ու հավասարակշռություն օգտագործվող միջոցների և դրված նպատակի միջև¹:

Ակնհայտ է, որ ընտրական իրավահարաբերությունների համատեքստում կարող են առաջանալ քննարկվող իրավունքների պաշտպանության այնպիսի գործեր, որոնց առնչությամբ ընդունվող դատական ակտերի բողոքարկման բացառումը, հետևաբար հիշյալ ակտերի նկատմամբ վարչական դատարանի նմանատիպ այլ դատական ակտերի համեմատությամբ տարբերակված մոտեցման ցուցաբերումն արդարադատության մատչելիության տեսանկյունից չեն կարող լինել հիմնավոր ու կխաթարեն հիշյալ իրավունքի էությունը: Այդ առումով կարծում ենք, օրինակ, որ հիմնավորված չի կարող համարվել այն իրավիճակը, երբ քաղաքացիների սուբյեկտիվ ընտրական իրավունքների խախտման վերաբերյալ գործերով վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը վերանայման ենթակա չեն, մինչդեռ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով ու այլ իրավական ակտերով ամրագրված քաղաքացիների այլ իրավունքների և ազատությունների խախտման վերաբերյալ գործերով վարչական դատարանի ակտերի համար նախատեսված է բողոքարկման ընթացակարգ: Նույնը կարելի է ասել, օրինակ, թեկնածուների, կուսակցությունների ընտրական ցուցակները չգրանցելու, գրանցումն անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու առնչությամբ վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դա-

¹ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համատեքստում նմանատիպ դիրքորոշում է արտահայտել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (տես, օրինակ, Brualla Gomez de la Torre, 33; Edificaciones March Gallego S. A., 34, CASE OF OLUJIC v. CROATIA (Application no. 22330/05, JUDGMENT 5 February 2009, FINAL 05/05/2009).

տական ակտերի բողոքարկման հնարավորության բացակայության մասին: Կարծում ենք, որ վերոնշյալ սահմանափակումը համաչափ չէ վերջինիս հիմքում դրված նպատակին, խաթարում է արդարադատության մատչելիության բուն էությունը, հետևաբար ՀՀ օրենսդրությամբ ընտրական իրավունքի պաշտպանության հարցերով դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի լրիվ բացակայությունը նպատակահարմար չենք համարում:

Միննույն ժամանակ, միջազգային-իրավական չափորոշիչներին համապատասխան, չենք բացառում արդարադատության մատչելիության իրավունքի առանձին սահմանափակումների կիրառումը, մասնավորապես դատական ակտերի բողոքարկման հնարավորության բացառումը նաև ընտրական իրավունքների պաշտպանությանն առնչվող առանձին գործերով: ՀՀ սահմանադրական դատարանն իր որոշումներում նույնպես կարևորել է ներպետական հայեցողական որոշակի ազատությունն արդարադատության մատչելիության և հատկապես դատական բողոքարկման իրավունքի օրենսդրական սահմանափակումների հարցում¹: Պարզապես կարևոր է, որ դրանք կիրառելիս ելակետային հանդիսանա մեր կողմից հիշատակված վերոնշյալ սկզբունքը, այն է՝ բողոքարկման իրավունքի բացառումը լինի հիմնավորված, դրա արդյունքում չխաթարվեն արդարադատության մատչելիության իրավունքի բուն էությունն ու բովանդակությունը, ինչպես նաև ապահովվի համաչափությունը սահմանափակման ու դրա հիմքում դրված նպատակի միջև:

Ակնհայտ է, որ ընտրական իրավունքների պաշտպանությանն առնչվող առանձին գործերով հիշյալ սահմանափակման կիրառումը չի կարող արդարացված համարվել ներկայացված սկզբունքի համատեքստում: Հետևաբար կարծում ենք, որ ընտրական իրավունքի պաշտպանությանն առնչվող առանձին գործերով ՀՀ օրենսդրությամբ նպատակահարմար է նախատեսել քննարկվող դատական ակտերի բողոքարկման հնարավորություն՝ միննույն ժամանակ անհրաժեշտ օրենսդրական կառու-

¹ Տե՛ս, օրինակ, ՀՀ սահմանադրական դատարանի՝ ՍԴՈ-1063, ՍԴՈ-719 որոշումները:

ցակարգեր ստեղծելով ընտրական գործընթացների բնականոն ընթացքը չխաթարելու նպատակով (օրինակ՝ գործի քննության հատուկ ժամկետների նախատեսում):

Հարկ է նկատել, որ ընտրական իրավունքի պաշտպանության հարցերով դատարանի որոշումների բողոքարկման հնարավորություն է նախատեսված նաև մի շարք այլ երկրների օրենսդրությամբ: Այսպես, օրինակ՝ Մոլդովայի ընտրական օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ «... 6. Դատական ատյանի որոշումը կարող է բողոքարկվել դրա ընդունումից հետո՝ եռօրյա ժամկետում: 7. Բողոքի քննությունն իրականացվում է համապատասխան գործը ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում»: Դատարանի որոշումների բողոքարկման հնարավորություն է նախատեսում նաև Վրաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը¹: Ընդ որում՝ վերջինս հատուկ ժամկետներ է նախատեսում բողոքի քննության համար՝ ապահովելով հետագա ընտրական գործընթացների բնականոն իրականացումը: Այսպես, օրինակ՝ Վրաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 77-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի/հանձնաժողովի պաշտոնատար անձանց որոշումները դրանք ստանալու պահից երեք օրացուցային օրվա ընթացքում կարող են բողոքարկվել համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով, որը քննում է բողոքը մեկ օրացուցային օրվա ընթացքում: Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշումը երկու օրացուցային օրվա ընթացքում կարող է բողոքարկվել համապատասխան շրջանային/քաղաքային դատարան, որը բողոքը քննում է երկու օրացուցային օրվա ընթացքում: Շրջանային/քաղաքային դատարանի որոշումը այն ստանալուց հետո՝ մեկ օրացուցային օրվա ընթացքում, կարող է բողոքարկվել Վերաքննիչ դատարան, որը բողոքը քննում է մեկ օրացուցային օրվա ընթացքում: Վերաքննիչ դատարանի որոշումը վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

¹ Վրաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 77-րդ հոդված:

Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ առաջարկում ենք ընտրական իրավունքի պաշտպանությանն առնչվող առանձին գործերով նախատեսել ՀՀ վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի բողոքարկման հնարավորություն: Միևնույն ժամանակ կարծում ենք, որ նմանատիպ հարցերով բողոքարկման վարույթի առկայության պարագայում չեն կարող գործել գործի քննության համար նախատեսված ընդհանուր ժամկետները, և պետք է սահմանվեն գործի քննության հատուկ ժամկետներ՝ հիմքում ունենալով այն հանգամանքը, որ ներկայացված գործերի քննությունն անհրաժեշտ է իրականացնել այնպիսի ժամանակահատվածում, որպեսզի չխաթարվեն հետագա ընտրական գործընթացները:

7.5. ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԲՈՂՈՔԱՐԿՍԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ԱՈՆՉՎՈՂ ԻՐԱՎԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱՄՐԱԳՐՍԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԻՐԱՑՍԱՆ ԱՈՒՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հաջորդ հիմնախնդիրը, որին հարկ ենք համարում անդրադառնալ հիշյալ համատեքստում, տարբեր օրենքներում ամրագրված դիմումների և բողոքների գործընթացին վերաբերող դրույթներին Ընտրական օրենսգրքում հղում կատարելու կամ դրանք մեկ կոնկրետ իրավական ակտում համակարգելու հանգամանքն է:

Հարկ է նկատել, որ թեև միջազգային պրակտիկայում հանդիպում են ընտրական օրենսգրքում դիմումների և բողոքների գործընթացի համակարգված ամրագրման օրինակներ¹, սակայն դրանք նույնպես, որպես կանոն, բացարձակ ամբողջականու-

¹ Տե՛ս, օրինակ, Վրաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 77-րդ, 78-րդ հոդվածները:

թյամբ չեն ներկայացնում հիշյալ գործերի քննությանն առնչվող բոլոր կարգավորումները, և դատավարական առանձնահատկությունները սահմանվում են ոչ թե ընտրական օրենսգրքով, այլ համապատասխան դատավարական օրենսդրությամբ:

Հայաստանի Հանրապետությունում նույնպես ընտրական իրավունքների պաշտպանությանն առնչվող գործերի քննությանն առանձնահատկությունները սահմանված են համապատասխան դատավարական օրենսդրությամբ: Կարծում ենք, որ օրենսդրական տեխնիկայի տեսանկյունից այդ հանգամանքն ինքնին խնդրահարույց չէ, քանզի անհնար է այնպիսի համընդգրկուն իրավական ակտում, ինչպիսին է ընտրական օրենսգիրքը, համակարգել բոլոր հարցերի կարգավորմանն ուղղված և նյութական, և դատավարական բոլոր առանձնահատկությունները:

Հարկ է նկատել, որ 2013 թ. փետրվարի 18-ի Հայաստանի Հանրապետության Նախագահի ընտրությունների վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ Ընտրությունների դիտորդական առաքելության վերջնական գեկույցում հիշյալ հիմնախնդրի առնչությամբ արտահայտված դիրքորոշման հիմքում նույնպես ընկած է այն գաղափարը, որ տվյալ պարագայում օրենսդրին կարող է տրվել ընտրանքային հնարավորություն, ինչը թույլ կտա վերջինիս 1) համակարգելու տարբեր օրենքներում ամրագրված դիմումների և բողոքների գործընթացին վերաբերող բոլոր դրույթները կամ 2) դրանց հղում կատարելու Ընտրական օրենսգրքում¹: Հետևաբար ընտրական հարցերով արդյունավետ իրավական պաշտպանության մատչելիության ապահովումը կոնկրետ պետության օրենսդրությամբ կարող է իրականացվել հիշյալ երկու հնարավորություններից մեկն ընտրելու միջոցով:

Նշենք, որ քննարկվող հիմնախնդիրն ու դրա առնչությամբ միջազգային-իրավական փաստաթղթերում արտահայտվող դիրքորոշումներն ինքնանպատակ չեն և կարևորվում են առաջին հերթին այն պատճառով, որ ընտրական հարցերով բողոքարկման գործընթացի ընդհանուր կանոնները պահանջում

¹ REPUBLIC OF ARMENIA PRESIDENTIAL ELECTION, 18 February 2013, OSCE/ODIHR Election Observation Mission Final Report, XI կետ, <http://www.osce.org/odihr/elections/101314>

են, որպեսզի վերջիններս լինեն թափանցիկ ու հեշտ ընկալելի¹: Ակնհայտ է, որ այդ հանգամանքը բացառիկ կարևորություն ունի ընտրական իրավունքների պաշտպանության պատշաճ համակարգի երաշխավորման տեսանկյունից: Հետևաբար կարծում ենք, որ արդյունավետ իրավական պաշտպանության մատչելիությունն ապահովելու առումով նպատակահարմար է ՀՀ ընտրական օրենսգրքում հղում կատարել համապատասխան դատավարական օրենսդրությանն այն բոլոր դեպքերում, երբ ներկայացվող գործի քննության առանձնահատկությունները սահմանված են այդ օրենսդրությամբ: Օրինակ՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 46-րդ հոդվածը սահմանում է, որ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի ընտրությունների արդյունքների վերաբերյալ որոշումները կարող են բողոքարկվել Սահմանադրական դատարան: Համայնքի ղեկավարի ու ավագանու անդամների ընտրությունների արդյունքների վերաբերյալ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշումները կարող են բողոքարկվել վարչական դատարան: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ համապետական ընտրությունների արդյունքների վերաբերյալ որոշումները կարող են բողոքարկվել Սահմանադրական դատարան: Հիշյալ գործերի քննության առանձնահատկությունները սահմանված են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով, հետևաբար նպատակահարմար ենք համարում ընտրական օրենսգրքի համապատասխան դրույթներում դրանց հղում կատարել:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ չնայած քննարկվող հիմնախնդրի առնչությամբ ՀՀ ընտրական օրենսգրքի հետագա կատարելագործման անհրաժեշտությանը՝ այդ հանգամանքն արդեն իսկ որոշակիորեն կյանքի է կոչվել Օրենսգրքի մի շարք կարգավորումներում: Օրինակ՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 45-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ընտրական հանձնաժողովում վարչական վարույթն իրակա-

¹ Տե՛ս Office for Democratic Institutions and Human Rights, “Resolving Election Disputes in the OSCE Area: Towards a Standard Election Dispute Monitoring System”, <http://www.osce.org/odihr/elections/17567>

նացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան, սույն օրենսգրքով սահմանված առանձնահատկություններով և ժամկետներում:

* * *

Ամփոփելով ընտրական հարցերով բողոքարկման գործընթացի կատարելագործման առնչությամբ ներկայացված վերլուծությունը՝ հարկ ենք համարում նկատել, որ, անկախ քննարկվող կազմակերպական կառուցակարգերի կարևորությունից, ընտրական հարցերով բողոքարկման արդյունավետ համակարգի ձևավորումն ու այդ նպատակին ուղղված մեխանիզմների կատարելագործումն առաջին հերթին պայմանավորված են հասարակության և պետական մարմինների իրավական մշակույթի համապատասխան մակարդակով:

Այդ հանգամանքն ընդգծվել է նաև ՀՀ սահմանադրական դատարանի կողմից իր մի շարք որոշումների շրջանակներում: Մասնավորապես Դատարանն արձանագրել է, որ ընտրական իրավունքի պաշտպանությունը չի ենթադրում ձևական մոտեցում, թե որքանով են խախտվել մարդկանց ակտիվ կամ պասիվ ընտրական իրավունքները: Հարցն ունի ընդգրկման ավելի լայն շրջանակ և վերաբերում է ընտրությունների հանրային գործառույթին, թե ինչ կերպ և ինչպիսի վստահությամբ է ձևավորվում ներկայացուցչական կառավարման համակարգը, ինչպես են ներդաշնակվում կառավարմանը մասնակցելու ազատությունը և ներկայացուցչական մարմիններ կազմավորելու պարտականությունը, ինչպիսին է անհատների հասարակական վարքագիծն այս գործընթացում: Ուստի ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու հնարավորության ապահովումը պետության պարտավորությունն է, այլ ոչ թե առանձին քաղաքական միավորումների կամ անհատների¹: Ավելին՝ ընդգծվել է, որ միայն ընտրական տեխնոլոգիաների բարելավման ու դրանց հնարավոր

¹ ՀՀ սահմանադրական դատարանի՝ 31 մայիսի 2012 թ. ՍԴՈ-1028 որոշում, 10 հունիսի 2007 թ. ՍԴՈ-703 որոշում:

անթերի կիրառման պայմաններում դժվար կլինի իրավիճակի արմատական փոփոխություն ակնկալել¹:

Հետևաբար, ինչպես նշվեց, ընտրական հարցերով բողոքարկման արդյունավետ համակարգի ձևավորումն ու այդ նպատակին ուղղված մեխանիզմների կատարելագործումն առաջին հերթին պայմանավորված են հասարակության և պետական մարմինների իրավական մշակույթի համապատասխան մակարդակով: Այդ առումով առաջին հերթին անհրաժեշտ է, որպեսզի ընտրական իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտները գերծ մնան հիշյալ գործընթացի նկատմամբ ձևական մոտեցումից՝ պատշաճորեն օգտագործելով ընտրական իրավունքների պաշտպանության համար օրենքով նախատեսված բոլոր միջոցները: Դա վերաբերում է ինչպես ընտրական հանձնաժողովներին և դատարաններին, որոնք ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ բողոքները քննելիս պետք է ապահովեն նախատեսված իրավական մեխանիզմների արդյունավետ կիրառումը, հետևաբար նաև ընտրական իրավունքների արդյունավետ պաշտպանությունն ու հասարակության վստահությունը ընտրությունների կազմակերպման ու անցկացման նկատմամբ, այնպես էլ քաղաքացիներին, որոնք իրենց հերթին պետք է բավարար պատասխանատվությամբ մոտենան ընտրությունների ինստիտուտին՝ այն ընկալելով որպես ժողովրդի իշխանության իրականացման կարևորագույն եղանակներից ու ժողովրդի հավաքական կամահայտնության արտահայտման դրսևորումներից մեկը:

¹ ՀՀ սահմանադրական դատարանի՝ 14 մարտի 2013 թ. ՍԴՈ-1077 որոշում:

ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

1. Կարծում ենք, որ ազատագրկման դատապարտված և պատիժը կրող բոլոր քաղաքացիներին, անկախ գործած հանցագործության ծանրությունից, ընտրելու իրավունքից զրկելը հակասում է համընդհանուր ընտրական իրավունքին և այս հարցի առնչությամբ մի շարք փաստաթղթերում արտահայտված դիրքորոշումներին, հետևաբար գործող միջազգային-իրավական չափորոշիչներին համապատասխան՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված միանշանակ արգելքը պետք է վերանայվի:

2. Ինտերնետի միջոցով քվեարկության համակարգի ներդրման հետ կապված օրենսդրական նորամուծությանը պետք է զգուշորեն մոտենալ ինչպես տեխնիկական առումով, այնպես էլ իրավաբանական տեսանկյունից: Ինտերնետի օգտագործմամբ քվեարկությունը պետք է հիմնվի ժողովրդավարական ընտրությունների չափանիշների վրա և պետք է լինի նույնքան հուսալի ու անվտանգ, որքան առանց էլեկտրոնային միջոցների օգտագործման անցկացվող քվեարկությունը:

2011 թվականին ՀՀ ընտրական նոր օրենսգրքի ընդունմամբ մեր հանրապետությունում ներդրվել է արտասահմանյան բազմաթիվ պետություններում արդեն իսկ կիրառություն ստացած ինտերնետ քվեարկության համակարգը, և նախատեսվել է սույն եղանակով քվեարկելու իրավունք ունեցող սուբյեկտների խիստ սահմանափակ շրջանակ, ինչը չի կարելի արդարացված համարել՝ առավել ևս նկատի ունենալով այն հանգամանքը, որ ՀՀ տարածքում քվեարկությունն առայժմ իրականացվում է բացառապես ավանդական եղանակով: Փաստորեն, արտերկրում բնակվող ՀՀ քաղաքացիների ճնշող մեծամասնությունը Հայաստանի Հանրապետությունում անցկացվող համապետական ընտրությունների ժամանակ զրկված է ցանկացած եղանակով քվեարկությանը մասնակցելու հնարավորությունից՝ քվեարկության օրը ՀՀ տարածքից դուրս գտնվելու դեպքում: Քվեարկության օրը ՀՀ տարածքում կազմավորված տեղամասային կենտրոններում քվեարկելու գործընթացը արտասահմանում բնակվող ՀՀ քաղաքացիներից պահանջում է բավական մեծ ծախսեր (ճանապարհ-

հաճախ, կեցության ծախսեր և այլն), և թեև ընտրություններին մասնակցելը քաղաքացու իրավունքն է, այլ ոչ պարտականությունը, այնուամենայնիվ, արտասահմանում բնակվող ՀՀ քաղաքացիներից քչերի մոտ կառաջանա Հայաստանի Հանրապետությունում զուտ քվեարկելու նպատակով այսպիսի ծախսեր կատարելու ցանկություն: Մյուս կողմից՝ նրանց ճնշող մեծամասնությունն օրենսդրորեն չունի էլեկտրոնային եղանակով քվեարկելու իրավունք: Որպես նշված խնդրի լուծման հնարավոր տարբերակներ՝ առավել նպատակահարմար է կան ընդհանրապես հրաժարվել էլեկտրոնային եղանակով քվեարկության համակարգից, կան ընդլայնել նշված եղանակով քվեարկելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը, կան էլ արտասահմանում բնակվող ՀՀ քաղաքացիներին ՀՀ համապետական ընտրություններին ՀՀ դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություններում կազմավորված տեղամասային կենտրոններում քվեարկելու հնարավորություն ընձեռել: Վերջին դեպքում, անկախ այն հանգամանքից, թե այն ինչպես կիրացվի գործնականում՝ պայմանավորված օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով, կասկածից վեր է, որ նման իրավակարգավորում նախատեսելու դեպքում իրենց ակտիվ ընտրական իրավունքը կիրացնեն արտասահմանում բնակվող ընտրական իրավունք ունեցող անհամեմատ ավելի մեծ թվով ՀՀ քաղաքացիներ, քան գործող իրավակարգավորման պայմաններում:

Մինչև «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 26.02.2007 թվականի ՀՕ-79-Ն օրենքի ընդունումը¹ Հայաստանի Հանրապետության 05.02.1999 թվականի ընտրական օրենսգիրքը² նախատեսում էր, որ արտասահմանում բնակվող կամ գտնվող ՀՀ քաղաքացիների ընտրական իրավունքի իրականացումն ապահովում են ՀՀ դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունները՝ սույն օրենսգրքով և կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով (հոդ.

¹ Ներկայումս չի գործում:

² Ուժը կորցրել է:

2, կետ 2): Վերոնշյալ օրենքի ընդունման անհրաժեշտությունը փորձեցին պայմանավորել 27.11.2005 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում երկքաղաքացիության ինստիտուտի ներդրմամբ, ինչի հետևանքով, ըստ որոշ կարծիքների, էապես կմեծանա սփյուռքի ազդեցությունը Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցող ընտրական գործընթացների վրա: Այսպիսի մտավախությունն, իհարկե, հիմնազուրկ չէ, սակայն, մյուս կողմից, չի կարող բացարձակացվել: Տեսականորեն այսօր էլ արտասահմանում բնակվող ընտրական իրավունք ունեցող ՀՀ քաղաքացիները կարող են մասնակցել ՀՀ համապետական ընտրություններին՝ պայմանով, եթե քվեարկության օրը գտնվեն ՀՀ տարածքում, բացառությամբ էլեկտրոնային եղանակով քվեարկելու իրենց իրավունքն իրացրած ՀՀ քաղաքացիների: Այսինքն՝ իրավունքն իրավաբանորեն ամրագրված է, սակայն դրա իրացման կառուցակարգերը պայմանավորված են բազում դժվարություններով: Մինչդեռ ընդհանուր ընտրական իրավունքը ենթադրում է դրա իրացման հնարավորինս մատչելի, արդյունավետ կառուցակարգերի սահմանում, ինչի բացակայությունը հանգեցնում է քաղաքացիների՝ սահմանադրորեն և միջազգային մի շարք հիմնարար փաստաթղթերով ամրագրված ընդհանուր ընտրական իրավունքի սահմանափակման՝ ընթացակարգային առումով:

3. Նպատակահարմար ենք համարում հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի պատգամավորության թեկնածուների համար նախատեսված քաղաքացիության ու բնակության ցենզերի նվազեցումը՝ ժամանակակից աշխարհում ընթացող միջազգային-իրավական զարգացումների ու դրանց ուղղությունների համատեքստում:

4. Իր դրական և բացասական կողմերով հանդերձ՝ ընտրագրավի ինստիտուտը չի կարելի միանշանակորեն համարել անհրաժեշտ կամ չափազանց սահմանափակումներ ունեցող մի երևույթ: Դեպոզիտի առկայությունն, առաջին հերթին, պետք է հիմնավոր լինի՝ կոնկրետ երկրի իրավիճակից ելնելով: Նույնը վերաբերում է նաև դեպոզիտի չափին և վերադարձի կանոններին: Թեև շատ երկրներ կանգնել են այս ինստիտուտից հրա-

ժարվելու ճանապարհին, այդուհանդերձ, ներկայիս զարգացած մի շարք պետություններ ընտրագրավի վերացումը համարում են ընտրական իրավունքի պատմական հիմքերից հրաժարում և կիրառում են այն ընտրությունների գրեթե բոլոր ձևաչափերում:

5. Արտասահմանյան մի շարք պետությունների ընտրական օրենսդրության համապատասխան նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ, որպես կանոն, նախընտրական քարոզչությունը սկսվում է ընտրություններին մասնակցող անհատների, քաղաքական ուժերի ընտրական ցուցակների գրանցման համար սահմանված ժամկետի ավարտի պահից, որպիսի իրավակարգավորումը մեր կարծիքով միանգամայն տրամաբանական է:

Առաջարկում ենք օրենսդրական համապատասխան փոփոխություն կատարել ՀՀ ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասում՝ սահմանելով, որ նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սկսվում է թեկնածուների, կուսակցությունների ընտրական ցուցակների գրանցման համար սույն օրենսգրքով սահմանված ժամկետի վերջին օրվան հաջորդող օրը: Առաջարկվող օրենսդրական փոփոխության արդյունքում, իհարկե, բավականին կերկարաձգվեն նախընտրական քարոզչության ժամկետները: Սույն խնդրին կարելի է լուծում տալ՝ փոփոխելով համապետական և Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ թեկնածուների, կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակների գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացման և դրանց գրանցման ժամկետները:

6. ՀՀ գործող ընտրական օրենսգիրքը նախատեսում է համապետական և Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ էլեկտրոնային ձևով նախընտրական ծրագրերի ներկայացման հայեցողություն, այլ ոչ պարտականություն՝ կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում տեղադրելու համար (հոդ. 6, մաս 4): Կարծում ենք՝ ՀՀ ընտրական օրենսգրքի սույն նորմը հարկ է փոփոխել՝ էլեկտրոնային ձևով նախընտրական ծրագրերի ներկայացումը կենտրոնական ընտրական հանձնաժողով նախատեսելով որպես պարտականություն: Բացի այդ, նպատակահարմար ենք համարում

օրենսդրորեն ամրագրել նաև համապետական և Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ թեկնածուների, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) պարտականությունը՝ հրատարակել իրենց նախընտրական ծրագրերը պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների հիմնադրած թերթերում՝ նկատի ունենալով նաև ՀՀ ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 12-րդ մասի պահանջը, համաձայն որի՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների հիմնադրած թերթերը և ամսագրերը նախընտրական քարոզչության ժամանակահատվածում պարտավոր են թեկնածուների, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար ապահովել ոչ խտրական և ոչ կողմնակալ պայմաններ:

ՀՀ գործող ընտրական օրենսգրքի 6-րդ հոդվածի 4-րդ մասում անհրաժեշտ է նախատեսել նաև նախընտրական ծրագրերի ներկայացման ժամկետները: Ներկայումս դրանք սահմանված չեն, ինչը վկայում է, որ սույն նորմն առավելապես ձևական բնույթ է կրում: Միայն նշված է, որ կենտրոնական ընտրական հանձնաժողովը այդ ծրագրերը տեղադրում է համացանցային կայքում ներկայացվելուց հետո՝ մինչև հաջորդ աշխատանքային օրվա ավարտը:

7. Նպատակահարմար ենք համարում ՀՀ ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառումը նաև համապետական և Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ թեկնածուների, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) կողմից իրենց նախընտրական ծրագրերը կենտրոնական ընտրական հանձնաժողով՝ հանձնաժողովի սահմանած ձևով և ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետում չներկայացնելու համար:

8. Կարծում ենք՝ իրավական լուծում պահանջող խնդիր է ընտրական գործընթացի մասնակիցների նախընտրական

ծրագրերին ներկայացվող օրենսդրական պահանջների ամրագրումը: Գործնականում նախընտրական ծրագրերին ներկայացվող օրենսդրական միասնական պահանջների մշակման գործընթացը կարող է ոչ իրատեսական թվալ՝ հաշվի առնելով, օրինակ, քաղաքական կուսակցության ծրագրի և քաղաքական կուսակցության նախընտրական ծրագրի դրույթների հաճախակի նույնական լինելու հանգամանքը: Այնուամենայնիվ, համապետական և Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ թեկնածուների, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) կողմից կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվող նախընտրական ծրագրերին իրավական որոշակի պահանջների առաջադրումը կարող է էական դերակատարություն ունենալ ընտրազանգվածին ներկայացվող տարաբնույթ խոստումների բնույթի և դրանց ծավալի հստակեցման հարցում:

9. Նպատակահարմար ենք համարում վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների, ռադիոընկերությունների կողմից թեկնածուների, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար հավասար պայմանների ապահովման գնահատման մշտադիտարկման (մոնիթորինգ) իրականացումը ՀՌԱՀ-ի կողմից՝ սկսած համապետական և Երևանի ավագանու ընտրությունների նշանակման հաջորդ օրվանից: Ընդ որում՝ գնահատման մեթոդաբանությունը պետք է մշակվի այնպես, որ նախատեսի նաև լուսաբանման տոնայնության մշտադիտարկման և գնահատման հնարավորությունը: Այս կապակցությամբ առաջարկում ենք համապատասխան փոփոխություններ կատարել ՀՀ ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ մասերում, ինչպես նաև լրացում կատարել «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածում՝ նախատեսելով ՀՌԱՀ-ի կողմից տուգանքի նշանակման հնարավորություն վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող այն հեռուստաընկերության, ռադիոընկերության նկատմամբ, որը,

համապետական և Երևանի ավագանու ընտրությունների նշանակման հաջորդ օրվանից սկսած, իր լրատվական և այլ հաղորդումներում ՀՌԱՀ-ի կողմից իրականացված մշտադիտարկման արդյունքներով ակնհայտ խտրական մոտեցում կդրսևորի թեկնածուների, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների նկատմամբ: Ընդ որում՝ պատասխանատվության նշված միջոցը կարող է կիրառվել թեկնածուների, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների գրանցման համար ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված վերջին օրվան հաջորդող մեկշաբաթյա ժամկետում, քանզի ընտրությունների նշանակման պահին դեռևս պարզ չէ, թե ովքեր կամ քաղաքական որ ուժերն են մասնակցելու ընտրապայքարին, և բացի այդ, առանձին թեկնածուների, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների գրանցումը համապատասխան իրավական հիմքերի առկայության դեպքում կարող է մերժվել: Նշված դեպքում տուգանք նշանակելիս ՀՌԱՀ-ը պետք է հաշվի առնի համապետական և Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերության, ռադիոընկերության կողմից ակնհայտ խտրական վերաբերմունքը գրանցված թեկնածուների, քաղաքական միավորումների նկատմամբ նախքան նախընտրական քարոզչության պաշտոնական մեկնարկը՝ որպես հիմք ընդունելով իր կողմից իրականացված մշտադիտարկման միջանկյալ արդյունքները:

10. Նպատակահարմար ենք համարում վերանայել ՀՀ ընտրական օրենսգրքի այն նորմը, համաձայն որի՝ նախընտրական քարոզչության ժամանակահատվածի սահմանված լինելը չի սահմանափակում սույն օրենսգրքով չարգելված այլ ժամանակահատվածում քարոզչության իրականացումը (հոդ. 18, մաս 1): Սույն առաջարկն ամենևին չի ենթադրում քարոզչության իրականացման արգելքի նախատեսում՝ սկսած ընտրությունների նշանակման հաջորդ օրվանից: Սակայն, մյուս կողմից, գործող

իրավանորմը հնարավորություն է ընձեռում ընտրական գործընթացի մասնակիցներին նախքան նախընտրական քարոզչության պաշտոնական մեկնարկն ակտիվորեն իրականացնելու բացահայտ և (կամ) քողարկված քարոզչություն կամ հակաքարոզչություն, ինչը ոչ միայն չի խթանում ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վստահության արմատավորմանը, այլև էլ ավելի է խորացնում առկա անվստահությունը:

11. Նպատակահարմար ենք համարում ընդլայնել ՀՀ ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 6-րդ մասում թվարկված սուբյեկտների շրջանակը՝ դրանում ներառելով 18 տարին չլրացած անձանց: Ընդ որում՝ նպատակահարմար է արգելել ոչ միայն անչափահասների ներգրավմամբ նախընտրական քարոզչության իրականացումը, այլև նրանց կերպարների տեսաձայնային կամ այլ ձևով օգտագործումը նախընտրական գովազդներում: Հարկ է նշել, որ «Գովազդի մասին» 30.04.1996 թվականի ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ արգելվում է անչափահասների կերպարների տեսաձայնային կամ այլ ձևով օգտագործումը գովազդում, եթե այն չի վերաբերում անչափահասների համար նախատեսված ապրանքներին:

12. ՀՀ ընտրական օրենսգրքի համաձայն՝ ՀՀ Նախագահի թեկնածուները որպես թեկնածու գրանցվելուց հետո՝ մինչև ընտրությունների արդյունքների ամփոփումը, ազատվում են իրենց աշխատանքային պարտականությունները կատարելուց: Իսկ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցներն ու պաշտոնատար այն անձինք, որոնց նկատմամբ չեն տարածվում ՀՀ ընտրական օրենսգրքի 107-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված սահմանափակումները, Ազգային ժողովի պատգամավորի թեկնածու գրանցվելուց հետո՝ մինչև նախընտրական քարոզչության ավարտը, ժամանակավորապես ազատվում են իրենց աշխատանքային պարտականությունները կատարելուց: ՀՀ ընտրական օրենսգրքին այս առումով բացառություն է նախատեսել քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց մասով (հոդ. 87, մաս 2, հոդ. 107, մաս 2), ինչը, մի կողմից, տրամաբանական է, մյուս կողմից՝ փաստացի հնարավորություն է ընձեռում քաղաքական պաշտոն զբա-

ղեցնող թեկնածուներին օգտագործելու իրենց պաշտոնական կամ ծառայողական դիրքը նախընտրական քարոզչության ժամանակ առավելություն ստանալու համար՝ չնայած սահմանված իրավական արգելքներին:

Քաղաքական պաշտոն զբաղեցնող բոլոր սուբյեկտների համար ՀՀ ընտրական օրենսգրքով նախատեսված բացառության առումով, թերևս, նպատակահարմար է սահմանափակել այսպիսի պաշտոն զբաղեցնող սուբյեկտների շրջանակը: Խոսքը վերաբերում է համայնքների՝ որպես թեկնածու գրանցված գործող ղեկավարներին, այսինքն՝ նպատակահարմար ենք համարում, որպեսզի վերջիններս որպես հանրապետության Նախագահի կամ Ազգային ժողովի պատգամավորի թեկնածուներ գրանցվելուց հետո՝ համապատասխանաբար մինչև ընտրությունների արդյունքների ամփոփումը և նախընտրական քարոզչության ավարտը, ազատվեն (ժամանակավորապես ազատվեն) իրենց աշխատանքային պարտականությունները կատարելուց, ինչը կնպաստի վերջիններիս կողմից ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված՝ վերը նշված ժամանակահատվածներում վարչական ռեսուրսների չարաշահման կանխարգելմանը կամ առնվազն սահմանափակմանը՝ հաշվի առնելով նաև ՀՀ ընտրական օրենսգրքի այն նորմը, համաձայն որի՝ հանրապետության Նախագահի թեկնածուներն իրավունք չունեն օգտագործելու իրենց պաշտոնական դիրքը նախընտրական քարոզչության ժամանակ առավելություն ստանալու համար (հոդ. 87, մաս 2): Հատկանշական է, որ սույն սահմանափակումը վերաբերում է նախընտրական քարոզչության ժամանակահատվածին, որը, գործող իրավակարգավորմանը համապատասխան, սկսվում է թեկնածուների, կուսակցությունների ընտրական ցուցակների գրանցման համար ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետի վերջին օրվան հաջորդող 7-րդ օրը և ավարտվում քվեարկության օրվանից մեկ օր առաջ (հոդ. 18, մաս 1): ՀՀ ընտրական օրենսգրքի 87-րդ հոդվածի 2-րդ մասում, միաժամանակ, սահմանված է, որ հանրապետության Նախագահի թեկնածուներն ազատվում են իրենց աշխատանքային պարտականությունները կատարելուց, որպես թեկնածու գրանցվելուց

հետո՝ մինչև ընտրությունների արդյունքների ամփոփումը, բացառությամբ քաղաքական պաշտոն գրաղեցնողների, այսինքն՝ վերջին դեպքում խոսքը վերաբերում է ավելի տևական ժամանակահատվածի: Այս առումով, թեև ՀՀ ընտրական օրենսգրքի 22-րդ հոդվածով նախատեսված են քաղաքական, հայեցողական, քաղաքացիական պաշտոններ գրաղեցնող, պետական կամ համայնքային ծառայող հանդիսացող թեկնածուների նախընտրական քարոզչության սահմանափակումները, այնուամենայնիվ, չի բացառվում ՀՀ Նախագահի՝ քաղաքական պաշտոն գրաղեցնող թեկնածուների կողմից իրենց պաշտոնական դիրքի օգտագործման հնարավորությունը նախընտրական քարոզչության՝ ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված ժամանակահատվածից դուրս:

13. Համայնքների՝ որպես հանրապետության Նախագահի կամ Ազգային ժողովի պատգամավորի թեկնածուներ գրանցված գործող ղեկավարների կողմից վարչական ռեսուրսների հավանական չարաշահումը կանխարգելելու կամ առնվազն սահմանափակելու նկատառումից ելնելով նաև՝ նպատակահարմար ենք համարում լրացում կատարել ՀՀ ընտրական օրենսգրքի 132-րդ և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածներում՝ ամրագրելով, որ նույն անձը չի կարող ավելի, քան երկու անգամ անընդմեջ ընտրվել համայնքի ղեկավարի պաշտոնում:

Վերջին տարիներին ՀՀ համայնքներում անցկացված տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքները վկայում են, որ, որպես կանոն, համայնքների գործող ղեկավարները վերընտրվում են: Ընդ որում՝ նրանցից շատերը, որպես տվյալ համայնքի ղեկավար, արդեն իսկ պաշտոնավարելիս են լինում տևական ժամանակ: Իհարկե, չպետք է բացառել, որ օրենսդրական առաջարկվող սահմանափակման գործողության պայմաններում կոնկրետ համայնքի բնակչությունն, արդյունավետ գնահատելով տվյալ համայնքի գործող ղեկավարի կատարած աշխատանքը, այնուամենայնիվ, հնարավորություն չի ունենա ընտրելու նրան ավելի, քան 2 անգամ անընդմեջ: Միաժամանակ հարկ է նշել, որ սույն սահմա-

նափականն օրենսդրական ամրագրման դեպքում էականորեն կմեծանա նաև ընտրությունների ժամանակահատվածում նկատելի որոշ բացասական երևույթների հաղթահարման հավանականությունը: Մասնավորապես առավել իրատեսական կդառնան անհատների կամ քաղաքական ուժերի միջև հավասար հիմունքներով ընտրապայքար ծավալելու հնարավորությունը, առողջ մրցակցությունը, տեղական նշանակության հիմնախնդիրներին քաջածանոթ սուբյեկտների ներգրավման հնարավորությունը դրանց լուծմանը: Ի վերջո, նույն անձի կողմից ընտրվելու պարբերականության առումով իրավական որևէ սահմանափակման բացակայությունը ինչ-որ չափով խոչընդոտում է տեղական մակարդակում ժողովրդավարության զարգացմանը:

Մեր կարծիքով նույն անձի կողմից ավելի, քան 2 անգամ անընդմեջ համայնքի ղեկավարի պաշտոնում ընտրվելը բացառող՝ օրենսդրական ամրագրում պահանջող դրույթը չի հակասի ՀՀ Սահմանադրությանը, որով այսպիսի սահմանափակում է նախատեսված միայն հանրապետության Նախագահի պաշտոնում ընտրվելու համար (հոդ. 50): Սույն դրույթը չի հակասի նաև Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիային, թեև վերջինս տեղական ինքնակառավարման մարմիններում ընտրվելու պարբերականության առումով որևէ սահմանափակում չի բովանդակում:

Առաջ քաշված հարցադրման հետ կապված՝ անհրաժեշտ է հստակեցնել նաև, թե երբ կարող է նույն անձը վերստին առաջադրվել համայնքի ղեկավարի թեկնածուի պաշտոնում՝ նկատի ունենալով այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են, օրինակ, համայնքի ղեկավարի հրաժարականը, մահը, նրան ազատազրկման դատապարտելը, անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելը, նրա կողմից անհամատեղելի պաշտոն զբաղեցնելը: Այս առումով նպատակահարմար ենք համարում օրենսդրորեն այսպիսի հնարավորության նախատեսումը, անկախ համայնքի ղեկավարի լիազորությունների վաղաժամկետ դադարման հիմքերից, նրա լիազորությունների ավարտից հետո:

14. Նպատակահարմար ենք համարում ընդլայնել ՀՀ ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված արգելքների գործողության ժամանակահատվածը. մասնավորապես՝ դրանք նախատեսել՝ սկսած թեկնածուների, ընտրական ցուցակների գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը համապատասխան ընտրական հանձնաժողով ներկայացնելու՝ օրենքով սահմանված վերջնաժամկետի հաջորդ օրվանից, ինչը կնպաստի նշված սուբյեկտների՝ ընտրություններին մասնակցության հնարավորինս հավասար պայմանների ստեղծմանը, նրանց միջև առողջ մրցակցության բարենպաստ միջավայրի ձևավորմանը և ընտրությունների ժամանակահատվածում ընտրողների կարծիքների ձևավորման ու փոփոխման վրա ներգործող նյութական ռեսուրսների օգտագործման հնարավորության հնարավորինս սահմանափակմանը:

15. ՀՀ օրենսդրությամբ ամրագրված կարգավորումներին ընդհանուր առմամբ հաջողվել է ապահովել ընտրական հանձնաժողովների որոշումների, գործողությունների (անգործության) բողոքարկման միասնական ու ենթակայական համակարգի ստեղծումն ու այդ բնագավառում երկակի ընդդատության բացառումը: Միևնույն ժամանակ ՀՀ տարբեր օրենսդրական ակտերով նախատեսված կարգավորումները (մասնավորապես, օրինակ, վարչական դատավարության օրենսգրքի) կարող են հանգեցնել վերոնշյալ դրույթների ոչ միանշանակ մեկնաբանությունների և այնպիսի տպավորություն ստեղծել, որ ՀՀ օրենսդրությունը տալիս է բողոքը վերադաս հանձնաժողով կամ դատարան ներկայացնելու միջև ընտրություն կատարելու հնարավորություն: Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ կարծում ենք, որ քննարկվող հիմնախնդրին առնչվող ՀՀ օրենսդրական կարգավորումների միանշանակ ընկալումն ու մեկնաբանությունն ապահովելու տեսանկյունից նպատակահարմար է ՀՀ ընտրական օրենսգրքում դրույթ ամրագրել այն մասին, որ քննարկվող հարցերով դատարան դիմելուց առաջ անհրաժեշտ է դիմում ներկայացնել վերադաս ընտրական հանձնաժողով (բնականաբար, բացառությամբ այն գործերի, որոնցով նախատեսված է անմիջականորեն դատարան դիմելու հնարա-

վորություն, օրինակ՝ Ազգային ժողովի՝ մեծամասնական ընտրակարգով պատգամավորի ընտրությունների արդյունքների, համայնքի ղեկավարի ու ավագանու անդամների ընտրությունների արդյունքների վերաբերյալ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշումները, որոնք բողոքարկվում են համապատասխանաբար Սահմանադրական դատարան և վարչական դատարան, կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ համապետական ընտրությունների արդյունքների վերաբերյալ որոշումները, որոնք բողոքարկվում են Սահմանադրական դատարան):

16. Կարծում ենք՝ նպատակահարմար չէ ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները (անգործությունը) բողոքարկելու՝ տեղական դիտորդների հնարավորությունը սահմանափակել որոշակի սուբյեկտիվ իրավունքների խախտման կամ դրա վտանգի հանգամանքով, և արդյունավետ ենք համարում ՀՀ ընտրական օրենսգրքով նախատեսված հիշյալ սահմանափակման վերացումը:

17. ՀՀ ընտրական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «Եթե հանձնաժողովի անդամը կամ վստահված անձը գտնում է, որ քվեարկության ընթացքում տեղի է ունեցել սույն օրենսգրքով նախատեսված քվեարկության կարգի խախտում, ապա իրավունք ունի պահանջելու, որ իր գնահատականը արձանագրվի գրանցամատյանում»:

Կարծում ենք, որ հիշյալ իրավասությամբ սուկ հանձնաժողովի անդամներին և վստահված անձանց օժտելու առնչությամբ ՀՀ օրենսդրությամբ ամրագրված վերոնշյալ իրավակարգավորումն ամբողջական չէ, և գրանցամատյանում իրենց գնահատականն արձանագրելու հնարավորություն պետք է ունենան նաև դիտորդները՝ իրենց գործառույթների ու առաքելության լիարժեք իրականացումն ապահովելու նպատակով:

18. Մեր կարծիքով նպատակահարմար կլիներ, որպեսզի Հայաստանի Հանրապետությունում ընտրական հանձնաժողովների՝ իրենց սուբյեկտիվ իրավունքների խախտման կամ դրա վտանգի հետ չկապված որոշումները, գործողությունները (անգործությունը) (այդ թվում՝ քվեարկության/ընտրությունների

արդյունքները կամ դրանց հետ կապված որոշումները վիճարկելու) բողոքարկելու իրավասությամբ օժտված լինեին նաև քաղաքացիների խմբերը:

Ինչ վերաբերում է վերոնշյալ հիմնախնդրին առնչվող օրենսդրական կարգավորումներին, կարծում ենք, որ դրանք անհրաժեշտ է կանոնակարգել այն ուղղությամբ, որ ընտրական իրավունքների պաշտպանության հիշյալ մեխանիզմը հիմնվի հանրային և մասնավոր շահերի հավասարակշռման ու քննարկվող իրավունքի չարաշահման անթույլատրելիության վրա: Այդ համատեքստում օրենսդիրն իրավասու է հանրային և մասնավոր շահերի անհրաժեշտ հավասարակշռությունն ապահովելու նպատակով նախատեսել քաղաքացիների կողմից հիշյալ իրավունքի իրացման որոշակի պայմաններ ու կարգ, մասնավորապես, օրինակ, քվեարկության արդյունքների առնչությամբ ընդունված որոշումների բողոքարկման հնարավորություն սուկ այն քաղաքացիների համար, ովքեր քվեարկել են կոնկրետ ընտրական տեղամասում:

Վերը նշված առաջնահերթությունների ընտրության և հավասարակշռության ապահովման համատեքստում է անհրաժեշտ դիտարկել նաև ՀՀ օրենսդրի հայեցողությունը՝ ընտրելու, թե արդյոք քաղաքացիների խմբերին անհրաժեշտ է հնարավորություն տալ վիճարկելու սուկ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքները, թե նաև ընտրությունների արդյունքների վերաբերյալ ընդունված որոշումները: Միևնույն ժամանակ հարկ է նկատի ունենալ, որ անկախ այն հանգամանքից, թե ինչպիսի մոտեցում կորդեգրվի սահմանադրի և/կամ օրենսդրի կողմից հիշյալ հիմնախնդրի առնչությամբ, կարևորագույն հանգամանքը տվյալ պարագայում այն հրամայականի ապահովումն է, որպեսզի քաղաքացիները (կամ նրանց խմբերը) օժտված լինեն առնվազն որևէ փուլում հիշյալ արդյունքները կամ դրանց առնչությամբ ընդունված որոշումները վիճարկելու հնարավորությամբ՝ հաշվի առնելով քննարկվող հիմնախնդրի արդյունավետ կարգավորման համար անհրաժեշտ վերոնշյալ հանգամանքներն ու դրան առնչվող միջազգային-իրավական չափորոշիչները: Ավելին՝ կարևոր է, որպեսզի իրավասու սուբյեկտ-

ների կողմից հիշյալ իրավունքն օգտագործվի բարեխղճորեն, սոսկ որպես ընտրական իրավունքի պաշտպանության միջոց ու չծառայեցվի քաղաքական պայքարի անձնավորված շահերին: Հակառակ պարագայում քննարկվող համակարգը կվերածվի պատրանքային բնույթ ունեցող լուծումի՝ վտանգելով ընտրությունների սահմանադրական արժեքն ու լեգիտիմությունը:

19. Կարծում ենք, որ ընտրական իրավունքի պաշտպանությանն առնչվող հարցերով դատական ակտերի բողոքարկման հնարավորության բացակայությունը սահմանափակում է արդյունավետ իրավական պաշտպանության մատչելիությունը՝ բացասաբար անդրադառնալով ընտրական գործընթացների նկատմամբ հասարակության վստահության բարձրացմանն ուղղված մեխանիզմների վրա:

Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ առաջարկում ենք ընտրական իրավունքի պաշտպանությանն առնչվող առանձին գործերով նախատեսել ՀՀ վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի բողոքարկման հնարավորություն: Միևնույն ժամանակ կարծում ենք, որ նմանատիպ հարցերով բողոքարկման վարույթի առկայության պարագայում չեն կարող գործել գործի քննության համար նախատեսված ընդհանուր ժամկետները, և պետք է սահմանվեն գործի քննության հատուկ ժամկետներ՝ հիմքում ունենալով այն հանգամանքը, որ ներկայացված գործերի քննությունն անհրաժեշտ է իրականացնել այնպիսի ժամանակահատվածում, որպեսզի չխաթարվեն հետագա ընտրական գործընթացները:

20. Կարծում ենք, որ արդյունավետ իրավական պաշտպանության մատչելիությունն ապահովելու առումով նպատակահարմար է ՀՀ ընտրական օրենսգրքում հղում կատարել համապատասխան դատավարական օրենսդրությանն այն բոլոր դեպքերում, երբ ներկայացվող գործի քննության առանձնահատկությունները սահմանված են այդ օրենսդրությամբ: Օրինակ՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 46-րդ հոդվածը սահմանում է, որ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի ընտրությունների արդյունքների վերաբերյալ որոշումները կարող են բողոքարկվել Սահմանադրական դատարան: Հա-

մայնքի ղեկավարի ու ավագանու անդամների ընտրությունների արդյունքների վերաբերյալ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշումները կարող են բողոքարկվել վարչական դատարան: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ համապետական ընտրությունների արդյունքների վերաբերյալ որոշումները կարող են բողոքարկվել Սահմանադրական դատարան: Հիշյալ գործերի քննության առանձնահատկությունները սահմանված են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով, հետևաբար նպատակահարմար ենք համարում ընտրական օրենսգրքի համապատասխան դրույթներում դրանց հղում կատարելը:

21. Անկախ քննարկվող կազմակերպական կառուցակարգերի կարևորությունից՝ ընտրական հարցերով բողոքարկման արդյունավետ համակարգի ձևավորումն ու այդ նպատակին ուղղված մեխանիզմների կատարելագործումն առաջին հերթին պայմանավորված են հասարակության և պետական մարմինների իրավական մշակույթի համապատասխան մակարդակով: Այդ առումով առաջին հերթին անհրաժեշտ է, որպեսզի ընտրական իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտները զերծ մնան հիշյալ գործընթացի նկատմամբ ձևական մոտեցումից՝ պաշտպանություն օգտագործելով ընտրական իրավունքների պաշտպանության համար օրենքով նախատեսված բոլոր միջոցները: Դա վերաբերում է ինչպես ընտրական հանձնաժողովներին և դատարաններին, որոնք ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ բողոքները քննելիս պետք է ապահովեն նախատեսված իրավական մեխանիզմների արդյունավետ կիրառումը, հետևաբար նաև՝ ընտրական իրավունքների արդյունավետ պաշտպանությունն ու հասարակության վստահությունը ընտրությունների կազմակերպման ու անցկացման նկատմամբ, այնպես էլ քաղաքացիներին, որոնք իրենց հերթին պետք է բավարար պատասխանատվությամբ մոտենան ընտրությունների ինստիտուտին՝ այն ընկալելով որպես ժողովրդի իշխանության իրականացման կարևորագույն եղանակներից ու ժողովրդի հավաքական կամահայտնության արտահայտման դրսևորումներից մեկը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Г. П. Акимова, А. К. Попов, А. В. Соловьев, Аналитическое исследование систем для электронного голосования // Труды ИСА РАН, 2007 (<http://www.isa.ru/proceedings/images/documents/2007-29/123-138.pdf>).
2. И. Борисов, В. Журавлев, Развитие электронного голосования // Журнал о выборах, N 4, 2011 (www.cikrf.ru/about/library/journal/2011/n4/Borisov.pdf).
3. Гертнер Д. А., Электронная совесть – феномен информационных технологий // Защита информации. Конфидент. СПб., 2004, N 6.
4. Дурнова И. А., Зарубежный опыт проведения интернет-выборов и проблемы для России // Информационное право, 2007, N 2(9).
5. М. Кудрявцев., Постановление Конституционного Суда РФ об агитации: присклальный взгляд. Законодательство и практика масс-медиа. –2004, № 7–8.
6. Leontine Loeber. «E-Voting in the Netherlands; from General Acceptance to General Doubt in Two Years» // www.e-voting.cc/files/loeber_e-voting-in-the-netherlands_21-30.
7. Philip Brasor & Masako Tsubuku. Candidate deposit requirement guarantees same faces on the ballot. October 26th, 2012, <http://blog.japantimes.co.jp/yen-for-living/candidate-deposit-requirement-guarantees-same-faces-on-the-ballot/>
8. Rosa M. Fernández, Esther González, José Manuel Vera. The electoral legislation of the Basque autonomous community regarding electronic vote // www.e-voting.cc/files/fernandez_basque_e-voting_71-83.
9. Standing at a UK Parliamentary general election in Great Britain. August 2009, http://www.electoralcommission.org.uk/_data/assets/electoral_commission_pdf_file/0007/79540/UKPGE-nominations-factsheet-FINAL.pdf
10. Հայաստանի հեռարձակող ՋԼՄ-ներում 2007 և 2008 թթ. խորհրդարանական և նախագահական ընտրությունների լուսաբանումների դիտարկումները (Երևանի մամուլի ակումբ, «Թիմ» հետազոտությունների կենտրոն, Բաց հասարակության ինստիտուտի ՋԼՄ-ների ցանցային ծրագիր (Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ)), Երևան–2007, 2008:
11. Երևանի մամուլի ակումբի, Եվրոպական միության, Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության Երևանյան գրասենյակի՝ Հայաստանի հեռարձակվող ՋԼՄ-ների կողմից 2012 թվականի մայիսի 6–ի ՀՀ խորհրդարանական ընտրությունների լուսաբանման մշտադիտարկման հաշվետվությունը (www.yrc.am):
12. Երևանի մամուլի ակումբի, Եվրոպական միության, Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության Երևանյան գրասենյակի՝ Հայաստանի հեռարձակվող ՋԼՄ-ներում 2013 թվականի ՀՀ

նախագահական ընտրությունների լուսաբանման մշտադիտարկման հաշվետվությունը (www.ypc.am):

13. ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ընտրությունների դիտորդական առաքելության վերջնական զեկույցը ՀՀ Ազգային ժողովի 12.05.2007 թվականի ընտրությունների վերաբերյալ (Վարչակազմ, 10.09.2007):
14. ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ընտրությունների դիտորդական առաքելության վերջնական զեկույցը ՀՀ Ազգային ժողովի 06.05.2012 թվականի ընտրությունների վերաբերյալ (Վարչակազմ, 26.06.2012):
15. ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ընտրությունների դիտորդական առաքելության վերջնական զեկույցը ՀՀ Նախագահի 18.02.2013 թվականի ընտրությունների վերաբերյալ (Վարչակազմ, 08.05.2013):
16. ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի և Եվրախորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով)՝ ՀՀ ընտրական նոր օրենսգրքի նախագծի վերաբերյալ 20.04.2011 թվականի համատեղ եզրակացությունը (CDL(2011)020):
17. Հայաստանի Հանրապետության 05.07.1995 թ. Սահմանադրություն (27.11.2005 թ. փոփոխություններով):
18. Լատվիայի Հանրապետության Սահմանադրություն:
19. Լեհաստանի Սահմանադրություն:
20. Լիտվայի Հանրապետության Սահմանադրություն:
21. Ղազախստանի Հանրապետության Սահմանադրություն:
22. Վրաստանի Հանրապետության Սահմանադրություն:
23. Ֆիլիպինների Սահմանադրություն:
24. «Լիտվայի Հանրապետության Սեյմի ընտրությունների մասին» օրենք:
25. «Խորվաթիայի Պառլամենտի ներկայացուցիչների ընտրության մասին» օրենք:
26. «Կուսակցությունների մասին» 03.07.2002 թվականի ՀՀ օրենք:
27. Հայաստանի Հանրապետության 05.02.1999 թվականի ընտրական օրենսգիրք (ուժը կորցրել է 26.06.2011, ՀՕ-164-Ն):
28. Հայաստանի Հանրապետության 26.05.2011 թվականի ընտրական օրենսգիրք:
29. Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 10.10.2005 թվականի՝ «Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչություններում և հյուպատոսական հիմնարկներում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ընտրական և (կամ) հանրաքվեին մասնակցելու իրավունքի իրականացումն ապահովելու կարգի մասին» թիվ 49-Ն որոշման հավելվածի 8-րդ կետը (որոշումն ուժը կորցրել է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 14.03.2007

թվականի՝ «Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 52-Ն որոշմամբ):

30. ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 31.01.2012 թվականի թիվ 19-Ն որոշումը «Համապետական ընտրություններին Հայաստանի Հանրապետության դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություններում դիվանագիտական ծառայություն անցնող ընտրողների և նրանց հետ արտերկրում բնակվող ընտանիքի՝ ընտրելու իրավունք ունեցող անդամների՝ էլեկտրոնային եղանակով քվեարկության կարգը և ժամկետները սահմանելու մասին»:
31. ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2012 թվականի մարտի 15-ի N 57-Ա որոշումը:
32. ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2012 թվականի մարտի 15-ի N 58-Ա որոշումը:
33. ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2012 թվականի մարտի 21-ի N 65-Ա որոշումը:
34. ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2012 թվականի մարտի 21-ի N 66-Ա որոշումը:
35. ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2012 թվականի մարտի 21-ի N 67-Ա որոշումը:
36. ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2012 թվականի ապրիլի 17-ի N 131-Ա որոշումը:
37. ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2012 թվականի ապրիլի 20-ի N 134-136-Ա, 138-146-Ա, 149-Ա, 152-154-Ա, 156-168-Ա, 172-176-Ա որոշումները:
38. ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2012 թվականի ապրիլի 20-ի N 137-Ա որոշումը:
39. ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2012 թվականի ապրիլի 20-ի N 147-Ա որոշումը:
40. ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2012 թվականի ապրիլի 20-ի N 148-Ա որոշումը:
41. ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2012 թվականի մայիսի 13-ի N 263-Ա որոշումը:
42. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 27.06.2012 թվականի արտահերթ գեկույցը 2012 թվականի ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների վերաբերյալ:
43. ՀՀ սահմանադրական դատարանի 10.06.2007 թվականի ՍԴՈ-703 որոշումը:

44. ՀՀ սահմանադրական դատարանի՝ 28.11.2007 թվականի ՍԴՈ-719 որոշումը:
45. ՀՀ սահմանադրական դատարանի 08.03.2008 թվականի ՍԴՈ-736 որոշումը:
46. ՀՀ սահմանադրական դատարանի 30.06.2009 թվականի ՍԴՈ-810 որոշումը:
47. ՀՀ սահմանադրական դատարանի 31.05.2012 թվականի ՍԴՈ-1028 որոշումը:
48. ՀՀ սահմանադրական դատարանի՝ 18.12.2012 թվականի ՍԴՈ-1063 որոշումը:
49. ՀՀ սահմանադրական դատարանի 05.03.2013 թվականի ՍԴՈ-1076 որոշումը:
50. ՀՀ սահմանադրական դատարանի՝ 14.03.2013 թվականի ՍԴՈ-1077 որոշումը:
51. ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք:
52. «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» 09.10.2000 թվականի ՀՀ օրենքը (նոր խմբագրությամբ շարադրվել է 10.06.2010 թվականին (ՀՕ-100-Ն)):
53. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրություն:
54. Մոլդովայի Հանրապետության ընտրական օրենսգիրք:
55. Ռուսաստանի Դաշնության սահմանադրական դատարանի՝ 22.04.2012 թ. որոշումը (<http://www.ksrf.ru/ru/Decision/Pages/default.aspx>):
56. Վարչական իրավախախտումների վերաբերյալ 06.12.1985 թ. Հայաստանի Հանրապետության օրենսգիրք:
57. Վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների, ռադիոընկերությունների կողմից 2013 թվականի փետրվարի 18-ի ՀՀ Նախագահի ընտրությունների նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման վերաբերյալ ՀՌԱՀ մշտադիտարկման արդյունքները և եզրակացությունը (հաստատված է ՀՌԱՀ 2013 թվականի փետրվարի 22-ի թիվ 3-Ա որոշմամբ):
58. Վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների, ռադիոընկերությունների կողմից 2013 թվականի մայիսի 5-ի երևանի ավագանու ընտրությունների նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման վերաբերյալ ՀՌԱՀ մշտադիտարկման արդյունքները և եզրակացությունը (հաստատված է ՀՌԱՀ 2013 թվականի մայիսի 8-ի թիվ 10-Ա որոշմամբ):

59. Վրաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք:
60. Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիա (Ստրասբուրգ, 15.10.1985 թ.):
61. Декларация Межпарламентской Ассамблеи государств–участников Содружества Независимых Государств “О принципах международного наблюдения за выборами и референдумами в государствах–участниках Содружества Независимых Государств”, Санкт–Петербург, 2008 г.
62. Заключение группы наблюдателей от Межпарламентской Ассамблеи государств–участников Содружества Независимых Государств на выборах Национального Собрания Республики Армения 6 мая 2012 года.
63. Закон Республики Узбекистан «О выборах в Олий Мажлис Республики Узбекистан» (дейст. ред.).
64. Закон Республики Узбекистан «О выборах Президента Республики Узбекистан» (дейст. ред.).
65. Закон Туркменистана от 4 мая 2013 года “Об утверждении и введении в действие Избирательного кодекса Туркменистана” (вступил в силу с 01.07.2013 г.).
66. “Избирательный кодекс Республики Беларусь” от 11.02.2000 N 370–3.
67. “Кодекс Российской Федерации об административных правонарушениях” от 30.12.2001 N 195–ФЗ (ред. от 07.06.2013).
68. Конвенция “О стандартах демократических выборов, избирательных прав и свобод в государствах–участниках Содружества Независимых Государств” (Межпарламентская Ассамблея государств–участников Содружества Независимых Государств), Кишинев, 2002 г.
69. Конституционный закон Кыргызской Республики “О выборах Президента Кыргызской Республики и депутатов Жогору Кенеша Кыргызской Республики” от 2 июля 2011 года N 68 (в ред. конституционного Закона КР от 25 ноября 2011 года N 221).
70. Конституционный закон Республики Казахстан “О выборах в Республике Казахстан” от 28.09.1995 N 2464.
71. Постановление Конституционного Суда Российской Федерации от 30 октября 2003 года №15–П по делу о проверке конституционности отдельных положений Федерального закона «Об основных гарантиях избирательных прав и права на участие в референдуме граждан Российской Федерации» от 12 июня 2002 года № 67–ФЗ в связи с запросом группы депутатов Государственной Думы Федерального Собрания Российской Федерации и жалобами граждан С. А. Бунтмана, К. А. Катаняна и К. С. Рожкова.
72. Постановление Центральной избирательной комиссии Российской Федерации №90/744-4 от 20 февраля 2004 года «О жалобах кандидатов на

должность Президента Российской Федерации Н. М. Харитонов и И. М. Хакамады».

73. Рекомендации для международных наблюдателей от Содружества Независимых Государств по наблюдению за выборами и референдумами (новая редакция), Межпарламентская Ассамблея государств-участников Содружества Независимых Государств, Санкт-Петербург, 2011 г.
74. Рекомендация N R (99) 15 Комитета Министров государств-членов Совета Европы о мерах по освещению избирательной кампании средствами массовой информации (принята Комитетом Министров 9 сентября 1999 года на 678 встрече заместителей министров).
75. Рекомендация R (2004)11 Комитета Министров СЕ государствам-членам по правовым, организационным и техническим стандартам электронного голосования (принята Комитетом Министров 30 сентября 2004 года на 898-ом заседании).
76. Рекомендация Комитета Министров Совета Европы CM/Rec(2009)1 государствам-участникам Совета Европы по электронной демократии (принята Комитетом Министров 18 февраля 2009 года на 1049-м собрании заместителей министров).
77. Рекомендации по совершенствованию законодательства государств-участников МПА СНГ в соответствии с международными избирательными стандартами (Межпарламентская Ассамблея государств-участников Содружества Независимых Государств, постановление № 36-13 от 16 мая 2011 года).
78. Ситаропулос и Зякумопулос против Греции (N 42202/07). По материалам Постановления Европейского Суда по правам человека от 8 июля 2010 года (вынесено I Секцией).
79. Ситаропулос и Зякумопулос против Греции (N 42202/07). По материалам Постановления Европейского Суда по правам человека от 15 марта 2012 года (вынесено Большой Палатой).
80. Федеральный закон от 12.06.2002 N 67-ФЗ "Об основных гарантиях избирательных прав и права на участие в референдуме граждан Российской Федерации" (ред. от 07.05.2013).
81. Федеральный закон от 18.05.2005 N 51-ФЗ "О выборах депутатов Государственной Думы Федерального Собрания Российской Федерации" (в ред. от 02.07.2013).
82. Федеральный закон от 10.01.2003 N 19-ФЗ "О выборах Президента Российской Федерации" (ред. от 07.05.2013).
83. Федеральный закон от 11.07.2001 N 95-ФЗ "О политических партиях" (ред. от 07.05.2013).

84. CDL-AD (2002) 23 rev, “Code of Good Practice in Electoral Matters: Guidelines and Explanatory Report”, Adopted by the Venice Commission at its 52nd session (Venice, 18–19 October 2002).
85. CDL-AD(2011)032, “Joint Final Opinion on the Electoral Code of Armenia”, Adopted by the Council for Democratic Elections at its 38th meeting (Venice, 13 October 2011) and by the Venice Commission at its 88th Plenary Session (Venice, 14–15 October 2011).
86. CDL-AD(2012)002, Opinion “On the Federal Law on the Election of the Deputies of the State Duma of the Russian Federation”, Adopted by the Council for Democratic Elections at its 40th meeting (Venice, 15 March 2012) and by the Venice Commission at its 90th Plenary Session (Venice, 16–17 March 2012).
87. CDL-AD(2013)016, Joint Opinion “On the Draft Amendments to the Laws on Election of People’s Deputies and on the Central Election Commission and on the Draft Law on Repeat Elections of Ukraine”, Adopted by the Council for Democratic Elections at its 45th meeting (Venice, 13 June 2013) and by the Venice Commission at its 95th Plenary Session (Venice, 14–15 June 2013).
88. Charter of the City of Cincinnati.
89. Charter of the City of Clovis.
90. Charter of the City of Houston.
91. Charter of the City of Irvine.
92. Charter of the City of San Antonio.
93. Document of the Copenhagen Meeting of the Conference on the Human Dimension of the CSCE, 1990.
94. Electoral Justice: The International IDEA Handbook, http://www.idea.int/publications/electoral_justice/upload/inlay-Electoral-Justice.pdf
95. Guidelines for Understanding, Adjudicating, and Resolving Disputes in Elections (GUARDE), Edited by Chad Vickery, International Foundation for Electoral Systems, 2011, http://www.ifes.org/~media/Files/Publications/Books/2011/GUARDE_final_publication.pdf
96. Law of Germany “On the Scrutiny of Elections”.
97. New York City Charter.
98. Office for Democratic Institutions and Human Rights, “Resolving Election Disputes in the OSCE Area: Towards a Standard Election Dispute Monitoring System”, <http://www.osce.org/odihr/elections/17567>
99. REPUBLIC OF ARMENIA PRESIDENTIAL ELECTION, 18 February 2013, OSCE/ODIHR Election Observation Mission Final Report, <http://www.osce.org/odihr/elections/101314>

100. REPUBLIC OF KAZAKHSTAN EARLY PARLIAMENTARY ELECTIONS, 15 January 2012, OSCE/ODIHR Election Observation Mission Final Report, <http://www.osce.org/odihr/elections/89401>
101. REPUBLIC OF LITHUANIA PARLIAMENTARY ELECTIONS, 14 October 2012, OSCE/ODIHR Election Assessment Mission Report, <http://www.osce.org/odihr/98586>
102. UKRAINE PARLIAMENTARY ELECTIONS, 28 OCTOBER 2012, OSCE/ODIHR Election Observation Mission Final Report, <http://www.osce.org/odihr/98578>
103. Recommendation No. R (95) 5 of the Committee of Ministers to Member States concerning the Introduction and Improvement of the Functioning of Appeal Systems and Procedures in Civil and Commercial Cases.
104. Resolution 1897 (2012) of the Parliamentary Assembly “Ensuring greater democracy in elections”, <http://assembly.coe.int/ASP/Doc/XrefViewPDF.asp?FileID=19121&Language=en>
105. UN Human Rights Committee General Comment 25.
106. CASE OF OLUJIĆ v. CROATIA (Application no. 22330/05, JUDGMENT 5 February 2009, FINAL 05/05/2009).
107. ECHR Py v. France, 11 January 2005, Application no. 6289/01.
108. JUDGMENT on CASE OF HIRST v. THE UNITED KINGDOM (No. 2) (Application no. 74025/01), 6 October 2005.
109. www.concourt.am
110. www.elections.am
111. <http://www.unhchr.ch/tbs/doc.nsf/0/d0b7f023e8d6d9898025651e004bc0eb>
112. http://www.lrkt.lt/Documents2_e.html
113. <http://www.trybunal.gov.pl/eng/index.htm>
114. http://election.kz/docs/zakon_o_vaborah_ang.pdf
115. http://www3.lrs.lt/pls/inter3/dokpaieska.showdoc_l?p_id=430477
116. http://transparency.ge/sites/default/files/August%202012,%20Election_Code_of_Georgia_EN_-_codified.pdf
117. <http://base.consultant.ru/cons/cgi/online.cgi?req=doc;base=LAW;n=146237>
118. <http://base.consultant.ru/cons/cgi/online.cgi?req=doc;base=LAW;n=148643>
119. <http://base.consultant.ru/cons/cgi/online.cgi?req=doc;base=LAW;n=146203>
120. [http://hudoc.echr.coe.int/sites/eng/pages/search.aspx?i=001-70442#{%22itemid%22:\[%22001-70442%22\]}](http://hudoc.echr.coe.int/sites/eng/pages/search.aspx?i=001-70442#{%22itemid%22:[%22001-70442%22]})
121. Electronic Voting // http://en.wikipedia.org/wiki/Electronic_voting#Overview
122. <http://aceproject.org/ace-ru/focus/e-voting/countries>

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
1. Ընտրական իրավունքի իրացման հետ կապված որոշ հիմնախնդիրներ.....	7
1.1. Ազատագրկման դատապարտված և պապիժը կրող քաղաքացիների ընտրական իրավունքն ու այդ հիմնախնդրին առնչվող ՀՀ օրենսդրական կարգավորումների կատարելագործման հրամայականը.....	7
1.2. Արտասահմանում բնակվող ՀՀ քաղաքացիների ակտիվ ընտրական իրավունքի իրացման հետ կապված որոշ հիմնախնդիրներ.....	11
2. Պասիվ ընտրական իրավունքի ցենզերին առնչվող որոշ հիմնախնդիրներ. թեկնածուների բնակության ու քաղաքացիության ցենզին առնչվող ՀՀ իրավակարգավորումներն ու դրանց զարգացման հեռանկարները.....	37
3. Ընտրական գրավի ինստիտուտը՝ պասիվ ընտրական իրավունքի երաշխավորման համատեքստում	43
3.1. Ընտրագրավի հասկացությունը և դրա իրավական կարգավորումը	43
3.2. Ընտրագրավի իրավական կարգավորումը Հայաստանի Հանրապետությունում.....	46
3.3. Ընտրագրավ. դրական և բացասական կողմերը	54
4. Ընտրությունների ժամանակահատվածում հավասար հնարավորությունների ապահովմանն ուղղված իրավական կառուցակարգերի կատարելագործումը՝ որպես ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վստահության աճի երաշխիք	57
4.1. Նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սահմանող իրավական նորմերի վերանայման անհրաժեշտության մասին.....	57

4.2. Նախընտրական ծրագրերի հրապարակման և դրանց ներկայացվող օրենսդրական պահանջների ամրագրման հրամայականը	63
4.3. ԶԼՄ-ներից օգտվելու հավասար հնարավորությունների ապահովման հիմնախնդիրը նախընտրական քարոզչության ժամանակահատվածում	73
5. Նախընտրական քարոզչության և քաղաքական ընթացիկ գործունեության սահմանազատման, ընտրությունների ժամանակահատվածում վարչական լծակների օգտագործման հիմնախնդիրները և դրանց լուծման հնարավոր ուղիները.....	100
6. Ընտրակաշառքի բաժանմանը, քաղաքական և բարեգործական գործունեությունների միատեղման բացառմանն ուղղված իրավական կառուցակարգերի կատարելագործման հրամայականը.....	132
7. Ընտրական հարցերով բողոքարկման գործընթացի կատարելագործման հրամայականը. հիշյալ նպատակին ուղղված իրավական մեխանիզմներն ու դրանց ապահովման երաշխիքները	143
7.1. Ընտրական իրավունքի պաշտպանության միասնական ու ենթակայական համակարգի կապարելագործման հրամայականը	147
7.2. Տեղական դիպորդների կողմից ընտրական հանձնաժողովի որոշումների, գործողությունների (անգործության) բողոքարկմանն առնչվող որոշ հիմնախնդիրներ	152
7.3. Քաղաքացիների (կամ նրանց խմբերի) կողմից ընտրական հանձնաժողովի որոշումների, գործողությունների (անգործության) բողոքարկման արդյունավետ համակարգի արմատավորումը՝ որպես ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վստահության աճի երաշխիք.....	160
7.4. Ընտրական իրավունքի պաշտպանությանն առնչվող հարցերով դատական ակտերի բողոքարկումը. արդի վիճակն ու կապարելագործման հեղուկությունները	171

7.5. Ընտրական հարցերով բողոքարկման գործընթացին առնչվող իրավակարգավորումների ամրագրման որոշ հիմնախնդիրներ. օրենսդրական տեխնիկայի կանոններն ու դրանց իրացման առանձնահատկությունները	175
ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ	180
Օգտագործված գրականության ցանկ	196

**ԱՊՀ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ
ՎԵՀԱԺՈՂՈՎ**

*Ժողովրդավարության զարգացման, պաշտամենարիզմի և
քաղաքացիների ընտրական իրավունքների պաշտպանության
մոնիթորինգի միջազգային ինստիտուտ
Երևանյան մասնաճյուղ*

**МЕЖПАРЛАМЕНТСКАЯ АССАМБЛЕЯ ГОСУДАРСТВ – УЧАСТНИКОВ
СОДРУЖЕСТВА НЕЗАВИСИМЫХ ГОСУДАРСТВ**

*Международного института мониторинга развития демократии,
парламентаризма и наблюдения избирательных прав граждан
Ереванский филиал*

**ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ
ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**АКТУАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ ИЗБИРАТЕЛЬНОГО
ЗАКОНОДАТЕЛЬСТВА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ И
ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ**

Издательство ЗАНГАК, Ереван, 2013
(на армянском языке)

Աշխարհային խմբի ղեկավար՝

ՎԱՀՐԱՄ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Աշխարհային խմբի անդամներ՝

ԷԴԳԱՐ ՇԱԹԻՐՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ՄԱՆԱՍՅԱՆ

ԱՐՓԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԻՐԻՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԱՐՄԵՆ ԱՐՈՎՅԱՆ

Հրապարակչության տնօրեն՝
ԷՄԻՆ ՄԿՐՏՉՅԱՆ
Սրբազրիչ՝
ԼԻԱՆԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Համակարգչային ձևավորումը՝
ԳՈՀԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ

Տպագրությունը՝ օֆսեթ
Չափսը՝ 60 × 84 1/16
Թուղթը՝ օֆսեթ
Ծավալը՝ 13 տպ. մամուլ



ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՊԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի 49/2
Հեռ.՝ (+37410) 23 25 28, հեռապատճեն՝ (+37410) 23 25 95
Էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am, www.dasagirq.am
Էլ. փոստ՝ info@zangak.am

Գրքում արտահայտված կարծիքները ԱՊՀ մասնակից պետությունների
միջխորհրդարանական վեհաժողովի պաշտոնական դիրքորոշումը չեն: